

ՄԵԿՆԱՏԹԵԼԻ  
ԱՐԴԱՍԱԾ

Յօրինեալ ՚ի հ. Արքայեւ վարդապետ Զամ-  
չեանց՝ Յաշակերտութենս ամենապատիւ  
Ախիթարայ Աբբայհօր :

Տղագրեալ հրամանաւ Հագեսր թի Արքամանուն Ածի  
Աբբայ Ագոնց, Ածաղապետ Աբբեպիսոպուն :

Յամի մն. 1821. և հոյոց. ամէն :


Բաժանեալ ՚ի տասն հատորս :

Հ Ա Տ Ո Ւ Թ Ա Գ

Համակ  
720




Դ Ա Լ Ե Լ Ե Տ Ե Կ  
Դ Վ Ա Խ Ա Մ Բ Ո Յ Ն Ա Վ Ա Ր Ո Ւ



Ն ո ւ է ր

Լիզունի Գալուստ Կիւլյէնկեան  
Հիմնարկութեան կողմէ  
Հայկական ԱՍԽ Գիտութիւնների  
Ակադեմիայի Մատենադարանին

1966





卷之三



՚ նեղութեան իմում ես առ առ կարդացի,  
և լուաւ ինձ առ :



# Կ Ա Ն Ա Խ Ա Բ Հ Ա Յ Ա Բ Ի Վ Ա Յ Ա Բ Ի Վ

Ս Ա Դ Ա Մ Ա Ս Ա Շ Ա Թ Ա Շ

Ը նորհակալութե՞ և մաղթանք առ ած վո՞ փրկելոյ  
'ի չար լեզուէ . միանդամայն և գանդատ զընդելու<sup>1</sup>  
կար մնալոյ ՚ի պանդխտութե՞ :

(Օբնութեան ասովիձանաց :

1. **Ի**նեղութե իմամ էս առ ար իսրայէլ , և լուսաց  
ար ժբիեաց շանցն իմ ՚ի լըմանց նէնգառաց , և ՚ի  
լուսուէ լորէ : 2. **Օ**ք ասցի ժեղ՝ իմ զինչ յութելոյ , լուսու  
նէնգառաց : 3. **Ո**ղում նեսոս հորէ , զի մուտք էն իսրայէլ մինչ  
իսղուաց : 4. **Ա**յ ինչ զի ընդերիար եղաւ պատրիառութե՞ իմ .  
զի բնահեցայ էս ՚ի դրանո ինդրուա : 5. **Ո**ւազում անգամ  
բնահեցայ անցն իմ ընդ այնոսէէ , ոյս առենին զընջոյն : 6. **Ա**յ  
էէ իսուղողաբար . յորժում իսօսէէ , մորդուշին ընդ էս :

Ա Ե Բ ՚Ե Ա Գ Ի Բ Ի

(Օբնութեան ասովիձանաց :

**Հ**եթեսըմեւ սրդ մասք ե՞ն  
որոց վերնագիր է օբնութեան ասովիձան  
նոց , կարգաւ՝ մի զհետ միոյ շարունա-  
կեալ , համառօտք , և մի քան զմի գե-  
րազանցք , վսեմք և ազգուք : **Ա**յլ թէ ընդէլու ասին  
սոքա օրհնութե՞ աստիճանաց , կամ երգ աստիճանաց

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ւ Ի Ն  
կամ չուց և կամ ելից , և թէ ընդէլը իցեն սոքա  
հնգետասան , և յորոց իցեն յօրինեալ , և առ ինչ ,  
տես 'ի ներածութե + դւ . ժա :

Հյերը " 'ի հնգետասան սաղմոսս յայսոսիկ դնի շի-  
կա հառլը . այս է \* երգ վերելից . կամ երգ աստի-  
ճանաց ) || . կամ այլազգօրէն ասացից ուրէ ձէլք նիւր-  
տիւրիւ : ) Ոիայն 'ի ձի ասղմոսն որ է յաջորդ սո-  
րա փոխանակ դնելոյ հա հառլը՝ գրի լա հառլը , այս-  
ինքն յաստիճանս . որ զնոյն նշանակէ :

Այսոքիկ հնգետասան սաղմոսք թէպէտ և ունին  
զայս վերնագիր , բայց 'ի մերում թարգմանութեն  
ըստ բառից ինչ և ըստ տառիցն այլայեալ տեսա-  
նին . որպէս և երեսի 'ի քննութիւն իւրաքանչիւր նո-  
ցին : Եւ նախ աստ 'ի տպ" և 'ի միում ձեռագ"  
դնի շայիւ օրհնութիք աշտիճանաց : Եւ յայլում  
ձեռագ" և 'ի սաղ" . լամբ" . սէիւ , օրհնութիք աստի-  
ճանաց . 'ի չորս ձեռագիրս նուիւ , օրհնութիք աս-  
տիճանացն . 'ի միում , ազօթք աստիճանաց . յերիսն  
և 'ի սաղ . վարդ" . երգ աստիճանաց : Եւ սակայն  
ամենեքին 'ի նոյն հային . և զի հասարակ է դնել  
օրհնութի աստիճանաց , և համաձայն այլոց , մէք ևս  
այնպէս եղաք :

Այս առաջիկայ սաղմոս հայի 'ի վիճակ գերելոցն  
'ի բարելոն յօրինեալ կամ 'ի դաւթայ , ըստ որում  
գրէ դաւիթ անյաղթ 'ի նախերգանս սաղմոսաց , և  
այն իբր նախագուշա կութիք , և կամ 'ի մարդարէից  
յետնոց իբրե չնորհակալութիք և իբրե մաղթանք  
վասն ազատելոյ յայնցանէ՝ որոց լեզուք լի էին դառ-  
նութիք : Ոյն այս դնի միանգամայն և իբր առաջին  
աստիճան ելանելոյ 'ի պանդխտութիք կենցաղոյս ,  
և չուելոյ յարքայութիք երկնից . որպէս է տեսանել  
'ի համարն . 4 :

P. U. 'U.

**Ա**նեղութեա ի մամ է սա առ ի արդացի . և լուսա ի մի ,  
առ գրետեա պահյն է և շը լուսա անեն առ բաց , և  
է լուսա է պահ :

## W b u 'b a b f o b b 'b

Բնական իմ երեխ՝ ի մարդիկ, յանկանիլն ՚ի նեղութ՝ կարդալ առ տօծ. ըստ որում ասէ և բարսեղ վարդապետ (՚ի մեկն մարկ, գլ. 14.) \* ՚ի հաւա,, տացեալս և յանհաւասահաստատեալ է այս, ՚ի նեղութիս յիշել զտօծ, և յօդնութի կոչել, և ՚ի նայուսալ, թէ կարէ :: Առ որ օրինակ բերեալ ծործորեցոյն զառաքեալմն ասէ (՚ի մեկն մատ. ը. 25.) թէ յալէկոծիլ ծովուն \* ՚ի նադիմեցին. ըստ այնամ տեղ ՚ի նեղուե յիշեցաք զքեզլ :: Առ որոյ ասի յառակս. \* յորժամ ալիք աշեղ հնչեն, ձայնք աղօթից ուժին գոչեն ::

աղջօթից ուշ դրւելը  
խթան են նեղութիք. իսկ խթանն ու սպանանել,  
այլ զգաստացուցանել, և մղել՝ արագ ընթանալ.  
Վաշ երիվարք ևս երբեմն թուլանան, և խթանով  
յառաջանան: Խոյլ ես յաղօթս և՝ ի գործս բարիս,  
ի հասանելնեղութեց, արիանաս, և հնչես՝ ի սրտէ  
զյեծութե ձայն: Հուր են նեղութիք, ուր անկա-  
նինն՝ տան ելուզանել զծուխ հառաջանաց և զշա-  
ռայիւն աղաչանաց:

‘**Ա**ս զի մարդիկ բնաւորապէս իմն Ճանաւէլով՝ թէ  
յայ է ամենայն, և առծ միայն է ամենայնի տէր և  
աղատեցուցիչ, առ նա սովոր են աղաղակել, մանա-  
ւանդ թէ բազում անգամ նա ինքն առծ յայս սակս  
առաքէ՝ ’ի վերայ մեր զնեզութիս, զի առ ինքն ա-  
պաւինեսցուք, ոչ զի ունի ինչ պէտո ’ի մէնջ, կամ  
թէ շարժի ինչ ’ի ճայնից մերոց, այլ զի ախորժի  
լսել և զաղաւանս մեր. և վասն այնը ցուցանել մեզ  
զգութ իւր, և լցուցանել զկարօտութի մեր, և ’ի  
ներդութէ անտի աղատելով յանդորրութի վէրածել

8 Մ Ե Կ Ն Ի Թ Ւ Ւ  
զմեղ : Հայս օրինակ և մարդարէն՝ ի պաշարին անդ՝  
՚ի նեղութե կարգացի ասէ առ ած , և վկայէ թէ  
լուաւ ինքեան յասելն :

Ա նեղութեան իմաստ էս առ ած որ իտրտացի և լուաւ ինչ :  
Ի ազում էին նեղութիւնքն զորս կրէր , բայց ոչ  
գնէ բազմուորակի , այլ եղակի . զի ոչ այնչափ  
զրազմութին կամի ցուցանել՝ որչափ զսաստկութին  
և զանձկութին . որպէս թէ եղեալ էր . սաստիկու-  
թի նեղութե ընկճեցոյց զիս , և ես աղաղակեցի  
առ տէր . և նա ունկն մատոյց աղաղակի իմում , և  
լուաւ ինձ . զորմէ և ինքն առ վկայեաց ասելով  
\* 'ի նեղութե կարգացեր առ իս , և ... լուայ քեզ .  
(սաղ. ձ. 7.) Խսկ այս լսելս էր անսալ աղաղանացն  
և փրկել . վասն որոյ և զնոյն ևս առաջի առնէ , 'ի  
մէջ մատուցանելով միանգամայն և զայն ինչ՝ որոյ  
վասն աղաղակեաց , և յորմէ փրկեցաւ , ուստի ասէ :  
Տեր Քրիստո զանցն իմ 'ի շրեանց նենդասորաց , և 'ի լուսու-  
թարէ : Որոց միանգամ սիրտ սք իցէ և լսելիք մա-  
քուր , վշտագնիւ է նոցա նենդութի 'ի բանս , և  
անօրէնութիւն՝ ի լեզուի . վասն որոյ և մարդարէն  
յան հնարինս վշտագնեալ յայսպիսեաց ինդրեաց յոյ  
աղատել զինքն . և նա փրկեաց ասէ զանձն իմ յեր-  
կոցունց յայսցանէ :

Ա յլ քննելի է այն , զի մարդարէն ոչ ասէ փրկեաց  
զիս ած յայնցանէ՝ որք խօսին նենդաւոր շրթամբք ,  
կամ յայնցանէ՝ որք չարիս բարբառին , այլ 'ի նեն-  
դաւոր շրթանց , և 'ի չար լեզուէ . վասն զի ոչ յան-  
ձանց նոցա , այլ 'ի նենդութէ և 'ի չարութէ բանից  
նոցա պժգայր և տաղտկայր :

Խսկ շրթամբք և լեզուաւ ոչ է պարտ իմանալ նիւ-  
թապէս զգործարանսն , այլ նախ՝ զգործս նոցին՝  
այսինքն զբանսն ելեալս 'ի գործարանաց անտի . ըստ  
որում էին բանք նենդաւորք և չարք : Երկրորդ՝  
զունօղս նենդաւոր շրթանց և չար լեզուի , առեալ  
զանուն մասին փոխանակ անուան բոլորին ըստ ձեռյ  
ձարտասանից , որ կոչի խելամտութի : Ա յլ քանզի  
որպէս ասացաք , 'ի ներգործութէ նոցին տառապէր ,  
վասն այսորիկ զնոսին 'ի մէջ բերէ ըստ բանի նեն-  
դութէ և չարութէ :

Խակ եթէ նիւթապէս իմասցուք , յայնժամ ոչ է  
պարտ ըստ բնութեն նենդաւոր ասել և չար զլեզու ,  
այլըստ խոտորելցյն 'ի յաւուէ 'ի յոռութի : Ուստի  
ասէ սարդիս շնորհալի ( 'ի մեկն . յակ . գ . 8 . ձառ.  
Շ . ) \* չար ասել զլեզու՝ ոչ ըստ բնութեանն ասէ ,  
ո այլըստ ներդործութեան . որպէս այլուր զմարդ  
,, չար ասէ , և զակն չար , և զօր չար , ոչ ըստ բնու-  
,, թեն , այլ ըստ համեմատութեն և ըստ հանդիս  
,, ման . զի ( եթէ ըստ համեմատութեն ասիցի՝  
,, յայտ է ( թէ ) մարդոյ բարին ընդ ոյ բարւոյն հա-  
,, մեմատեալ արդարե ստուգապէս չար գտանի .  
,, ( սոյնպէս և ըստ հանդիպման ) յաւուր՝ յորում  
,, փորի խորխորատ մեղաւորաց , և հատուցանի 'ի  
,, գլուխ նոցտ չարութին՝ այնորիկ աղադաւ չար ասի  
,, և օրն . նմանապէս և աստ զլեզու չար ասել՝ ըստ  
,, հանդիպմանն ասէ . զի 'ի բարեձեռութէ բանիցն  
,, զարտուղի անկեալ և զանպատէհսն բարբառեալ  
,, չար անուանի ! :

Դարձեալ ոչ ասէ մարդարէն՝ փրկեաց զիս , այլ  
զանձն իմ՝ այսինքն զհոգի իմ . զի որովհետեւ հոգի  
նորա տանջիւր յայնպիսի բանից՝ զհոգին բերէ 'ի  
մէջ : Դապա յետ խօսելոյ զնենդաւոր լեզուէ՝ դառ-  
նայ խօսիլ առ նոյն լեզու , և ասէ :

Օ բ պացէ տեղ էամ զինէ յաւելցէ , լողու նենդա-  
-ռու :

Դ վերոյ բաժանաբար եղ զշոթունս նենդաւորս  
և զլեզու չար . և զի նենդութի լեզուի պարագրէ  
յինքեան և զչարութի շրթանց 'ի ծածուկ , զայն  
միայն՝ այսինքն զլեզու նենդաւոր ևելթ 'ի մէջ բե-  
րէ աստ ասելով :

Օ բ պացէ տեղ , էամ զինէ յաւելցէ , լողու նենդա-  
-ռու : Դառդ չշնու նենդաւոր՝ խելամտութե ձեռով ձարտա-  
սանից դնի աստ , փոխանակ այնպիսի մարդոյ՝ որ  
ունի զլեզու նենդաւոր , զմասն փոխանակ բոլորին  
վարելով . որպէս է տեսանել և 'ի նախընթաց հա-  
մարն : Եւ ըստ այսմ կամի ասել . ով նենդաւոր  
դու , 'ի խօսիլքո նենդութի զինը անտի տացի քեզ .  
այսինքն է թէ զինը օգուտ լինիցի քեզ անտի , և

10 Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ւ Ւ Ն  
կամ զինչ առաւելութի բարեոյ ժողովեսցի յանձն  
քո . ու ինչ բայց եթէ անձք . որպէս եղեւ նենդա-  
ւոր լեզուին այնմիկ՝ որ պատրեաց զեւաց խարդաւա-  
նոք :

\* Ենդաւոր լեզուաւ իմացեալ լինի աստ և այր շոգ-  
մոդ , \* այսինքն սիրելի և ատելի || . որպէս առէ-  
սարդիս չնորհալի . ( 'ի մեկն . յուդայի . համար . 6 .  
հառ . թ . ) զի որ սիրօղ ցուցանէ լինքն , և ատելու-  
թէ վարի , որպիսի է շոգմոզն՝ նենդէ լեզուաւ իւ-  
րով , որով և կոչի լեզու նենդաւոր :

|| մանք զայս բան իմանան ասացեալ 'ի գիմաց այ  
իրեւ պատասխանի առ սազմուերգուն , կամ իրեւ  
քաջալերը . որպէս թէ եղեալ էր . ընդէր երկնչիս  
'ի նենդաւոր լեզուէ . զինչ կարէ նա առնելքեղ , և  
զինչ վնաս կարիցէ հասուցանել յանձն քո : || մանք  
ընդ հակառակն մեկնեն՝ իրեւ յորդոր առ վատա-  
ցեալն . որպէս թէ ասացեալ էր . զինչ կարես առնել  
ընդդէմ նենդաւոր լեզուի , բայց եթէ ապաւինիւ  
առ ած , եթէ զայս արասցես՝ նա լինիցի վրէ ժիրն-  
դիր , և այլն : Ի այց առաջին մեկնութին է հարա-  
զատագոյն , և համաձայն երբայսկանին 'ի կարգել  
զբանն առ լեզու նենդաւոր : Ի յլ թէ քանի չար իցէ  
այնպիսի լեզու՝ յայտ առնէ նմանաբանութիւն իւիք  
ասելով :

Դ .  $\int$  բայս նեաս հոգու , ու մուտք էն իայծակամբ + իան-  
այ :

Բանք նենդաւորք երիւք ազդեն . մի' 'ի հեռուստ  
այսինքն աներեսութարար . զի 'ի լսիլ անդ ու երեւ-  
ցուցանեն զայն՝ զոր դիտեն , և եթէ կասկածաւոր  
ևս թուիցին՝ զկասկածեալ վտանգն հեռի տան տե-  
սանել . բայց յանակնկալ պահու հասուցանեն . վասն  
որոյ նետից նմանեցուցանէ զնոսա , յորոց գրեթէ  
անշնար է անձնապահ լինել : Ի յսպիսի բանք են  
իրեւ զկաթիլ իւղոյ , որ տակաւ տարածի 'ի հան-  
դերձա : Ա մանին և թունաւոր կերակրոյ , որ առ սա-  
կաւ սակաւ ներգործէ ուտողին . այս ինչ է տարբե-  
րութին . զի թայնն ը բերանն անցանէ . իսկ նենդա-  
ւոր բանք ընդ ականջս թափանցեն , և սպանանեն

զհագին. ուստի և լեզու՝ որ խօսի զայնապիսիս մարդ դասպան է:

Ղըրկըորդ՝ զօրաւորագոյնս աղքեն քը զյայտնի խօսս  
անօրէնութէ. զի դիւրաւ տեղի գտեալ՚ի լսօղն՝  
թափանցեն՝ ՚ի նա խորագոյնս. ամին իրի նմանեցու-  
ցանէ զայն ոչ հասարակ նետից, ոյլ նետից հզօրի,  
և այն սրածայր. որտիսի են այն բամբասանը՝ որք  
նրբարանութէ ասին. և որշափ նուրը են՝ այնպատ  
խորագոյնս աղքեն. զի սրածայր նետ չըրաչար թա-

*Wingl, h. q. h. e. m.*

Երբորդ՝ որ չար ես է՝ ազգեն անթշկելի . զի՞ ի  
հասանելն՝ ի ծածռեկ վիրաւորեն , և ոչ երեցու-  
ցանելով զվերսն՝ անհոգ թողուն զվիրաւորեալն փո-  
թալ՝ ի բժշկիլ . վասն որոյ նմանեցուցանի՝ այնպիսի  
նետի՝ որ չարաչար միւեալ իցի : Քայսոսիկ հայելով  
ասեւ :

|| բայէս նետք հզօքէ, ոչ դիւալ են իսյծակամբ + իտիւոյ :  
լիամի տաել. նենգաւոր բանք իբրև զնետա գաղտննի  
հասանեն, և իբրև 'ի հզօք ձեռանէ: արձակեալ՝ շա-  
րացար վիրաւորեն, և իւրեանց անզգալի (թունաւո-  
րութիւն մահուչափ վտանգեն. որպիսի են այն նետք՝  
որք միսեալ իցեն կայցակամբք կաղղւոյ. վասն զի  
եթէ նետն հրասցի 'ի խարսյկ կաղղնի ծառոյ կամ  
գիշի ծառոյ՝ և միսեսցի 'ի ջուր, (մանաւանդ յա-  
րիւն) տոնու զժանտութիւն: (թունաւոր, և 'ի վի-  
րաւորելն՝ աղդի զթունաւորութիւնը, մինչև զժուա-  
րաբժշկելի լինել վիրացն: Այսպիսի իմն են տու: և  
բանք նենգութիւն ասացեալք, մանաւանդ այն բանք՝  
որք 'ի վիրաւորութիւն հոգւոյ հասանեն 'ի լսելիս,  
զորս առաքեալն կոչ: \* նետս մուխս չարին || . (Եփես.

7. 16 :

Եւ մի ինչ զարմանաթ, թէ այլազգ ներդործէ խարոյկ կաղնուոյ քան զիարոյկ այլօց ծառոց - զի զայս փորձիւ տեսանեմք և յայլ խարոյկս - աւասիկ ամենեն այլ ազգ ներդործէ խարոյկ ուռուոյ յերկաթն, քան խարոյկ այլօց փայտից - այլազգ սոսկ բոցն, և այլազգ սոսկ խարոյկն, Եւ ոչ այսչափ միայն, այլև նոյն խարոյկ կամ նոյն ածուխ այլազգ ներդործէ յայս գաւռ քան յայլ. որպէս յայտ է՝ ի խարոյկն մընետ-

12 Ա Ե Կ Ն Ո Ւ Թ Ե Լ Ե Կ  
կոյ . մինչ զի և ոսկին իսկ 'ի նոյն խարուկէ զայլ  
որակութի առնուր 'ի վենետիկ քան յայլ տեղիս :  
Ոմանք նետիք մինելովք կայծակամբք կաղնուոյ՝ իմա-  
նան զհրացեալ նետս ջերաջերմ արձակեալս , կամ  
զայնպիսի նետս՝ յորս կայցէ հուր , որ 'ի հասանելն  
հասուցանէ զմահ , որպիսի են և բանք նենդ աւորք :  
Խոկ այլք զայս բան վերածեն առ պատուհասս՝ զորս  
առաքէ ած առ նենդ աւորս՝ պատճելով զնոսա կայ-  
ծակամբք արձակելովք յերկնից իբրեւ զնետս . յոր  
միտ կամի ասել . 'ի պաղատիլ և 'ի գիմել մարդոյ  
առ ած յերեսաց նենդ աւորս լեզուաց , թօթափին  
'ի վերայ այնպիսի լեզուաց կայծակունք երկնից , կմ  
պատիմք՝ որպիս նետք հզօրի՝ այսինքն որպիս նետք  
ոյ : ։ ։ ։ այսոքիկ յետին մեկնութիք երկեին ըստ  
յարմարութեան տուեալ . իսկ առաջինն է ընտրելի  
իբրեւ հարազատագոյն :

։ ։ ։ բանք որպիս եղաք 'ի վերնագրի՝ ասին 'ի մար-  
գարելն 'ի գիմաց գերելոց 'ի բարելոն , ուր լիներ  
նոցա 'ի բազմաց բազում անդամ լսել զրանս նեն-  
գութել վասն արկանելոց զնոսա յօրոդ այթ կորստեան  
և խախտելոյ զնոսա յանձպաշտուէ . որոյ վասն կար-  
դաց մարդարեն առ ած՝ փրկել յայնպիսեաց անտի .  
և այլ մարդարեք գուշակելով զարիսն որք դալոց  
էին 'ի վերայ քաղաքին , ասացին . աւասիկ թշնամիք՝  
որ են իբրեւ նետք հզօրին ոյ՝ հասցեն առ քեզ , և  
վիրաւորեսցեն անթշկելի . զի իբրեւ թէ միսեալ և  
զօրացուցեալ են հրով բարկութե նորա : (եսայ . իբ-  
ր 2 -- 9 : կէ . 12 : երեմ . դ . 5 -- 9 : ժդ . 14 : ժթ . 3 :  
և այլն : ) ։ ։ ։ քանզի կարի իմն երկար եզեւ ժամա-  
նակ մնալոյ իսրայէլացւոց 'ի գերուե անդ , և լսելոյ  
նոցա հանապազ զհայհոյութե բանս , յոդւոց հանե-  
լով մարդարեին՝ աւաղէ զանձն 'ի գիմաց նոցա , և  
ասէ :

։ ։ ։ այ նոյ շնչ շնչ երիար եշլ պանդիստանէ իմ . զէ  
բնուինյոյ ես 'ի վրան իերուսա-  
լիմայ պանդիստութի նեղէ զանձն յոյժ , և որչափ  
յամէ , այնչափ առաւել տառապեցուցանէ , մնանա-  
ւանդ եթէ իցէ պանդիստութի գերութե . որպիսի

եղեւ որդւոցն իսրայէլի՝ որք գերեալ նախս 'ի սաղման  
նասարայ ( դ . թագ . ժէ . 6 . ) և ապա 'ի նաբուդու  
դոնոսորայ . ( դ . թագ . իէ . 11 . ) պանդխտեցան  
յօտարութեան , ցնդեալ և ցրուեալ յայլ և այլ աշ-  
խարհս . յորս 'ի տեսանել նոցա զինքեանս զրկեալ 'ի  
հայրենեաց իւրեանց , և 'ի հանդիսիցն պաշտամանց ,  
և երկարեալ 'ի վարանդուել , հալէին և մաշէին .  
Պորոց զկերպարանսն յանձն իւր նկարելով մարդա-  
րէին ասէ :

Ու այ ինչ զի ընդերիաբ եղեւ պահպատանէ իմ : Կամի ասել-  
ով թէ զինց պատահէցաւ ինձ . ուր եի , և այժմ ուր  
պանդխտացեալ կամ . յորում վիճակի նոխանայի , և  
այժմ յորպիսի վիճակ դեգերիմ . յորպիսի պատիւ վեր-  
առեալ եի յայ , և այժմ յորպիսի անարգութիւն խո-  
նարհէցայ . ոչ մի ամ , և ոչ տասնամերայ ժամանակ ,  
ոյլ զամն բազումն 'ի թշուառութիւն պանդխտութեա-  
տագնապիմ . վայ ինձ թէ զիարդ երկարեցաւ ժա-  
մանակ այսր իմայ պանդխտութեա . գարունը գան ,  
և աշունք գնան , և պանդխտութիւն իմ իրրե բանա  
կալեալ ունի զիս յօտարութե . երբ արդեօք լինիցի  
վախճան այսր գերութե . երբ իցէ զի ոչ ևս տեսից  
զիս 'ի մէջ գերչաց իմոց . երբ դարձայց 'ի բնակուի  
հայրենեաց իմոց : Վայ ցաւագին հառաջանք՝ նոցա-  
է զգալի , որոց ընդ փորձ մտեալ իցէ այնպիսի  
թշուառ գերութե . զորոց զառաւելութին կամելով  
ցուցանել մարդարէին՝ առաջի առնէ և զթշուառու-  
թիւ տեղեացն՝ յորս եղեւ այն գերութիւ . և զանց  
արարեալ զբաղմաք՝ զմին եեթ յիշէ փոխանակ ամե-  
նեցուն ասելով :

Օյ բնաինյայ ես 'ի կըսն ինդարաւ : Ելեդարաւ իմացեալ  
լինի աշխարհն այն՝ որ կոչի ապառաժ արարիա , և  
կամ ըստ այլոց անապատ արարիա , յորս ուերեալ եին  
որդիք կեդարու որդւոյ իսմայլի . յորմէ և բնակիչք  
այնոցիկ կողմանց կույին որդիք կեդարու . ( եսայ .  
իտ . 16 . և այլն ) Եւ ամենեքին սոքա եին վրանա-  
բնակիք՝ որպէս և այժմ : Վամէջ սոցա ցրուեցան բա-  
զումք յիսրայէլացւոց 'ի գերին իւրեանց . վասն որոյ  
'ի բառշակել եսայեայ զդարձ գերութեն , զայսոսիկ  
տեղիս ևս յիշէ ասելով . ( իտ . 1 . ) \* ուրախ եղիցի

„ անապատն (արարիս՝ ՚ի գարձի գերութեն ) . . . և  
„ բնակիչք կեդարու՝ (որք են) . . . բնակիչք վիմին ,  
այսինքն ասդառաժին արարից : Հայսպիսի տեղիս առէ  
բնակեցայ երկար ժամանակաւ , ոչ ՚ի յարկս պալա-  
տանց՝ որպէս էի ՚ի հայրենիսն իմ , այլ ՚ի վրանս ըն-  
բնակեցաց երկրին . որով կամից ցուցանել թէ ՚ի թշուա-  
ռութեն էր բնակութի որդւացն իսրայէլ ՚ի գերութե-  
անդ :

Г.ստանօր սոսկ զկեդար յիշելով որպէս ասացաք՝ տայ  
իմանալ և զայլ տեղիս գերութեն . բայց քանզի  
թշուառադոյն էր վիճակ կեդարուն , զայն առաջի  
առնե . և նովին յայլս ևս հայիլ ստիփէ : Հաւելու  
վարդան , թէ որդիք կեդարու գերեկիցք էին խօսայէ-  
լի , վասն այսորիկ ատէ մարգարեն՝ թէ բնակեցայ  
ևս ընդ նոսա ՚ի գերութե . այլ այս չէ յայտ :  
Փրսխաքերաբար առեալ՝ վրանաւ կեդարու նշանակի  
գերութեն , կամ թշուառ վիճակ գերելցոն՝ որպէս  
թէ բնակեալ էին նոքա ՚ի վրանս կեդարու : Եւ  
գարձեալ որովհետեւ կեդար նշանակէ խաւար , կամ  
սեաւ , կամ տրտմութի , յասելն՝ բնակեցայ ևս ՚ի  
վրանս կեդարու , ցուցանե՝ թէ կայր ՚ի խաւարացին  
տրտմութե , և ՚ի սեւազցեաց թշուառութե ՚ի գե-  
րութե անդ :

Վաստանօր յասելն , վայ ինձ՝ զի ընդ երկար եղեց պահողիստութիւն իմ , բառդ ձայ՝ ոչ հայի յեղկութիւնն անձին , այլ յեղկութիւն ընդ երկար պահողը տուե . որպէս յասելն , վայ մեղաւորի , վայն ոչ հայի յաւաղումն անձին սոսկապէս , այլ յաւաղումն մեղաւորութե . որպէս և յասելն , վայ ձեզ հզօրքդ իսրայէլի՝ ձայն ոչ զօրութիւն խոտե . այլ զարութիւն գործածութե նորին . ըստ որում ամէ գեորգ փարգապետ . ('ի մեկն . եսայ . գլ . դե .') ըստ այսմ և աստ . որպէս թէ եղեալ էր , վայ ընդերկար պահութանունու , կամ աւաղ՝ զի այսափ երկարեցաւ պահ . զիստութիւն իմ . որով մաշիմ՝ 'ի վրանս կեդարու : Հոգեորապէս կեդարաւ նշանակի կենցազս՝ յորում պահողիստիմք իբր ՚ի խոր խաւարի : Խւ յայս միտուամ . սարգիս շնորհայի ('ի մեկն . յակ . ե . 20 . նառ . ժառ . յորդ . ) թէ գաւիթը ըստ սմին \*խաւար խոր և վրան

, կեդարու տեսաներ զաստի կենցաղս || . ուր յեր կարիլ դառն պանդխտուել չեծէ հոգի մեր և հառա չե ասելով . վայ ինձ՝ զի երկարեցաւ պանդխտութի իմ՝ ի վերայ երկրի , և ես բնակեալ եմ՝ ի վրանս կե դարու այսինքն՝ ի խաւարի , և ՚ի արտմութեն , որով հետեւ ըս ասելոյ մեր այժմ՝ կեդար թարգ մանի խաւար և տրտմութի , ևս և սեւութի . որով նշանակին մեզք՝ որք յաճախեն՝ ՚ի մէջ աշխարհի : Խօսդ զայլ թշուառուիս ասէ յիշատակել վորդապետ , ('ի մեկն առ պետ . առ . 17 . ձառ . դ . ) արտաքոյ մարտք և ՚ի ներքոյ արհաւիրք , և այն ընդ երկար . \* Եւ զայս , (ասէ) տիրապետ հոգւովն տեսեալ մեծ մարդարէն , դաւիթ՝ ողբալով ասէր . վայ ինձ՝ զի պանդխտութիս իմ ընդերկարեաց բնակելով իմ՝ ի խորանս , կեդարու : :

Եւ արդարե՝ որք միանդամ պանդուխտ համարին զանձինս յաշխարհի աստ , յայսպիսի կիրս տուայտին . և որպէս պանդուխտն յօտարութեան իւրում՝ ՚ի հայրենիսն փութայ հասանել , և յերկարիլ տուուրց պանդխտութեն չիւծի և մաշի , և կարծութի ժամանակի երկար թուի ինքեան՝ ՚ի սկզ հայրենեացն , սոյնպէս և որ համարի զինքն պանդխտացեալ յերկնային հայրենեաց , զտիւ և զդիշել՝ ՚ի նոյն հառաւէ . իցէ և երբ իցէ՝ զի ելցէ աստի և ժամանեաց՝ ՚ի հայրենիսն իւր որպէս եր տեսանել՝ ՚ի որք ընդ առաքելոյն պօղոսի փութային ելանել՝ ՚ի մարմնոյ աստի , և լինել ընդ քնի :

Ի յապիսեաց բնակարանը թէ . և հոյսկապ աստարանք իցեն յաշխարհի աստ , իրրե զվարնս վայրենի մարդկան համարին , և անարդ ևս քան զնոսին՝ համեմատութիք օթեանաց երկնայինն երուսաղէ մի կիմ խորանի հըմարիան սոզոմնի , այսինքն արբայուեն քոփի : Եւ եթէ ունիցին ևս մեծութի բազում , և զիշխանական ձոխութի , պժգան ընդ պանդխտութի իւրեանց , որպէս ահա տեսանի՝ ՚ի դաւիթ . զորով ասէ ներսէս շնորհալին ( 'ի մեկն . մատ . դլ . է . ) \* դաւիթ թէ , պէտե զծայրագոյն մարդկան ունէր զթագաւորութի , սակայն հառաւէր ասելով . վայ ինձ՝ զի ընդ , երկարեցաւ պանդխտութիս : Օ այսպիսիս ասէ

և ծործորեցին . ( 'ի մեկն . մատ . գլ . ը ' ) Եւ որք  
միանց ամ զգաստ մատածութք խորհին զայսոսիկ , եր-  
կար թուի նոցա յոյժ պանդխտութի իւրեանց , և  
տաղտկալի բնակիլ 'ի մէջ այնոցիկ , որք առաւել սի-  
րեն 'ի պանդխտութե անդ տեւել հանդերձ թշուա-  
ռութք , քան յայն ցանկալի հայրենիսն ժամանել  
հանդերձ հանդստեամբ :

**Ա.** յս նեղուի երկար պանդխտութե եթե իցէ վասն  
չեռացել և օտարացեալ տեսանելոյ զմեզյերկնային  
հայրենեաց , և 'ի ժառանդութ մի միայն ծայրագոյն  
բարւոյն մերոյ 'ե բարի և գովելի . իսկ եթե իցէ սոսկ  
վասն կրելոյ մեր զվիշտ կենցաղոյս՝ յոչ բարին հայի .  
զի վերածի 'ի տրտունջ և 'ի տժգոհանս . որոյ վասն  
զրե սարգիս չնորհալի . ( 'ի մեկն . առ . պետ . գ . 14.  
Ճառ . է . յորդ . ) \*մի ինչ ասէ զչարիցիմք 'ի նեղու-  
,, թիմս երկար ժամանակաց . և մի ձանձրացեալ 'ի  
,, վշտացն՝ զմարդարէական ձայնն ( ծեքելով ) բար-  
,, բառիցիմք . վայ ինձ ասէ , զի պանդխտութիս իմ  
,, ընդերկարեաց 'ի բնակիլ ինձ 'ի խորանս խաւարի .  
ու վասն զի արդարե խաւար է աստի կենցաղս և խա-  
,, ւարեցուցի՛ որոց անմտաբար ( և անհամբերաբար )  
,, 'ի սմա կենցաղավարին :: **Ա.** յս վիշտ պանդխտուե-  
առաւելու և սասականայ 'եթէ պանդխտացեալն իցէ  
'ի մէջ խռովարար անձանց . որպիսի ձեւացուցանէ  
մարգարէն զազդն իսրայէլի յանձն իւր ասելով :

**Ե.** **Բ**ազում անդամ բնակեաց անցն իմ ընդ այսոսի , ոչ  
առելին զողջոյն :

**Ա.** սաանօր բառս բազում անդամ ցուցանէ նախ զերիցս  
պանդխտանալ իսրայէլացւոց յայլեայլ տեղիս 'ի յե-  
տին աւուրս թագաւորութե իւրեանց : Հուցանէ  
երկրորդ զբազում աւուրս պանդխտանալոյ նոցին  
ցամս եօթանասուն ըս չափու կենաց մարդոյ . մինչ  
դրեթէ յիւրաքանչիւր աւուրս նորոգ բնակիլ նոցա 'ի  
մէջ թշնամեաց : Եւ այս չէր այնչափ ծանր , եթէ  
թշնամիք նոցա խաղաղութք վարէին ընդ նոսա .  
բայց նոքա զհակառակն ցուցանէին . որով կարի իմն  
տառապեցուցանէին զգերութի նոցա : Օի այս հան-  
դամանք պանդխտութե առաւելու զթշուառութիւն

պանդխտացելըն. վասն զի լնու զնա խռովութե հոգ-  
ւոյ, որ ծանրագոյն է քան զգերութի մարմնոյ. և  
խսլառ տաղտկացուցանե. վասն որոյ իբր գաճնգատե-

**Ըստ** անդամ բնակչութեաց անցն իմ ընդ այնուին, ոյս ապէլն զուգընքն : Այսին առել . միթէ ցիր ինձ այս բաւական՝ զի մաշէի 'ի պանդիստութեան իմում . և ընդէլը եղե ինձ 'ի պանդիստութեան աստ բաղում անգամ բնա կիլ 'ի մէջ այնպիսեաց՝ որք ատէին զողջոյն, այսինքն որք ատէին զիսաղաղութի . և վասն ատէլց զայն՝ ոչ թողուին զիս կալ 'ի նմին, այսինքն 'ի խաղաղուե, այլ տագնապէին խռովութք և զայրացութք զհո զի իմ:

Հարոյապէս, այս բան ցուցանել զտառապիլ մարդոյ  
՚ի պանդխտութե կենցաղսո երեմն ՚ի սատանայէ ,  
երբեմն յաշխարհէ, և երբեմն ՚ի մարմնոյ . որք ատեն  
զողջոյն, և սիրեն զիտուղութէ՞ : Ուր թողուկ զտագ-  
նապիլ նորին յանարդ իրաց, ՚ի ժժմանց, ՚ի մժեղաց,  
՚ի ձանձից, ՚ի լուսոց, ՚ի մկանց, յօձից, ՚ի դայլոց, և  
այլն . որք ոչ միայն ատեն զողջոյն, այլև տանջեն  
զմեզ, և ոչ թողուն հանգչիլ : Պատուհաս են սոքա  
մեղաց մերոց . միանդամայն և զգուշացուցիչ ՚ի մե-  
ղաց . զի եթէ վասն միոյ մեղաց այսչափ զինին սոքա  
ընդդէմ մեր, քանի ևս եթէ յաձախիւսցին ՚ի մեզ  
մեղքն : Գարծիք են սոքա և անօթք պատժելոյ  
զիմարութիս մեր . միանդամայն և յիշեցուցիչ են՝  
թէ յորում վիճակի էաք յառաջն, և այժմ յորում  
վիճակի իցեմք : Օյարդ այնը վիճակի ոչ գիտացաք .  
և սոքա ազգ առնեն մեզ յիշել զայն, և տրտմիլ ընդ-  
յիմարութիս մեր : Ի՞՛ կամեցաւ ինքնին իշխել ՚ի վե-  
րայ մեր . և յոչ կամիլ մեր՝ սրքա իշխեցին մեզ :  
Խտես ած թէ ոչ կարէ մարդս իշխելով այլոց, իշխիլ  
յիւրմէ . արար՝ զի իշխեցի նա յանարդաց, որպէս  
զի քաղցր լիցի նմա իշխիլ յայ իւրմէ : Խտես ած՝ զի  
մարդիկ ոչ երկնչին յիւրմէ, և ոչ ՚ի ժժուխոց . արար  
զի երկիցեն յանարդ և ՚ի փանաքի կենդանեաց ՚ի  
նուասաւոց քան զինքեանս : Խտես ած զի մարդիկ  
բանիւք իւրովք ոչ յորդորին ՚ի բարին, զգաղանս  
կացոյց նոցա խթան . նա զի որպէս ասէ լուսաւորիչն

18      Ա Ե Կ Ն Ո Ւ Թ Ւ Խ Ե Ն  
մեր՝ի յանձնապատում՝ գիրս . ( Հառ . կ . ) \*ուր  
,, ուրեք վնասեն մեզ ( վնասակար իրք և գաղանք )  
,, յերկիւղն այ շարժեն զմեզ . զի ՚ի հեզզութէ ՚ի  
,, վարս առաքինուել վերաբերիւ մարթացուք միշտ :  
Չուցանեն միանգամայն ևս թէ տպա քանի դառնա-  
գոյն ից՝ մասնիկ ՚ի ձեռս անմարմին գայլոց , և ան-  
քուն որդանց : Հանդիմանիչ ևս են սոքա սպերախ-  
տութէ մերց . զի յայնչափ բարիս այ վայելեալ՝ մեծ  
ինչ ոչ համարիմք զերախտիս նորա , և ոչ իսկ հա-  
նաւչ մք զվայելութի արարածոց նորա . և զգեղեց-  
կութի ործոյն , և զպիտանութի նոցին . իսկ յոր-  
ժամ նշանարկ յանարդս և ՚ի վնասակարս՝ նորիմքը  
տեսանեմք զմեծութի սոցին և ամաւչեմք , Հօր միտ  
ասել լուսաւորին մեր՝ի նախայիշեալ տեղիդ . Յա-  
րարածս ամենոյն \* են մեծամեծք և մանունք , յար-  
ու դոյք և շատեկանք , պիտանիք և անպիտանք , զա-  
,, զիըք և զեղեցիկք , ( օգտակարք և վնասակարք ) .  
,, զի երեւոցի լաւն ՚ի վատթարե և անարդն ՚ի  
,, պատուականէ , որպէս խաւար ՚ի լուսոյ հանալի ,  
,, և լոյսն ՚ի խաւարեն : Օ հուսկն ասացից տաղտ-  
կացուցիչ են սոքա երկար մնալոյ մեր յաշխարհի , և  
զզուեցուցիչ երկար սանդ խտութենս , և յորդորիչ  
ելանելոյ յայսպիսի ախոռէ և ժամանելոյ ՚ի հայրե-  
նիս մեր . վասն զի սոքա և այլք ընդ սոսա՝ յորս  
ընակիմք , ատեն զողջոյն , սյունքն զիսազազական  
կեանս . և եթէ խաղաղութք կամիցիմք վարիւ ընդ  
սոսա , ոչ կարեմք միշտ . մանաւանդ թէ երբեմն ՚ի  
կամին խաղաղել նոքա ՚ի խռովութիս բերին . ըստ  
որում վիայէ մարդարեն զթշնամեաց իւրոց և ասէ :

۷۰۰ میلیون نفر را در این کشور پنهان نموده است.

Ուեծ իմն վիշտ է մարդոյ՝ 'ի ջանալն խաղաղել զայլս  
անկանիլ՝ 'ի խռովութիս և 'ի թշնամանս . և զի զայս  
կը ին իսրայելացիք 'ի գերութել իւրեանց , որով ա-  
ռաւելոյը վիշտ նոցա , զսոյն առաջի դնէ աստ մար-  
գարեն ասելով :

մի ասել. Ես եի սիրող խաղաղութե՛ք, և խաղաղին

խոսվութեն, կամ թէ ցանկալի էր ինձ կալ խաղաղութքը և ատելի էր ինձ մնալ՝ ի խռովութեն: Եւ զիարդ եղե ինձ բնակիլ՝ ի մէջ բազմախռով բազմութեն, որոց ոչ միայն ոչ կամէի առիթը ընծայել խռովելոյ, այլ մանաւանդ յօրդորանս տայի խաղաղեւոյ: և սակայն նոքա փոխանակ խաղաղելոյ վրդովի ին, և գարձեալ խռովի ին, և խռովութք վարէին ընդ իս, կռուելին և կռփէին զիս: Ուր լոելեայն իմն յայտ առնե մարդարէն և զհառաւանս սրահի իւրոյ, թէ:

Երբ իցէ՝ զի աղատեսցի ՚ի վրդովմանց աստի:

Բարոյապէս, այս փափաք հայի ՚ի խաղաղարարութ անձին ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: որոյ ժառանգութքը երանելի համարի մարդս մինչեւ կոչիլ ևս որդի ոյ: ըստ այնմ: (մատ. ե. 5.) \* երանի խաղաղարաց, զի նոքա որդիք ոյ կոչեսցին: յօրոց վերայ առե չնորհալին: (՚ի մեկն. մատ. դլ. ե.) \* մեծ է՝ որ ինքն առ ինքեան առնէ խաղաղութիւն ըստ սահմանելոյ արարցին, տիրական կամաց հոգ, ոյն՝ տալ իշխել ՚ի վերայ կամաց մարմնոյն, և ծառայակցին չնազանդիլ կամաց հոգւոյն, և որ զայսպիսի խաղաղութի առնիցէ առ ինքն և առ այլս խրատելով և ուսուցանելով նա է առաջին արժանաւոր կոչիլ որդի ոյ:

Եւ թէպէտ ընդ այսպիսիս մարտնչին զգայութիք, բայց ՚ի ժառանգել մարդոյ միանգամ զվիճակ խաղաղութեն՝ անդորրութիւն սրտի նորա և վերառումն հոգւոյն ոչ թոյլ տայ նոցա վրդովել զանձն ըստ վերին մասին: Եւ ըստ այսմ մարդ խաղաղացեալ նմանի ոլիմպիաթ լերին: որոյ թէպէտ ՚ի ստորին կոչմն բազմագիմի յուզմունք լինին ՚ի հողմոց և յանձրեաց ՚ի գաղանաց և ՚ի սողնոց, բայց վերին կողմն ամենեւին անվրդով կայ: ըստ ամին և մարդ խաղաղ՝ թէպէտ և պէսպէս վրդովմանս տեսանեւ ՚ի ստորին մասն հոգւոյն, բայց ըստ վերինոյն անպղասոր մնալով, և ըստ կարի զհառակ երկնային խաղաղութեն վայելով փափաքի ՚ի բուն իսկ աղըիւը ժամանել, և ՚ի նոյն ցնծալ յաւիտեան:



## ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Համբարձումն հսկոյ ՚ի վերինս իբրև ՚ի լերինս  
առ ՚ի գտանելոյ զօգնութելոյ միայնոյ, և զուաչ  
պանուի ամենահայեաց տեսլութե նորա:

(Օրդինարի Ասոքիանաց:

1 ամբարձի շաւ էմ ՚ի լերինս, առասի եկեղեւ ինչ օգ-  
նանելի: 2 (Օրդինարի ինչ ՚ի պատ էկեղեւ, որ արար  
ուրինս և ուրինը: 3 Ո՞ւ ուր ՚ի աստիճանը զարդ ու: և  
մի անջեց պահապան ու: 4 Սրբեւ մէ անջը և աչ ՚ի քառ  
երես պահապան իսրայէլ: 5 Տը պահեց զեւ, և ուր  
ընկալեւ ուր յեւամբ իսրայէլ: 6 Արքաւուն ՚ի ուր ու մի պ-  
թշեց, և մի լսութն ՚ի գելքի: 7 Տը պահեց զեւ յո-  
մեայն չարէ: պահեց ուր զայն ու: 8 Տը պահեց զեւ  
և ուր ու՝ յայսմ հետէ մինչև յասիստան:

## ԱԼԲՐԵՐ Ա. ԳՈՒՐ

(Օրդինարի Ասոքիանաց:



**Յ**Ա ՎԵՐԵՐԱԳՈՐ ՚Ի ԶՈՐԱ ԶԵ-  
ռագիրս մեր և ՚ի սաղ վարդ . ը ձեռագ.  
դնի երդ աստիճանաց . յերկուս դնի օրհ-  
նութե աշտիճանաց . ՚ի միում ձեռագրի  
և ՚ի քանի մի տպագրեալս՝ օրհնութե աստիճանաց .  
՚ի միումն սոսկ աստիճանաց . ՚ի հինգ ձեռագիրս որ-  
պէս և ՚ի սաղ լամբ դնի ըստ դնելոյ մեր \* օրհնութե  
,, աստիճանաց || . Այլ որսկէս ասացաք ՚ի վերնագրի  
նախընթաց սաղմոսին ամենեքին ՚ի նոյն հային . զոր-  
մէ տես ՚ի ներածութե . (գլ. ժամ:

Օ այս սաղմոս ոմանք համարին իբր շարունակութե  
նախընթացին , ըստ նմին ասացեալ ՚ի բերանոյ որդ-  
ոցն իսրայէլի գերելոց ՚ի բարելոն վասն գտանելոյ

զոգնութեալի յաղատութեան անձանց իւրեանց . ևս և  
զպահպանութեան նորա . բայց միանդամայն և 'ի բերա-  
նոյ մարդարեն առ նոյն որդիսն իսրայէլի իրրեաքա-  
ջալերութեալ և սփոփութեանցին . Խոկ այլք ասեն  
յօրինեալ 'ի դաւթայ 'ի հալածիլն անդ յերեսաց  
արեապաղուայ . և ոմանք ևս թէ յայլմէ ումեք 'ի միք  
մեծի վասնդի 'ի ժամանակիս յովապիատայ արք յի  
յուդայ . ( թ . մնաց . ի . 12-15 . ) զորմէ տես 'ի սադ-  
ձէ : Այլ զի առաջին կարծիքն հաւանական թուի  
'ի նոյն հայելով ունիմք մեկնել և մեք զայս սազմոս :

## Բ Ա Շ Ե

ամբարյի զայս իմ 'ի լըքինս . ուստի եիեցէ ինչ ոգ-  
նութէ :

## Մ Ե Կ Ե Ո Ւ Թ Ի Լ Ե

Որ միանդամ երկար ժամանակաւ պանդխտացեալ  
ից : յօտարութեալ 'ի հայրենիս հառաւէ , յայն փափա-  
քի , և 'ի նոյն բերի . և 'ի յօժարութեալ անտի իւրմէ  
զոր ունի 'ի որտի 'բաղում անդամ յայն հայի , այս-  
ինքն 'ի կողմն սահմանաց հայրենեաց իւրոց : Աւ  
եթէ իցէ 'ի գերութեալ և կամ յաքսորման , զրեթէ  
միշտ 'ի հայրենիսն անդ ունի յառեալ զայս իւր , ոչ  
միայն վասն 'ի նոյն բերելոյ ցանկութե իւրոյ , այլև  
վասն դժանելոյ անտի թերես օգնութե ին :

Օսոյն առնելին և որդիքն իսրայէլի գերեալ 'ի բա-  
րելոն , որպէս և դասիթ հալածեալ 'ի քաղաքէ իւր-  
մէ յորժամ դեղերեր 'ի դաշտավայրս : Աւ զի հրեաս-  
տան առհասարակ 'ի լերինս բարձունս և 'ի թլուրս  
ուներ զդիբոս իւր , յորոց միջի եր և լեառն ոք և տուն  
նոն , 'ի լերինս յայնոսիկ հայէին որդիքն իսրայէլի ,  
և 'ի նոյնս հառաւէին , ակնունելով զօգնութե զ տա-  
նել անտի . որպէս առներ և դասիել՝ որ եր մին 'ի  
գերելոց . ( դան . կ . 10 . ) նոյնակէս և զօրաբարել 'ի  
գոհանալ նորա զնյ . ( ա . եզր . կ . 58 . ) Քայսոսիկ  
հայելով մարդարեն 'ի զիմաց սոցա խօսելով

առեւ:

Համբարձի զալս իմ՝ ի լերին, ռասով է հետաշնչ ինչ օգնութելի: Այսի առեւ, ՚ի գերութեն իմում՝ յորում հալի և մաշկի, համբարձի զալս իմ, և հայեցայ ՚ի կողմն լերանցն հրեաստանի՝ իմում ցանկալի հայրենւոյ՝ ուրէ տուն ոյ իմոյ, ակնունելով թէ անտի եկեսցէ ինձ օգնութի ինչ առ ՚ի ազատելց զիս ՚ի գերութեն աստի:

Այսի այս է իմանալի այս բան ՚ի խօսիլն ՚ի բերանոյ զաւթի, որպէս թէ ասացեալ էր. ՚ի վարիլ իմում յօտարութի յերեսաց արեսազոմայ՝ հայեցայ ՚ի լերինս երուսաղեմի՝ ուր է տապանակն ոյ իմոյ, և ակնկալեալ սպասէի՝ զի հասցէ ինձ անտի օգնութիւն: ՚յւ ըստ այսմ բառդ ռասով՝ գնի իբրև տեղական մակրայ փոխանակ բառիս անտի, կամ յորոց, որպէս թէ եգեալ էր. համբարձի զալս իմ ՚ի լերինս երուսաղեմի, զի եկեսցէ ինձ անտի օգնութիւն:

Ոմանք իբր հարցական առնուն զբառդ ռասով կամ ըստ երրի՝ կային, որպէս թէ եգեալ էր. համբարձի զալս իմ ՚ի լերինս, և ասացի. ուստի՝ արդեօք եկեսցէ ինձ օգնութի. որում տայ պատասխանի, օգնութի ինձ ՚ի նոնի եկեսցէ: ՚նայց այս մեկնութի թուի թէ Ըստ յարմարութեն միայն գնի, և ոչ ըստ նշանակութեանն:

Խորհրդաբար, այսոքիք լերամիք նշանակին նախ իբապէս այն լերինք, յորս կատարեցան խորհրդաւոր գործք, որպիսի եղաւ տիրապէս լեառն ամօրիա, որ և կոչի լեառն ամուրհացւոց. ուր երեւեցաւ խոյն, և մատուցաւ ողջակէզ յօրինակ ողջակիզելց որդւոյն ոյ ՚ի լեառն գողցոթայ. յայս լերինս ակն ամբանայր մարդկայինս բնութի, ոչ զի լերինք էին նոքին այլ զի խորհրդաւորք էին. յորոց ակն ունէր փրկութէ: Կշանակին երկրորդ ածային բարձր խորհուրդք. յորս համբառնայր մարդն զալս իւր՝ գտանել զմի միայն զօդնական իւր զյս:

Ա երածաբար, սոքիմք նշանակին բարձրուիք երկնից՝ յորս է երուսաղեմն լերին. առ որ կարօտելով պանդխտելոցս յերկը՝ համբառնամք զալս մտաց մե-

բոց, ակնունելով օգնութիւն գտանել՝ ի վերուստ անտի, և նովին օգնութիւն ժամանել՝ ի նոյն։ Դարձեալ լերամբք նշանակին հրեշտակք, և որք ոյց մանաւանդ երջանիկ առաքեալքն։ առ որս հայիմք նպաստիլ՝ ի նոյնունց։

Դարոյապիւս, լերամբք նշանակին նախ բարձր մտածութիք՝ յորս ի համբառնաւ հոգւոյն զմիան իւր՝ յուսադրի գտանել զօդնութիւն ոչ ի լերանց անտի, այլ յայ։

Դասցի բարձր, զի համբարձումն առ բարձրն լինի։ ըստ որոյ ասէ համբարձի զաւս իմ։ իսկ այսպիսի մտածութիք կամ խորհրդածութիք յայնժամ համարին բարձր՝ յորժամ օգտիւ հոգւոյ լինին։ ապա թիւ ոչ ստորին ասին և իրը բնական։ և կտտարին իրը ձախու ակամք, և ոչ աջոյ։ իսկ վերինն աջով վճարի։ և այս է այն՝ զոր քայ ճրագ ասաց։ \* Ճրագ մարտնոյ „ակն է』։ (մատ. 7. 22.)

Օսա ջանայ հանել՝ ի մէնջ սատանայ։ որոյ յօրինակ նասա ամմանացի կամնցաւ հանել զաջոյ աչսն արիսացոց։ (7. թագ. ժամ. 2.) Եթէ համբարձցուք զա ի բարձունս՝ և բացահայեաց յառեսցուք, ոչ մերձենայ ի մեզ սատանայ։ զի որք բաց են աչօք, թշնամին ոչ մերձի առնոսա։ Օ այսպիսի աչս՝ իմաստունն կոչե աղաւնոյ՝ յասելն. (երգ. Է. 12.) \* աչք „նոր իրեւ զաղաւնիս լուացեալ կաթամք. նստեալ, „ի վերայ լիութե ջուրց։ զի բարեհայեաց են և մաքրեալ քաղցրութիւն կաթին, վասն զի նստեալ են այսինքն հաստատեալ են ի վերայ մտածութեց, ևս և բարձրացեալ՝ ի վեր ի տեսանել զարանչելիսն ոյ։ Իսկ որոց աչք զերկրաւ գան՝ յանարդութիւն ածին։

Դայլ են ոմանք որոց աչք հակառակար բերին, որոյ վասն և ներհականս դորձեն։ իրը զի ի լերինս ամբառնալով զարմանալի լինին և զարմանալիս գործեն։ իսկ ի ստորինս և յերկնաւորս իջանելով անարդգանան, ևս և դաժանունան՝ հանդոյն գաւազանին մովեսի, որ յորժամ ամբարձեալ լիներ՝ զսքանչելիս առներ. իսկ յանկանին ի գետին՝ յօձ դառնայր։ Հիրաւի աշխատութիւն ունի համբառնաւ զիրն ի վեր

24 Մ Ե Կ Շ Ո Ւ Թ Ե Ւ Ն  
քան խոնարհեցուցանել ՚ի վայր բայց դու մի հայեր  
յաշատութիւն այլ յօդ ուտն, և յուսայած ասելով  
օգնութիւն ՚ի տներ եկեցեւ :

Եշրկրորդ՝ այսոքիւք լերամրգ բարոյապէ, ս նշանակին  
դերազանց և բարձր աստիճանք առաքինութեց . որ-  
ովէս զի յայնս ձկտելով կարասցուք հասանել ստոր-  
ոյն . զի որովչետե տկար եմք՝ ՚ի խնդրել մեր զայս  
ինչ առաքինութիւն զորորինակ զհամբերութիւն, պար-  
ափառ երեւմն ձկտիւ ՚ի գերազանց աստիճան համբե-  
րութեց . զի կարասցուք ժամանել ՚ի բուն առաքինու-  
թիւ համբերութեց : | թէ աղեղն տկար իցէ՝ պարտ  
է փոքր մի ՚ի վեր ուղղել, զի հասցէ նետն ՚ի նպա-  
տակն սոյնպէս արժան է առնել և մեզ տկարացե-

Ըստ :

Եշրորդ՝ նշանակին մեծամեծ բարեգործութիւք . որ-  
պէս զի զայնակիսիս փափաքելով գործել, կարասցուք  
գոնիշ զփոքունս կատարել : || աճառականք բարձր  
զին ասեն, զի գտցէն գոնիշ զբուն զինն . ուստի  
առակ է առ նոսա \*իխնդրեալ զանարդարն, և գտցէս  
ո զարդարն . դու ևս խնդրեալ զլոյժ արդար գործս,  
այսինքն զմեծագոյնս, զի գտցէս զարժանաւորս :  
Օ փափաք քո կալ ՚ի մեծն, և զմեծն կալ ՚ի փոքրն .  
զի մեծն փափաքելով ՚ի փոքրն ժամանես . և զիո-  
քունս գործելով առ մեծն հասանես . զորմէ ունիմք  
խօսիլ ՚ի համարն . Յ : | չ զի յայում ամենայնի կարօ-  
տի մարդ օգնականուեն ոյ, յայն ապաւինելով մար-  
դարէին ասէ :

Ե . ( ) Գնուելի բնչ ՚ի տնե եկեցէ, որ աբար չէ չինս և  
չէ բնէ :

Արկին օրինակաւ հասանե մեզ օգնութիւնյ . մի առ  
՚ի աղատիլ ՚ի չարէ՝ կամ ՚ի վանել զարն . և մի ևս՝  
առ ՚ի ստանալոյ զարին, կամ առ ՚ի գործելոյ զայն  
ինչ առ որ անձամբ չեմք բաւական . ըստ երկուցս  
ըստ այսոցիկ ևս իմացեալ իխնի աստ հասանելն օգ-

նութե առ յոյ, յասելն :

( ) Գնուելի բնչ ՚ի տնե եկեցէ : Ասմի ասել . ՚ի համ-  
բառնալ զայս իմ ՚ի լերինս վասն օգնութիւն գտանե-  
լոյ, ոչ եթէ ՚ի լերանց անտի ակնունէի այն մ օգ-

նութե , այլ 'ի նոնէ՝ որ բնակի 'ի մէջ լեռանցն այնոցիկ 'ի քաղաքն երուսաղէմ , կամ 'ի վերինն սիսն և 'ի բարձր իրս : Եւ զի մի կարծեացէ ոք՝ թէ զօրութն ոյց միայն յերուսաղէմ իցէ կամ սոսկ յերկինս , և անտի միայն կարիցէ օգնել . որպիսի համարեալ լինէթ առ հրեայս , ևս և առ հեթանոսա առ որս զօրութն սուտ ածոց նոցա պարագ ըիւր 'ի սահմանաւոր տեղիս , վասն այսորիկ յաւելու ասել :

Ու արար չերինս և չերիւր : Որով կամի ցուցանել , թէ զոր մըր կուշեաց , նա և շշմարիտ մծ՝ արարիւ երկնի և երկրի . և ամենայն ինչ կայ 'ի ձեռքին նորա . ուստի որպիս և կամի՝ կարող է օգնել , և ոչ կարօտի այլում , և ոչ ևս սպասէ ժամանակի . միայն թէ մարդս շշմարտապէս , և հոստատութք համբառնայցէ զյօյս իւր առ նա . և մի կասեացի 'ի նմանէ յետս և մի լրցի 'ի յառաջադրութիւրմէ : Եւ զյօյս կամելով հաստատել մարդարէին , և զանձն յուսացելոյն աներկեան կացուցանել քաջալերս տայ նմա և ասէ :

Ե .  $\prod$  է դար 'ի սասանութի զայն ու , և ի ննջեացէ դա հապան ու :

Եւ ինչ օգուտ մարդոյ՝ զայս 'ի վեր ամբառնալ , եթէ յոտսն սասանեացի այլ , վտանգաւոր ևս . որպէս զրեալ է զումեմնէ իմաստասիրէ , թէ 'ի գնալ զճանապարհ գիշերայն՝ 'ի վեր ամբարձեալ ուներ զայս իւր 'ի տեսութիւն աստեղաց . և ոչ տեսեալ զփոսն որ առաջի կայրնմա՝ 'ի նոյն սահմեցաւ ոտիւք . յայնժամ ասէ ցնա ուղեկից նորա . դու որ զառաջիկայդ ոչ տեսանես , զիարդ զերկնայինսն տեսանիցես : Վերքանզի եգ մարդարէն համբառնալ զայս 'ի վերինս վասն գտանելոյ զօգնութիւն , զգուշացուցանէ չսաստնեցուցանել զոտն . ըստ որոյ ասէ մեծն խոսրով ( 'ի մեկն . ժամանքը . երես . 65 . ) \* 'ի սաղմոսելն վասն , օգնականութիւն և պահպանութիւն խնդրելոյ՝ յարեն , 'ի նոյն , մի տար 'ի սասանութի զոտն քո || :

Եւ զի եղակի դնէ զոտն՝ տայ իմանալ զկամսն . և ըստ այսմ որպիս համբարձումն աչաց հայի 'ի միտս , սոյնպիս և սասանումն ոտին հայի աստ 'ի կամս : Իսկ սասանումն ոտին ըստ ինքեան առեալ նշանակէ զսկզբ-

նուորութիւն կործանելոյ անձին, և փոխաբերմամբ զսկընաւորութիւն կործանելոյ կամաց՝ ի յուսահատութիւն, և կամ նշանակէ զհատումն յուսոյ՝ ի կործանել ի շարն։ Խւ քանզի ազգն խրայէլի՛ որ գերեալ էր՝ ի բարելոն, մերձ էր սասանիլ՝ այսինքն անկանիլ՝ ի յուսահատութիւն համարելով թէ ոչ ևս օգնէ անձ, որում հետեւը միանալ նոցա ընդ հեթանոսա, քա-

ջալերէ զնոսա մարգարէն և ասէ։

**Ո**ք ոտք՝ ի սասանաւենան զնոն ոռ, և մի ննջեսց պահան ուն։ Կամի ասել. դու որ համբարձեր զալս քո՞ ի լերինս, և ակն կալար օգնութեն ոյ, համբերեան փոքր մի ևս, և երկայնամիտ լեր. մի վհատիր՝ և մի յուսահատիր. գիտասնիր՝ զի անձ ոչ է ՚ի քուն, և ոչ երբեք անջեսցէ. այսինքն ոչ ցուցցէ քեզ զինքն իբրև ոչ զգացող հանդոյն ննջողաց, այլ ցուցցէ ՚ի քեզ զօդնութիւն իւր. և որ պահապան քո էր ՚ի սկզբանէ, նա ինքն պահեսցէ զքեզ անվտանգ. և անվնաս ՚ի գերութե և ՚ի պահնիստութե քում, և լինիցի քեզ պաշտպան ՚ի նեղութե։ Վայ բան եթէ առ դաւիթ ևս հայիցի, սովորն մեկնութիւն մեկնի. Վայն պէս է եթէ վերածիցի և առ ու և իցէ անձն՝ որ ՚ի պահնիստութե կենցաղոյս համբառնայցէ զալս իւր առ աստուած։

**Վ**այ զգ ևս կարէ մեկնիլ այս բան՝ իբր երկրորդական մեկնութիւն, հայելով յայն՝ թէ անձ ոչ թողուզմարդ՝ եթէ մարդ ոչ թողցէ զանձ. յօր միտ կամի ասել. եթէ դու ՚ի կողմանէ քումմէ ոչ սասանեցուացես զոտն քոտն, և ոչ սահեսցիս ՚ի մեզս, անձ ևս ոչ անհոգ լինիցի զքէն։ կամ՝ որ նոյն է, եթէ դու կամովին ոչ կործանեսցիս՝ անձ ոչ ցուցցէ զինքն առ քեզ իբր ՚ի քուն լեալ. որ է ասել. եթէ մարդ ոչ հեռասցի յոյ, անձ ոչ երբեք հեռանայ ՚ի նմանէ։ կամ որ նոյն է, եթէ մարդ ոչ թուլասցի ՚ի պահանութէ պատուիրանացն ոյ, անձ ևս ոչ թուլասցի ՚ի պահպանութէ անձին նորա։

**Օ**ի թէ պէտ պահպանութիւն և փրկութիւն մարդոյ և կատարելութիւն կենաց՝ յոյ է, բայց կամի անձ՝ զի ՚ի մարդոյ ևս իցէ. յօր միտ ասէ բարսեղ վարդապետ. ( ՚ի մեկն. մարկ. գլ. ժղ. ) թէ \* յերկոյունց

,, կատարի առաքինութիւն՝ 'ի մէնջ և յոյ ։  
իսկ սասանումն՝ 'ի մէնջ միայն . վասն որոյ յաւելու  
ասել նոյն բարսեղ վարդապետ՝ 'ի յորդորակի անդ ,  
թէ \*պարտ է յամենայն կողմանց զց ուշանալ անձանց  
,, զի մի վասանգիցիմք . ըստ այսմ թէ մի տար 'ի սա-  
,, սանութի զոտնքո , և ոչ ննջէ պահապանն իսրայէ-  
,, լի . տես ասե , չասաց , թէ ոչ սասանեսցիս , այլ  
,, թէ դու մի տայցես . ապայսոյտ է թէ 'ի մէնջ է-  
,, տան և չտան , և ոչ յայլ ումեքէ . զի թէ կամի-  
,, ցիմք անշարժ կալ , ոչ երեկք սասանիմք ։ :

Տարոյական տեսութիւն , սասանումն ոտին հայի յան-  
կումն՝ 'ի պակասութիւն փոքունս կամ յարհամարհու-  
թիւն փոքունց . յորմէ զգուշացուցանէ ասելով , մի  
թոյլ տար ոտիցդ՝ այսինքն զգայութեցդ՝ սահիլ 'ի  
փոքունս , զի մի անկցիս 'ի մեծամեծս + մի ասեր ,  
թէթե իմն է . ապա թէ ոչ 'ի ծանրագոյնս կործանիս .  
զի \*որ արհամարհէ զփոքըն , փոքր փոքր կործանես-  
,, ցի ։ (սիրաք . ժթ . 1 .) Եւ որ 'ի փոքուն զգոյշ  
կայ , ևս առաւել ի մեծին . որ զգուշանայ 'ի փոք-  
րագոյն պակասութեց՝ զերծանի 'ի մեծաց . որ երկն-  
ցի 'ի ներելի մեղաց , ոչ անկանի 'ի մահացուս . զի  
\*որ 'ի փոքուն հաւատարիմ է , և 'ի բազմին հաւա-  
,, տարիմ է , որ 'ի փոքուն անիրաւ է , և 'ի բազմին  
,, անիրաւ է ։ (զուկ . ժկ . 10 .) Եւ փոքուն մեծն  
ցուցանի . որ ոչ կարէ բաւնալ զրեռն թեթե , ոչ  
ևս կարէ զծանրն . ոչ կարես լիտր մի տանիլ , զիարդ-  
կարացես տանիլ զտաղանդաւորն . Եթէ նուածիս 'ի  
տղացայ , դիւրաւ ընկճիս յերիտասարդէ . Եթէ յաղ-  
թիս 'ի տկարէ՝ իսպառ յաղթահարիս 'ի հզօրէ : Իբր  
ոցինչ համարելով զփոքունսն ոչ զգուշանաս , վասն

այսորիկ և տկարանաս և վատթարանաս :

Եթէ նաւն ունիցի ծակ յոտան այսինքն 'ի ներքոյ՝  
յանփոյթ լինել նաւապետին , ջուր առնու և ընկղմի ,  
և նոյն էր թէ ալեօք ընկղմէթ . Ըանկանիլ փոքրիկ  
կայծական 'ի վերայ զգեստուգ՝ եթէ ոչ թօթ ափես-  
ցես զայն՝ այրիս : Կան փոքրիկ պակասութիւն առա-  
ջի դնէ , և փոքումքը յառնէ 'ի վերայ մեր . զի 'ի  
փոքունսն 'ի նոսին սահեցուցէ , և մարզիցէ , և  
'ի մեծամեծս կործանեսցէ . այլ դու մի տար 'ի սա-

Մ Ե Կ Շ Ո Ւ Թ Լ Ի Շ Ե  
սանութիւն քուն քու կը կամ ի սկզբան առաջի դնել զի մի երկիցես . լարէ զորոգայթ փոքրիկ . եթէ զոտնդ մերձեցուսցես՝ ըմբռնէ զանձն քու ողջոյն , և կորուսանէ . Օ փոքր բարին արհամարհ ցուցանէ՝

զի զմեծն ևս արհամարհելի արասցէ :

Ապա դու ևս հակառակ այնմ , գրկեամ զիոքր բարին , և զգուշացիր 'ի փոքր չարէ . և այս է այնպիսի հնարք խոնարհութեն , որում ոչ կարէ հանդուրժել գեն : Արօնաւոր ոմն միշտ պարապէր փոքր գործոց առաքինութեն և յետս կայր 'ի փոքր չարեաց . երեցաւ նմա գեն և ասէ . ասպաքէն կրօնաւոր ես դու , պարտ է քեզ մեծամեծ գործոց զհետ լինիլ , և 'ի փոքր փորձութեց չերկնչիլ . պատասխանի ետ կրօնաւորն և ասէ . ով եմ ես՝ զի ձեռն արկից 'ի մեծամեծս . տկար եմ ես , վասն որոյ և 'ի փոքր չարեաց երկնչիմ . զայս լուեալ գիւին հալածեցաւ :

Ուեծամեծ իրք 'ի փոքրունց սկսանին՝ եթէ բարիք և եթէ չարիք . ոչ ոք յանկարծ եղանի ծայրագոյն բարի կամ ծայրագոյն չար . ոչ ոք առանց այբուբենի հասանէ . յածարանութեն ուսումն . ոչինչ պտուղ 'ի ծաղկին հասունանոյ , և ոչ իսկոյն ապականի : Ուինչ տուն ինքնին միանգամայն կործանի , փախն գերանը և տախտակը . թափին որմունք , կաթին կաթիլք անձրեաց , թիւրին կողմունք և անկիւնք , և աղասասանի և կործանի : Ո՞ի թոյլ տար փտիլ առաքինութեցդ , և թափիլ բարի գործոցդ . պահեամ զքեզ յանձրեայ փորձութեց , և զգուշացիր յառթից . և ոչ սասանիօ . զօրացիր և մի վհատիր . ունիս և օգնական զայն՝ որ ոչ ննջէ , և ոչ 'ի քուն երթայ իրը կ զմարդ , ոյլ միշտ արթուն կայ , մանաւանդ 'ի վերայ այնոցիկ որք իւրբն են , որպէս էր 'ի վերայ իսրայէլի . ըստում և ասէ մարգար էն :

Դ .  ոչ անջէ և ոչ 'ի ժառն երթայ պահապան էս բայէլի :

Ազգն իսրայէլի կը կնակի տեսանիւր . մի՝ ընդհանրապէս՝ ըստ որում ազգ ընտրեալ յայշ 'ի ժողովուրդ սեփական՝ յորում յանդիմն երեխիր եկեղեցի այ . և ըստ այսմ միշտ պահապան էր հմա ած , և ոչ եր .

բեք թողոյր 'ի ձեռաց , մինչեւ 'ի փոխիլ եկեղեցւոյ  
'ի հեթանոսա : Երկրորդ՝ մտածիւք ըստ մասնաւորի,  
ըստ որում պարունակեք յինքեան զայս ոք և զայն .  
և ըստ այսմ ած ոչ էք միշտ պահապան այնմ , այլ  
թողոյր ևս զնա բազում անգամ . որպէս և տեսանի  
յածաշնչի : Արդ մարդարեն յայսպիսի իմն զանազա-  
նութի հայելով ասէ զայս բան . իբր զի զպահպանու-  
թի կամ զօգնութին այց՝ զոր ուներ առ ազգն իս-  
րայէլի ընդհանրապէս առելոյ՝ հպեցուցեալ աստա-  
նօր առ նոյն ազգն ըստ մասնաւորի առեալ ասէ :

Ուստի ոչ ննջէ և ոչ է տառ երեսոյ պահպան իսրայէլի :  
Կամի ասել . ածն իսրայէլի՝ որ միշտ պահպանէ զնա  
զգուշութիք՝ և ոչ բնաւ ննջէ , և ոչ երթեք 'ի քուն  
երթայ , նա ինքն օգնեսցէ և պահեսցէ զբեզ . Ուր  
բառդ ննջէ ցուցանէ զինիրհելն , այն է հբաժել . իսկ  
'ի քուն երթան առաւել ինչ ցուցանէ՝ այսինքն է  
'ի խորութիւն քնոյ ըմբռանիլ : Օ այսօսիկ բառս 'ի  
միասին յարելով՝ կամի յայտ առնել մարդարեն , թէ  
ած միշտ արթուն կայ , և ոչ երթեք փակէ զաւս իւր  
իբրեւ ննջօդ :

Իսկ ննջել ասի զոյ կամ 'ի քուն լինել , յորժամ այն-  
պիսի ցուցանէ զինքն՝ որպիսի ցուցանեն ննջօդքն .  
իբր զի որպէս որ ննջէ՝ ոչ զգայ և ոչ հոգայ , սոյն-  
ովէս յորժամ ած ցուցանէ զինքն ոչ զգալ և ոչ հո-  
գալ՝ ասի իբր ննջեալ , կամ իբր 'ի քուն լեալ :

Այս բան՝ զորմէ ասացաք հայիլ առ ազգն իսրայէլի  
ըստ այլ և այլ բանի մտածեալ՝ կարէ հայիլ առ նոյն  
ըստ նոյն բանի՝ առ նոյն ազգն խօսելով . յոր միտ  
կամի ասել . որ պահէ զիսրայէլ ոչ երթեք ցուցանէ  
զինքն 'ի քուն լեալ . և զի դու ես ազգ իսրայէլի ,  
ասաւ ոչ երթեք ցուցանէ զինքն առ քեզ իբր 'ի քուն :  
Իսկ եթէ այս բան կարեսցի 'ի դէմս արդարոց՝  
պարզագոյն ևս մեկնի . իբր զի որ արդարն է , պահ-  
պանի յոյ իբրեւ ազգն իսրայէլի . վասնզի ած պա-  
հպանն է խօսայէլի , այսինքն այսոցիկ՝ որք զաւս իւ-  
րեանց ամբառնան առ նա , զի իսրայէլ թարդմանի  
ածանկատ . և որպէս նա ինքն ած անքուն ցուցանէ  
զինքն առ իսրայէլ , սոյնպէս և առ արդարն , և թէ-  
պէտ և երթեմն այլազգ ևս երեւցուցանէ , բայց 'ի

Հասարակի խօսելով ոչ պակասի՝ ի պահպանելոյ։  
Այն յակոր մծբնայ հայրապետ ('ի ձառն. ժք.) այսու-  
բանիւ հաստատէ զլինին այ անշարժ և անվաստակի,  
յասելն։ \* լուր զհաւանութիւն, թէ ոչ վաստակի  
,, (այսինքն ոչ հագնի) ամծ ։ դաւիթիսկ ասաց, թէ  
,, ոչ ննջէ և ոչ ՚ի քուն երթայ պահպանն իսրայէ-  
նի ։ և որ ոչ ննջէ և ոչ ՚ի քուն երթայ, (նա) և  
,, ոչ վաստակելով վաստակի (այսինքն ընաւ. ոչ վաս-  
տակի)։ | Ճա ոչ վաստակելովն պահէ և պաշտպա-  
նէ ։ զոր և ՚ի մէջ բերէ մարդարէն ՚ի յաջորդ հա-  
մարն ասելով։

**Ե.** **S**էր պահեսցէ զնել, և ոէր ընկալցէ աջոյ յեռամբն  
իւրով։

Երկու ինչ եղ մարդարէն ՚ի համարն Յ ։ մի՝ զու  
սասանիլ ստից՝ յասելն։ \* մի տար ՚ի սասանութիւն  
,, զոտն քոյ ։ և մի ևս զանքուն մնալն այ, յասելն։  
\* մի ննջեսցէ պահպան քո ։ առ առաջինն յայտ է  
թէ պահանջի պաշտպանութիւն կամ ձեռնտուութիւն  
այ. և առ երկրորդն ճշմարտութիւն պահպանութե-  
նորա։ Քյերկոսին ՚ի սոսա հայելով խօսի նախ զերկ-  
րորդէն այսինքն զպահպանուէն, ասելով։

**S**էր պահեսցէ զնել։ Պահէլն զգ նշանակէ զգուշա-  
նալ զնովաւ՝ զի մի մնասեսցի իւիք, խսկ պահպանէլն  
յասելու ՚ի վերայ և զհորդատարութիւն. և զի ՚ի վե-  
րայ եղ զրառդ պահպան՝ աստ պահէլ գնելով իմանայ  
պահպանել. որով ցուցանէ՝ թէ ամծ ամենայն խնա-  
մով զգուշանայ ՚ի վերայ այնորիկ՝ որ ՚ի պանդխտու-  
թէ իւրում ՚ի նա ասկաւինելով փութայ ժամանել  
՚ի հայրենիսն իւր. որպիսի էր ազգն իսրայէլի ՚ի գե-  
րութեն անդ, և իւրաքանչիւր մարդ ՚ի պանդխտուէ  
կենցաղոյս։ Օ այս եղեալ խօսի ապա և զառաջնոյն  
այսինքն զձեռնտուութէն այ ասելով։

Եւ ոէր ընկալցէ աջոյ յեռամբն իւրով։ Ի թու ձեռամբն  
այ նշանակի աստ ամենակարողութիւնորա ՚ի պահէլ  
՚ի կործանմանէ, և յառաջնորդէլ ՚ի բարութիւն. յոր  
միտ կամի ասել. ով մարդ, մի թոյլ տար սասանիլ  
ստից քոյ. և յայնժամ տեսացես թէ զիարդ պահէս-  
ցէ զբեղ տոր. և եթէ վաստակեսցիս, և կամ եթէ

վտանդ ինչ հասցէ քեզ սասանելոյ և կործանելոյ՝  
նա ինքն աջը ձեռամբ իւրով կալցի զձեռանէ քում  
մէ, և մի թողցէ զքեզ կործանիլ. և առաջնորդես-  
ցէ քեզ՝ անվտանգ և անվնաս 'ի հայրենիս քո հասա-  
նել. և դու 'ի ժամանել 'ի յետին կէտ կոչման կե-  
նացդ՝ ուրախութեա աւանդեսցես 'ի նա զհոգի քո.  
և նա կրկին ընկալցի զքեզ՝ աջը ձեռամբ, և յաջա-  
կողմն իւր դասեսցէ 'ի փառու արքայութե, Ա Ջ Լ Թ է  
զիարդ էր լինելոց այս անվտանգ պահպանութի, և  
անվնաս պաշտպանութի՝ յայտ առնէ մարդարէն յա-  
րացուցիւ՝ ասելով:

Ե. Ա բեգանն 'ի առաէ տեղ կ' եղիցէ. և կ' լուսինն 'ի  
գիշերի:

Ա յս նմանաբանութի ակնարկէ 'ի համարումն նախ  
նեաց՝ առ որս կարծիք էր թէ ցրտութի զիշերոյ և  
'ի լուսնոյ, որպէս և ջերմութի ցերեկի յարևել. ուս-  
տի որպէս զվնաս ջերմութի ցերեկոյն՝ տային արևու,  
սոյնպէս և զվնաս ցրտութի զիշերոյ՝ տային լուսնի.  
որովհետեւ ասի զլուսնոյ ունիլ իշխանութի զիշերոյ  
(ծնն. մ. 16:) Եւ վասն այսր պատճառի ասէր յա-  
կոր ցլարան. \* զցերեկ այրեալ լինէի 'ի տօթոյ և  
» զցայդ 'ի ցրտոյ. (ծնն. լ. 40:) Օ սոյն զայս  
համարումն 'ի նմանաբանութի առեալ մարդարէին  
ասէ:

Ա բեգանն 'ի առաէ տեղ կ' եղիցէ. և կ' լուսինն 'ի գիշերի:  
կամի ասել. որպէս յառաջնորդելն այ որդւոցն իս-  
րայէլի յանապատի անդ, և 'ի պահպանել նորա զնո-  
սա՝ ոչ տապ արեգական վնասէր նոցա 'ի տունջեան,  
և ոչ ցրտութի լուսնի 'ի զիշերի, սոյնպէս և յառաջ-  
նորդել նորա քեզ, և 'ի պահպանել նորա զքեզ՝ ոչ  
վնասեսցեն քեզ ոչ տապ արեւու և ոչ ցուրտ լուսնի.  
որ է ասել, ոչ 'ի տունջեան վնասեսցիս, և ոչ 'ի զի-  
շերի. և այս՝ եթէ 'ի մնալդ 'ի պանդխտութէ, և  
եթէ 'ի գնալդ 'ի պանդխտութէ 'ի հայրենիսդ:  
Փոխաբերական մտօք, արեգակամբ նշանակի այն  
ինչ որ է պատճառ բարեյաջողութեան՝ որ նմանի  
տունջեան. և լուսնիւ նշանակի այն ինչ որ է պատ-  
ճառ բազմափոփոխ ձախորդութէ՝ որ նմանի զիշե-

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ղ  
րոյ . արդ՝ 'ի պահպանել այլ զմարդն՝ ոչ այն վնասէ  
նմա , և ոչ այս , այլ մանաւանդ որպէս արեգակն պայ-  
ծառացուցանէ , և զջերմանէ տնկոց տածէ՝ 'ի սնունդ  
բարի . և որպէս լուսինն զովացուցանէ 'ի գիշերի , և  
լինի առաջնորդ ձանապարհորդելոյ , սոյնպէս և պատ-  
ճառք յաջողութեց եթէ մատակարարութին այլ աղ-  
դեսցեն՝ լուսաւորեն զմիսո , և բորբոքեն վկամն՝ 'ի  
սէր արարչին . որնպա յայտնի տեսանի այս 'ի գաւիթ :  
\* մանապէս և պատճառք ձախորդութեց զթօննեալ  
սիրտս և զթառամեալ սղիս զուարթացաւցանեն , և  
անմոլար առաջնորդեն՝ 'ի հայրենիս մեր , ըստ ձա-  
նապարհ ընդ որ գնացին առաքեալք և մարդարեք և  
հետեւօղք նոցին :

**Դ**արձեալ արեգ ակամք նշանակի նախախնամութին  
այլ յառաջնորդել նորա 'ի բարին . իսկ լուսնիւ նշա-  
նակի դարձեալ նոյն նախախնամութին նորա յոչ ա-  
ռաջնորդելոյն 'ի բարին , կամ յամփոփելոյ զայցելութի  
իւր , միայն թէ մի լքցէ զմարդն . ըստ որոյ կամք ա-  
սել . եթէ առ չիցէ քքեզ լքեալ յերեսաց իւրոց ,  
նախախնամութին նորա թէ յառաջնորդելոյն 'ի բա-  
րին , և թէ (ըստ երեւելոյն) 'ի պակասին յառաջ-  
նորդելոյ , քեզ մի վնասէսցէ այն :

Ուեծն խոսրով 'ի մեկնելոյն 'ի կարձոյ զայս սաղմոս .  
(Երես . 345 .) սոքիմքը իմանայ զփորձութիս և ըզ  
ներգործութիս մեղաց . և գրէ այսպէս : Յերեկոյին  
սաղմոսեմք . \* համբարձի զալս իմ 'ի լերինս , զի  
,, պահպանիցիմք տղրունական աջովիլ այլ . ուստի և  
,, ակնունիմք զօդնութին ընդունի յարարչէն երկնի  
,, և երկրի . և զի յարեւու փորձութեցն մի խորշակա .  
,, հար լինիցիմք . այլ պահելով զմեզ 'ի մեղանաց առ-  
,, բիցիմք և յամենայն որոգ այթից հոգւով և մարմ-  
,, նով ! :

Յաւելուն աստ ոմանք զայլ իմն մեկնութին . իրը զի  
արեգակամք իմանան զմէչեան արեւու . այն է մե-  
չեան ապազնի . իսկ լուսնիւ զմէչեան լուսնի , այն  
է մեչեան արտեմեայ : Յայսոսիկ մեչեանս նուերս  
առաքելին չեթանոսք , և խնդրելին 'ի չնացն այսինքն  
յարեգակնէ . և 'ի լուսնէ՝ շնչել զազդն խրայելի :  
\* յւլ մարդարեն քաջալերս տայ ազգին ասելով , մի

Երկնչիր, զի ոչ արեգակն վնասեցէ քեզ և ոչ լուսինն :

Հարմարական մեկնուք՝ արեգակամբ նշանակի խաւարասեր արուսեակն այսինքն սատանայ, որ կերպարանի ՚ի հրեշտակ լուսոյ. իսկ լուսնիւ նեռն, որ հանդերձեալ է գալ ՚ի նուռազիլ լուսոյ հաւատոյ և սիրոյ. ոչ նայիւրում սուտ տունջեան ասէ վնասնոցէ քեզ, և ոչ սա յիւրում գիշերի :

Դարձեալ՝ ոչ աւետարանն ՚որ՝ որ է արեգակն՝ մեղցէ քեզ, այսինքն առիթ տացէ քեզ մեղանչելոյ, կամ պատճառ լիցի մեղաց, և ոչ հին կտակարանն, որ է իրը լուսին, ոչ նա ՚ի տունջեան նորոյս, և ոչ սա ՚ի գիշերի հնոյն. զի իւրաքանչիւր ոք իւրով կամօք մեղանչէ, և ինքն լինի պատճառ մեղաց իւրոց: Հարոյապէս արեգակամբ նշանակի միտք ըստ որումն է լուսաւորող կամաց. և լուսնիւ կամքն՝ որ առնուլցո՞ի մտաց. միտքն վնասէ մեզ առանց ածային լուսոյ, և կամքն առանց նորհաց. իսկ եթէ լոյսն ածային և չնորհք նորա նպաստեացեն, փոխանակ վնասելոյ շահեցուցանեն :

Այնպէս և յամենայնի յայնոսիկ՝ որք կարեն նմանիւ արեգակնային և լուսնական իրաց, եթէ հասցէ օգնականութիւ կամ պահպանութիւ ոյ՝ առիթ ընծայի մեզ շահելոյ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. իսկ յորս միանգամ պահպանութիւ ոյ ոչ լիցի ձեռնատու. յընդդէմ գառնալ նոցա՝ վտանգ կայ վնասելոյ. յորմէ կամօվ զերծ պահիլ նարեկացւոյն՝ աղաչէ զած և ասէ (՚ի բանն. ձթ.) \* մի տապ տօթոյն յանպատրաստ, պահուն զարմատս հատեալ ցամաքեցուացէ. և մի լուսնական դիպուածք հասեալ գաղտնեօք վնաս, սեսցեն: Եշ որպէս զի ապահովս արասցէ մարդարեն՝ թէ ած ոչ պակասի ՚ի ցուցանելոյ յամենայնի զպահպանողական ինամս իւր, այլ թէ յամենայնի և յամենայն ժամցուցանե մեզ զայն՝ ՚ի յուսալ մեր առ նա՝ յաւելու, և ասէ:

Է. **S**էր պահեացէ զայն յամենայն չարէ. պահեացէ րէք զանցն բռ:

**Է.** **S**էր պահեսցէ զմուռ և զէլ ո՞յ յայսմ հետէ թնդն  
յասիդիտէն :

Այսչափ կրկնութիւն մի և նոյն բանի այլ և այլ օրինակաւ առաջի եղեալ ցուցանէ զհաստատութիւն ձշմուրտութեա ասացելոցն . յանդիման կացուցանելով՝ թէ անտարակոյս պահէ ած զմարդ որ յուսայ ՚ի նա : Արդ սպահպահնութիւնն այ հայի նախ ՚ի բոլոր անձն . երկրորդ ՚ի հոգին , և երրորդ ՚ի մարմինն՝ ըստ պետք գործողութեանց նոցին . հայելով յառաջինն ասէ :

**S**էր պահեսցէ զէլ յամենայն լորէ : Այս պահէլս ոչ ցուցանէ՝ թէ բնաւ ամենեին ոչ սպատահէսցի մարդոյ չար ինչ . զի այս է անկարելի յընթացս կենցազոյս , այլ թէ սպատահէալ չարն այն ոչ ազդեսցէ ըդչար գուլիւր ՚ի մարդն . զորօրինակ որչափ ինչ չարիք պատահէցան ՚ի յովք՝ ոչ ազդեցին ՚ի նա զար գուլիւրեանց . զի որ պահէաց զնայամենայն չարէ , այսինքն արար՝ զի այն չարիք՝ որք յայլս չար լինին ՚ի վիասել նմա մի լինիցին չար , այլ բարի կամ պատ-

ճառ բարեոյ : Հայելով աղա և յերկրորդն ասէ : Պահեսցէ ուէր զնին ո՞յ : Ուր բառդ անյն նշանակէ զհողի , որպէս յայտ է յերբայականին և յայլ ամենայն թարդ . նա զի և ՚ի մերում լեզուի բառդ անյն սկզբնաբար նշանակէ զհոգի , և յայնմանէ նաև լրացեալն ՚ի հոգւոյ և ՚ի մարմիոյ կողի անձն . ըստ որում լրումն գոյացութեա մարդոյ է ՚ի հոգւոյն : Արդ որ պէս զառլորէն ասաց պահէլ ոյ յամենայն չարէ , սոյն պէս և զհոգւոյ ասէ՝ պահէլ . ուր զօրութիւն կրկնի բառդ յամենայն լորէ : Խաւ այս իմացեալ լինի ոչ ըստ գոյացութեա հոգւոյն , զի զայսմանէ լիք տարակոյս , այլ ըստ գործողութեց նորին . որպէս թէ ասէր . պահէսցէ տէր յամենայն չարէ զհոգի քո յո՛ և իցէ գործողութիւն : Հայելով և յերրորդն՝ սյսինքն ՚ի գործողութիւն մարմիոյ , ըստ նմին և հոգւոյ ասէ :

՚ի դիւաց . և հրամանաւ կիւրոսի , այսինքն ընորհօքն քնի ապրին ՚ի ձեռաց նոցա : Իսայց յետ ապրելս պարտ է նոցա զգուշանալ , զի մի միւսանգամ ըմբռնեսցին . Ծաշունք և այլ կենդանիք՝ եթէ՛ ընտանիք և եթէ վայրենիք միանգամ ըմբռնեալք՝ ՚ի թակարթ կամ ՚ի վարմ , եթէ զերծցին , ոչ ևս մերձին . քանի ևս արժան է զգուշանալ մարդկան . զի թէ փորձն զգուշացուցիւ վարդապետ լինի անթանից , որչափ ևս բանաւորաց՝ չանկանելոյ վերստին . ըստ որում զգուշացուցանէ և իմաստունն ասելով . \* որդեակ մեղար , „ մի ևս յաւելուր . այլև վասն գործելոյդ զզջան ” . (սիրաք . իտ . 1.) Վայլ բազումք վատթարադ ոյն քան զանբանս անզգոյց վարելով յապրին գարձեալ ըմբռնին . ցաւին , և վերստին թաւալին . որով և առաւել գժուարանայ ազատութինոցա . քանզի յայնժամ առաւել զգուշանան գեք զնոքօք , զի մի այլևս ապրեսցին նորա . որպէս որսորդք յըմբռնելն զիախուցեալ որսն առաւելուն ՚ի զգուշութիս . որպէս և բանդապահք ՚ի գտանելն զայնափսի ոք՝ որ հնարինք զերծեալ իցէ ՚ի բանտէ : Ոյնպիս և այսն չար յըմբռնելն վերստին՝ առաւել ևս կաշկանդէ ՚ի ձեռն այլևս եօթն այսոց չարագունից քան զինքն . (մատ . ժը .

45 ) :

Եթէ կամիս ոչ ևս ըմբռնիլ յամենայն առթից սրարտիս հրաժարիլ . եթէ ՚ի մին ըմբռնեցար , համայն անձամբ ընկղմեցար , լլուսի ասէ բարսեղ վարդապետ , (՚ի մեկն , մարկ . գլ . ժե . ՚ի յորդոր .) \* Ճնձ . „ զուկ թէկն մի ստամբն ըմբռնի յորոգայթ՝ կորու . „ սեալ լինի . նոյնպիս և դու թէկն միով մեղօք . „ ըմբռնեցար , այնու ՚ի ձեռս ևս սատանայի . ” յորմէ անհնարին է աղատիլ . բայց եթէ ողօրմութի անժամանեսցէ քեզ յօդնուի , և ապրեցուցէ . որպիս արար ընդ իսրայէլ զոր և յայտ առնէ մարդարեն յաջորդ բանիւն ասելով :

Ե. ( Դ ժ ո ւ ն է և մեղ յանուանէ դն . որ որար շնչէնն և շնչէնն :

Այսու օգնութք որպիս յայտ է ՚ի վերոյ զբելոցդ՝ նշանակի այն բարերարուի այց զոր եցոյց առ որդիսն  
9 E

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ւ Ւ Ն,  
իսրայելի ազատելով զնոսա յայնպիսի որոգայթէ՝  
յորում ըմբռնեալ կային իբրե ձնձղուկ, և կար-  
դային զանուն նորա. ուստի և յազատիլն անդ ա-  
սէին :

( ) Գնութելի է մէջ յանուանէ Պա : Այսինքն թէ այս ազա-  
տութի զոր գտաք, ոչ է այլուստ, և ոչ ի զօրութի  
մերմէ, այլ յօգնականութէն այ . կամ այս օգնութի  
ազատութէն ոչ յումեքէ եղե մեզ, ոչ ի կիւրոսէ և  
ոչ ի հնարից մերոց, այլ յանուանէ ամենակալ տն .  
զի նա կամելով զանուն իւր փառաւոր ցուցանել  
ամենեցուն՝ եցոյց մեզ տկարացս զայս մեծ ողոր-  
մութի :

Ոստ այսմ մտաց թէպէտ առաւել պատշաճ էր դնել  
եղե քան թէ է, բայց քանզի օգնութին այ միշտ  
էր ընդ նոսա, վասն այսորիկ է գնի, որ ի մէջ քերէ  
զհանապազրդութի լինելոյ օգնութէն այ ընդ նո-  
սա . կամելով ապա մարդարէին զամենակալ զօրութի  
նորա ևս մեծ ցուցանելյարէ և ասէ :

Որ արար չէրինս և չէրինք : Կամի ասել, օգնութի մեր  
ոչ է յայնպիսի զօրութէ՝ որ կարիցէ զայս առնել  
և զայն ոչ, այլ յայնպիսուոյ՝ որ արար զերկինս և  
զերկիր, և զամենայն՝ որ է ՚ի նոսա . և որպէս կամի  
կառավարէ զնոսա :

Այս ամենայն բանք՝ զօրս ասաց մարդարէն ՚ի սաղ  
մոսի աստ ՚ի բերանոյ իսրայելացւոց դարձելոց ՚ի  
գերութէ, ասի և ՚ի բերանոյ մարդկայինս քնութէ  
՚ի փրկիլնորա ՚ի գերութէ սատսնայի . ասի և ՚ի  
բերանոյ եկեղեցւոյն քնի վասն զերծանելոյ ՚ի հա-  
լածաց իւրոց, և ՚ի դժունութէ հերետիկոսաց . ասի  
ևս ՚ի բերանոյ իւրաքանչիւր մարդոյ յազատիլնոցա  
յն և իցէ փորձութեց մեղաց իբրե յորոգայթից՝  
փշրելով զայն շնորհօքն այ, և թռչելով թեօք հաւա-  
տոց և գործոց, և բերկրելով ընդ ազատութիւն  
իւրեանց՝ ակնկալեալ ժամանելոյ յազատութի յաւի-  
տենական :

## Ա Ր Դ Ա Մ Ո Ս ։ Ճ Ե Ւ ։

Վաջալերութիւն առ արդարս՝ որք յուսացեալ իցեն յանձ, ցուցեալ թէ ած պաշտպան լինի նոցա, և ոչ թողու զնոսա ընդ բռնութ մեղաւորաց. իսկ զթիւրեալսն յուղգութէ մատնէ կորստեան:

(Օբհութիւն Աստիճանաց:

**Ո**ւսասայ ՚ի աէր որդես լիաւան սէսին ՚ի սասանեսցի յատէ ատան. որ բնախեալն է յերապետական: 2 Երինք շուրջ էն գնաւան. աէր շուրջ է շժուղղվորեամբ իւրոշ յայսմհեռէ մինչ յաւիտեան: 3 Ու մազան աէր շժուղղվան Գլաւորաց ՚ի վաճախ արդարաց. և արդարս ՚ի չժեսցին զյեռա իւրեանց յանօրինութիւն: 4 Բարի առնէ աէր բարեաց. և այնոցին, ոյս սուշիջ էն օրական: 5 Օ լիւրեալսն յափշտականութէ առնէ չնոսա աէր չնդ այնուին ոյս գործեն զանօրինութիւն: և աղաւ շութիւն ՚ի վերայ էսքայէլ:

Ա Ե Բ Դ Ե Ա Գ Ի Բ.

(Օբհութիւն Աստիճանաց:

**Ո**ւսասայ ԶԵՐԱԳԻՒՐՈ ՄԵՐ գնի երդ աստիճանաց կամ երդք աստիճանաց, կամ երդ աստիճանաց. յերկուս ևս գնի օրհնութիւք աստիճանաց. իսկ ՚ի չորս ձեռագիրս և ՚ի սաղ լամբ և վարդ ըստ ձեռագ գրի լու գնելոյ մեր. \* օրհնուի աստիճանաց. զորմէ տես ՚ի ներած. (գլ. ժան:

Ա յս սաղմոս աւանդի իբրև վարդապետութիւն ինչ վասն արդարոց՝ ասացեալ ՚ի սփոփանս նոցա, թէ զիարդ ՚ի յուսալ նոցա առ ած՝ խնամին և պաշտպանին ՚ի նմանէ, և միան անսասան և աներկեան:

Խոկ թե յումմիշ իցէ յօրինեալ ոչ է յայտ . ոմանք դնեն ասացեալ յորդւոցն իսրայէլի յետ դարձի գերութեն , ՚ի հակառակիլ ընդդեմ նոցա սահաբազատայ և տուբեայ և այլոց , (որպէս զրի դ . եղր . դ . և դ .) Բայց հաւանական ես է առել թե դաւթայ իցէ յօրինեալ զայս , և յետոյ նաև յիսրայէլացւոց անտի առեալ և երգեալ ՚ի ժամանակի անդ . իսկ մեք աստանօր ոչ ՚ի ժամանակն ունիմք հայիլ , այլ ՚ի նիւթն :

## Բ Ա Դ

Պ յատայ ՚ի աէր որպէս լետոն սիսն մ սասանեացի յատիտեան , որ բնահիւն է յերուսաղէմ :

## Մ Ե Կ Ե Ո Ւ Թ Ի Ւ Ե :

Այս ըան դնի իբրև ընաբան ձառի սաղմոսիս կամ ըստ տրամաբանից իբրև է զրակացութի , զոր և յաջորդ բանիւք իբր փաստիւք հաստատէ մարդ արեն . և առ առատութե սրտի զեղմանք իմն առաջի դնէ զայն յասելն :

Պ յատայ ՚ի աէր որպէս լետոն սիսն , մ սասանեացի յատիտեան . որ բնահիւն է յերուսաղէմ : Ըստսալ յած է զրեթէ յենութէ ՚ի բարձրութի անհաս , և ՚ի զօրութիւն անբաւ , և ՚ի բարութի յաւիտենական . ըստ առաջնոյն՝ լինի մարդ անմերձենալի ՚ի չարեաց . յոր միտ ասէ զրիգոր նարեկացի զեկեղեցւոյ (՚ի բանն . ՀԵ .) թէ \*իբր զլեառն յաւիտենական անհարուածելի է „ ՚ի դիմամարտից : Ծստ երկրորդին՝ անյալթելի ՚ի թշնամեաց . զի աճ է պաշտպան իւր . որոյ վասն ասէ առ նա նարեկացին . (՚ի բանն . ՃԵ .) \*դարան „ ամրութէ , պատսպարան վատահուն . և ՚ի բանն . ՀԵ . \*ապաւէն անկասկածելի : Ծստ երրորդին՝ հաստատուն ՚ի բարին . որպիսի եղեն առաքեալք , և այլ մեծամեծ նրք . առ որս յարմարեցուցանէ նարեկացին զայս բան . և զերեւելիսն ՚ի նոսա զլուսաւո-

ըիշն մեր , և զոբն յակոր մծքնոյ հայրապետ՝ յա-  
ռաջ բերեալ՚ի զով . մծք . ասէ . \* ուրա միաբա-  
ն , նեալընդ միմանս ելին յերկրի ընդ տեսանողին ,  
,, և ոչ սասանեցան կամ յեղանակեցան ըստ գաւ-  
,, թեան երդ ոյն : "

Պստ առաջնոյն յիշել մարդարեն զեւառն սիօն . ըստ  
երկրորդին՝ զման անսասան . և ըստ երրորդին՝  
զբառդ յաւետեան :

Պստ այսոցիկ տեսութեց կամի ասել . որ Տշմարտու-  
թեր յուսայ յանձ , և բնակելով յերուսաղեմ՝ մի տե-  
րապես պաշտե զնա ՚ի տաճարի նորա , այնպիսին լի-  
նի նման լերին սիօնի անմերձենալի ՚ի չարեաց , ան-  
յաղթելի ՚ի թշնամեաց , և հաստատուն ՚ի բարին յա-  
ւիտեան , այսինքն միշտ . Վոյնովէս և որ յուսալով  
յանձ , հոգեորապես բնակիցի մաոր ՚ի վերինն երու-  
սաղեմ , ըստ ասելոյն , թէ առաքինութիւն մեր , կամ  
քաղաքավարութիւն մեր յերկինս է ( փիլ . գ . 20 . )  
այնպիսին ևս մի սասանեցի յաւիտեան . նաև յամե-  
նայնի պատսպարեսցի , շուրջ ունելով զերինս ածայ-  
ին ինամոց հանգոյն սիօնի :

Ոմանք զբառդ բնակեալ՝ վերածեն աստ ՚ի սիօն իրը  
ածական նորին՝ ըստ որում սիօն էր յերուսաղեմ .  
յոր միտ կամի ասել . որ յուսայ յանձ , այնպիսին մի  
սասանեցի յաւիտեան , որպէս ոչ սասանի լեառն  
սիօն որ է յերուսաղեմ թէ և քազում ինչ կրիցէ . զի  
որպէս այն պատեալ է լերամբք , ոյնպէս և յուսա-  
ցեալն յանձ պատեալ և պաշտպանեալ է շուրջանակի  
ածային զօրուք , որպիսի էր և ժողովուրդն իսրայէ-  
լի՝ զոր և յառաջ բերէ մարդարեն ՚ի յաջորդ համարն  
ասելով :

Է . ┌ Երինս շարջ էն չնակա . թէ շարջ է պարագարեմ  
իւրաք՝ յայսմ հետէ գնալ յաւետեան :  
Լյուսաղեմ քաղաք որպէս և յայտ է՝ պատեալ է  
լերամբք . և ըստ որում տեսանեմք ՚ի հին պատմու-  
թիս դժուարամատչելի էր այն . որոյ վասն իսկ մար-  
դարեն բերէ զայն յօրինակ պաշտպանեալ լինելոյ  
ժողովորդեանն ոյ , ասելով :

└ Երինս շարջ էն չնակա . թէ շարջ է պարագարեմ է-

70 Ա Ե Կ Ե Ա Բ Ե Ժ Ե Ի Ե  
բան յայսմ հետէ դնչւ յասերեան : Կամի ասել . որպես  
լըրինք շուրջ են զերուսաղեմաւ , սոյնպէս և ած՝  
որ արար իւր ժողովուրդ զորդիսն խրայէլի՝ շուրջ  
է զնովաւ , որ է ասել . յամենայն կողմանց պաշտպան  
լինի նմա ած՝ ոչ միայն այժմ , այլև յապագ այն ցոր-  
չափ մնան խրայէլացիք՝ ժողովուրդ նորա :

1 երամբք մարթէ է իմանալ աստ և զհընշտակս ոյ և  
վարս նորա, ևս և զսրբազան իրս . ուստի 'ի մեկնել  
մեծին խոսրովու զայս բան 'ի մեկն . ժամագր . գրէ  
այսակէս . \* լերինք շուրջ են զնովաւ, հրեշտակաց  
,, բազմութիք, և որպն հրեշտակաց ::

Օայսպիսիս ասելով մարդարեին՝ կամի իրը օրինակաւ հաստատել զասացեալսն իւր, զայն թէ որ յուսայ յանձ, պաշտպանի ՚ի նմանէ. զոր առաւել ևս կամելով յայտնի ցուցանել՝ առաջի գննէ զմէծ պաշտպանութի նորա և ասէ :

Դ. Առաջարկ առ զիստայուն մշամարաց՝ ի վլամակն արդա-  
բոց. և արդարք կ չգեղացն զիստա ի որեւանց յահո-  
բենալի :

Դաւազգանաւ մեղաւորաց նշանակի իշխանութիւնը նակալութեան նոցա . իսկ վիճակօք արդարոց՝ իմացեալ լինին ժողովք արդարոց , կամ նոյն իսկ արդարք . արդ թէպէտե բազում անդամ տիրեն մեղաւորք 'ի վերայ արդարոց՝ որպէս բարելացիք 'ի վերայ իսրայէլացւոց , բայց այնպէս առնել ած՝ զի մի վուանդեսցին արդարք 'ի նոցանէ . վասն որոյ առէ :

|| Հ եռակո թը զգաւազան մէղաւորաց 'ի վլձակս արդարոց :  
Կամի ասել . թէ պէտե տայ ած գաւազան իշխանու-  
թէ 'ի ձեռս մեղաւորաց տիրել նովաւ նաև 'ի վլ-  
քայ արդարոց , բայց ոչ թողու 'ի վլձակս նոցա ,  
այսինքն ոչ թողու՝ զի տիրեսցեն նոցա ըստ որում  
են ժողովք արդարոց , այլ ըստ որում մարդիկ . որ  
է ասել . ոչ թոյլ տայ մեղաւորաց տիրել 'ի վլքայ  
արդարութէ նոցա , և խախտել զնոսա յարդարուէ  
նոցին , և կամ վրդովել զխաղաղութի նոցա . յոր  
միտ գըլ մածն խոսրով ( 'ի մեկն . ժամագր . ) թէ՝  
որ արարին է՝ ոչ թովալ զի մնացէ բռնութի մեղա-


Ս Ա Ն Մ . Ճ Ի Դ .  
ւորաց 'ի վերայ արդարոց և 'ի վերայ արդարութե  
նոցա . \* վստ որոյ աներկիւղ միշտ լինին 'ի յարկա  
,, ծից թշւամեաց , և անխռով խաղաղութք վայելել  
'ի սերն այ :

Ո արթ է աստ ըստ եբբ " գաւառանաւ իմանալ զագցս .  
յոր միտ կամի ցուցանել , թէ ած ոչ թոյլ տայ մե-  
զաւորաց խառնիլ 'ի վհճակ արդարոց . զի մի լիցի  
արդարոց վտանգ խոտորելոյ յանօրէնութիս : Իսկ  
թէ թօղու զնոսա 'ի մէջ արդարոց , այն ոչ է 'ի  
համելոյ՝ այլ իբր յանտես առնելոյ , կամ 'ի թոյլ տա-  
լս . զի \* այն ինչ միայն թոյլ տուեալ լինի՝ որ այ-  
լուստ անհամոյ թուիի : Եւ պատճառ թոյլ տալոյն  
այ՝ գտանիլ այսպիսեաց 'ի մէջ արդարոց 'հայի յօդուտ  
արդարոց . զի չարք որպէս ասէ ծործորեցին ( 'ի  
մեկն . մատ . ժղ . ) հայելով յարդարսն \* պահին  
,, իբր ցանկ այգւոյ , և կամ իբրեւ տերեւ խաղողյ :  
Եւ զորօրինակ ապակիք խոտով պատին՝ զի մի բե-  
կանիցին , և ձուք յարդիւք պաշտպանին . սոյնպէս  
առնէ ած՝ զի արդարք ամբարշտօք պատսպարեսցին  
ոչ միայն կրելով 'ի նոցունց , այլև կրելով նոցա 'ի  
տեղի արդարոց . որպէս զի չարութին նոցա մի յա-  
րեսցի յարդարս :

Տ արոյապէս առեալ ոչ կամի ած զի մնասցեն առ-  
մեզ առիթք մեզաց , այլ հեռի . քանզի 'ի բառնիլ  
առթին՝ բառնի որ առթի . ապա թէ ոչ՝ անտարա-  
կոյս վտանգի . յայս սակս բաղում անգամ 'ի հրա-  
մայել այ խորայէլցցոց՝ առնել զայս ինչ կամ զայն՝  
յառթից արդելցցն ևս հեռացուցաներ . զորօրի-  
նակ 'ի հրամայեն զեօթն օր բաղարջ ուտել , և մի  
ամենեին խմբուն , պատուիրեաց ևս՝ յառաջնին օրէ  
'ի բաց հանել զիմորն , յասելն . \* յառաջնմէ իսկ  
,, օրէ անտի անհետ առնիթիք զիմոր 'ի տանց ձե-  
,, բոց : ( ելից . ժը . 15 : ) Դ բաց արա 'ի քէն  
զիմորն մեզաց , ապա թէ ոչ՝ գարձեալ իսմոր՝ զկեա-  
նըս քո . աղաւեա զոնդ . \* զձնանապարհս մեզաց 'ի  
,, բաց արա յինեն տէր : ( սաղ . ճժը . 29 : )

Եթէ կամիս 'ի բաց առնել զառիթս մեզաց , 'ի բաց  
արա և որք պատճառ լինին առթից : Տեսեալ սար-  
բայի թէ լրբացեալ է իսմայել յանհոգութի մօք

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ւ Ւ Շ ,  
 իւրոյ հաղարայ , 'ի խաղալ նորա ընդ իսահակայ ,  
 արտաքսեաց զնա ( ձնն . ին . 9 . ) զի մի առիթ լիցի  
 լրբուե որդւոյ իւրոյ . արտաքսեաց և զհագար զմայթ  
 նորա . զի ոչ է բաւական սոսկ զառիթ ս մեղաց 'ի  
 բաց հանել , այլէ որք զառիթ ս պատճառեն իրեւ  
 զմայթ առ թից : Ի թոյլ տալշ՝ խորհուրդք քոյ յածին  
 զնոփօք , և կամք քո ձեռն կարկառեն , թէն բարի  
 իցեն : Հայսպիսիս կարի զդոյշ կան առաքինիք , զի  
 մի վտանգ եսցին . առ օրս հայելով ասէ մարդարեն :  
 Ե՞ւ արդարու չ Յ գեսցեն ոչեա իւրեանց յանընութիւն :  
 Ա յինքն 'ի տիրիլ արդարաց 'ի մեղաւորաց 'պաշտ-  
 պանեսցէ ած զարդարան՝ զի մի հետեւոցին անօրէն  
 գործոց նոցա , կամ մի խախտեսցին 'ի հաւատոց  
 վասն բռնութեան նոցա . որպէս յայտ է 'ի մարտի-  
 րոսս . և մի ևս յետս կացցեն 'ի բարի վարուց իւր-  
 եանց՝ տեսանելով զբարեբաղդ յաջողութիւն մեղաւո-  
 րաց . և մի ըստ նոցա ձգեսցեն զձեռս իւրեանց 'ի  
 գործել զանօրէնութիւն . որովք ցուցանի՝ թէ յիրա-  
 ւի է այն զոր ասաց 'որ յուսայ յոնծ , և բնակի յար-  
 դարուե , նա մի սասանեսցի յաւիխեան , որովհետեւ  
 այսպիսեացս միշտ պաշտպան լինելով այ , և 'ի չա-  
 րեաց յետս ընկրկելով 'ի բարին առաջնորդէ ,  
 իակ եթէ արդարք ձգեսցեն զձեռս իւրեանց յանօ-  
 րէնութիւն , թոյլ տայ ած՝ տիրել մեղաւորաց 'ի վե-  
 րայ վիճակաց նոցա և անձանց նոցին . որպէս տե-  
 սաք և տեսանեմք 'ի բազում տեղին . զօր և ողբա-  
 լով յարմարեցուցեալ ազգիս յովհան եզնկացի .  
 ( երես . 302 . ) ասէ . \* սեպհական գաւառք հայրե-  
 նի յօտարալեզու ազգաց տիրեցան , և գաւազնք  
 , մեղաւորաց 'ի վիճակս արդարաց մտին . վասն զի  
 , արդարք զձեռս իւրեանց յանօրէնութե գործո  
 , ձգեցին ։ Ի պա թէ ոչ ած թողոյր լինիլ այս-  
 պէս . զի ինքն բարի գոլով զբարին յաջողէ , և բա-  
 րի առնել ախորժէ , ըստ որում և ասէ մարդարեն :

Դ .  առէն առէն ուր բարեաց , և այնոցին , ոյս առջիւն  
 որդիւն :

Օ այս բան իրը յօրդոր դնէ : մարդարեն առ արդար-  
 ուն , զի հաստատուն կացցեն 'ի բարի վարս , և

յուղղութե սրտի, թէ և իցեն ընդ բռնակալութիշ  
մեղաւորաց, հայելով յայն՝ զոր առնել ած ընդ բա-  
րիս . ըստ որում և հաստատելով ասէ :

▶ առի առնել ար բարեաց, և այնոցին, ոյս առնելու են սրտիւտ։  
▶ յս բարի՝ զոր գնել մարդարեն, ոչ չափի ըստ  
այնմա որ մեզ թուի, այլը ըստ այնմա որ յայց հանաչի .  
զի մեզ բազում անդամ չարն ևս բարի թուի . իսկ  
առ այն միայն է բարի՝ զոր նա բարի հանաչ .  
զայսպիսի բարիս ասէ առնել ած այնոցիկ՝ որք բարի  
են, այսինքն ունին յինքեանս զբարութի կամ զար-  
դարութի, ոչ ըստ երեւելոյն, այլ ըստ իրին . որոց  
վասն յաւելու ասել, թէ նոցա առնել զայս՝ ոյք ու-  
ղիղ են սրտիւք, այսինքն որք ունին զսիրտ համա-  
ձայն ածային կամաց . ուստի նարեկացին ( 'ի բանն .  
կո՞ ) ընթեռնու . \* բարի առնել ած ուղղոց որտից ։  
Օ ի այսպիսիք վասն ուղղուե օրտից իւրեանց հա-  
ճոյացեալ են այց, և ած հաճոյացեալ է սոցա . ուս-  
տի որպէս սոքա ուղղութի բերին առ ած, սոյնպէս  
և ած բարութի բերի առ սոսա աստ և 'ի հանդեր-  
ձեալն ։

▶ որ հայելով ասէ սարգիս շնորհալի ( 'ի մեկն . ա-  
պետ . ամ . 17 . հառ . դ . ) \* եթէ մեք հաշտ և համ-  
,, բոյր՝ լի բարեգործութի և հնազանդութի ե-  
,, բեկիմք առ հայրն՝ զհաճոյս նորա առնելով, այն  
,, պիսի ցուցանել և նա առ մեզ զիւր սէրն . զի քան  
,, զամենայն հոյր զթած է և ինամակայու . իսկ  
,, եթէ ապառում և անընտել բարս ցուցանեմք նմա,  
,, սոյնպիսի ձեանայ և նա առ մեզ 'ի դատաստանին  
,, ըստ ածային գրոց որ ասէ . բարի առնել ած բա-  
,, բեաց ։, և զթիւրեալսն կորուսանել . ըստ որում  
և վկայէ մարդարեն 'ի յաջորդ համարն՝ ասելով :

Ե . **Օ** լիւրեալսն յադշատիստի առնել շնորհ ար ընդ այ-  
■ շնորհի ոյս գործեն զանօքենունի . իւղաղունի 'ի  
վերայ իւրայէլն ։

Տեսանե՞ս ասէ կիրակոս վարդապէտ՝ զի մերթ բա-  
րիս խոստանալով բարեաց՝ ողոքէ 'ի բարին, և մերթ  
զարիս ցուցանելով 'ի բարեաց նահանջել փութոյ  
զարսն . որպէս առնեին և այլ մարդարեք ևս և ա-

ուսպեալք : Ուստի՝ 'ի մեկնել սարգսի չնորհալւոյ ըզ-  
բան յակոբայ առաքելոյն . (յակ . թ . 13 . ձառ . դ . )  
ասէ . աեւս՝ զի \* երբեմն երանէ զողորմածն և մե-  
,, ծագոյն տրիտուրս խոստանայ . երբեմն սպառնայ  
,, անողորմիցն , և անիծից արժանիս վարկանի . 'ի  
,, սոյն միտս յարմարի և մարդարէական բանն , թէ.  
,, բարի առնէ ո՞ր բարեաց , և զշեղգացեալսն յայ-  
,, սոսիկ յափշտակութ տանի ընդ այնոսիկ՝ որ զանօ-  
,, թէնս գործեն || . ( զայս զրէ և 'ի գլ . դ . 18 .  
ձառ . թ . )

Վ. ՅԼ գիտելի է , զի այս բան ոչ հայի ուղղակի յայ-  
նոսիկ որոց կեանք յանօրէնութեն , այլ յայնոսիկ՝  
որք յարդարութեն գոլով թիւրին և խոտորին յար-  
դարութեն յանիրաւութի մեզաւորաց , ընդ որոց իշ-  
խանութեն կան . քանզի զայսպիսիս չարացար պատու-  
հասէ անձ , վասն որոյ թաէ ,

( Ա յերէտալսն յանչոտիւթեն դանի ջնոս ո՞ր ընդ այնոսիկ  
ոյս գործեն զանօրէնութեն : Ծառզ յանչոտիւթեն՝ կըր-  
կին մտօք դնի աստ . մի՝ փոխանակ զրկողութեամք  
ժողովելոյ զինը , և մի ևս՝ փոխանակ անզգամու-  
թեամք ժողովելոյ զանօրէնութեն , այսինքն փոխա-  
նակ գործելոյ զայնպիսի չարիս՝ զորպիսիս գործեն  
անօրէն ամբարիշաք . յոր միտ կամի ասել . զայնպի-  
սիս՝ որք յօժարին 'ի յափշտակէլ զինը այլոց , և որք  
միտեն ձգել յինքեանս զանօրէն գործս ամբարշաց ,  
տանի 'ի կորուստ , հաւասար այնոցիկ՝ որոց անօրէ-  
նութեցն հետեւցան . որ է ասել . որք խոտորին  
յուղղութեն 'ի թիւրութի , կորուսանէ անօ-  
րէնս , և ոչ հայի յառաջին ուղղութի նոցա . ըստ  
այնմ ( եզէկ . լք . 13 . -- 19 . ) \* արդարուի արդա-  
րոյն ոչ փրկեսցէ զնա յաւուր՝ յորում մոլորեսցի .  
և թէ \* արդարն ոչ կարասցէ ապրիլյաւուր մեզաց  
,, իւրոց || :

Վ. ՅԼ աստանօր բառդ չնոտ՝ դնի իբր զարդ . որպէս  
է տեսանել և յայլբազում տեղիս ո՞ր զրոց , բայց  
իբրեւ զարդ ևս գնելով հասատագոյն ցուցանէ  
զբանն , որպէս թէ եղեալ էր . զթիւրեալսն 'ի չա-  
րութի , կորուսանէ , այս կորուսանէ զնոսա . և այլն :  
Խոկ բառդ դանին՝ յարելով 'ի բառսդ ընդ այնոսիկ ոք

գործեն ղանօքենութի . 'ի մէջ բերէ զնշանակութ բառիս հորուսակել . և նոյն էր թէ ասէր . որպէս 'ի կը բուստ տանի ած զանօրինս , նոյնպէս և զայնոսիկ արդարսն՝ որք թողեալ զարդարութի իւրեանց՝ գընան զշէտ անօրէնութէ :


Վայս բան որ հայի 'ի խօսաբումն արդարոց և 'ի պատուհասիլ նոյնին , ըստ երկրորդական մեկնութ հայի և 'ի խօսութի ամփարշտաց և 'ի կորուստ նոյնին . որպիսի էր վիճակ ագահ մեծատանն . զորմէ գրէ իդնատիս վարդապետ ('ի մեկն . դուկ . ժք . 195 .) և ասէ , սա բազում ինչ ետես . բայց \*յայսպիսեաց , աստի ինչ ոչ էած զմտաւ . ոչ զատի պիտոյիցն բառ , ւական ունել , և յաւելորդացն մասնաւորել զկառ , բօտեալսն . և ոչ թէ գոյ նախախնամութի նոյ 'ի վերայ ընութենս . և առնել բարիս բարեաց , և ' տանի զթիւրս յափշտակութք 'ի կորուստ :

Հարմարական մեկնութ այս բանք հային յայնոսիկ՝ որք 'ի թիւրին խրատին յայց պատժովք , և 'ի վերստին թիւրին՝ չարաչար պատուհասին իբրև զանօրինս . յօրինակ այսր 'ի խրատել քրիստոսի զլոմայափոխսն՝ զբարկութի իւր եհեղ զու 'ի նոսա , այլ 'ի սեղանս նոյնին . բայց հայեցեալ յառաւելութ յանդըդնութենոցա եհեղ զբարկութի իւր յանձինս նոյնա . ևս զի արար խարազան չուանեայ և նովին գանեալ զնոսա եհան արտաքս . (յովէ . թ . 15 .) թէ պէտե ինայեաց ևս գթութք . զի ոչ գաւազանաւ այլ կակուղ չուանով գանեաց , որով ցուցանէր՝ թէ յաշխարհի աստ գթութի հարկանէ զթիւրեալսն . Օայս սոսիկ այսպէս եղեալ մարդարին՝ վերջ տայ բանից իւրոց , մազթելով զնազազութ վասն իսրայէլացւոց , և ասէ :

Այսշառաննէ 'է վերայ իւրայէլէ : Այսն այս բան հայելով 'ի համարն 1 . և 2 . մեկնի այսպէս . որովշետե յոյս իսրայէլի յած է՝ մի սասանեսցի , այլ անդ որբասցի . զի խաղաղութիւնն նոյ եղեցի 'ի վերայ նորա : Իսկ հայելով 'ի համարն 3 . և 4 . մեկնի այսպէս . թէ պէտ և մեղաւորք տիրեցին իսրայէլացւոց , և բազումք յիսրայէլացւոց անտի խոտորեցան յուղութէ , բայց նոյն ինքն իսրայէլ՝ որ է ժառանդութիւն նոյ :

76      Մ Ե Կ Ն Ա Խ Թ Ի Լ Ե Յ  
կալով հաստատուն յածպաշտուեց մնասցէ ՚ի խաղա-  
ղութեն այ :

Այս այս ձևաբարդոյն ևս ասի վասն նորոյս իս-  
րայէլի . որ թէպէտ և բազում ինչ կրեաց ՚ի չեթա-  
նոսաց և ՚ի չերետիկոսաց , բայց խաղաղութին քոի  
միշտ եղեւ և է ՚ի վերայ նորա , և մնասցէ ՚ի յաւի-  
տեան , այսինքն մինչեւ ՚ի կատարած աշխարհի , և ՚ի  
հանգերձեալն ՚ի յաղթանակօղ եկեղեցւո՞յ՝ յաւի-  
տեանս յաւիտենից :



## Ս Ը Պ Ա Մ Ո Ս Վ Դ Ի Ե :

Խնդութի դարձի գերութեն իսրայէլացւոց . ընդ  
նմին և աղաւանք վասն դարձի մնացելոցն ցըռուելոց  
յայլեւ այլ տեղիս :

( Օբիւսնի լուսի ճանապարհ :

1. **Ա** բարձուցանել ան պատրաստի սիսէն , և եղաւ մէս  
կունաբեալ : 2. {այնժամ լցոն բերան , մէր ինքու-  
թի , և լցուած մէր յնծառնիք : 3. {այնժամ ասասցէն ՚ի հե-  
րանաս , մէծ արար առ շատնել եր շնոր մէշ . և մէս եղաւ  
բերիբեալ : 4. {արձան առ պատրաստիս մէր՝ որուես պատրաստի ՚ի  
հարաւայ . այս վարչէն որուաւաս , յնծառնիք գնյացացէն :  
5. {աբեւալ երեսոյին՝ և լցոն , այս բարձեալ ասենին զներ-  
ման իսրեանց : 6. {արշավ եինոցէն՝ և յնծառացէն , այս =  
= եւ բերիցէն պարայս իսրեանց :

## Ա Ե Բ Շ Ե Ա Գ Ի Բ ։

(Օքանութեալ Աստիճանաց ։

**Յ** Ե Օ Թ Ե Զ Ե Ո Ւ Գ Դ Բ Ա Մ Ե Բ Ե Տ  
 'ի սաղ . վարդ . ը ձեռագ ը , գնի երդ  
 աստիճանաց , կամ երդք աշտիճանաց . 'ի  
 միումն յաւելմամբ իմն դնի . \* երդ աստիճանաց ,  
 .. չինութիւն եկեղեցւոյ որյ 'ի դաւիթ || . և յայլում ,  
 \* սաղմոս 'ի դաւիթ 'ի կատարած վասն չուոց || .  
 Խակ յերիս ձեռագիրս և 'ի սաղ . լամբ " դնի ըստ  
 վերց գրելցոր , օրհնութիւն աստիճանաց . զորմէ տես  
 'ի ներած " . ( գլ . ժամ :

Ա յս սաղմոս որնդ և յայտնի տեսանի յիւրաքանչիւր  
 համարս , սահ 'ի բերանոյ խրայէլացւոց դարձելոց  
 'ի գերութէն իրը կանոնակալութիւն առ անձ զեղ-  
 մամբ ուրախութէն սրտի , խնդրելով յոյ միանդա-  
 մայն՝ զի դարձուսցէ և զմնացեալոն յաղգէ անտի իւ-  
 րեանց յայլ և այլ կողմանոս , Խակ թէ յումնէ իցէ յօրի-  
 նեալ , այլ և այլ են կարծիք . ոմանք տան անդեայ  
 և զաքարիոյ և այլոց դարձելոց ընդ նոսա 'ի գե-  
 րութէ . այսպէս դնի և 'ի վերնագիրս ասորւոց .  
 այլք տան եզրասայ , և այլք այլում , և ոմանք ևս  
 դաւթի : Օ խարդ և դիցի , այս սաղմոս ըստ ամե-  
 նայն մասանց հայի 'ի դարձ գերութէն խրայէլի :

Բ Ե Շ Ե ։

մ . **Ա** բարյացանել ուեւուն զիերուն սինեւ . և եւստ մէ  
 թիւնուեւ :

Մ Ե Կ Շ Ա Ծ Ո Ֆ Ի Ե Շ Ե ։

**Ի** գերիւ խրայէլացւոց 'ի բարելոն 'այն դերուե

նոցա համարեալ իինէր սիօնի կամ երուսաղէմի՝ յա-  
սել նոցա՝ թէ գերեցաւ սիօն կամ երուսաղէմ.  
որով ոչ նշանակիւը թէ գերեցաւ քաղաքն, այլ  
բնակիւք քաղաքին. ընդ որս իմացեալ լինին և այ-  
նոքիկ' որք էին ընդ իշխանութէն նորին. ըստ այսմ  
և 'ի գառնալ գերութէն նոցա՝ այն դարձ ընծայիւը  
սիօնի, վասն որոյ ասէ:

**Պ** բարիւ անէլ ուստան՝ զգերութէ սիօնի. և էղաւ մէտ  
միներէտը: Ի՞առադ միներէտը՝ հայելով յերբայականն  
ցուցանէ աստ, զայնպիսի և զայնշափ մեծութիւնի միսի-  
թարութէ, մինչև յառաւելութէ այնը զարժանալ,  
մանաւանդ թէ կասկածիլ միսիթարելոցն, արդեօք  
համարիտ ից: ազատութիւն դարձի իւրեանց. որպիւ-  
սի եղեւ խնդուին պետրոսի յազատիլ նորա 'ի բան-  
տէ. մինչև համարիլ նմա երազ տեսանել. ( գործ .  
Ժ Է . 9 -- 12 : )

Հօյս միտս խօսելով մարզ արելին զսոյն զայս բան՝ զոր  
զնէ 'ի բերանոյ զարձելոցն՝ կամի ասել. յորժամ  
դարձոյց զմեզ անձ զորդիքս սիօնի 'ի գերութէ մեր-  
մէ, այնշափ միսիթարեցաք, մինչ զրեթէ ոչ հաւա-  
տալ մեզ՝ թէ չշմարտիւ դարձեալ իցեմք:

Խակ բառդ և որ դնի 'ի մերումն, և աւելորդ՝ որ-  
պես զարդ, կամ փոխանակ բառիս էբլ՝ որպիւթէ,  
եղեալ էր. յորժամ դարձոյց զմեզ անձ 'ի գերութէ,  
եղաք մեք իբրև միսիթարեալք, այսինքն իբրև զայ-  
նոսիկ' որք 'ի տեսանելն զինքեանս յանակնունելի  
ազատութէ 'ի սաստիկ ուրախութէ ափշեալք, և  
յետոյ 'ի միտս եկեալք՝ միսիթարին: Այս զի յայս-  
պիսի միսիթարութէ սփորի ուրախութէ առ արտաքս,  
զայն կամելով ցուցանել մարզարելին յաւելու և ասէ:

**Է . Ը** այնժամ լշան բերան մէր ինդութէ, և լշան մէր  
շնծութէ:

Կ արժումն ուրախութէ սրտի՝ է իբրև բաղիսումն  
զանդակի՝ մանաւանդ թէ քնարի, յորմէ հնչէ զուար-  
ձութիւն ընդ բերանն, զոր և յանբան թռչունս է:  
տեսանել. ապա քանզի մեծ եղեւ ներքին բաղիսումն  
ուրախութէ սրտի դարձելոցն 'ի գերութէ, հնչեաց  
այն և 'ի բերան նոցա, վասն որոյ ասեն:

**Յ**այնժամ լցան բերանք մեր խնդութիւն, և լողաց մեր շնծութիւնը՝ վարչական գույք մեր մեջի միսիթարութեամբ բերանք մեր զուրախալից բանս դոչէին. կամ բերանք մեր ծաղութակալ լինեն, և լեզուք մեր ցնծութիւն աւետարանեին. կամ դարձեալ շրթունք մեր զուարթագին ծիծաղէին, և լեզուք մեր զցնծալից բանս բարբառեին. և զի բարեկրեցաք, վասն ոյսորիկ բերկրեցաք յոյժ. ըստ որում զրեա բարսեղ վարդապետ ( 'ի մեկն . մարկ . զլ . ժե : ) Եւ այս բերկրութիւն նոցա այնչափ եղեւ, մինչև հեթանոսք ևս զարմանային. և զոր արար ընդ նոսա ոծ, զնոյն և նոքա հռչակեին. և զայսմանեւ խօսի մարգարեն, 'ի յաջորդ համարն ասելով:

**Դ**այնժամ ասասցն 'ի հեթանոսս, մեծ արար ուեր զառնեւ է-ը ընդ նոսս. մեծ արար ուեր զառնեւ է-ը ընդ եղ. և մետ էլուալաւը:

Ընակնունելի իմն եր առ հեթանոսս՝ թե կիւրոս թագաւոր որ տիրեաց բարելացւոց, յօժարեսցի կամովին և հաճութք արձակել զօրդիսն խորայելի 'ի գերութէ, և տացէ նոցա լիուլի հրաման շինելոյ զտաձարն այ. ( ո՞ . եզր . ը՞ . շ՞ . ) վասն որոյ իրեկ տեսին և ընթերցան զհրովարտակ նորա, յորում դրեր նա, թե թագաւորն երկնաւոր հրամայեաց ինձ արձակել զիսրայելացիս, յայտնի ծանեան թե դործ մեծին այն, և դործ մեծ. սմին իրի առեմարգարեն :

**Յ**այնժամ ասասցն 'ի հեթանոսս, մեծ արար ուեր զառնեւ է-ը ընդ նոսս. մեծ արար ուեր զառնեւ է-ը ընդ եղ. և մետ էլուալաւը : { այնժամ ասելով ցուցանեւ զժամանակն զայն՝ յորում հրամանաւն կիւրոսի ելին խորայելացիք 'ի գերութէ. յայնմ ժամանակի ասե 'ի տեսանեւ հեթանոսաց՝ թե յոյ եղեւ այս մեր ազատութիւն՝ ասացին 'ի մէջ իւրեանց՝ արդարե մեծ արար ոոր զառնեւ իւր ընդ նոսա, այսինքն մեծ եցոյց ոոր զայս արարս զոր արար ընդ որդիսն խորայելի : Եւ մեք խորայելացիքս լուեալ զայս 'ի բերանոյ նոցա, ցնծալից դոչէագ, այն մեծ արար ոոր զառնեւ իւր ընդ մեզ, այսինքն մեծացոյց 'ի մէզ ոծ զգործ

80 Ա Ե Կ Ե Ռ Ո Ւ Թ Ւ Խ Ե  
սբանչելեաց իւրոց . որով և եղաք մեք բերկրեալք  
և ուրախութիւն լցեալք , գոհանալով զննեւ . զի թէ  
նոքա զարմացան , մեք զիարդ ոչ ուրախացուք . զի  
մեզ եղեն բարիքն և ոչ նոցա :

Օ այս ուրախութիւնյայտ առնեւ բառիւս բերիւալ , որ  
ի մէջ բերէ զանման լինել 'ի տրտմութիւն և 'ի հո-  
գոց . զօրմէ 'ի մասնաւորի առեալ գրէ սարգիս շնոր-  
հալի . ( 'ի մեկն . առ . պետ . դպ . 12 . ձառ . ժ . )  
\* բերկրիլն ասէ թուի ինձ ծայր լինել ամենայն ու-  
ս բախութեն և յնծուե իրացն . որպէս զի ամենեին  
ոչ մասն ինչ 'ի արտմականացն գոլ 'ի նմտ . և ոչ  
հետք խռովուե կամ տարակուսանաց . ) յոր միտս  
ասաց գաբրիլ . \* ուրախ լեր բերկրեալդ .

Վ այլ գիտելի է՝ զի որ ապառնի դնի աստ բայդ ասսա-  
ցն , հայի և յանցեալն , որպէս և յայտ է 'ի նախըն-  
թաց բանէն և 'ի յաջորդ հատուածոյն , զի 'ի նախ-  
ընթացն դնի 'լցան բերանք մեր և այլն , և 'ի յաջորդ  
յաւելուածն ասի , և մեք եղաք բերկրեալք . որով  
ցուցանի թէ բայդ ասէլ 'յանցեալն է իմանալի , և ս  
և յապառնին : Որպէս և յասելն . \* խռովեսցին ամե-  
նեքին որ անմիտ են սրտիւք . ննջեցին զքունս  
իւրեանց , և ինչ ոչ գտին . ( սաղ . հե . 4 . ) բայդ  
կուսացին հայի և յանցեալն . որպէս յայտ առնէ  
բայդ անլեցին . զի եղեալն իրը եղանելի դնի :

Խ ակ խորհրդաբար՝ հայելով յապառնին՝ ցուցանի  
ապագայ ուրախութին հետանսաց . որոց տեսեալ  
թէ ել հրաման 'ի կիւրոսէ՝ այսինքն 'ի քո՛տ , վասն  
փրկուե որդւոցն իսրայէլի ( զի կիւրոս՝ քո՛տ թարգ-  
մանի , այն է օծեալ ) , ուրախ եղեն ընդ այն . և  
ինքեանք աճապարեալ կանխեցին քան զնսաս 'ի դառ-  
նալ առ ած կենդանի . և շինել զտաճարն հօգեոր  
զեկեղեցի ար :

Վ ատանօր աւարտի առաջին մասն սաղմոսիօ՝ որ հայ-  
էր յուրախութիւն այնոցիկ՝ որք գարձան . և սկսանի  
երկրորդ մասն , որ հայի 'ի սփոփանս այնոցիկ՝ որք  
դառնալոցն էին , զօր և թախանձանօք առաջի մա-  
տուցանէ մարգարէն , և ասէ :

Դ. **Դաբչի՝** ուեր զգերութիս մեր՝ որդեն շառավիս՝ ի հա-  
րսուոյ . ոյս վարելն արդասած , ցնծութեամբ  
հնիյեացին :

**Ղարձ որդւոցն իսրայելի ՚ի գերութ ոչ եղեւ միան-  
դամայն , այլ չորիցո . նախ՝ ընդ զօրաբարելի և ընդ  
յասուայ իրեւ բիւրս հինգ . երկրորդ՝ դարձեալ ընդ  
զօրաբարելի . երբորդ՝ ընդ եզրոյ . չորրորդ ընդ  
նե, եմեայ . տես՝ ՚ի ներած . ( զԼ. Ժ Ռ . ) Արդ որք յա-  
ռաջնումն դարձեալ էին , փափաքելով տեսանել և  
զդարձ մնացելոց եղբարց իւրեանց՝ աղաւելին զո՞ծ՝  
ասելով :**

**Դաբչի՝** ուեր զգերութիս մեր՝ որդեն շառավիս՝ ի հարսուոյ :  
Փախանակ ասելոյ դարձն զց երութին եղբարց մերոց ,  
ասեն զց երութիս մեր . որով կամին ցուցանել , թէ  
զերութին եղբարց իւրեանց համարեալ է զերութին  
ինքեանց , նոյնով ! ս և դարձումն նոցա . զի ազգին  
էր այն գերութին և դարձ , թէ ես ըստ մասին . և  
ըստ այսմ կամին ասել . ուրախութին մեր տակաւին  
չէ կատարեալ , մինչև դարձին և եղբարք մեր . վասն  
որոյ աղաւեմք դարձն և զնոսա \* որպիս զուղիս՝ ՚ի  
հարաւոյ ! . որով երկու ինչ զիտեն յայտնել , մի  
զդառնալ նոցա արագ արագ , և մի ես՝ զդառնալ  
նոցա բազմութք , զի որպիս ուղիսք արագ ընթանան  
և յորդ հոսեն , սայնով ! ս ասեն փափաքեմք զի և մնա-  
ցելքն ՚ի գերութեն՝ արագ և յորդ հասցեն ՚ի հը-  
րեաստան . թէ ուղիտ քառասուն ամ ևս տեսեաց այն .  
ըստ որում զըն զի որդ վարդապետ . ( ՚ի մեկն .  
եսայ : )

**Եւ յետ գալոյ նոցա որովհետեւ բազումք ՚ի նոցա-  
նէ ՚ի մէջ հեթանոսաց կալով՝ ուսեալ էին ինչ ինչ  
՚ի նոցանէ՝ յանցանել ժամանակաց յայլեայլ աղանդոս  
բաժանեցան . զորս ոմանկք չորս թուեն . իսկ բար-  
սեղ վարդապետ ( ՚ի մեկն . մարդկ . զլ . Ժ Բ . ) եօթն  
դնէ յասելն . \* յետ դառնալոյ ՚ի գերութին յեօթն  
,, հերձուածս բաժանեցան հրեայքն . և յեօթանց  
,, երկուքն սագուկեցիքն և փարիսէցիքն են . ) :**

**Խակ** թէ ընդէլոր զդարձ գերութ դնէ հանգոյն հա-  
բաւային ուղինից՝ զիտելի է , զի ուղիք ( այսինքն

սէց ) հեղեղատից որք էին 'ի հարաւակողմն հրեաս-  
տանի 'ի սահմանս գալոյ, յորդութ իջանէին 'ի միջ-  
երկրական ծով. վասն զի 'ի յաճախել անձրեաց 'ի  
վերայ լերանց՝ ուղիւք հեղեղատիցն առաւել առա-  
տանային յայնոսիկ կողմանս քան յայլ սահմանս հրե-  
ատանի :

Մարթ է հարաւայլ իմանալ աստ զհողմն հարաւոյ,  
որոյ 'ի շնչելն հալին ձիւնք լերանց և հեղեղեն յուղիսու  
Ապա աղաւէ մարդարէն զի որովէս իջանէն այն հե-  
ղեղք 'ի ծով իբրեւ 'ի տեղի իւրեանց, սոյնավէս և  
մնացեալ որդիքն իսրայէլի եկեսցեն յերկիր ժառան-  
գութե իւրեանց. ( զորմէ տես եսայ. կդ. 12: )

Ոմանք սյլազգ մեկնեն զայս բան՝ իբր թէ որպէս  
ուղիւք՝ ընդ որ անցանեն՝ ոռոգանեն և զովացուցա-  
նեն, այսպէս և դարձք գերութե մնացելոցն զովա-  
ցուցեն զնոսա: | Տւ կամ դարձեալ՝ որպէս ուղիւք  
յընթանան՝ զորս գտանեն՝ յափշտակեն ընդ ին-  
քեանս և վարեն, սոյնպէս և գերեալքն յափշտակե-  
լով զայլս ևս ածցեն 'ի տեղիս իւրեանց. բայց այ-  
սոքիկ մեկնութեք ոչ երեին համաձայնիլ նմանու-  
թեն, այլ հաճայութե մեկնողին :

Հոգեորապէս, այս բանք ասին 'ի հաւատացելոց .  
որոց 'ի տեսանելն թէ բազումք գեռես յորդւոց  
մարդկան կան 'ի գերութե սատանայի՝ արժան հա-  
մարին աղաւէլ զած՝ որպէս և աղաւէն իսկ. զի զնո-  
սա ևս դարձուցէ 'ի գերութե անտի իբրեւ զուղիսս  
'ի հարաւոյ, այսինքն իբրեւ զլիացեալս 'ի սիրոյ, որ  
օրինակի 'ի հարաւ: | Խսկ թէ որչափ ուրախութի  
լինէր նոցա 'ի դառնալ նոցին՝ նմանութեք իմն ա-  
ռաջի զնէ: մարդարէն և ասէ:

Ոյս վարեին արտասառօք, շնծառելք հնիւսցին: | Այս բան է  
իբրեւ առակի ինչ. որով ցուցանի դադարիլ տառապա-  
նաց և վայելել 'ի բերկրութեն, որ յաջորդէ զկնի  
տառապանաց. զի յայտ է թէ վարելն զերկիր՝ և  
սերմանելն 'ի նմա տառապանք է՝ ոչ միայն յաշխա-  
տիլն, այւե 'ի ցրուելն զսերմանին, հոգալով թէ  
զիարդ ունիցի ժողովիլ և նրչափ: այլ 'ի ժամանակի  
հնաձոցն յաջորդէ ուրախութի 'ի վայելելն անդ յար-  
գասիս սերմանեացն:

Այսպէս լինիցի ասեւ և որոց ՚ի գերութեն են. իբր  
զի որպէս տրտմութք և արտասուզ գնացին ՚ի գե-  
րութի, այսպէս ուրախութք և խնդութք գարձցին  
՚ի գերութի. և յաղատութեն իւրեանց բերկը սոցին  
իրեւ ՚ի հունձս արդեանց. ըստ որում ասացեալ եր  
և այ բերանով երեմիայ. ( Ըստ . 9 . ) թէ \* լալով  
,, ելին, և միմիթարութք ածից զնոսա ։

Փիսքը մի այլազգ եւս մեկնի այս բան՝ հայելով յայ-  
նոսիկ, որոց գծուարին թուեր գառնալ իւրեանց՝ ի  
գերութեղի. զի անդորրը զետեղեալ էին՝ ի տեղիսն՝  
յորս գերեցան. և կապեալ էին սիրտ նոցաընդ բա-  
զում իրս, զորս անդ ստացան. և ոչ կամէին թո-  
ղուշ զայնս առանց մեծի տրտմութե և ցաւոց:

Ա ասն սոցա մաղթէ մարդարէն, զի և սոքա յորդո-  
րեսցին դառնալ. զի թէպէտ 'ի թողուլ նոցա զայնս՝  
յօրս համեալ էին, հարկ լինեթ նոցա տրամիլ և  
լալ, բայց 'ի գառնալն ունեին ուրախանալ. քանզի  
զառաւելագոյնսն և զլաւագոյնսն հանդերձեալ էին  
վայելել. զոր օրինակաւ սերմանողի և հնձողի ցու-  
ցանե. իբր զի որպէս 'ի սերմանել մարդոյ հարկ է-  
նմա վասնել զսերմանիսն՝ որ պատճառէ զտրտմուի,  
և յետոյ 'ի հնձել նորա և 'ի ժողովել զառաւելն՝ ու-  
րախանայ, սոյնպէս լինիցի ասէ, և գարձելոցն. զի  
'ի գառնալ նոցա 'ի գերութիւն թէպէտ և հարկ էթ ը-  
նոցա թողուլ զորս ստացեալ էին անգ, որ պատճա-  
ռէթ զտրտմութիւն, բայց 'ի գալ նոցա յերկիր իւր-  
եանց լինեթ նոցա զառաւելն ստանալով ուրախա-  
նալ: Ո այս առակաբանութիւն բացայացտագոյն. և ս  
կամելով առաջի դնել մարդարէին՝ ասէ:

Ե. Այս լաւագույն երթացիներին և լավագույն, այս բարձրագույն պահելիներին պատճենահանություն կատարենք:

Այս բանք հային յայն՝ զոր գըկ բարուք 'ի խօսելն  
'ի դիմաց երուսաղեմի առ գերեալսն ասելով. ( Դ.  
23. ) \* յուղարկեցի զձեզ լալով և սպով. և տացէ  
,, ինձ ամծ զձեզ ցնծութը և ու բախութը || . և ապա

խօսելով նոյն ինքն բարուք առ երուսաղեմ ասէ . Ե .  
6 . \* ելին 'ի քէն ( որդիք քո ) հետեւակը վարեալը  
'ի թշնամեաց , և ածյէ զնոսա առ քեզ ած ամրար  
, ձեալս փառօք || : Արդ զոր բարուք պարզ բանիւ  
խօսի , որպէս և երեմիս , և եսայի , սազմունէ ըգուն  
առակաբանելով զնոյն յայտնէ , 'ի մէջ բերելով զնմա-  
նուի սերմանողի և ժողովողի . և ասէ :

**Ե**րեւալն էրեւայն և լայն , ոյք բարյեալ բանեին զներման  
էրեւանց : Ամի ասել . երթալով երթային որդիքն  
իսրայէլի 'ի գերութի , և 'ի զնան իւրեանց լոյնն  
հանգ ոյն այնոցիկ երկրագործաց՝ որք ելեալ 'ի տա-  
նէ իւրեանց՝ տանին զսերմանիս լալով , այսինքն ուրիշ  
ըելով և հոգալով . զի երեի նոցա թէ 'ի ցրուելն  
զսերմանիսն՝ ոչ մեայ ինչ ի ձեռս իւրեանց . նա և  
ոչ գիտեն թէ կարիցեն արդ եօք ժողովէլ . Այս այն  
տիրութի նոցա ոչ տեեսցէ իսպառ , այլ գարձցի  
յուրախութի , իսկ թէ զիարդ , ասէ :

**Գ**աւալն էին և յնծառցն , ոյք առեալ բներյեն զրայս  
էրեւանց : Այսինքն , որպէս լալով և տրամութիք վա-  
րեցան որդիքն իսրայէլի 'ի գերութիւն , սոյնովէս  
յնծութիք և ուրախութիք գարձցին անտի հանգ ոյն  
երկրագործացն այնոցիկ՝ որք հնձեալ զարտորայսն՝  
յնծալից ուրախութիք բերեն ընդ իւրեանս զորայս  
իւրեանց բաղումն յոյժ :

**Ա**յլ գիտելի է , զի մարդարէն որովհետեւ ոչ բերէ  
զայս բան իբր նմանաբանութի , այլ իբր առակաբա-  
նութի , վասն այսորիկ փրխանակ գնելոյ 'ի ներկայն  
ըստ պահանջելոյ նմանաբանութի , թէ որպէս եր-  
թալով երթան սերմանացանք , և գալով գան , սոյն  
պէս և գերեալքն . ըստ պահանջելոյ առակաբանու-  
թի զառաջինն զնէ : յանկատար ժամանակի , և զեր-  
կրորդ յապառնին՝ առանց բազգատութիք , որպէս  
թէ եղեալ թը . գերեալքն մեր իբր զսերմանացանս  
երթային և լոյնն . բայց իբրե զորայաբերս գարձցին  
և ուրախասցին . կամոր նոյն է , գնային լալով ըստ  
սերմանացանից , այլ գարձցին ուրախութեամբ ըստ

որայսթերից :

**Հ**ոգեորապէս այս բանք հային նախ յառաքեալսն ,  
որք առին 'ի տնէ ; զսերմն բանին՝ գնալ սերմանել 'ի

մէջ գոյլոց . այլ 'ի գտունախն խնդութ գոյին՝ բարձեալ զորայսն որ եր փրկութ աշխարհի , որպէս գըլ վարդան : Հային երկրորդ՝ յարդարսն , որք կալով յաբսորանս կենցաղոյս և մաշելով 'ի ձգնութիւնս սերմանեն զգործս առաքինութեց լալով և ցաւով , այսինքն զրկելով զանձինս 'ի հանդստենէ , և յունայն փառաց , այլ եկեսցէ ժամանակ՝ զի գալով եկեսցեն 'ի վերինն սիսն , և բարձեալ բերիցեն անդ զորոյս գործոց բարեաց ըստ գրելոյ նարեկացւոյն . ( 'ի բանն . բ . ) և ցնծացեն յուրախութիւնն յաւի տենականս :



## Ա Ե Գ Ա Մ Ո Ս Ռ Ե Շ Ո Ւ Յ Ո :

Հայտաբարութիւն վայրապար լինելոյ հոգացողութեն մարդկան 'ի պակասիլ օգնութենն ոյց և պաշտպանութենորա՝ ուր և առաջի զնի՝ թէ որդիք երկիւղածաց տն՝ լինին ծնողաց իւրեանց ժառանգ բարի , և իբր զէնք՝ նոցաւ և այլոց :

( Օ Բ Ա Ն Ա Բ Ի Վ Ա Ր Ա Յ Ա Ր Ա Յ :

**1** Անէ ոչ ուր շինէ շառան , 'ի նաևիր վաստակին շինողն նորս : 2 Այնէ ոչ ուր ուսէն շառան , շնորհանոյն պահապանն նորս : 3 Դա նաևիր է յեշ յառանէլ իմանեան . արդ՝ արդէ մինչը էն ննշեցեալ , ոյս առաքէ զնոց շառաց : 4 Դա ժամանակի , որդին առցի ռան սիրելոց իւրոց . ժամանակուն առն՝ որդին էն . որոյ վարչէ իւր էն , ոյն է պարուղ որդություն իւրոց : 5 Որդին նետք 'ի յեւս հղոքի . ոյնուն էն և որդին նութեցնուց : 6 Որդին , որ եւլու շառանիստի իւր 'ի նաշնէ . իւ ամանեցնէ՝ յորդամ նոսեցին թշնամիս նոյս ընդ նու ու դրանն :

4. b p 't u q s p .

( )<sup>፳</sup> የኩስኬት ቤት ስምምነት :



**Տ** ՀԵՂԻ ԶԵՐԵԳԻՒԹՅՈՒՆ  
մեր, և 'ի սաղ" վարդ" գնի՝ երգ աստիճա-  
նաց, և յայլ երիսն գնի յոգնակի, երգք  
աշտիճանաց. և 'ի միում գնի յաւելմամբ, \* երգ աս-  
,, տիճանաց՝ սաղմաս 'ի դաւեթ": Խակ յերկուս ձե-  
ռազիրս, և 'ի սաղ" լամբ" գրի ըստ գնելոյ մեր \*օրհ-  
,, նութի աստիճանաց": որպէս և 'ի միումն և 'ի  
տպագր": օրհնութիք աստիճանաց. զորմէ տես 'ի  
ներած". ( գլ. ժամ: )

ՀԵՐԲ" և 'ի քաղդ" և յասոր" և 'ի բազումնախնի մեկնիս 'ի վերնագրի աստ յաւելեալ լինի և բառդ 'ի սողոմնն, յորոյ վերայ բազումք բազում ինչ ասեն. ոմանք թէ գաւիթ մարգարե, 'ի յանձնելն 'ի սողոմնն շինել զտաճար տն՝ զայս սաղմոս աւանդեալ իցէնմա, երգել յետ շինութեն իբրև զդուշաւորութենի ինչ. վասն որոյ և 'ի սկիզբն սաղմոսիս դնի տօեն՝ \* եթէ ոչ տէր շինէ զտուն և այլն : Վ. Ա. թէ սողոմնի իցէ յօրինեալ զայս 'ի շինել նորա զտուն տն: Եւ բազումք ևս թէ անգեայ կամ զաքարիայ իցէ ասացեալ հայելով 'ի շինութեն երկրորդ տաճարին. յոր միտ բառդ սողոմն՝ յաւելեալ է տօեն 'ի ցուցանել, թէ որպէս սողոմնն եղե առաջին շինոյ տաճարին օգնութեն ոյ, սոյնպէս զօրաբարբէ, եղե երդ.

լորդ շինող այնը՝ նովին օգնականութեք։  
Հայց գիտելի է՝ զի բառս սողումնն՝ երեխ մուծեալ  
յետ թարգմանութե եօթանասնից։ զի ոչ գտանի  
այդ յընտիր օրինակս եօթանասնից՝ ոչ ՚ի ձեռագիրս  
և ոչ ՚ի տպագրեալս, և ոչ ՚ի թարգ՝ լատ՛ և եթէով՝  
և արաք։ որպէս և ոչ ՚ի մերում։ իւ սակայն եթէ՛  
գիցի այդ և եթէ ոչ հաւանականագոյն և հասա-  
րակագոյն կարծիք է թէ սոյն այս սաղմոս յօրինեալ  
է՝ հայելով ՚ի ժամանակ երկրորդ շինութե տաճա-

ըին, և 'ի ժամանակ շինութե՛ պարսպին երտսաղե՛մի 'ի նե եմեայ, յորժամբ լնդդէմ ելին նմա բաղումք. (որպէս զնի դ. եզր. դ. 1-9 : և դ. 1-10 .) ուր և ցուցանի՝ թէ 'ի նանիթ վաստակին շինօդք տան, եթէ որ ոչ շինեսցէ. և ընդունայն տքնին պահա-  
պանք քաղաքի, եթէ տէր ոչ պահեսցէ եռ:

Խոկ թէ յորմէ իցէ ասացեալ՝ ոչ է հնար ուստեք ճշմարտիւ հաստատել, բաւական համարեսցի մեզ զիտել թէ հեղինակ սորա է հոգին որ, որ խօսեցաւ յօրենս և 'ի մարդարեութիւն: Քայս վերջին կարծիս յեցուցեալ զմեկնութիւնը՝ մատիցուք ի քննութիւն:

### Բ Ա ՚Ե.

Ա. Անէ ոչ ուշը շինէ դառնան, 'ի նանիթ վաստակին շինօդք նորա:

Բ. Անէ ոչ ուշը դահնէ դառնան, շնորհայն արձին ուս- հապանէ նորա:

### Մ Ե Կ ՚Ե Ո Ւ Թ Ո Ւ ՚Ե.

Այս բանք են առածք անյեղի ճշմարտութե՛ բո- վանդակիչք այնը՝ զոր առանդեն որ զիրք, թէ ա- ռանց ձեռնտուութեն ոյ ոչինչ վճարի. որում խե- լամուտ լեալ և ամենայն աղջոնց՝ խօստովան լինին թէ յոյ է ամենայն յաջողութիւն. և ոչ գտաւ ոք 'ի զդաստից՝ ոչ 'ի հրեից և ոչ 'ի հեթանոսաց, ոչ յի- մաստնոց և ոչ 'ի բարբարոսաց՝ որ հակառակ եկաց այսմ. և զի այս յամենայնի ճշմարիտ է, որչափ զօ- քէ ընդհանրապէս ասել՝ թէ առանց ոյ ոչինչ լինի, նոյնչափ զօրէ և 'ի մասնաւորի ասել՝ թէ առանց ոյ ոչ լինի ոչ այս և ոչ այն. ուստի և մարդարեն զընդհանուր զայն ճշմարտութիւն մասնաւորելով իմն առաջի զնէ: և ասէ:

Ա. Անէ ոչ ուշը շինէ դառնան, 'ի նանիթ վաստակին շինօդք նորա:

Ալուլչետե այս սաղմոս ըստ աւանդելց հասարակաց  
հայի 'ի ժամանակ դարձի գերութեն բարելացւոց,  
այս բան ըստ ճառին ասի առ նոսա՝ որք ձեռն ար-  
կին շինել զտուն ան . և քանզի 'ի հիմն արկանել նո-  
ցա այնմ՝ յարեան 'ի վերայ նոցա/ազգք, որք էին  
շուրջանակի, և խափանեցին զգործն մինչեւ յերկ-  
րորդ ամի դարեհի . (որպէս դրի ք. եզր. դ. 1. և  
24.) քաջալերս տայ նոցա մարգարեն, միանգտմայն  
և զգաստացուցանե՝ ճանաւել թէ խօրհրդովն ոյ  
եղե այն . և թէ պարտ է նոցա հաստառուն ունիլ  
զրյու իւրեանց յած, և մի ապաւինիլ 'ի հնարս և 'ի  
զօրութիւն իւրեանց, գիտելով թէ ած է՝ որ յաջո-  
ղէ . և եթէ նա ոչ լինիցի ձեռնառւ՝ ոչ կարեն շի-  
նել զտունն զայն . վասն զի ասէ, եթէ ոչ որ շինե-  
զտուն՝ 'ի նանիր վաստակին շինողք նորտ, այսինքն  
'ի շինել մորդկան զտուն՝ եթէ ած ոչ օգնեցի-  
այնմ շինութե, աշխատութիւն շինողացն նանրանայ  
և ոչ կարէ 'ի գլուխ տանիլ զսկսեալն : || Ոյնպէս է  
ասել և վասն պահպանութե տան և քաղաքի . և  
առ այս յարէ և ասէ :

**Ե**թէ ոչ ուր դահե շաղաս, չնդանայն ունին դահողանն  
առա : { Յայտ է յելրորդ դրոց եզրասայ, ( զ. դ. դ. և  
շ. ) թէ յետ շինելց իւրայլացւոց զտուն ան՝ իւրե-  
ձեռն արկին կանգնել և զպարհսոյ քաղաքին երու-  
սաղէ մի իբրև զքաղաքի ած յարեան 'ի վերայ նոցա  
սանրազատ և տուրիաս և արաբացիք և ամսնացիք,  
և կամէին պատերազմաւ խափանել զայն . բայց նէ-  
եմիաս ոցինչ երկուցեալ 'ի նոցանէ հրամայեաց ժո-  
ղովրդեան կէս մի աշխատիլ 'ի շինութիւն պարսպին  
և կէս մի զինեալ կալ 'ի պահպանութիւն քաղաքին .  
իսկ յերե կոյանալ առուրն տայր փող հարկանել . և  
ամենեքին ժողովին 'ի միասին 'ի մէջ քաղաքին,  
ասելով . \* ած մեր պատերազմեսցի ընդ թնամիր  
ո մեր վասն մեր ! . ( դ. եզր. դ. 20. ) զի թէ նա  
ովաշտպանեցէ զքաղաքս զայս, ո կարէ ընդդէմ  
կալ նմա . ապա թէ նա ոչ կամիցի պահել, զինչ  
կարիցեմք առնել մեք : { Յայտ հայելով մարդարեն  
ասէ :

**Ե**թէ ոչ ուր դահե շաղաս, չնդանայն ունին դահողանն

Կարս : Այսինքն , եթե ած ոչ կամիցի պահել ընդ ինամով զբաղաքն , թե հազարաւոր պահապահով տքնեսցին և զգուշասցին՝ ի վերայ նորա , ընդունայն է այն տքնութիւնոցա : Այսու ոչ կամի ցուցանել մարդարեն՝ թե չէ պարտ մարդ կան պահապահն կարդել՝ ի վերայ քաղաքի , այլ թե պարտ է յած աղաւինելով առնել զայս պահպանութիւն . որպէս զի՞նա ինքն իւրով հովանաւորութե պահեսցէ զբաղաքն . ուստի ոչ ասէ ընդունայն է պահպանութիւն քաղաքի , այլ թե ի պահպանէլ մարդկան՝ պահպանութիւն նոցա ընդունայն լինի՝ եթե ած ևս ոչ պահեսցէ :

Երկորին այս բանք հային ևս եւ յայլ ամենայն շինութիւնս և ՚ի պահպանութիւնս . և նախ հոդեորապէս առեալ հային՝ ՚ի շինութիւն եկեղեցւոյ , որ է շինուած այց . ըստ այնմ . \* այց շինուած էք . ( ա . կոր . գ . ջ . ) յոր և վաստակին առաջնորդք և քարոզք բանին . բոյց պարտ է նոցա ՚ի կամիլն շինել՝ յած լինել ապաստան , զի եթե նա ոչ շինեսցէ՝ ՚ի նանիք աշխատին նոքա . զի առանց նորա ոչ կարեն շինել ըստ վկայելոյ նորա , թե \* առանց իմ ոչինչ կարեք „ առնել . ( յովհ . ժե . 5 : ) Եւ զորօրինակ ոչ կարեն առանց նը շինել , սոյնպէս և ոչ կարեն առանց պահպանութե նորա՝ պահել . զի ոչ գոյով նոքա ՚ի ներքս ՚ի հօգիս նոցա , այլ արտաքոյ , եթե ՚ի ներքուստ ոչ պահեսցէ՝ ած զժողովուրդն , արտաքին ավենութիւն և պահպանութիւն առաջնորդաց ըստ նայն ելանե . և վասն այսորիկ պարտ է նոցա ընդ արտաքնոյն խնդրել յայց զներքին պահպանութիւն զովորդեանն :

Բարոյապէս , ՚ի խորհիլումեք շինել զտուն առաքինութե եթե ոչ տէք շինեսցէ՝ ՚ի ներքս՝ ՚ի նանիք աշխատի շինողն . զի \* ոչ եթե անձամբ քաւական „ եմք խորհիլ ինչ իրբեւ՝ ՚ի մէնջ , (ասէ առաք) այլ „ բաւականութիւնն մեր յայց է . ( ք . կորն . նե . 5 : ) Եւ որպէս ՚ի շինելն , նոյնպէս և ՚ի պահելն . զի եթե ոչ տէք պահեսցէ զբաղաք հոգւոյ մերոյ , ընդունայն տքնին միտք և կամք մեր : Ծերութե որդի սաւուզայ ննջեք ՚ի գահոյս . և բարապան տանն ՚ի

քուն եմուտ . մտին 'ի ներքս ռեքաբ և բանա եղ-  
բարք , և սպանին զյեքուսթէ . ( թ . թագ . դ . 7 : )  
Ընդունայն տքնի ապաւինութի անձինդ՝ եթէ ոչ  
պահեսցէ որ զհոգի քո . զի մտանեն մեղք և սատա-  
նայ , և սպանանեն :

Յարմարական մեկնութք զսոյն մարթ է ասել և  
զիւրաքանչիւր իրաց 'ի յաջողիւն և 'ի պահպանիւն՝  
եթէ տուն իցէ , և եթէ քաղաք . եթէ տաճար իցէ  
և եթէ վանք . եթէ գործ իցէ և եթէ վաճառ . զի  
յամենայնի ձեռնտուութիւնն այ այնպէս է հարկա-  
ւոր 'ի շինութի և 'ի պահպանութի , որպէս հարկա-  
ւոր է ազդուութի հոգւոյն 'ի շարժութի և 'ի կեն-  
դանութի մարմնոյն : Այլ զորօրինակ ազդուութիւն  
հոգւոյն ոչ ներգործէ՝ եթէ գործակցութի մարմնոյ  
և ոչ կայցէ , սոյնպէս և ձեռնտուութին այ ըստ  
հասարակ կարգի խօսելով ոչ դործէ 'ի մարդն՝ ոչ 'ի  
շինութի և ոչ 'ի պահպանութի , եթէ նաև գործակ-  
ցութի մարդոյ ոչ իցէ . զի ըստ առաքելոյն \* այ գոր-  
,, ծակից եմք || . ( թ . կոր . դ . 9 : )

Ուստի թէպէտե ջանք մեր պարտի լինել 'ի գործակ-  
ցութե , բայց յոյս մեր պարտի հանգչիւ յանձային  
ձեռնտուութե . զի թէ ոչ յուսամք , 'ի նանիր ջա-  
նամք : Օսոյն զայս աստ զեկուցանէ մարդարեն և  
որդւոցն իսրայէլի շինողաց պարսպին , յասելն առ  
նոսա :

Դ . 16. **Ա**նաներ է յեշ յառնել հանիսաւ . արդ՝ արդէս մինչև էտ  
ննջեցեալ , ոյտ ուրեմն շհաց յառոց :

Որպէս գրի դ . եզր . դ . 16--23 . և դ . 2--16 . իբրև  
ետես նէեմիաս՝ թէ շինողք պարսպին վաստակին  
յոյժ , 'ի տունջեան աշխատելով և 'ի գիշերի հսկե-  
լով պատուէր ետ նոցա փոխանակաւ առնել զայն  
գործ . իբր զի որք հսկենն 'ի գիշերի՝ 'ի տունջեան  
հանգիցեն , և որք 'ի տունջեան աշխատին՝ 'ի գիշե-  
րի ննջեսցեն . բայց որովհետեւ մեծ էր փոյթ նոցա  
և ջանք 'ի գործել զգործ պարսպին , որք ննջեինն՝  
ոչ մերկանային զհանգերձս իւրեանց , և ոչ սպասեին  
ծագման առաւօտու , այլ փութային կանխել 'ի  
գործ . նոյնպէս և որք հսկեինն , 'ի գործել այլոց

գործակից լինելին նոցա . և ոչ ոք՝ ի նոցանել հանդըս-  
տեամբ ուտելը զհաց , այլ ցաւօք , այսինքն լի հո-  
գովք :

**Օ** այս տեսեալնեեմեայ (ը գրելոյ մեր ՚ի համարն .  
2. յերըորդ գրոց եղբ” . դ . և կ .) պատուելը ետ  
ամենեցուն՝ յերեկոյանալ աւուրն ժողովիլ ՚ի մէջ  
քաղաքին : Ի այց այսու ամենայնիւ տագնաալելին նո-  
քա և փութային յառնել կանուխ ՚ի գործ պարո-  
պին :

**Ե** յս գործ նոցա՝ որ եր վասն փառացն այ ՚ի շինու-  
թի քաղաքի նորա՝ առաւելութք ջանից նոցին , պա-  
կասեալ երևելը յառաւելութել յուսոյ որ առ ած , ոչ  
զի ոչ էին յուսացեալ ՚ի նա , այլ զի առաւել երևելը  
ջանք նոցա ՚ի գործս իւրեանց՝ քան յուսալ նոցին ՚ի  
ձեռնտուութին այ . և զի առանց ձեռնտուութենո-  
րա ընդունայն լինելը այն ամենայն , վասն որոյ խօ-  
սելով նախ առ այնոսիկ՝ որք կանխելին յառնել ,  
ասէ :

**Ի** նաներ է յեղ յառնել իանիսաւ : Կամի ասել . որք վը-  
տօք ուտեք զհաց , և հոգովք նոցեք , ՚ի նանիը փու-  
թայք յառնել յառաջ քան զծակ ել լուսոյ առ ՚ի կան-  
իսել ՚ի գործ աշխատութեն պարսպի քաղաքիդ . զի  
եթէ ած է որ յաջողէ , ոչ այնչափ ՚ի գործո՝ որչափ  
՚ի նա պարտիք կանխել և ՚ի նա յուսալ . զի նա գոր-  
ծեսցէ ընդ ձեզ և յաջողեսցէ . իսկ եթէ նա ոչ օդ-  
նեսցէ՝ ընդունայն աշխատիք : Իսկ թէ երք պարտ  
էր նոցա յառնել , յայտ առնէ ասելով :

**Լ** ուր արէտ՝ միշտ էր ննջեցետը : Լստանօր բառդ արէտ՝  
ցուցանէ զժամանակն զայն , յորում արժան եր յառ-  
նել և գործել զգործ պարսպին , յորժամ ըստ բա-  
ւականին հանգիստ առեալ եր նոցա . և յայս միտ  
բառդ միշտ՝ դնի փոխանակ բառիս միշ կամ յորժամ .  
որպէս թէ ասէր . յորժամ ըստ բաւականին հան-  
գիստ տայք մարմնոյ ձերոյ , յայնժամ արիք ՚ի քնոյ ,  
և յած ապաւինելով՝ գործեցէք զգործ նորա՝ այսինքն  
զգործ պարսպին . ապա թէ ոչ ՚ի նանիը աշխա-  
տիք . և առ ցուցանելոյ զվաստակ նոցին յարէ և  
ասէ :

**Ո** յտ ուտէտ պհաց ցաւոց : Ուր ցաւօք իմացեալ լինին

վիշտք և հոգք զի առանց հանգստի և առանց անդորրութեան սրտի ուտեին նօքա լհայ իւրեանց . որով և առաւելեալ լիներ նեղութի աշխատուեն նշ . վասն այսորիկ յորդորե , որք առէ այդափի հոգովք ուտեք և այդափի աշխատութի ննջեք , մինչեւ ոչ հանգլիցիք՝ մի աճապարեսջիք՝ ի գործ , և մի ինչ զանգիտիցեք , զի անձ է որ գործէ զգործ ձեր , իւր բոլոր գիտումն մարգարեին է ցուցանել , [թէ] ունձային ձեռնտուութի հնար էր կատարել զգործ շինութե քաղաքին ոյ՝ այսինքն երուսաղմի . և յայս միայն հայեր յորդոր նորա . զի և ժողովուրդք զոյն գիտելով գործեցեն , և մի ՚ի զօրութի իւրեանց յուսալով կամ յաշխատանս անձանց ապահնելով տրասցեն՝ զոր առնեն : || արդան զուադ ֆնշ՝ ընթեռնու մինչեւ . զորոյ զմեկնութին տես ՚ի համեմատութե :

|| մանք խորհրդաբար առեալ զայր բան տարածեն առ մարգարես . իբր զի ՚ի նանիր եղեւ ջանալ նոցա ՚ի շինել զկործանեալ քաղաք բնուե մերոյ . զի ուինչ կարացին առնել յիրաւի գուշակեին զայնմանէ , այլ ինքեանք ուտեին լհաց ցաւոց ՚ի կարօտիլ նոցա ՚ի նոյն . մինչեւ էջ յերկնից որդին ոյ իբրեւ զհաց , և դարման տարաւ բնութենս . յայս իսկ արիք առէ այժմ որք ննջեցեալքդ էք , և տեսեք զոր արար որ զին ոյ :

Դարձեալ՝ ՚ի նանիր էր ջանք առաջին իմաստնոց ՚ի փութալ նոցա գտանել զշմարտութի իւրեւ զհաց . ուստի և տանջելով ՚ի խորհուրդս իւրեանց՝ գրեթէ ուտեին լհաց ցաւոց . եկն ապա նշմարտութին , և ձայն ետ ամենեցուն զարթնուլ և զգաստանալ , և հասանել նշմարտութե , ևս և յորութե կենաց : Այս բան հայի և յամենեսին ՚ի նոսա որք կամին շինել զպարիսպ ո՞ր և իցէ գործոց իւրեանց՝ զորս առնեն ՚ի քաղաքին ոյ այսինքն յեկեղեցւոնքն քսի . որում մարթ է տալօրինակ այսպիսի , որ կամիյօրինել զդիրս ինչ ՚ի փառս ոյ՝ եթէ չունիցի իւր օգնական զո՞ծ , ՚ի նանիր է նմա յառնել կանխաւ , և փութալ՝ ՚ի զրութի , այլ պարտ է նախ յառնել յապահինութի ոյ , և ապա ձեռնտուութեամբ նորա ձեռնարկել ՚ի

գործս . ապա թէ ոչ , կամ ոչ յաջողի այն , և կամ անպատճելանեւ . որով և ընդունայն լինի այն ջանք նորա , և անվտրձ ուտելին նորա զհաց ցաւոց՝ այս ինքն անհանգիստ կալ նորին վասն յառաջ տանելոց զգործ իւր . Այսպէս իման և վասն այլոց դործոց :

Բարոյապ'ս իւրաքանչիւր մարդ յաշխատիլ իւր ՚ի շինութիւն անձին իւրոյ՝ առաւել պարտի ապաւինիլ աղօթիւք առ առ ամ քան ՚ի ջանս իւր . առ որ օրինակ ետ զինքն նորն մեր , որ յամենայնի բաւական գուզով ՚ի գիշերի աղօթիւր և ՚ի տունջեան քարոզեր . (Ղուկ . դ . 12-22 .) որում չետեեցան և առաքեալք , որք զամենայն հոգս յանձն արարեալ այլոց՝ պարապէին նախ աղօթից , և ապա քարոզութե . (գործ . դ . 4 .) Խոկ որք թողեալ ՚ի բաց զարապութիւն աղօթից՝ կանխեն ՚ի գործ իւրեանց , ասի առ նոսա , ՚ի նանիր է ձեզ յառնել կանխաւ . այսինքն ընդունայն է աշխատիլ ձեր՝ յորժամ առանց դիմելոց առ ամ , յառնէք ՚ի շինութիւն կամ ՚ի պահպանութիւն . այլ պարտ է ձեզ նախ ննջել այսինքն հանգչիլ յաղօթս , և ապա յառնել ՚ի գործ . \* արիք մինչ ըս բաւական , նին ննջեցեալ իցեք յաղօթս :

Եւ ըստ այսմ այն բան՝ զոր յարեւ զինի՝ ոյք ուտք զհաց ցաւոց , հայի յայնոսիկ՝ որք ՚ի պարապիլն շինութիւն հոգ և որական կենաց՝ տեսեալ զինքեանս ՚ի պէս . ոլ . ս փորձաւթիս , և ոչ կարելով ժառանգել զքաղցրութիւն այլ ցաւօք սրտի տագնապին , և արտասուօք ուտեն զկերակուր իւրեանց , մանաւանդ թէ նոյն խոկ կերակուր նոցա գառնայ յարտասուօք , և արտասուօք նոցա ՚ի կերակուր . մինչև ասել ընդ մարդարելին . \* եղեն ինձ արտասուօք իմ կերակուր ՚ի տուէ . և ՚ի գիշերի . և այն՝ զի ասելին ցիս (խորհուրդք և խղձի մտաց իմոց ) զօրհանապազ թէ ուր է ամ քո . (սաղ . խան . 3 .) Խամելով ապա մարդարեին քաջալերս տալ յարեւ զինի , և ասէ :

Դամանակի, որպէս պացի չուն սիրելեաց իւրոց։  
Ժառանգութեան՝ ( համ դն ) որդեւ են։ որոյ  
Հորի իւր են, այն է պառող որովայնէ իւրոյ։

Օ կնի աշխատութեաջորդէ հանգիստ, մանաւանդ  
եթէ այն աշխատութի իցէ վասն ոյ։ արդ քանզի  
'ի մեծի աշխատութե էին՝ որք գործէին զգործ ոն  
ոյ, այսինքն զգործ պարսպի քաղաքին երուսաղեմի,  
և ոչ եր նոցա հանգիստ 'ի քուն լինել վասն առա-  
ւելոյ նոցա 'ի հոգս, յետ յորդորելոյ զնոսա՝ յաւետ  
յած ապաւինիլ քան տքնութը 'ի հոգս մաշիլ, յայտ  
առնէ այժմ թէ յիրաւի յապաւինիլ նոցա յած և 'ի  
յանձն լինել նոցա նմա, նա ինքն ունի հանգուցա-  
նել զնոսա, և տալ նոցա քաղցր 'ի քուն լինել, վասն  
որոյ ասէ։

'Ի Ճամանակի, որպէս պացի չուն սիրելեաց իւրոց։ Աստա-  
նօր բառդ որպէս՝ դնի փոխանակ բառիս՝ յորժամ. ը-  
սրում է տեսանել և յայլ բազում տեղիս. և ըստ  
այսմ այդ բառ՝ հայի նախ 'ի նախընթացն, և երկ-  
րորդ 'ի հետեւեալն. 'ի նախընթացն հայելով կամի  
ասել. խաղաղութը և հանգստեամբ ննջեսցեն աշ-  
խատողք պարսպին 'ի ժամանակի՝ յորժում տացի նո-  
ցա քուն 'ի ոնսէ իբրև սիրելեաց իւրոց. և մի՛ ևս չա-  
րաչար տքնեսցին յայնժամ։

'Ի հետեւեալն հայելով կամի ասել. թէպէտե այս-  
չափ տքնութեամբ աշխատին իսրայելացիք 'ի զործ  
ոն՝ այսինքն 'ի շինութի պարսպին, սակայն 'ի ժամա-  
նակին՝ յորժամ աւարտեսցի այն շինութի, տացի նո-  
ցա 'ի ոնսէ քուն քաղցր՝ այսինքն խաղաղութի մեծ  
կամ հանգիստ հոգւոյն իբրև սիրելեաց իւրոց, և  
իբրև հաւատարիմ որդւոց. կամ որ նոյն է, յաւար-  
տիլ շինութեն տացի նոցա յած խաղաղութի և հան-  
գիստ. զի են սիրելիք իւր։

Փոխանակ խաղաղութե քուն դնէ. զի քուն քաղցր՝  
իբրև հետեւութի է խաղաղութե կամ իբրև գործ  
նորա. ուստի և մարթ է նովաւ իմանալ զնոյն իսկ  
զխաղաղութին, առեալ զանուն հետեւութե կամ  
զանուն գործոյն փոխանակ անուան սկզբանն կամ  
պատճառի։ Բայց ոչ այսչափ միայն, այլև տացի նո-

ՍԱՀՄ. ՃՒԶ:  
ցա բեղմաւորութի զաւակաց. յոր միտյարէ զկնիւ  
ասէ:

95

Դառանգութեան առն՝ որդիւն էն (որոյ վարչէ իւր էն, այն է պարուշ որովայնի իւրոյ): Կամի ասել. յաւարտել իսրայէլացւոց զքաղաքն այ կենդանւոյ՝ ոչ միայն հանգիւն, այլև օրհնութք նորա ծնցին զորդիս. և բազմասցին, և որդիք նոցա լինիցին ժառանգութի նոցին այսինքն ժառանգք նոցա. զի ժառանգութեան առն որդիւն էն. իբր թէ ասէր, իւրաքանչիւր այր յորժամ ծնանի զորդիս՝ ունի զայնս իբրև իւր ժառանգ՝ մանաւանդ եթէ իցեն բարեք. և նոյն որդիք 'ի լինելն բարի՝ են իբրև վարձք աշխատութե ծնողի իւրեանց իբրև ուն. վասն որոյ ասէ:

Ուրոյ վարչէ իւր էն, այն է պարուշ որովայնի իւրոյ: Կամի ասել. որդիք առն են իբրև վարձք և ստացուածք նորին. և զի նոքա են պտուղ որովայնի, վասն որոյ ասէ. \* այն է պտուղ որովայնի իւրոյ ||. որպէս թէ ասէր. պտուղ որովայնի նորա՝ այսինքն որդիք նորա՝ են վարձք նորին:

Եյլազգ ևս մեկնի այս բան՝ հայելով յայն, որ լինելոց էր յետ շինութեն երուսաղէմի, յոր միտ կամի ասել. յետ աւարտելոյ իսրայէլացւոց զշինութի քաղաքին այ, 'ի ժամանակի անդ՝ յորժամ տացի քուն սիրելեացն այ, այսինքն յորժամ ննջեսցեն նոքա զքուն մահու իբրև սիրելիք այ, որդիք նոցա լինիցին ժառանգութի նոցին, և այն վարձք մեծ համարեսցի նոցա, զի է օրհնութի այ:

Հոգեորապէս, այս բան հայի 'ի սիրելիսն այ, որք աշխատին 'ի շինութիւն եկեղեցւոյ և 'ի փրկութի անձանց, որոց իբր ժառանգաց յետ բազում տքնութեց տացի յայ քուն հանգստեան և անդորրութիւն հոգւոյ. օրհնեսցին և զաւակք նոցա 'ի վարձ նոցին՝ թէ իցեն ծնունդք որովայնի նոցա, և թէ իցեն պտուղք աշխատանաց նոցին, որպիսի համարի պօղոս զհաւատացեալս 'ի քն՝ զորս ծնաւ աւետարանաւն.

(ա. կոր. դ. 15:)

Դարձեալ 'ի տալ այ սիրելեաց իւրոց զքուն մահու՝ ժամանեսցեն նոքա յարքայութիւն, և ժառանգեսցեն զնած իբրև որդիք. կամ թէ երևեսցին

Նորայարքայութեն իբրև ժառանդք առն , այսինքն  
քսի՝ որոյ եղեն որդիք և պտուղք որովայնի նորա ,  
և իբրև վարձք այսինքն իբրև զինք արեան նորա .  
և այս առաւել ևս յայտնի ցուցցի ՚ի յարուե աւուրն .  
առ որ հայելով քուն կուլ զմահն , ըստ որոյ աս' :  
վանական վարդապետ . (՚ի մեկն . յոր . զլ . ժդ . )  
\*քուն անուանեաց զմահ , յայտնի տալով մեզ յօյս  
,, յարութեն :

Վայլ զիտել արժան է, զի յերբ " Փոխանակ բառիս  
առն դնի, եւհօջահ, այսինքն տն, սոյնպէս դնի և  
յայլս, ես և 'ի մեկնութեն վարդանաց . և յաւելեալ  
լինի ես բառդ ահա . և ըստ այսմ միտ բանին փոքր  
մի այլայի և . ըստ որոյ կամի ատել . յետ աշխատելոյ  
ժողովրդեան 'ի գործ տն՝ տացինոցա քուն հանգըս-  
տեան, կամ խաղաղութի և անդօրրութի . և ահա  
այսու երեւսցի' թէ նոքա են ժառանգութի տն .  
սոյնպէս և որդիք նոցա՝ որք են վարձք և պտուղ  
որովվայնի նոցա . տես զայսմանէ և 'ի համեմատու-  
թիւնն :

Կոյրհբդաբար և ըստյարմարուեն՝ հայելով՝ ի բառդ  
այս բան մեկնի ըստ ժառանգ ելց նրա զանձ .  
որպէս թէ եղեալ էր . ՚ի ժամանակի՝ յորժամ տացի  
սկզբելեացն այ քուն մահու՝ \* ահա ժառանգ ունի ան .  
այսինքն թէ լիցի նոցա ժառանգ ել զնոր . որովհեաւ  
որդիք են նոքա ան , և վարձեն զօրս տայ նոցա ,  
իւր են , և նոքա իրրե պտուղ որովայնի նորա , այս-  
ինքն պտուղ նր եկեղեցւոյ . Օ այսոսիկ եղեալ մար-  
գարենին խօսի և զորգւոց գերելոցն , և ամէ :

Ե. Ողբեա նեռս է յեռա հաջորի, այնուհետ չե և որդիքա  
լուսականը:

Ալդիքն իսրայէլից յետ գառնալոյ ՚ի գերութէ՝ առաւ-  
և կարօտ էին ՚ի հեռուստ պատերազմելոյ քան ՚ի  
մօտուստ . զի մօտաւոր թշնամիք նոցա թէպէտե կա-  
մէին պատերազմիլ ընդ նոսա , բայց յերկիւղի էին  
յերեսաց նոցա . իսկ հեռաւորք աներկիւղ կար! ին  
զիմել ՚ի վշրոյ նոցա . որո՞ւ և զիմեցին իսկ գոգ և  
մագոգ , այսինքն պարսիկք մարք . և զի առ ՚ի հեռուստ  
պատերազմիլ պիտոյ են նետք , որպէս առ ՚ի մօ-

սուստ պատերազմիլ սուսերը, վասն այսորիկ նետից  
նմանեցուցանէ զորդիս նոցա, յասելու:

**Ա**րդիս նեռս 'ի յեւս հջորի, այնուհեւ ևս և որդիսն թօնա-  
չեց: Օխրայէլացիս զգերեալսն և զգաքձեալսն 'ի  
դերութէ թօթափեալս կոչէ ըստ երկուց, մի՛ զի  
թօթափեցան նոքայամենայն ստացուածոց իւրեանց  
'ի վարին 'ի գերութէն, և երկրորդ՝ զի 'ի դարձին  
ևս թօթափեցան այսինքն 'ի վայր հարան 'ի շրջա-  
կայ աղբաց բայց խնամնվոյ այսացին անվնասք, և  
երթասաարդք նոցա որք էին որդիք նոցին՝ եղեն նո-  
ցա իրթե նետք 'ի ձեռս հզօրի: իրթ զի որպէս նետք  
արձակեալք 'ի ձեռանէ: հզօրի՝ աղբեն ուժգին և  
վանեն զթշնամիս, սոյնպէս և որդիք նոցա եղեն  
հզօր զէնք 'ի ձեռս նոցին, և վանիչք թշնամեաց:  
Հոգեորապէս, մարտիրոսք, և կուսանք, չգնասորք  
և խոստավնոզք և այլ ևս բազմութէնք քրիստոնէ: ից՝  
որք են որդիք առաքելոց և մարգարէ: ից, թօթափե-  
լոց յաշխարհ ամենայն, եղեն որպէս նետք 'ի ձեռս  
հզօրի՝ այսինքն քնի, և հարին զբելիար. և վանեցին  
զբանուի ախտից, և եղեն յաղթօզք 'ի պատերազմի:  
Օ այսոսիկ եղեալ մարգարէ: ին երանութէ իմն վեր-  
ջացուցանէ: զբան իւր և ասէ:

**Դ**արձանէ որ ելց շշանիութէ իւր 'ի նոցանէ: մի ամացա-  
շեն՝ յորժում խոսեցին նշանիք նոցա ընդ նոսա ս-  
որդանն:

Պարձանք մեծ էր ոյս խրայէլացւոց, զի ու միայն  
ինքեանք խնամեալ և պաշտպանեալ լինէ: ին յոյ, այլեւ  
զի որք յարեինն 'ի նոսա, կամ որք բարեկամանայինն  
ընոսա, նոքա ևս վասն խրայէլացւոց խնամեալ և  
պաշտպանեալ լինէ: ին յոյ: սմին իրի և զնոսա երանէ:  
մարգարէն ասելով:

**Ե**րանէ որ ելց շշանիութէ իւր 'ի նոցանէ: իսամի ասել-  
երանի է այնմ՝ որ 'ի ցանկալն ունիլինչ, կամ գոր-  
ծել և կամ պատերազմիլ ընթափս իւր՝ դիմեաց  
կամ դիմէ առ որդիսն խրայէլիք: զի 'ի նոցանէ: նու-  
զանկութէ իւր՝ այսինքն գտանէ: 'ի նոցանէ կամ 'ի  
ձեռն նոցա զայն՝ որում ցանկայ. կամ ըն եթը՝ նու-  
զինուք նոցա զկապարճ իւր՝ 'ի վանել զթշնամիսն,

Մ Ե Կ 'Ն Ո Ւ Թ Ի Ւ 'Ն  
որով և յաղթէ և մնայ առանց ամօթոյ , և զայս յայտ  
առնէ մարդարեն յաջօրդ բանիւն ասելով :  
Ո՞ւ ամաչուցէն՝ յորժամ իւսէոյն թշնամիք նոյա ընդ նոսա  
առ դրանն : Ա. յանիքն որք միանգամ գտանեն զօդնու-  
թի յիսրայէլացւոց , և ունին զնոսա իւրեանց պաշտ-  
ուան , մի ումաշեսցէն՝ 'ի խօսիլն ընդ թշնամիք իւ-  
րեանց՝ կամ 'ի հակառակիլ թշնամեաց նոյա ընդ  
նոսա . և զայս գնէ առ դրան . որով նշանակի դաւիթ-  
դրան քաղաքի . զի ըստ որում տոսացաք այլուր՝ ('ի  
սաղ . կը . 13.) անդ լինեին վիճը և դատասահնք :  
Եւ եթէ յայտալիսի իրս ոչ կրեսցէն զամօթ , ևս ա-  
ռաւել յայլս :

Խոկ պատմառ ոչ ամաչելց նոյա այն էր , զի ուսեալք  
և վարժեալք , ևս և պաշտպանեալք լինեին նոքա  
յիսրայէլացւոց անտի , որով և կարօղ լինեին խօսիլ  
ընդ թշնամիքն արդարութք , կամ զօրութք : Խոկ  
ըովանդակուի բանին յոյս հայի , թէ որք օգնին յիս-  
րայէլացւոց , մնան անշնաս՝ պաշտպանութքն ոյց :

Ա. յլազգ ևս մեկնի ոյս բան . ըստ որոյ երանի տայ  
ժողովրդեանն իսրայէլի որք գարձեալ էին 'ի գերու-  
թէ . զի լցաւ ցանկութի նոյա 'ի շինելն անդ զալո-  
րիսոյն երուսաղէմի . վասն զի կարէին այնու հետեւ  
գտանել զհանդիսաւ : Եւ եթէ գային ոմաննք 'ի կող-  
մանէ թշնամեաց իրքե դեսպանք , արդելուին զնոսա  
առ դրանն , և 'ի խօսիլ նոյա ընդ սոսա՝ ուրքա համար-  
ձակութք առնելին պատասխանի , և առանց ամաչե-

լս : Հայս միտս աեսանի և վարդան :  
Խարօյապէս , 'ի ցանկալ մարդոյ գտանել զերանութ  
'ի վերաց երկրի , եթէ դիմեսցէ առ հաւատացեալս  
'ի քո , և աեզեկասցի 'ի նոյանէ՝ թէ յարում է երա-  
նութի մարդոյ , մի խարեսցի , այլ լցուոցէ զոյն ցան-  
կութի իւր , ևս և ամաչեսցէ յօրժամ թշնամիք նը ,  
այսինքն անհուատոք կամ բազմադիմի չար օրինակը  
խօսեսցին ընդ նա առ դրան , այսինքն յօտար վարդա-  
պետութէ , կամ առ դրունս զբայցարանաց նորա՝ առ-  
նել զայս կամ զայն : Եւ եթէ ստիպեսցէն զնա՝ նա  
որ (ըստ երբէ) ելից զկապարձ իւր ածային բանիւք ,  
նովիմք իրը նետիւք հարցէ զնոսա :

Ա. երածարար , 'ի կատարածի աշխարհիս , որ է վեր .

Ա Ա Դ Ա Շ Ա Հ Ա Շ  
ըին դուռն կենցաղյու, յորժամ չարախոս կայցեն  
դեք, մի ամաչեսցեն նորա՝ որք լցին զցանկութիս  
կամ զկապարձն իւրեանց ոչ ՚ի հեշտութէ մարմնոց,  
և ոչ ՚ի փափկութէց աշխարհի, և ոչ ՚ի թելաղրու-  
թէ սասանայի, այլ ՚ի վարդապետութէ առաքելոց  
և մարդարեից, և ՚ի լիութ դործոց բարեաց + որովք  
և արժանասցին ընդառնիլ զփառս յաւիտենականս :



## Ա Ա Դ Ա Շ Ա Հ Ա Շ


Խրանութէ երկիւղածի մն յօրհիւ նորայնոց, և ՚ի  
լիանալ բարեագ, ՚ի հանգչիւ յարդիւնս զդաստութէն  
բարի կնոջ, և ՚ի բարդաւաճիւ զաւակագ :

(Ընդունվեան Ասպէճուաց :

1. **Ե**պրանի - մինեցան՝ ոյս երինչին ՚ի քնչ, և գնան ՚ի  
մանապարհ նորա : 2. **Օ**վաստիս յեւաց ուց ին-  
քիւնու . երանի և անը, և բար եւեցի : 3. **Ա**լին ու որդես  
այդի վարելու յանիւնու քնչ ու . որդիւ ու որդես նորապանի  
զիւնենոյ՝ շարք շանցանլու : 4. **Վ**արդես օբհնեսցի - մինոյն  
մարդ, որ երինչի ՚ի քնչ . օբհնեսցի շանը ուեց ՚ի սիւնչ :  
5. **Լ**յա ունցիս շարք յերապացէմ՝ շանենոյ սաւութէն ին-  
հաց ուց : 6. **Տ**եսյես դու շարք որդուց ուց . նաշանաթէ  
՚ի վերայ նորայեւեւ :

## ԱՆ ԵՐԵՎԱՆ ԳԻՒՅ.

ՕՐԻՆԱԿԱՆ ԱՆԴԻ ԱՆԴԻ ԱՆԴԻ :



Տ ՏԵՐԵՎ ԶԵՄՈՒԳԴԻՐՍ ՄԵՐ, ԵՒ  
 'ի սաղ<sup>ւ</sup>. վարդ<sup>ւ</sup>. 'ի ձեռագիրն դնի երգ  
 աստիճանաց . և յերիմն յոգնակի , երգք  
 աստիճանաց կամ աշտիճանաց . որոց 'ի միումն յաւե-  
 լեալ լինի՝ սաղմոս 'ի դաւիթ : Խակ յերկուս ձեռա-  
 զիրս և 'ի սաղ<sup>ւ</sup>. լամբ<sup>ւ</sup>. ըստ դնելոյ մեր գրի . \*օրէ  
 „ նութի՝ աստիճանաց || . որպէս և 'ի տալ<sup>ւ</sup>. \*օրչնու-  
 „ թէք աստիճանաց || . ( զորմէ տես 'ի ներած . զւ-  
 ժան : )

Այս սաղմոս նման է ՃԺՄ . սաղ<sup>ւ</sup>. և երեխ նովին  
 առթիւ ասացեալ, և 'ի նոյն հեղինակէ . ուստի զոր  
 միանգամ ասացաք վո՞ այնը , 'ի սոյն ևս հային նորին .  
 ( տէս անդ ) : Խայց այս ինչ կայ խտիր , զի ըստ հաս-  
 տատելոյ բազմաց՝ այս սաղմոս ասի հայելով 'ի ժա-  
 մանակ դարձի գերութեն՝ առ 'ի զգաստութի՝ նո-  
 ցին . յոր միտս ոմանք ընծայեն զսա յետին մարգա-  
 րեից , և ոմանք զօրաբարելի . որպէս է տեսանել 'ի  
 վերնագիրս ասորւոց . և բազումք սողոմոնի , ըստ  
 որում յերբ "յաւելեալ լինի բառս լուցմօ այսինքն 'ի  
 սողոմոն : Այս լու մարթ է ևս ասել՝ թէ զոր դաւթի  
 եր յօրինեալ զնոյն երկրարդ ելով ասացին որք դար-  
 ձանն 'ի զերութէ :

Բ Ա Ե :

Ա . Լ այտնի ամենեցուն՝ ոյս երինչին 'ի պահ , և գնան 'ի  
 մանապարհու նորս :

ՄԵԿՆԱՏ ԹԵՌԵՆ Ե :

Ա յուշութէ բանից սկիզբն առնէ մարգարէն սաղմո-

սիս, կոմելով յորդորել զդարձեալսն 'ի գերութէ, ընդ որս և զդարձեալսն 'ի մեզաց՝ կեալ երկիխղիւ տն. զի մի կըկին ևս գերեսցին, այլ մնալով 'ի քաղաքի այլ վայելեցեն 'ի բարութե նորա. և այսմ իբր հիմն գնելով զերկիւղն այ ասէ:

Եցանէ անենցոն՝ ոյս երկնչն 'ի ուստանէ: Կամի ասել. ամենեքին որք միանգամ երկնչն յայ՝ եթէ իսրայէ. լացիք իցեն և եթէ արք և եթէ կանայք, եթէ տեարք և եթէ ծառայք, եթէ իմաստունք և եթէ տղէտք, երանելի են. զի երկնչելով յայ՝ պահպանին և փայփային յայ, և պաշտպանին ձեռամքը հրեշտակաց յամենայնի. սմին իրի ասէ մեծն խոռոշով ('ի մեկն. ժամագ. երես. 76.) \* երանի՞ որ „ երկնչին 'ի տնէ. և գնան 'ի ճանապարհս նու, „ ըա... զի հրեշտակաց իւրոց պատուիրեալէ. տ' ը „ պահէլ զերկիւղածս իւր յամենայն ճանապարհս „ նը, որք 'ի բազուկս իւրեանց բարձցեն. և չտայ „ ցեն զքարի հարկանել ոտիցն. այլ աստի և ան „ տի բանակք հրեշտակաց շուրջ լեալ պահէն. „ մինչեւ յանքոյթ նաւահանգիստ հատ հատուցեն || . Օ այսմանէ տես և 'ի սաղ. ձման. 1: Եւ քանզի երկիխղն այն այ զոր եղ՝ տայ մարդոյ կեալ ըստ պատուիրանի նորա, և ինքնին չէ բաւական երանելու առնել, սմին իրի յաւելու ասել:

Եւ գնան 'ի ճանապարհս նորա: Գնալ 'ի ճանապարհս այլ՝ և պահէլ զպատուիրանս նորա. զի պատուիրանք տն են այնպիսի՝ որք առաջնորդեն առ տօն և առ յաւիտենական կեանս. ուստի և որք գնան յայնս, այսինքն որք պահէն զպատուիրանս այ, ժամանեն յարքայութի և 'ի ժառանգութի այլ, յորում է երանութի յաւիտենական: Առ որ համոզել կամելով մարդարիին՝ զժամանակաւորն ևս առաջի մատուցանէ, և ասէ:

Է. **Օ** կապահու յեւաց տոց ինքնեւ. երանէ և ուն, բարէ եղեցէ:

Վ այելումն ժամանակաւոր բարեաց համարեալ լինի իբր արտաքին ինչ կեղեանք երանութե. և զի այս ոչ է ամենեցուն, այլ ոմանց, վասն որոյ մարդարին

Մ Ե Կ Կ Ո Ւ Թ Ի Ե Կ Կ  
ոչ առ ամենեսին տարածէ զբանն, այլ՝ ի մասնաւորի  
խօսի առերով:

**Օ** վաստիս յեւաց ոչ է բիշես. էրանի է տեղ, և բարի  
եղեցի, Ա տասակօք ձեռաց իմացեալ լինի այն՝ զոր  
մարդ աշխատանօք իւրովք ստանայ. արդ երկիւ  
զածն ոյ ուտելով լոյն զոր ստանայ աշխատանօք իւ-  
րովք, հանգ օտեամք վայել. 'ի նմին. և զի այն է  
նմա բարի, վասն այսորիկ առէ և բարի եղիցի քեզ.  
այսինքն այսպիսի օրինակառ ուտելովդ՝ բարի եղիցի  
քեզ, որով և երանելի լինիցիս:

**Վ** յսու բանիւ յերկուց ներհական մալութեց՝ ի բաց  
հեռացույան, մարդ արեն զերկիւղածն, մին է այսո-  
ցիկ՝ որք ուտեն զիմատակս այլոց, և կամ մսիսեն.  
և միւսն է այնոցիկ՝ որք և ոչ զիւրեանցն ուտեն,  
այլ ագահութք դիզել ջանան, զի և ևս աւնիցին, և  
կամ զի մածասցին. իսկ երկիւղածն զիւրն ևեթ ու-  
տեն, և 'ի նմին ուրսին կայ, և զոհութք վյել.  
վասն որոյ և բարի լինի նմա, և բարի լինիցի: Եւ  
եթէ չունիցի կարողութք աշխատելոյ, և կամ եթէ  
պատահեցի զրիել 'ի պատց աշխատանաց իւրոց՝ յոն-  
եղեալ վոյս իւր՝ միսիթարութք հողւյ կերակրի և  
ոնսինի:

**Վ. Ա. Լ** սակայն բան մարդարէին ըստ կարդի սաղմո-  
սիս հայի յայնպիսին, որ կարելով վաստակիկ վաստա-  
կոց ձեռաց իւրոց կերակրի:

**Վ** արթ է աստ վաստակօք ձեռաց իմանալ և զողոր-  
մութես. յոր միաս կամի ասել. 'ի սերմանելքոյ յալ-  
քատս զահեալսն ձեռաօք բովք, կամ՝ ի տալ ձեռամբ  
քով ազքատաց զողորմութք՝ երանելի լինիցիս, 'զի  
'ի ժամանակի իւրում հնձեսցես և վյելսցես, և  
յայնժամ տեսցես՝ թէ բարի եղել քեզ սերմանելք  
առատութք, քան զնշյելց խատութք:

**Բ** արոյագէս՝ վաստակօք իմացեալ լինի ուտումն ջա-  
նիք ստացեալ, ևս և առարինութք. զի սեքա են  
կերակուր հոգւոյ, և երջանիկ տանեն զունօղն, մա-  
նաւանգ եթէ ըստ ժամնեն և ըստ տեղոյն ուտիցէ  
կամ վարեսցէ:

**Վ. յսուիսի** բարեկալաշտ այլ եթէ ունիցի և էին բարի  
և զորդիս բարիս, երջանիկ է քան զամնայն մեծա-

7. **¶** ի՞նչ ո՞րպես այդի վեցը լուծ յանդիմա առն ո՞ւ ո՞ւ-  
դիս ո՞ւ ո՞րպես նորագուշներ յիլլենո՞յ, շուրջ շուրջ-  
նով ո՞ւ :

Ավելի բարի գովութե՞ն է անձին և ուստքանք առն իւ-  
րօյ. զորմէ բազում ինչ զըկ իմաստունն ՚ի զիրս ա-  
ռակաց, մանաւանդ ՚ի վերջին ղլւյին: Օ այսպիսի  
կին ունելով երկիւղածի ան՝ զծանրութե՞ն վատաց կեն-  
ցաղսս ու կրէ միայնակ, այլ ընդ նմա տանի իրրե-  
լժակից. որով և թեթև թուի նմա այն որ այլոց  
ծանրանայ. թաղ զայն՝ զի և օրինակ զշատութե  
առեալ ՚ի նմանէ՝ ինքն ևս ՚ի զշատութե վարէ-  
ղեանս իւր: Ելնելն ՚ի տան՝ միիթարի և սփոփի,  
և ՚ի կալն արտաքոյ տան՝ աներկեան մնայ, զի զի-  
տէ, թէ ու է ՚ի տան իւրում: Հայսպիսի հանգամանս  
Հայելոյ մարդարէին գովութե՞ն իմն խօսի և առէ:

Հոյելըզ մարդարէիս գովուսէ բառ բառ։  
Ան ու ողիս այդի կայշըտ յանհիւնու քան ոչ։ Այդ ոյ  
նմանեցուցանէ զկին երկիւղածին, նախ վասն սփռ-  
փանս մատուցանելոյ առն իւրում իբրև այդի վյշե-  
լուք. և երկրորդ՝ վասն բարի ծնունդս ընծայելոյ. զի  
որպէս այդի սպարաբար զուարձացուցանէ, և տայ պը-  
տուղ բարի, սոյնպէս և կին բարի զուարձացուցանէ-  
զայր իւր, և ծնանի զորդիս բարիս։

զայլը իւր, և օսասոր զորիլու բարեւ  
Դիմակել արթան է, աստ. • զի՞նախ՝ եղակի դնելով էն  
ու, 'ի բաց վլարի՝ զռազմակնութին, միանդամայն և  
յայտ առնել զժուժկալութին երկիւղածին, և զպատ-  
ռականութիւն կնոջն. զի բաւականացուցանել զայր  
իւր՝ ոչ զնել զակն՝ 'ի վերայ այլոց, և կամ արձակել  
զոր ունի, և առնուլ զոյլ. զի այս ոչ միայն անվայե-  
լուք է, այլև ընդդիմ կարգի բնուեն. որպէս ցուցա-  
նեն բարոյականիք. ընդ որս և ծործորեցին ('ի մեկն-  
մատ. • գլ. • ե.) բանիւ առաքելոյն. (հասկմ. ե. 7.  
ա) կոր. • ե. 39.) { Յոր միտս 'ի ոք զիլս եղակի յիշի  
կին առն. • յասելու անդ. • \* զհետ կնոջ իւրոյ ||. յորոյ  
վերայ ասէ եղնակ կողբացի. ('ի գլ. • ե.) \* զհետ  
,, կնոջ իւրոյ ասէ և ոչ զհետ կանանց. զի և զա-  
,, ռաջին սահման բնութին հաստատեցի. ||. | ակյա-

Մ է Կ ՞ Ն Ո Ւ Թ Լ Ի ՞ Շ ։  
 ւ ելով զգերանունդ ու ցուցանել զհաւատարմութի  
 կնոջն . զի նմա միայն կամի հաճոյ լինել իրեւ նորա  
 կին , և ոչ այլոց . որպիսի են բազումք , որք պահու-  
 թի անձանց կամին և այլոց ցանկալի լինել : Վ ՞ ց ա-  
 սելով դարձեալ ցուցանել զիշխել առն ՚ի վերայ կնոջ .  
 և յայս իսկ ՚ի կողից եղեւ եւոյ , զի իցէ ընդ բազ-  
 կաւ իշխանութեան . որ և դարձաւ նմա մասամբ  
 իմն ՚ի պատիժ՝ յասել ոյ առ նա . \* նա տիրեօցէ  
 քեզ . ( ծնն . դ . 16 : )

Երբեռորդ՝ ոյդի ասելով , կամ ըստ այլոց որթ՝ ցու-  
 ցանել թէ ամուսնութ այսպիսեաց ու է վասն հեշտ-  
 ախտութի , այլ վասն պտղատուուն , և այն ամուս-  
 նութի նոցա է ընկերութի իմն միսիթարական . զի  
 յայս իսկ արար զնա ոծ՝ յասեն՝ ՚ի սաեզծանել ըզ-  
 կինն . \* արասցուք դմա օգնական ըստ դմա . ( ծնն .  
 դ . 18 : )

Երբեռորդ՝ վայելու ասելով յայտ առնել զբարելաւու-  
 թի կնոջն , որ իւրով ընտիր կենցազավարութի բու-  
 րէ զանուշահոտութի առ սյը իւր և առ այլս . և ՚ի  
 մեռանին ևս բուրի բարի անուն նորա : Պ ամողար  
 որ անուշահոտ իւղով վառի՝ ՚ի շիջանիւրոցոյ ևս բու-  
 րէ զանոյշ հոտ . և որ վառի բարի վարուք՝ ՚ի շիջա-  
 նիւր կենաց նորա՝ անուն նորա բարի բուրէ . սոյնպէս  
 եթէ և կին սրբութի և բարելաւութի կեցեալ ից՝  
 ընդ առն իւրում :

Չորրորդ՝ յանկիւնու տան քո ասելով յայտ առնել թէ  
 ՚ի նմանեցուցանել այգւոյ զկինն՝ ու է պարտ համա-  
 րիւր թէ սիրտ նորա իցէ արտաքոյ տան , այլ ՚ի տան  
 իւրում . որով կամի ցուցանել զպարկեշտութի կնոջն  
 ՚ի կալ նորա ՚ի տան զգաստութի , և ու յաձախել  
 արտաքոյ . քանզի կինն որտափ վայելու զարդ է տան ,  
 ոյնչափ անվայելու երեի ՚ի կալն արտաքոյ . որոյ վոյ  
 իսկ բնութի իմն յորդորին ծածկութիւ անձին ելա-  
 նել արտաքս . յայս սակա նախնի իմաստաւշըք ՚ի կա-  
 միլն ցուցանել զպարկեշտութի կնոջ՝ նկարեին ըլ-  
 կրէայ ընդ ստիւք նորին , առ ՚ի յայտ առնել թէ  
 որպէս կրեայ կայ ՚ի տան իւրում , և ու արտաքոյ ,  
 և ՚ի շրջին՝ ծածկութիւ գնայ , սոյնպէս վայել . և  
 կնոջ :

Վ. Ա աստ զիտելլի է՝ զի այս բան մարդարեին որ  
հայի յերջանիկ կեանս երկիւղածին, ոչ գնի իբրե-  
բացարձակ, այլ իբրեւ համեմատական. զի սովո՞ն ոչ  
կամի ցուցանել թէ երանութիւն է երկիւղածին ու-  
նել զկին այսպիսի, այլ թէ երկիւղածն ունելով  
զայսպիսի կին՝ երջանիկ է քան զայն՝ որ ոչ ունի  
զայսպիսի. Եթէ այսպէս և եթէ այնպէս, պարտա-  
կան է այրն զգուշութե՛ վարիլ ընդ կոոջ. որպէ՛ս  
յորդորէ պետքոս առաքեալ. յորոյ վերայ առէ սար-  
զիս չնորհալի. ('ի առ. պետ. դ. 7. ձառ. է.) \* զր-  
,, օրինակ անօթ ինչ տկար խեցեղէն կամ տպակե-  
,, դէն առեալ յաւանդ՝ զգուշութե՛ և արթնութէ  
,, պէտք են, զի մի ընդ խոտի իմիք հարեալ բեկանի-  
,, ցի. նմանապէս առէ (պետքոս) և դուք ավ պր  
,, զկին մարդ յանձն առեալ, առաւել ևս զգուշուե՛  
,, պարտական էք առ պահպանութիւն քան զակար ա-  
,, նօթոյն. վասն զի քան զամենայն տկարս տկարա-  
,, գոյն է և անզօր || :

Խակ որ կամակար մտօք հրաժարեալ է. 'ի կոոջ՛ ե-  
թէ՛ 'ի բարւոյ և եթէ ՚ի չարէ, և նդնի կուսութք,  
երջանկագոյն ևս է քան զայն՝ որ ունի զկին բարի.  
զի այսպիսիս խօսեցեալ է այ, և նուիրեալ է նմա-  
իբրեւ զանօթ ոք, և ունի իւր հարսն զիմաստութին  
երկնային, յորոյ քաղցրութէն վայելելով հոգին ա-  
սէ. \* զնա սիրեցի և քննեցի 'ի մանկութէ իմմէ,  
,, և ինզրեցի ածել ինձ հարսնութե՛. և եղէ ցան-  
,, կացող գեղզ նորա ... և առից զնա առիս || . Առ:  
(իմաստ. ը. 2-19:) Ոստ ամին բերկը և ոք եկե-  
զեցի իբրեւ այդի որթոյն քնի, և իբրեւ հարսն ոք:  
Վրդ քանզի մարդարէն զկին երկիւղածի նմանեցոյց  
վայելու այդուոյ կամ արդասաւոր որթոյ 'ի ծնանիլ  
զորդիս, զարարութ որդուոյ նորա ևս խօսելով առէ:  
Ուրեւն ու ուղէս նորատունէ յինենոյ շուրջ զսէ շանալ ու:  
Երկիւղածք ոնն որպէս տեսանեմք փափաքին ունիլ  
զորդիս ոչ եթէ բազումս՝ այլ բարիս, զորս մարդա-  
րէն կուլ նորատունէ ձիթենւոյ, այսինքն նորաբոյս  
շառաւիդ ձիթենւոյ. և այս նմանութիւն զնի վասն  
երից. մի զի շառաւիդ ձիթենւոյ է ուղիղ. երկրորդ  
զի է մշտագալար. և երբորդ՝ զի հանդեմեալ է

թերեւ պատուղ պարարտ . և զորօրինակ նա ինքն էր կիւղածն է \* ձիթենի 'ի տանն այ անկեալ . (սաղ. ծառ . 10 .) սոյնովէս և որդիք նորա են իբրև նորա տունկ ձիթենւոյ , զորս 'ի տեսանեւ նորա ընդ իւր 'ի միասին 'ի սեղան նստեալ սփոփի և բերկիքի , և զամենայն վիշտա՝ զորս կրեալն է 'ի վերայ նոցա , և զորս կրէ վասն նոցա , ամենեին ովինչ համարի :

Այսովէս ասելի և վասն նոցա՝ որք ունին զհոգեոր որդիս՝ զորս ծնանին վարդապետութէր , և 'ի տեսու նելն զնոսա բարիս 'ի սեղան իմաստութեան և 'ի սեղան ածագուշտութէր միտիթարին , և լցեալ լինին ցնծութէր . որպիսի եր երանելին պողոս , որ զայնքան հոգեոր որդիս ծնանելով ուրախանացը 'ի վերայ նոցա , զորս և կոչէր \* ուրախութիւն իմ և պատկի . (փիլիպ . 7 . 1 .) Այսովէս ուրախանացին և նոքա որք ծնանին զառաքինութիւնն և զարդիւնն զ ործոց բարեաց : Այս զի ոյս ամենայն յաջողի երկիւղածաց յօրհ նութէն այ , վասն այսորիկ յարէ զինի մարդարեն և ասէ :

**Դ.** Յաղես օրհնեսցի ամենայն նորդ , որ երինչէ 'ի թնէ . օրհնեսցի չեղ ուր 'ի սէտնէ :

(Յօհնին յայ՝ է ընդունիլ 'ի նմանէ զլիութի ինչ բարւոյ տևողութէր . և այս՝ կամ ներգործութէր և կամ զօրութէր . ներգործութէր , յորժամ ներկայա բար իրօք ընդունի ոք զլիութի բարւոյ . զօրութէր , յորժամ կացուցանի ընդունակ լիանալոյ բարեօք . որպէս յօհնին յակորայ 'ի սահակայ՝ նախ զօրութէր կացուցա ընդունակ լիանալոյ բարեօք , և ապա լիա ցաւ իրօք . ըստ երկուց ըստ այսոյիկ ևս իմացեալ լինի աստ օրհնին յայ՝ յասելն :

**Ե.** Յաղես օրհնեսցի ամենայն նորդ որ երինչէ 'ի թնէ : Ուր այսպէսն ցուցանէ զայն ամենայն զոր եղ մարդարեն 'ի սաղմասիս . որ և ըստ ձեոյ մակագանցութի նարա տասանից 'ի մէջ բերէ նախ զպատրաստականութի օրհնութի . յօր միտ յերը՝ այս բան սկսանի բառիւս նէ , այսինքն աչա : 'Ի մէջ բերէ երկրորդ՝ զհաս տատութի ասացելոյն . որպէս թէ եղեալ եր . զոր միանդամ ասացի , այն ամենայն նշմարտիւ չորհնես .

ցի ամենեցուն նոցա որբ երկնչին 'ի անէ : Դարձու-  
ցեալ ապա զբան իւր առ երկիւղածն, զորմէ խօսէր՝  
ասէ :

( Եհեացէ շնչ տէր 'ի սինէ : Այսինքն որովհետե-  
երկնչիս դու ի անէ, օրհնութի նորա եկեսցէ 'ի  
վերայ քո . և զի ան ներկայացեալ լինէր 'ի սին՝ ը-  
որում անդ եր տեղի նորա, սմին իրի յուելու ասէլ  
'ի սինէ . որով կամի ցուցանել զստուգութի օրհնու-  
թեն . որպէս թէ եղեալ եր . ճշմարտիւ օրհնեսցէ  
զքել անը, որոյ ներկայութիւնն յանդիման լինի 'ի  
սին . և քանդի այսպիսումս արժան է վայելել 'ի բա-  
րութեն երուսաղմի, յայն հայելով յարէ զկնի և  
ասէ :

Ե. **Եհեացէ շնչ առանելի յերացանէմ զամենայն առար-  
ինաց աց :**

Տեսանել զբարութի՝ ըստ երբայական սայ նշանա-  
կի: վայելել 'ի բարին կամ ժառանգել . ուստի և ծոր-  
ծորեցին ասէ . ('ի մեկն . մոտ . զւ . լը . ) \* զիտեն  
,, զիլը զտեսանելու փրամանակ ստանալոյ գնել . ըստ  
,, սյնմ . տեսացես դու զբարութի յերուսաղմ, այս  
,, ինքն ընդունիլ և ժառանգել . և զի մեծ եր բա-  
րութին երուսաղմի քան այլոց քաղաքաց՝ եթէ ը-  
հոգ և որին և եթէ ըստ մարմնաւորին, սմին իրի իր.

ըւ մեծ իմն օրհնութի համարելով զայն, ասէ :

**Եհեացէ շնչ շնչ առանելի յերացանէմ զամենայն առար-  
ինաց աց :** Այսինքն յօրհնիլք քո 'ի անէ, վայելեսցես  
յամենայն բարիս՝ որք են յերուսաղմ քաղաքի, ոչ  
եթէ այսլափ ինչ ժամանակ, ոյլ զամենայն աւուրս  
կենաց քոց :

Այս օրհնութի մասածի և ըստ վերնոյն, որով օրհ-  
նի երկիւղածն 'ի վերին սիննէ՝ այսինքն յերկնային  
շնորհաց . և 'ի ժամանելն անդ յերկինս՝ վայելել. յա-  
մենացանկութիւնս զամենայն աւուրս անմա-  
հութե իւրոց, այն է յաւիտեանս յաւիտենից : Օ այս  
վայելումնս կոչէ տեսանել . զի եթէ ըստ եականին  
մասածեսցի, լինի տեսութի անսահման բարութեն  
ոյ . և եթէ ըստ պատահականին, լինի զեղմուրի  
այնը տեսութե . յոր յաւելեալ լինի և տեսութիւն

լր Ե Կ Շ Ա Ո Ւ Թ Ւ Ե Ն  
բազմութե երանելեաց , և տեսութիւ որդւոց բազմա-  
լոց յարքայութե եթէ հօգեօրաց և եթէ մարմա-  
ռարաց . զորոց խօսի մարդարէն 'ի յաջորդ համարն՝  
'ի մէջ բերելով զտեսութին որ յերկրի՝ յասելն :

**Հ.** **S**եւշես ոռո շրբես որդուոց առց . իսպանակեն 'ի վե-  
րայ իսրայէլ :

Մեծ իմն է մարդոյ որպէս յայտ է 'ի նախագրելոցդ  
տեսանել զորդիս իւր բարիս , և մեծ ևս՝ տեսանել  
զորդիս որդւոց իւրոց ծաղկեալս բարելաւութիւ .  
ուստի և մարդարէն իրրե մեծ իմն առաջի դնել զայս  
ասելով :

**S**եւշես ոռո շրբես որդուոց առց : Ա. յսինքն յօրհնիլ քո  
յնոյ ոչ միայն վայելեսցես 'ի բարութեն երուսաղէ-  
մի , այլև տեսցես զքեզ բազմացեալ բարի զաւակօք  
և արդասաւորեալ որդւոց յորդիս . որով և զուար-  
հասցիս 'ի քեզ , և ցնծացես առ ամծ : Օ այս ե-  
գեալ մարդարէն՝ վերջացուցանել զբան իւր և ասէ :  
իսպանակեն 'ի վերայ իսրայէլ : Օ սոյն զայս եդ մար-  
դարէն և 'ի վախճան . ձինք սաղմօսին . բայց այն եր  
իրրե օրհնութիւ երուսաղէմի , իսկ այս իրրե օրհ-  
նութիւ երկիւղածի տն հօյելով յիսրայէլ , կամ վասն  
լինելոյ նորա 'ի մէջ իսրայէլի . որպէս թէ եղեալ  
եր . ոչ միայն տեսցես զորդիս քոյ և զորդիս որդւոց  
քոց յերուսաղէմ , այլև զնոյն իսկ զերուսաղէմ և  
զազդն իսրայէլի գտցես 'ի խաղաղութեան , որով ե-  
գու մնացես խաղաղացեալ 'ի կեանս քո , մինչև ժա-  
մանեսցես յերկնայինն երուսաղէմ , և անդ վայե-  
լեսցես զիազաղութին յաւիտենական :

## ԱՐԴՅՈՒՆ ՇԴԲ:

Քաջալերութիւն անձին հանդերձ չնորհակալութիւն  
առ ած 'ի բերանոյ խրայելի՝ վասն պահպանեալ լի.  
նելոյ նորա 'ի թշնամեաց իւրոց, որք մարտեան ընդ-  
հմա 'ի մանկութիւն բազում անգամ, և ոչինչ կարա-  
ցին առնել. և 'ի վախճանի կորացան և անպիտա-  
նացան :

(Օ) ՀԱՅՈՒԹԻ ԱԿԱՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ :

1 **Բ**այսում անգամ մարտեան ընդ էս 'ի մանկութիւն էմի,  
առաջիկ իւրայել. 3 Բայց անգամ մարտեան ընդ  
էս 'ի մանկութիւն էմ, և ինչ ոչ յաշնեցին. 3 Օքիկան  
էմ հարին մեղադրա. ընդ երիտ արտին զանօրինութեան էմ-  
քանաց. 4 Տեր արտոք է, և իւրային զան մեղադրաց.  
5 Այսուցին և յետ դարձին ավելացան 'ոյս առեն զիտին.  
6 Եշիցին նուս որդին ևսու ունեաց, որ մինչև 'ի բառան  
եւեալ չըրացան. 7 Ասուս ոչ ելու զբանան իւր հնյօդն, և  
ոչ զիտին էս 'որ չըրայն ծառվեր. 8 Այս անցին ավել-  
չան 'ոյս անցանեին ուս նոսօտ, ուն օրհնութիւն ուն ընդ յեւ-  
լ. և օրհնեցաս չյեղ յանուանէ դն :

## Ա Ե Բ Ե Ա Գ Ի Բ:

(Օ) ՀԱՅՈՒԹԻ ԱԿԱՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ :

**Ի** ՀԵԼ Գ ԶԵՄ Գ Ի Բ ՄԵԲ.  
Դնի 'երգ ասաինանաց, և 'ի միում յոզ-  
նակի 'երգք աշտինանաց. Խակ յայլս և  
'ի սաղ լամբ 'և վարդ' ըստ ձեռազրին դնի ըլ վե-  
րոյզը բելցու. օրհնութիւն ասաինանաց. որպէս և 'ի

110 ՄԵԿՆՈՒՅԻ ԹԵՇԵՆ  
միում՝ օրչնութեք աստիճանաց. զպմէ տես 'ի ներած. ( գլ. ժամ )

Այս սաղմաս ըստ ոմանց կարծի ասացեալ 'ի դաւաճայ 'ի սփոփանս անձին և 'ի շնորհակալութե առանձ վասն պահպանեալ լինելոյ նորա 'ի մանկութե հետէ 'ի թշնամեաց իւրոց՝ ըստ պաշտպանեալ լինելոյ իսրայելացւոց. իսկ հասարակաց կարծիք է թշնայս սաղմաս ասի 'ի բերանոյ որդւոցն իսրայելի դարձելոց 'ի գերութե, 'ի գոհաննալ նոցա զոյց՝ վասն պահելոյ և պաշտպանելոյ նորա զինքեանս 'ի հակառակութե թշնամեաց, օրինակելով յանձննս զնորն իսրայել:

### Բ. Ա. 'Ե.

Ա. **Պ**աշում անդամ մարդուն չնդիս 'ի մանկութե իմէ, ասայէ իսրայել:

Բ. **Պ**աշում անդամ մարդուն չնդիս 'ի մանկութե իմէ, և ինչ ոչ յաղթեցին:

### ՄԵԿՆՈՒՅԻ ԹԵՇԵՆ

**Պ**աշալերութե բանից սկսանի մարդարեն զոյս սաղմաս, առ 'ի զօրացուցանել զորդիսն իսրայելի 'ի համբերութե մը և իցե վատաց, զօրս եարդին հասուցանել նոցա թշնամիք իւրեանց. զի ունելով նոցա զանձ օգնական անձանց՝ պաշտպանեալ լինեին 'ի նմանէ, որպէս և եղեն 'ի սկզբանե հետէ, վասն որոյ իսրախուսէ զնոսա տսելով:

**Պ**աշում անդամ մարդուն չնդիս 'ի մանկութենէ իմէ, ասայէ իսրայել: Այսի ասել. 'ի տեսանել իսրայելացւոց թե յարուցեալ են թշնամիք 'ի վերայ իւրեանց, ( որպէս եղե 'ի շինել նոցա զաանարն առ զօրաբարելիւ, և 'ի կանգնել զպարիսպն երուսաղեմի ), ասասցեն 'ի մէջ իւրեանց. զինչ կարիցեն առնել սոքա ըմեզ. ապաքեն և այլ բաղում թշնամիք բազում ան-

դամ մարտեան ընդ մեզ ի մանկութե մերմէ , և ոչ  
կարսցին առնել ինչ :

Վանեկութիւն կուչէ զվիճակ սյնը ժամանակի՝ յորում  
է ին խլայլ լացիք յեզի խպտոսս . ( օրպի, սյոյտ է ուլս .  
թ . 15 . և երես . թ . 2 . ) յորս տղայութիւն և ման-  
կութիւն կոչի ոյն վիճակ նոցա . զի նորոգ սկսեալ  
է ին աճիլ և լինիլ որոշեալ ազգ . և զի յայնմ հետեւ  
ոչ դադարէ ին թշնամիք նոցա նեղել զնոսա , վասն  
որոյ ասէ ՚ի մանկութիւննեմ : Տայց քանզի ոչ կա-  
րացին յաղթել նոցա , սմին իրի յարեց զինի , և  
առէ :

Բաղստ անգամ հորդեան ըստիս , և ինչ ոչ յաղթեցին :  
Եւյս կրկնումն ցուցանէ նախ զշշմարտութիւնի իրին .  
և երկրորդ՝ զլածախութիւն և զասատկութիւն մարտի  
թշնամեացն լը նոսաւ : Իսկ յածախութիւն մարտի ցու-  
ցանէ զանյազթութիւն մարտուցելոյն . զի թէ յաղ-  
թեալերը չեր հորկ բազում անգամ մարտնչիւ . վո-  
օրոյ և առեւ իսկ , ոչ կարացին յաղթել ինձ :

Որով քաջալերել կամի զազգ՞ն՝ չերկնուել ՚ի թշնա-  
մեաց յարուցելոց ՚ի վերայ. զի որպէս ՚ի մանկութէ  
անսախ հետէ բազում անդամ մարտեան ընդ նոսա ,  
և ոչ կարացին յաղթել , սոյնալուս և ոչ այժմ և ոչ  
առյապայն . քանիզի ած պաշտօան լինելը նոցա , և վա-  
նելը զթշնամիս նոցին . որպէս գըլ . ՚ի համարն . 4:

Վայս բանքը ուղղակի ասին 'ի բերանոց նորոյս եկեղեցւոյ' որ 'ի մանկութէ իւրմէ, այսինքն 'ի սկզբանէ հետէ մարտուցեալ եղե 'ի թշնամեաց այսինքն 'ի հեթանոսաց, և 'ի հերետիկոսաց, և ոչյաղթեցաւ 'ի նոյանէ, քանզի շինեալ էր 'ի վերայ վկմի, անվանելի 'ի դրանց գծոխոց: Ամդ զոր բացայայտագոյն խօսեցաւ մարդարեն զմարտնելց թշնամեացն, զնոյն փոխարեւութէ իմն ևս առաջի առնէ, և առէ:

፩. (Q) በዚህ-ወጪ እና የመሆኑ ሲሆን ይህንን ስራውን ያለውን የሚያስተካክለውን  
አንድ የሚያስተካክለውን ነው፡፡

〔〕**Հայնամիթք իսրայէլացւոց որպես և առ եկեղեցւոյ ի մարտնչիլն ընդ նոսա, այսինքն ի տարբարելն և ի հալածելն՝ ջանային նուանել զնոսա ու միայն ըստ մարմնոյ, այլև ըստ հոգւոյ։ առաջինն հայելով ի**

112 Ա Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ե Կ  
մէջ բերէ զհարուածօթիկանց , որ է ՚ի յետ կուսէ  
մարդոյն , որով նշանակի հարուած ըստ մարմնոյ . իսկ  
յերկրորդն հայելով ոչ ՚ի մէջ բերէ զհարուած գե-  
մանց ըստ սպահանջելոյ նմանութեն , այլ միայն զո-  
նօրէնութի գործոց թշնամեացն , զի ՚ի կամիլ նոցա  
վնասել զիմաց ազգին խրայէլացւոց , այսինքն նուա-  
նել զնոսա ըստ հոգւոյ , թէպէտ և անօրինելին ,  
բայց ոչ կարէին առնել ինչ . ուստի և ըստ այսմ վնա-  
սու՝ միայն զանօրէնութի նոցա յիշէ . իսկ ըստ ա-  
ռաջնոյն զթիկունսն ՚ի մէջ բերէ ասելով :

( Ա յետուն իմ հարին եղաւորք : Ո՞եղաւորս կոչէ զրա-  
բելացիս և զայլ ամենայն թշնամիս , որք հալածէինն  
զիսրայէլ . սոքա ասէ տեսեալ թէ ոչ կարեն վնասել  
ինձ ըստ հոգւոյ , հարին զիս ըստ մարմնոյ , կամ ըս-  
կարգի բառիցդ խօսելով՝ արարին զթիկունս իմ իբ-  
րև զսալ դարբնաց . և զամենայն չարիս եղին ՚ի վե-  
րայ՝ իբրև զերկաթ հրացեալ , և ուռամբ բանից հա-  
րին . բայց ոչ կարացին խսպառ նուածել զիս :  
Եւ դարձեալ՝ որովհետեւ առ թիկամբք հասանելն ՚ի  
մէջ բերէ և զանիսուլ ժամանելն , թէրեւ յայս հայե-  
լով գնէ զթիկունսն . որպէտէ ասէր . ոչ միայն յայտ-  
նի , այլև գաղտ հարին զիս , և գաղտ յափշտակեցին  
զմարմնաւոր բարութիս իմ :

Վարթ է ևս բառիւդ նիտոն՝ իմանալ զբոլոր անձն,  
առեալ զանուն մասին փոխանակ անուան բոլորին .  
յոր միտ կամի ասել . հարին զիս մեղաւորք . և զի  
թիկունքն է ենթակայ հարուածոց , փոխանակ գնե-  
լոյ զիս՝ գնէ զթիկունս իմ : Այսուելով ասպա և զհար-  
ուածոց որ ըստ հոգւոյ ասէ :

Ի՞նչերի որպէն շնորհնութեան իւրեանց : Այսմի ասել .  
՚ի հարկանել զիս թշնամեաց ըստ մարմնոյ ոչ այնչափ  
անօրինեցան՝ որչափ ՚ի հարկանել նոցա զիս ըստ հոգ-  
ւոյ . մանաւանդ զի զայս անօրէնութի իւրեանց ընդ-  
երկար արարին՝ այսինքն անդադար և երկար ժա-  
մանակաւ գործեցին , եթէ յեղիսպասու , եթէ ՚ի պա-  
զեստին և եթէ ՚ի բարելոն :

Այս հարուած նոցա թէպէտ և չեր զդալի մարմնոյ ,  
բայց ծանր քան զառաջինն՝ ՚ի գառնացուցանել նո-  
ցա վնասա՝ ՚ի կրօնս նոցին . զի ծաղը առնեին զպաշ-

տամունս նոցա , և հայ հոյէին . և արհամարհանօք և սասէին . որ առ լուս գոր դուք պաշտէք , և զի՞նչ զարութի նորա , որ ոչ կարէ օգնել ձեզ , և նու

Ա յ լ ս բան զոր տրոհութը իմն առաջի եղաք . եթէ առանց տրոհութե առցի , պարզագոյն ևս մեկնի այսպէս . թշնամիք իմ հարին զիս , և երկարեցին զհարուածսն . և զի անօրէնութը առնեին զայս՝ վսան այսորիկ անօրէնութի կուչ զսոյն :

Ա յ լ սոյն այս ասի և 'ի դիմաց մնն մերոյ . զորոյ ըլթթիկունսն ձևարաիւ և իրօք հարին մեղաւորք . և ոչ առեալ դադար 'ի նմին , ընդերկայն արարին զանօրէնութիս իւրեանց , մինչեւ 'ի բռեռեռել զնա 'ի վերայ խաչին . բայց հուսկ յետոյ ինքեանք եղծան , և ինքեանք յամօթ եղեն :

Ա սի և 'ի դիմաց եկեղեցւոյ՝ հայելով յամզարիշտ քրիստոնեայս . զի որպէս հերետիկոսք հարկանեն զերեսս նորա՝ այսինքն զհաւատօ , սոյնպէս և ամպարիշտ հաւատացեալք զթիկունս . ըստ որում չար վարուք իւրեանց տան անհաւատից 'ի թիկանց հարկանել , այսինքն զկնի նորա խօսիլ բանս հայ հոյութէ , և զամենայն անդամս նորին համարիլ չար . զի թէ՛մ իիցէ չար քրիստոնեայն՝ չար գործ նորա տպաւ որի՝ 'ի սիրտ անհաւատից զամենայն քրիստոնեայս գոյլ չար՝ հանգոյն սկզբնական մեղաց . և տեև ևս այն ընդերկար . վասն որոյ իրաւամքք գանգատի եկեղեցի . զթիկունս իմ հարին մեղաւոր քրիստոնեայք . և ընդերկար արարին զանօրէնութիւնս իւրեանց գայլ թակզութը :

Հարոյապէս , ընդ երկար առնեն զանօրէնութիւնս՝ որք կրկնեն զմեզս . զի կրկնելովն լայնեն և երկայնեն , ևս և եռապատկեն և քառապատկեն զշարութի մեղաց : Ամանք զառաթինն սահեալ՝ 'ի նոյն յաձախեն , խորհելով՝ թէ մինչ արդէն սահեցաք՝ կրկին ևս սահինք . և տեսեալ թէ ոչ պատուհասին յոյց՝ յառաւելն բերին , և ոչ երկնչին . առ որս առէ իմաստունն . \* մի ասիցես . մեղաց և զինչ չար պատահեաց ինձ . զի բարձրեալն երկայնամիտ հատուցանօղ է . (սի-

բար . Ե . 4 : )

Կան բազումք , որք այսօր 'ի զդումն եկեալ խոստո-  
9 Պ.

114 Մ Ե Կ Ա, Ո Ւ Թ Ի Ւ Ն  
վանին . բայց սովորեալ գոլով զոր այսօր խոստովա-  
նին՝ վաղիւ ՚ի նոյն յայն գլորին : Վ ո կայծեալ պատ-  
րոյկ ընդ մերձիւն՝ ՚ի ճրագ փութ ով վառի . սոյնպէս  
և երեւմն նորոգ խոստովանողն՝ եթէ իցէ սովորեալ  
՚ի մեղս՝ ընդ մերձիւ առթին՝ իսկոյն մեղանչէ . և ՚ի  
խղջէ հարեալ՝ յուսաքեկի . և ապա սուտ յուսով քա-  
ջալերի՝ խոստովանութք Ծնջել զոր մեղաւ . և նովին  
յուսով կրկնելով զմեղս՝ կրկնամեռ կորնչի . զի որ-  
որէս ասէ երանելին խոսքով (՚ի մեկն . ժամագրքի .)  
\* որ յուսով մեղանչէ անյօյս կորնչի : Օ սոյն գըն  
ամենամին և սարգիս չնորհալի . (՚ի մեկն . ք . պէտ .  
դ . 8 . ձառ . ե . )

Միանգամ մեղար , խոստովանեցար . միւսանգամ մե-  
ղանչես թողութե յուսով . բայց ուր սոսկ յոյս յաջո-  
ղի , յուսալին անյաջող տեսանի : Վամիսն միանգամ  
խղեաց զպարանսն և զերծաւ . խղեաց և միւսան-  
գամ , և աղատ գտաւ . և ՚ի կամիլն յերբորդումն ևս  
խղել ասելով , խղեցից որպէս յերեկն և յեռանդն՝  
ինքն խղեցաւ և կուրացաւ , և արկաւ ՚ի տուն աղո-  
րեաց . (դատ . ժդ . 20.) խղեցից ասէս ՚ի զատկին՝  
որպէս խղեցի ՚ի ծննդեան ան . և ՚ի յաձախելդ ՚ի  
խղել խղեսցիս և կուրասցիս , և մատնիս ՚ի ձեռս  
սատանայի՝ աղաւ զըսրիս նորա . \* ՚ի վերայ երից ամ-  
ու պարշտութեցն գազայ . և ՚ի վերայ չորբորդին ոչ  
ու դարձայց ՚ի նոցանէ : (ամուս . ան . 6 .) Վլստի  
ասի . \* անարժան է ներողութե , որ մեղանչէ յետ  
ու թողութե :

Երկիր վասն չնորհացն՝ զոր առեր ՚ի խոստովանու-  
թե . առաւել ևս երկիր վասն վերստին առնլոյզ .  
զի թէ զայն ևս կորուսցես , գուցէ ոչ ևս տացէ քեզ  
անք . ոչ զի ոչ կամի տաւ , այլ զի դու ոչ կամիս առ-  
նուլ . եթէ կամեիր՝ ոչ յանդգնէիր : Վ րդարեւ ան-  
հուն է չնորհքն այ . բայց ոչ հաղորդի անհնապէս .  
որչափ տկարանայ ենթակայն մեղօք , այնչափ անյար-  
մարանայ չնորհաց . զի ամենազնիւ իմն է : Օ օրաւոր  
դեղք ազդեն յենթակայ ընդունակ . իսկ եթէ կրկ-  
նեսցի հիւանդութին , նուազ ազդեն . և եթէ կրկին  
կրկնեսցի , ոչ ևս ազդեն . ոչ զի ոչ զօրեն , այլ զի  
ենթակայն է անընդունակ :

Ունի զայն , զի և բժիշկն դարձուցանե զերես իւր ,  
և ամփոփե զձեռան : Ի աշն գնես ընդ նմա ոչ ևս  
առնուլ զվասասկարն . և ընդդէմ դաշնդ զվասա-  
կարագոյնն կլանես : Ի խոստովանիլդ ասես ոյ ըդ-  
մեղսդ . \* խոստովանիմ առաջի ոյ : և նա ասէ . \* ես  
,, արձակեմ զքեզ || . որով և լինի դաշնադրութիւն  
ինչ . ամծ պահէ զդաշն իւր . քանդի որպէս գրի . ( բ .  
օր . է . ց . ) \* նա է ամծ հաւատարիմ , որ պահէ զուխտ  
,, և զողորմութի || : Խակ դու եղձանես . առ որ ասէ .  
\* ոչ պահէցիք զպահօպանութիս սրբութեց իմոց || .  
( եզէկ . խնդ . 8 . ) և բերանով երեմիայ ասէ . \* ոչ կո-  
,, ցին 'ի բանս ուխտի իմոց զոր արարին առաջի իմ || .  
( երեմ . լդ . 18 : )

Վ Ա Ր Ա Ր Դ Ե Յ Յ Ա Ր Ա Ր Դ Ի Կ Ա Ն Ա Ր Ա Ր Ե Ն Ա Ր Ա Ր Դ Ի Կ Ա Ն Ա Ր Ա Ր Ե Ն  
դաշնադրեն՝ քանի ևս ընդ ոյ . իսկ ոչ պահէլով ցու-  
ցանեն թէ սուտ էր ապաշխարութի նոցա , և խա-  
րէ ութի խոստովանութի նոցին : \* Խատակօղ է և  
,, ոչ ապաշխարօղ , որ դարձեալ գործէ , զոր ապաշ-  
,, խարէ . զի ապաշխարեն է ողբալ զդործեալն , և  
,, չգործել զողբացեալն || : Օ որ թքանես , զիարդ  
լիզանես . միթէ զոր փսխիք մարդ՝ դարձցի յուտել .  
( առակ . իդ . 11 : ) Ի թափելդ զմեզս քո 'ի խոս-  
տովանութէ , խոստանան ինչ ոյ , թէ ոչ . խոստա-  
նաս , և անհոգանաս . որով և զներելովն ոյ արհա-  
մարհէս . ( հռովմ . բ . 4 . ) և զշնորհս նորա առ ոտն  
հարկանելով՝ ապերախտ ոյ և անսարդօղ չնորհաց  
նորին կացուցանես զքեզ . և զթշնամին նորա զդես  
ընդդէմ նորա ուրախացուցանես , 'ի համել զանարդ  
և զդարշելի կամդ :

Դ Ա Կ Ա Ն Ի Ր , զի ընդ ամենայն մահուլագի մեղս յարակ-  
ցեալ կոյ ապերախտութիւն . վասն զի նոթօք արհա-  
մարհի երախտիքն ոյ . բայց յատուկ իմն ապերախ-  
տութի լինի յայնմ անձին՝ որ յետ մեղաց և յետ  
պարտաւորելոյ դատապարտութէ՝ թօղութի դտեալ  
դարձեալ մեղանցէ . զի զայն մեծ երախտիսն՝ զոր հա-  
զիւ եդիտ՝ ընդ վայր հարկանէ . որով առաւելապէս  
ատելի լինի ոյ :

Վ Ա Ս Ա Լ Ի Խ Ծ Ա Մ Պ Մ Գ Մ Ա Խ Ա Ն Ի Բ Ի Ն Ա Ր Ա Ր Ե Ն  
զի 'ի կրկնեն զմեզս՝ կրկնին յանկարգութէ և յա-

նարժանութեան, և լինին կրկին որդի գեհենի, և  
կրկին պարտաւոր դժոխոց. անդ Ճաշակեն, զոր աստ  
ոչ ճանաչեն: Եւ անողորմ լինելով ինքեանց, անո-  
ղորմ գտանին և առ այլս. մինչեւ կամիլ զնոսա և  
կործանել. բայց քանզի կան ընդ բարկութեն ոյ,  
տկարացեալ՝ի զօրութենէ նորա թշուառանան: Եւ  
զայս յայտ առնէ մարդարէն նմանութե իւիք ասե-  
լով:

Ղ. **S**էր արդար է, և խորպակէ զուն մեղաւորաց:

Ե. **L**ազեցոցն և յեպս դարձցին ամենեւին՝ ոյտ ապէն  
զսիուն:

Արդար ասի տը՝ի հատուցանելն իւրաքանչիւր ու-  
մեք ըստ դործոց նոցա կամ ըստ խոստմանց իւրոց,  
բարեաց վարձս տալով և չարաց զպատիժս. կամ թէ  
զքարիսն պսակելով և զքարսն պատժելով: Աստ ը-  
երկրորդին խօսելով ասէ:

Արդար է պէր. (և խորպակէ զուն մեղաւորաց): Կամի ա-  
սել. որովհետեւ արդար է ած, 'ի տեսանելն զմեղա-  
ւորս յարուցեալ՝ի վերայ այլոց մանաւանդ՝ի վե-  
րայ ժողովրդեան իւրոյ, ոչ թողու զնոսա անպա-  
տիժ, այլ որպէս կամէին նոքա նուածել զայլս, նոյն-  
ոպէս և ինքն նուածէ զնոսա: Օ այս նուածութիւն  
փոխակերպութե իմն՝ի մէջ բերէ մարդարէն ասե-  
լով:

Եւ խորպակէ զուն մեղաւորաց: Ուլամբ նշանակի բըռ-  
նութի մեղաւորաց, որ օրինակի յուն կամ՝ի պարա-  
նոց՝ մանաւանդ՝ի հպարտս՝ ըստ խստութե և ըստ  
խըստութե. որպէս և անընկճելի բարքն խստապա-  
րանոցութի ասի: Օ այսպիսի բռնութի մեղաւորաց  
ասէ, որով հարստահարեն զիսրայէլացիս, խորտակէ  
տծ, այսինքն այնալիս առնէ՝ զի ոչ միայն ոչ կարի-  
ցեն վարիլնովաւ, այլև կրեսցեն վասն այնը սլատիժ  
պատուհասի:

Ուլամբ մարթ է իմանալ և զկարդ զօրաց թագաւո-  
րի. որոց դլուխ է նա ինքն թագաւորն, զսոսա ասէ  
'ի խստանալն խորտակէ տը որպէս և կամի. որով և

յամօթ լինին թագաւորք նոցա յանձինս իւրեանց :  
Եւ առ այս յարէ զկնի և ասէ :

Ա մաշնոյն և յետս դարձնին ամենէտէան՝ ոյտ ապէն զսիոն։  
Ա յսինքն ամենեքին նոքա՝ որք ատեն զսիոն կմ զե-  
րուսաղէմ, և չարչարեն զժողովուրդ նորա, տեսեալ  
թէ նու ցուցանէ զպաշտպանութի իւր առ նոսա՝ և  
խորտակէ զըռնութի իւրեանց, ամօթ մեծ կրեսցեն.  
և վասն առաւելութէ ամօթոյ իւրեանց դարձին  
յետս, այսինքն թէ ընդ կրունկն կործանեսցին, որ  
է ասել՝ պատուհասակոծ լինիցին : Կամ դադարես-  
ցին 'ի խորհրդոց իւրեանց, կամ յետս կացցեն յա-  
տելս զսիոն և 'ի չարչարելոյ զժողովուրդ նորա . և  
կամ փախիցեն վասն ամօթոյ՝ զի մի նախատակոծ լի-  
նիցին յայլոց՝ երևելով առ նոսա իրեւ տկարք և

չարք :

Ա քիմք դիտէ մարգարէն ցուցանել՝ թէ 'ի պաշտ-  
ուանել այ զժողովուրդ իւր՝ ոչինչ կարեն առնել նո-  
ցա թշնամիք նոցին, այլ տկարանան, և անպիտանա-  
նան ևս, և մերժին յայլ, զոր կամելով օրինակաւ ևս  
ցուցանել յարէ զկնի և ասէ :

Հ. Ա շեշին նորա որդէս իսուս պանեաց . որ մինչը ՚ի բուռն  
ենեալ չորացաւ :

Է. Ա ստէ ոչ ելեց զբուռն իւր հնջոշն . և ոչ զգերիս իւր՝  
որ զորայն ժողովէր :

Խորք անարգք՝ որք բուսանին 'ի տանիս՝ ոչ միայն  
են անպիտանք 'ի կերակուր անասնոց, այլև տկարք  
յոյժ . ընդ ամելն՝ վաղվաղակի վտտանան, և յե-  
րևին անդ դալար՝ յորժամ կամիցի ոք ժողովել զնո-  
սա, 'ի քաղելն անդ չորանան : Ա յսպիսեաց նմանե-  
ցուցանէ և եսայի զթշնամիսն իսրայէլի յասելն . \* Ե-  
,, զեն իբրև զիսոտ ցամաքեալ 'ի վերայ տանեաց . և  
,, իբրև զսէզ չորացեալ . (Եսայ . լք . 27 : ) Բ ստ  
այսմե սաղմոսերգուն խօսելով աստ զըաթելացւոց,  
ևս և զայլոց թշնամեաց ժողովրդեան նոն՝ ասէ :

Ա շեշին նորա որդէս իսուս պանեաց, որ մինչը ՚ի բուռն  
ենեալ չորացաւ : Կամի ասել . թշնամիք իսրայէլի՝ որք  
զօրացեալ երևին, և ցուցանեն զինքեանս իրեւ ըզ-

Մ է ի ՞ն Ռ Խ Թ Խ ՞ն  
ծառս և զմայրիս՝ եղիցին նման անպիտան խոսոյ տա-  
նեաց, որ առ ժամանակ մի և եթ կանաչացեալ երեի,  
և իսկոյն չորանայ, և ոչ իմիք լինի պիտանացու.  
ուստի և ոչ իսկ հնձեն զնա մարդիկ, այլ թողուն  
ինքնին չորանալ և չքանալ:

Այս է զոր ասե՛՝ որ միշտ՝ ի բառու եինալ չըրացու.  
ուր բառ գ հնչւ՛ ցուցանե՛ զվաղվաղակի չորանալն,  
որպէս թէ ասե՛ այն խոտ ոչ է քաղելի, և ոչ հըն-  
ձելի, այլ թողլի՛ ի բաց, և ինքնին չորանալի. իսկ  
եթէ կամիցի ոք հնձել՝ մինչեւ առեալ իցէ՝ ի բուռն  
տո. ի քաղել, չորանայ. ուստի և ոչ կարէ հնձօղն՝  
զորայս ժողովել անտի. որոյ վասն յարէ, զկնի և  
ասե՛:

**Ո**ւստի ոչ ելոց շբոռոն էոր հնյօն, և ոչ պէտի էոր՝ որ  
սորայն ծողովէք, կրկնակի մեկնի այս բան. մի՛ ըստ  
ոչ ժողովելոյ, յոր միտ կամի ասել. այնչափ անարդ.  
է խոտ տանեաց՝ միշտ՝ ոչ ոք հնձօղյօժարի ժողո-  
վել զայն՝ ի բուռն, և առնուլ անտի զորայս, և լը-  
նուլ այնու զգիրկս իւր. և այսու կամի ցուցանել  
զամենեին անարդ երեիլն մեղաւորաց առաջի ոյ:  
Երկրորդ՝ մեկնի ըստ ժողովելոյ. յոր միտ կամի ա-  
սել. եթէ ոք կամիցի հնձել զխոտն՝ ոք բուռանի՝ ի  
վերայ տանեաց՝ ոչ կարէ՝ ի խոտոյ անտի լնուլ ըզ-  
ձեռն իւր. և եթէ կապելով՝ ի խուրձս՝ արտացէ ո-  
րայ, այնչափ նուազի, մինչեւ ոչ կարել հնձօղին՝ ի  
բառնալն զայն՝ լնուլ անտի զգիրկս իւր. որով կամի  
ցուցանել թէ թշնամիք ժողովոդեան տն այնպէս  
ակարանալոց են, մինչեւ լինել նման այնպիսի խոտոյ  
ամենելին անարդ և անպիտան: Իսկ բառ գ ստորէ՝  
զնի աստ փոխանակ բառիս յորմէ:

Մարթ է ևս ասել, թէ այս է այլ իմն նմանութի  
հայելով՝ ի հունձա ցորենոյ. որպէս թէ եղեալ էր.  
թշնամիք իսրայէլի՝ լինիցին նման այնպիսի աղազուն  
հնձոց ցորենոյ, յորմէ ոչ կարաց հնձօղն լնուլ ըզ-  
ձեռն իւր. և որ երարձ զորայն՝ ոչ ելից անտի ըլ-  
դիրկս իւր, որպիսի է որայն խոտոյ տանեաց. այլ  
այս ևս զնոյն ցուցանէ՝ այսինքն զանպիտանութիւն  
և զանարդութի թշնամեացն, և զլինել նոցա իբրև  
զվտտացեալ և զւորացեալ արմատիս:

Բարոյապես, այսպիսի անարդ խօսովվը նշանակին չեշտութիք աշխարհիս . որք 'ի ժողովին անդ՝ չորանան . և իրբե եղինջ՝ թողուն կոկիծ խայթուածոց խղմին ՚ի հոգին : Ուստի ասէ սարդիս չնորհալի (՚ի մեկն . յուդ . համար . 13 . Խառ . թ .) \* անցու , որ են հեշտութիքն իրբե զիրոփուր և դիւրամու , ուանալի . քանզին ՚ի գործելն միայն ունին զազ , դումի . և յետ այնորիկ կոկիծն է՝ և խիղճ՝ մտացն , որ գառնագոյն այլք և հալէ զհոգին՝ քան զամեւ , նայն բոց հրոյլ . և որք հնձեն զայնս՝ զուրկ գտանին յօրհնութին ո՞յ . որպէս հնձօղք վտիտ և ազալուն որայից . զորոց խօսի ՚ի յաջորդ համարն՝ ասեւ լով :

|| Հ ասացին ամենեւնան՝ ոյս անցանենին ուս նորօս , Ան օրհնուենին թն ընդ յեղ է . և օրհնեցատ շյեղ յանանին թն :

'Իս սովորութի մարդկան հայելով մարդարեին՝ զնէ զայս բան , իրը զի մարդիկ յանցանելն առ հնձողօք տեսեալ զնոսա լիացեալս որայիւք՝ ասեն , օրհնութի ո՞յ ՚ի ձեզ , կամ օրհնութի ո՞յ ՚ի վերայ հնձոցդ նո . ըստ որում և յայլազգական լեզուս ասի՛ հալաւահ , կամ պէրեսենլի օլայ . իսկ յորս տեսանեն զնուազութի և զվատութի , զայօպիսի ինչ ոչ ասեն : Հայս նմանութի ակնարելով ասէ :

|| Հ ասացին ամենեւնան՝ ոյս անցանենին ուս նորօս , Ան օրհնելին թն ընդ յեղ է , և օրհնեցատ շյեղ յանուանեւ տեսան : Այս բան եթէ հայիցի առ որդիսն իսրայէլի , ցուցանէ զբշուառութի վիճակի գերութի նոցա . որպս թէ ասէք . յայնպիսի թշուառութիւն հասին որդիքն իսրայէլի , մինչ զի որք հայէին առ նոսա՝ ոչ տեսանելով ՚ի նոսա զօրհնութի ո՞յ , ոչ ասէին , օրհնութի ո՞ն է ընդ ձեզ . և զի ոչ ևս օրհնեին զնոսա յանուան ո՞ն՝ ասելով , օրհնեալ է ո՞ծ , որ առաստացոյց ՚ի ձեզ զօրհնութի իւր . վասն որոյ ասէ , ոչ օրհնեցաք զձեզ յանուանեւ ո՞ն : Իսաց հաւանականագոյն ես է ասել , թէ այս բան հայի ՚ի թշնամիսն իսրայէլի . ըստ որոյ կամի ասել . այնչափ անարդ և անպիտան են թշնամիք մեր , մինչեւ ոչ ունիլ նոցա բարի ինչ , և

Մ Ե Կ 'Ն Ո Ւ Թ Ի Ե 'Ն  
 ոչ ումեք ընդունիլ 'ի նոցանէ օգուտ . և զայս յայտ  
 առնէ բացասութք օրհնութե տն . իբր թէ որպէս  
 որք հնձեն զարտորայս՝ եթէ որայքն իցեն ամենեին  
 ակարք և վտիտք , ոչ օրհնին յայնցանէ՝ որք անցա-  
 նեն առ նորօք . զի տեսեալ նոցա զվտտութի որայից  
 նոցին՝ ոչ համարձակին ասել , օրհնութիւն տն է 'ի  
 ձեզ . և ոչ ևս օրհնեն զնոսա յանուն տն : Այնպէս  
 է ասել զթշնամեաց մերոց . զի որք հոյինն 'ի նոսա  
 ոչ տեսանելով 'ի նոսին բարի ինչ արժանի օրհնուե ,  
 և կամ ոչ ընդունելով 'ի նոցանէ օգուտ ինչ՝ ոչ օրհ-  
 նեն զնոսա ասելով , օրհնութի տն է 'ի ձեզ . ուստի  
 և ոչ ասեն . օրհնեցաք զձեզ անուամբ տն :

Ա. Աւազգ ևս առաջի գնի բացատրութի այսր բնա-  
 բանի . որպէս թէ ասացեալ էր . թշնամիք մեր նման  
 են այնպիսի ազազուն և վտիտ հասկաց , առ որպէք  
 եթէ անցանիցեն մարդիկ , տեսեալ զանպիտանութի  
 և զանարդութի նոցա , ոչ կարեն ասել , օրհնութի  
 այ է 'ի ձեզ . և ոչ ևս՝ թէ օրհնեցաք զձեզ ան-  
 ուամբ տն , այլ մանաւանդ ընդ հակառակն , թէ ոչ  
 գոյ օրհնութի այ 'ի վերայ սոցա , այլ անէծք :

Ա. Այսպէս պատահեսցի և մեղաւորաց յաւուրն յետ-  
 նում . զի երեեսցին իբրե խոտ տանեաց՝ որք չեն  
 հնձելի , այլ աւելածութք 'ի դժոխս թօթափելի .  
 որոց տեսօղքն ոչ եթէ օրհնեսցեն զնոսա , այլ անի-  
 ծանիցեն՝ այնու անիծիւք , զոր ասելոց է առ նոսա  
 քո , երթայմը յինէն անիծեալք : Խակ որք պարարտա-  
 ցեալ իցեն գործովք ողորմութե , տացի նոցա օրհ-  
 նուի , և ժողովեսցին 'ի հնձողաց , այսինքն 'ի հրեշ-  
 տակաց 'ի շտեմարանս արքայութեան , և ցնծասցեն  
 յօրհնութիս այ յաւիտեանս յաւիտենից :

## Ա Ա Դ Ա Մ Ո Ս Վ Ի Թ Ւ :

Պաղատաճք առ ամծ վասն քաւութեա մեզաց , յուսա-  
լով ի նա՞ առ ՚ի գտանել զողորմութիւն և զիւ-  
կութիւն :

(Օբհասնէ Ասումանաց :

1. **Ա** խորոց իսրբացի առ ժեշ տեր տեր՝ լուր յայնի է մասմ :  
2. Եղիշին սիսնց ու ՚ի լսել շարժ աշունից է մաս :  
3. Ու է զնութեանեւ անես ուեր տեր , իսկ ՚ի ուրե իւլ սա-  
զէ ու ՚ի ուն է սասութիւն : 4. Ու առ աւասն ու համ-  
բերէ աը . համբէր անյն իմ բանի քամ : յասուցաւ անյն իմ ՚ի  
տեր : 5. ՚ի պահէ սասութիւն պնը յերեից . ՚ի պահէ սա-  
սութիւն յասուցաւ իսրբայէլ ՚ի տեր : 6. ՚ի պահ է սասութեան-  
բանմամ : ՚ի ամասն է քրիստինէ : և առ քրիստաց շինուայէլ յամ :  
անյն նեղութեց նորս :

## Ա Ե Բ ՚Ե Ա Գ Ի Բ :

(Օբհասնէ Ասումանաց :

**Ի** վլյօն Ձեմր Գիբա Մեր Դ'էկ  
երգ աստիճանաց . և ՚ի միում երդը  
աստիճանաց , և յայլում յոզնակի երդը  
աստիճանաց . իսկ յերկուս ձեռագիրս , և ՚ի սաղ՝  
լամբ . և վարդ . ՚ի ձեռագրի՝ ըստ դնելոյ մեր գրի՝  
օրհնութիւն աստիճանաց , օրպէս և յայլ երկուս , և ՚ի  
տալ . օրհնութիւք աստիճանաց . զորմէ տես ՚ի ներած .  
( գլ . ժամ :

Ա յս սաղմոս պարագրէ յինքեան գրեթէ զերիս մա-  
սունս . մին է իրը աղօթք , երկրորդն իրը յոթորք ,  
և երրորդն իրը յուսագրութե փըկութէ .

ԱՅԼԹԵ յորմէ իցե յօրինեալ, այլևայլ են կարծիք. ոմանք սսեն թէ զայս ասաց դաւիթ յետ մեղացն զոր մեղաւ յուրիայ, որպէս և զողորմեայն։ ԱՅԼՔ ըստ վերնագրի ասորւոց տան նէե մեայ և որդւոցն իսրայէլի յետ դարձի գերութեն 'ի հակառակիլ թշնամեաց ընդդէմնոցա։ Բազումք ևս հաւանականագոյնս համարին թէ այս սաղմոս ասացու 'ի բերանոյ իսրայէլացւոց գերելոց 'ի բարելոն, 'ի տառապիլ նոցա անդ 'ի գերչաց իւրեանց, որոյ վասն աղաչեն զանց յուսաւ լով 'ի նա, զի ցուցցէ նոցա զողորմութի։

ԱՅԼՔ քանզի սոյն այս սաղմոս կարէ ասիլ 'ի դիմաց իւրաքանչիւր նեղեալ անձին, որպէս և 'ի բերանոյ ննջեցելոց 'ի մեկնել մեր զայս՝ առանց որոշման դնեմք առաջի զբանն՝ խօսելով 'ի դիմաց սաղմոսերգուին՝ անուամբ մարգարէի յիշելով զնա։

## Բ Ա Կ.

Ա Խորոց հորդացի առ չեղ դր. դր լ՛ը-ը չայնի իմում։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Անդունդ իմն է կեանք մարդոյ, անդունդ անյատակ և ամենավտանդ, որոյ 'ի խորութեն սուզեալ կայ մարդս, և 'ի նմին հեծէ իրեւ 'ի խորս թշուառութե ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ, ըստ արտաքնոյն և ըստ ներքնոյն։

Ըստ մարմնոյ՝ երբեմն 'ի խորս աղքատութե կամ քաղցու և ծարաւոյ, և երբեմն ցաւոց կամ հիւանդութե. երբեմն գերութե կամ աքսորանաց, և երբեմն բանտից կամ կապանաց։

Ըստ հոգւոյ՝ երբեմն 'ի խորս մեղաց կամ ախտից չարաց, և երբեմն տրտմութե կամ յուսահատութե։ Ըստ արտաքնոյն՝ երբեմն 'ի խորս պաշարման բամբասանաց կամ նախատանաց, և երբեմն չարախօսութեց կամ զրուղարտութեց, երբեմն կոռուոյ և երբեմն

պատերազմաց երբեմն որոգայթից սատանայի, և եր-  
բեմն պատրանաց մարդկան :

Ըստ ներքնոյն՝ երբեմն 'ի խորս խաւարային խորհր-  
դոց, և երբեմն խստութե՛ կամաց :

Ուր թողից զխորս զանազան փորձութե՛ց, եթէ  
հեշտախտութե՛ իցէ և եթէ արծաթսիրութե՛, եթէ  
փառաց իցէ և եթէ իշխանութե՛ց. և որ 'ի կարգի:  
Արդ որ միանգամ անկեալ կայ 'ի խորս խորինս՝ և  
ոչ կարէ ելանել՝ զի՞նչ ունիցի առնել, բայց եթէ 'ի  
խորոց անտի 'ի վերկոյս աղաղակել՝ առ 'ի գտանելոյ  
յումեքէ ձեռնտուութիւնել անտի. ուրեմն և  
մարդս անկեալ գոլով յայսպիսի և յայսքան վիհս  
խորոց՝ պարտի աղաղակել սրտի մտօք 'ի վեր առ  
ած :

Եյլ եթէ անփոյթ լեալ ոչ աղաղակիցէ, նշան  
է ոչ զգալոյ նորա թէ իցէ 'ի խորս. քան զոր մեծա-  
գոյն անզգայութիւնը հնար զմտաւ ածել. ըստում  
ասէ սողոմոն. \* անմիտն հասեալ 'ի խորս չարեաց՝  
,, արհամարհէ ||. (առակ. ժը. 3:) Խոկ որ զգայ՝  
բռնադատի ոչ միայն աղաղակել, այլև բարձրագոյնս  
գոչել առ ած ած ընդ յովսանու իբր 'ի փորոյ կիտին.  
(յովն. թ. 2--8.) զի լսելի լինիցի ձայն իւր. որպէս  
և տեսանի յաղաղակ մարդարէին 'ի գոշելնորա առ  
ած և յասել:

Դ եռբոց հարդացի առ ժեղ դէր. դէր՝ ըստ յայնի իմում:  
Եյսինքն՝ կալովիմ 'ի խորս թշուառութե՛ աղաղա-  
կեցի ոչ առ այլ ոք՝ այլ առ քեզ տէր. և արդ լուր  
տէր ձայնի իմում. ոչ ասէ եղակի 'ի խորութիւն, այլ  
յոդնակի 'ի խորոց՝ առ 'ի ցուցանելոյ զբազմապա-  
տիկն լինել թշուառութե՛ց՝ որ իբր 'ի մէջ խորոց  
կալով աղաղակէ առ տէր :

Ոչ ասէ դարձեալ՝ լուր ինձ, այլ լուր ձայնի իմում.  
զի ինքն 'ի խորս գոլով իբր թէ ոչ երեւէր, ձայնն  
միայն լինէր լսելի. բայց ըստ ճշմարտութեն քննե-  
լով զայս ասէ վասն անարժան համարելոյ զանձն.  
որպէս թէ ասէր. մի հայիր յանարժանութիւն իմ,  
այլ հաճեաց լսել զձայն աղաղակի իմոյ, որով յայտ-  
նեմ զթշուառուիս իմ. յինէն չունիմ ինչ ընծայելքեզ  
'ի հաճոյս՝ զի լուիցես ինձ, զի 'ի քէն է ամենայն,

124 Ա Ե Կ Կ Ա Խ Խ Խ  
զ ձ այ ն ս իմ մ ի ա յ ն ն ո ւ ի ր ե մ , և ա ղ ա ւ ե մ լ ս ե լ ձ ա յ ն ի  
ի մ ո ւ մ ։

Վ ս տ ա ն օ ր բ ա ռ դ պ է ՞ ո ր ե ր կ ի ց ս կ ր կ ն ի յ ա ռ ա ջ ն ո ւ մ ն  
յ ա ր ի ՚ ի վ ե ր ջ ա ռ ա ջ ի ն հ ա տ ո ւ ա ծ ո յ ն , և յ ե ր կ ր ո ր ը  
դ ո ւ մ ն ՚ ի ս կ ի զ ր ն ե ր կ ր ո ր դ ի ն . ո ր պ է ս տ ե ս ա ն ի ՚ ի  
թ ա ր դ ՚ . ա յ լ ո ց . և ս ե յ ե ր ը ՚ . ո ւ ր ՚ ի վ ե ր ջ ա ռ ա ջ ն ո յ ն  
դ ն ի է ՞ չ ։ ա յ ս ի ն ք ն ա տ ե ր ի մ ՚ ո ր է ն . ի ս կ ՚ ի ս կ ի զ ր ն  
ե ր կ ր ո ր դ ի ն ա ռ մ ա յ ։ , ա յ ս ի ն ք ն ա ռ մ ա յ ։

Բ ա ր ո յ ա պ է ս և յ ա ր մ ա ր ա կ ա ն մ ե կ ն ո ւ թ ք ՚ կ ա ր դ ա լ ն ՚ ի  
խ ո ր ո ց ՚ է կ ա ր դ ա լ ՚ ի խ ո ր ո ւ թ ք ՚ ս ր տ ի , ա յ ս ի ն ք ն է ՚ ի  
բ ո լ ո ր ս ր տ է ՚ , կ ա մ յ ա մ ե ն ա յ ն յ օ ժ ա ր ո ւ թ ք ՚ ս ր տ ի , և  
ո չ ս ո ս կ շ ր թ ա մ ր ք ՚ . և ա յ ս ՚ ա ռ ՚ ի դ ի ւ ր ա ւ յ օ ժ ա ր է ՚  
ց ո ւ ց ա ն ե լ ո յ զ ա ն ՚ ո ւ ն ի ն մ ա տ ո ւ ց ա ն ե լ ն մ ա ։ և զ ի  
յ ա յ ս ա կ ն ա ր ե ր դ ի ւ ր ա ւ յ օ ժ ա ր է ՚ ի ն , ա յ ս ի ն ք ն է ՚  
ա ռ ՚ ի դ ի ւ ր ա ւ և փ ո ւ թ ո վ լ ս ե լ ա յ զ ա ղ ա ւ ա ն ս ի ւ ր ,  
ս մ ի ն ի ր ի յ ա ր է զ ի ն ի , և ա ս է ։

Է . **Ա շ է յ ն ս տ ե ն չ ։ ՚ ի լ ս ե լ ս յ ա յ ս ա ռ մ ո ւ ն ի ց ի մ ա յ ։**

Վ ա ր դ կ ո ր է ն ձ ե ա յ ո ւ ց ա ն է զ ր ա ն ն ։ զ ի ո ր պ է ս մ ա ր ։  
դ ի կ յ ո ր ժ ա մ ս ր ե ն զ ա կ ա ն ջ ս , ց ո ւ ց ա ն ե ն զ յ օ ժ ա ր ո ւ թ  
լ ս ե լ ո յ , ս ո յ ն ա լ է ս յ ո ր ժ ա մ ա ն ՚ ց ո ւ ց ա ն է զ ի ն ք ն յ օ ժ ա ր  
՚ ի լ ս ե լ ա ս ի ո ւ ն ի ն մ ա տ ո ւ ց ա ն ե լ , կ ա մ պ ա տ ր ա ս տ ՚ ի  
լ ս ե լ ո ր ո վ ո չ ա յ լ ի ն է ց ո ւ ց ա ն ՚ բ ա յ յ ե թ է ը ն դ ո ւ ն ի լ  
ն ո ր ա զ ա զ օ թ ս , և կ ա տ ա ր ե լ զ ի ն ո դ ր ո ւ ա ծ ս ո ն կ ա ս ա  
ց ե ա լ է մ ե ր ա յ լ ո ւ ր . (՚ ի ս ա զ . ձ ե . 1 . հ ա ։ )

Ե շ է յ ն ս տ ե ն չ ։ ՚ ի լ ս ե լ ս յ ա յ ս ա ռ մ ո ւ ն ի ց ի մ ա յ ։ կ ա մ ի  
ա ս ե լ . յ ա ղ ա ղ ա կ ե լ ի մ ո ւ մ ա ռ ք ե զ ՚ ի խ ո ր ո ց , և յ ա  
ղ ա ւ ե լ ի մ զ ք ե զ ՚ մ ի ա ն տ ե ս ա ռ ն ե ր զ ի ս . ա յ լ ը ն կ ա մ է լ  
զ ա ղ ա ւ ա ն ս ի մ ՚ , և կ ա տ ա ր ե ս զ ո ր ա ղ ա ւ ա ն օ ք ի ն ո դ ր ե մ ։  
Ե ւ թ է պ է տ ա ռ մ ա յ ն ի ն ե ր կ ա յ գ ո ւ զ ի լ ո վ և զ ա մ ե ն  
ն ա յ ն ա տ ե ս ա ն ե լ ո վ ո չ կ ա ր օ տ ի ա ղ ա ղ ա կ ի մ ե ր ո ւ մ , բ ա յ յ  
զ ի մ ե ք կ ա ր օ տ ի մ ե ք ն մ ա ։ , վ ա ս ն ա յ ն կ ա մ ի ՚ զ ի մ ե ք ա ղ ա  
ղ ա կ ե ս ց ո ւ ք վ ա ս ն կ ա ր օ տ ի թ է մ ե ր ո յ , և ն ա օ դ ն ե ս ց է  
մ ե զ վ ա ս ն բ ա ր ո ւ թ է ի ւ ր ո յ ,

Յ ա ր մ ա ր ա կ ա ն մ ե կ ն ո ւ թ ք ՚ մ ա ր ի ՚ է ա կ ա ն ջ ո ք ա յ ի մ ա ։  
ն ա լ զ ն ք ե շ ո տ ա կ ս , ո ր պ է ս զ ն է վ ա ր դ ա ն . զ ի հ ր ե շ ո տ ա կ ը  
ի ր ը և ա կ ա ն ջ ք վ ե ր ա գ ո յ ն ե ն ք ա ն զ մ ա ր դ ի կ , ո ւ զ  
օ դ ի ն ա կ ի ն ՚ ի բ ե ր ա ն ս . ա ր դ ի ն ո դ ր ե մ մ ա ր դ ա ր է ն , զ ի

միջնորդութեա հրեշտակաց լուիցի նման ած : Եղաւ քանի,  
զի ակնուներ լսելոյն՝ համարձակի մատչիլ և 'ի պա-  
ղատանս քաւութե մեղաց , ասելով :

Է . **Ո**ւ աւ շահօրէնունին էմ ժննես տէր՝ տէր , իսէ և իսրէ  
իսլ առաջնի ու . զի է տէն և առաջնի :  
Վ նորէնութե իմացեալ լինի աստ ու և իցի մեզք ,  
զոր գործէ մարդ . յոր միտ ասէ յովէ . յառաջին  
թուղթն . ( է . 4 . ) \* ամենայն որ զմեզս գործէ , նա  
, և զանօրէնութի առնէ , և ինքն իսկ մեղքն անս-  
,, ը նութի է : Վ րդ փափաքելով մարդարէին քա-  
ւութի գտանել անօրէնութին՝ ոչ ինդըէ զայն  
ուարզապէս , այլ որորէ զինդիր իւր 'ի ձեւ խոնարհ  
պատձառաբանութե առ 'ի շարժել զնն ՚ի կատա-  
րումն ինդրոյ իւրոյ . վասն որոյ ասէ :

**Ո**ւ աւ շահօրէնունին էմ ժննես տէր՝ տէր . իսէ և իսրէ իսլ  
առաջնի ու : Կամի ասել . զիտելով թէ 'ի քէն միայնոյ  
է գտանել քաւութի , համարձակիմ աղաւել զքեզ  
զի քաւեսցես զանօրէնութին իմ . իսկ եթէ զու  
սկսանիցիս շշիւ և խստիւ քննութի առնել 'ի վե-  
րայ անօրէնութից իմոց , ոչ յաջողեսցի ինձ այս . և  
ոչ միայն ինձ , այլև ոչ որոց որք իցեն . իսկ արդ մի-  
թէ վայել իցի ողորմութե քում այսպէս վարիլ ընդ  
իս ընդ անարդս կամ ընդ այլս . ապաքին յայդպէսդ  
վարիլ ամենեքին առ հասարակ կորնցիմք . քանզի 'ի  
քննելքս զանօրէնութիս մարդ կան ով ոք 'ի նոցանե  
կարիցէ կալ :

Աւը կալն դնի նախ՝ ըստ ընդդիմանալոյ , որպէս թէ  
ասէր . ո՛ կարիցէ ընդդիմ կալ և ասել թէ ոչ է այդ-  
պէս , և կամ ով կարիցէ իւիք արդարացուցանելոց  
զանձն . երկըորդ՝ ըստ յանդիման լինելոյ . որպէս թէ  
ասէր , 'ի դատել քո՛ ո՛ համարձակիլ կարիցէ յանդի-  
ման կալ 'ի ներկայութե քում . նազի առանց իսկ ներ-  
կայ լինելոյ մաշի , յոր միտ ասէ նարեկացին . ('ի բանն  
հէ . ) \* եթէ քննես զանօրէնութիս , առանց յանդի-  
ման լինելոյ քեզ՝ իսպառ հալեցայց : Երբորդ՝  
ըստ ապրելոյ կամ կելոյ . որպէս թէ ասէր . ո՛ կա-  
րիցէ յայնժաման ապաքիլ կամ կենդանի մնալ , Եղ այսմ  
կամի հետեւեցուցանել , թէ որովհետեւ ոչ առնես

Մ Ե Կ 'Ն Ո Ւ Թ Ւ Ւ 'Ն ,  
ոյսպէս , մարդ է ինձ համարձակութիւն գիտել առ  
քեզ , և յողորմութիւն քո ապաւինելով ինողը եւ զբա-  
ռութիւն , և այնու ելանել 'ի խորոց անտի՝ յոր ան-  
կեալու եմ :

**Ա.** Յ Ե Բառդ էս՝ որ դնի 'ի մերում թարգմանութե  
և ոչ յայլս՝ է իբրև զարդ , կամ թէ գուցէ նշանա-  
կիցէ ասել այնուհետեւ , կամ՝ իսկ արդ . որպէս թէ  
եղեալ էր . 'ի քննել քո զանօրէնութիւն մեր՝ այնու-  
հետեւ ն կարիցէ կուլ . կամ՝ իսկ արդ միթէ յայնժամ  
կարիցէ ոք կալ . կամ լով ապա մարդ արելին ցուցա-  
նել , թէ ած պատրաստ է ողօրմիւ և քաւել , յարե-  
զինի և ասե :

**Օ** յ 'ի Տ է Տ ա ռ ա ն է : Բառդ չէ՝ դնի աստ իբր պատ-  
ճառ այնը՝ որ լուելեայն իմացեալ լինէր 'ի նախրն  
թաց բանն , որպէս թէ եղեալ էր . եթէ խստութ  
քննես զանօրէնուին մեր՝ ոչ ոք կարէ ապրիլ . բայց  
գու տէր ոչ այդպէս վարիս ընդ մեզ , այլ քաղցրութ  
և ողօրմութիւն . 'ի չնորհել քաւութիւն ամեննեցուն՝ որք  
ինողը զայն . \* զի 'ի քէն է քաւութիւն , այսինքն  
միայն քո է տալ զքաւութիւն մեղաց , կամ միայն դու  
ես՝ որ կարեսե կամիս քաւել զմեզս : Կամ համառա-  
տիւ ևս , մի քններ զանօրէնուին իմ այլ քաւեամ՝ զի  
գու ես աղքիւր քաւուն : Ասլին այսու քաջալերեալ  
մարդարէին՝ յարէ զինի , և ասե :

**Ա.** Ա ն անուան չ համբերէ ուեր . համբեր անցն էմ  
բանի տամ . յանուացան անցն էմ 'ի ուեր :  
Մարդարէն՝ 'ի նախընթաց համարն եղ առաջի ոյց  
**րեսք երկրի 'ի վեր են քան զերեսս ջուրց ծովու ,**  
**որպէս զի հնար լինիցի մարդկան և այլոց ցամաքային**  
**կենդանեաց կենցաղիլ 'ի վերայ երկրի . ( զորմէ տե՛ս**  
**'ի սաղ . իդ . 2 : ) Խոկ զոր ասեն ոմանք՝ թէ վասն**  
**զի երկիրս ունի 'ի ծոց իւր զջուրս՝ և վասն այսորիկ**  
**ասի 'ի վերայ ջուրց , այդ թէպէտե չէ ինչ ընդդէմ ,**  
**բայց դնի իբր երկրորդական մեկնութիւն :**

**Խորհրդաբար երկրաւ նշանակի եկեղեցի ոք՝ շինեալ**  
**'ի վերայ ջուրց մկրտութէ , ևս և նմանութք 'ի վե-**  
**րայ ազգաց՝ որք օրինակին 'ի ջուրս . իսկ երկնիւք**  
**զոր եդ 'ի նախընթաց համարն , նշանակի արքայունի**  
**երկնից՝ յորում փայլե իմաստութիւն այ 'ի հաղորդել**  
**նորա երանելեաց անհասանելի իմաստութք իւրով**  
**զանսահման բարութիւն իւր՝ յորում և տեսանի՝ թէ**  
**յաւիտեան է ողորմութիւնորա :**

**Խարոյապէս՝ երկնիւք իմացեալ լինի հոգին բանա-**  
**կան , և երկրաւ մարմինս , որ հաստատեալ կայ 'ի**  
**վերայ ջուրց հոգւոյն , այսինքն 'ի վերայ խորհրդոց՝**  
**ըստ որում խորհրդովք հոգւոյն առաջնորդի 'ի բա-**  
**րին կամ 'ի չարն . առ որոյ նպաստ արար ած զարե-  
գակն և զլուսին , այսինքն զմիտու զյիշողութիւն ըստ**  
**կրկին զօրութէ՝ առ 'ի լուսաւորել . զորոց խօսի մար-**  
**դարէն 'ի յաջորդ համարսդ ասելով :**

Է. Արար պլուսաւորս մեծամեծս . զի յաւետան է ողբ" :

Ը. Օ արեգակն արար է շխանական պունջեան . զի յաւետան  
է ողբ" :

Թ. Օ լուսին և զատաւշս է շխանական գեշերոյ . զի յաւ-  
ետան է ողբ" :

Այս բանք են մօվսեսի՝ զոր ասէ ( ծնն . տ . 16 . )  
\* Եւ արար ան զերկուս լուսաւորսն զմեծամեծս  
,, զլուսաւորն մեծ յիշխանութի տունջեան , և զլու-  
,, սաւորն փոքր յիշխանութի գիշերոյ և զաստեղս || :  
Արդ որովհետեւ մարգարեն խօսեցաւ նախ զերկնից  
և զերկը , խօսի և զերեելի զարդուց նոցա , այս-  
ինքն զլուսաւորաց՝ որք թեպէտ և յերկինս են , բայց  
նաև զերկիր զարդարեն պայծառութե իւրեանց . զռ  
լուց նախ ընդհանրապէս խօսի և ասէ :

Արար պլուսաւորս մեծամեծս . զի յաւետան է ողբ" : | լու-  
սաւորօք մեծամեծօք թեպէտեւ մարթ է 'ի հասարա-  
կի իմանալ զամենայն աստեղս , բայց հայելով 'ի բան  
մօվսեսի՝ իմանամք զարեգակն և զլուսին՝ որք մե-  
ծամեծք կոչին , զի մեծ երեխն մեզ քան զայլո . զռ  
լուց 'ի մասնաւորի ևս խօսելով ասէ :

Օ արեգակն արար է շխանական պունջեան . զի յաւետան է  
ողբ" : Օ լուսին և զատաւշս է շխանական գեշերոյ . զի յաւ-  
ետան է ողբ" : Խշխանական ասելով ցուցանէ զիշխել  
արեգական 'ի տուէ , և լուսնին 'ի գիշերի ընդ այլ  
աստեղս . իսկ այս իշխելս է կացուցանել տիւ և գի-  
շեր . զի արեգական է տիւ առնել , իսկ լուսնի և  
աստեղաց է զինքեանս 'ի գիշերի յանդիման կացու-  
ցանել , ըստ որում նոքա միայն երեխն 'ի գիշերի 'ի  
պակասիլ լուսոյ արեգական . և այն երեխիլ նոցա  
համարեալ լինի ցուցանել զգոլ գիշերոյ , և 'ի նմին  
իւրեանց գեղեցկութե զգիշերային մթութիւն բա-  
րեխառնեն իբր իշխելով :

Այլաբանօրեն՝ մեծամեծ լուսաւորօք նշանակին ա-  
ռաքեալք , յորս պետրոս և պօղոս համարեալ լինին  
իբրեւ արեգակն և լուսին . իսկ աստեղօք նշանակին

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ե Ւ Ն  
քարողք բանին, ընդ որս և որք, որք՝ի գիշերի կեն-  
ցաղսս իրեւ զաստեզս փայլեցին:

Իւարոյապէս ըստ յիշելս մեր՝ի համարն 6. արե-  
գակամբ նշանակի միտքն, և լուսնիւ յիշողութիւն  
մտաց, որ՝ի գիշերի փորձութեց և նեղութեց ցու-  
ցանէ զինքն: Խակ աստեղօք նշանակին զբայութիք՝  
որք՝ի խաւարի այսինքն՝ի մարմինի ցուցանեն զզորու-  
թի իւրեանց:

Ոստ յարմարութեն, արեգակամբ նշանակի առաքի-  
նութի խոչեմունք, լուսնիւ հանձար. իսկ աստեղօք  
այլեւայլ առաքինութիք: Արդ յետ՝ի մէջ բերելոյ  
մարդարէին զարարչագործութին այ, յառաջ մատու-  
ցանէ՝ի մասնաւորի և զաքանչելագործութիս նորա,  
ասելով:

Ժ. | Ճահար զէքէին եգիստացոց անդրանիօտ իւրովչ հան-  
գերչ. զէ յաւելուեան և ողբը:

Ժամ. | Ճահան զէսրայէլ ՚ի միջոյ նորա. զէ յաւելուեան և ողբը:

Ժը. | Ճյեան բարիք՝ և ՚ի բաղնակ հջոր. զէ յաւելուեան և  
ողբը:

Դ. Հարկանել այ զեգիպտոս և զայլ ազինս՝ որպէս  
եցոյց զվեժժինդիր արդարութիւր իւր առ նոսա, սոյն-  
պէս եցոյց և զողորմութիւր իւր առ իսրայէլացիս. և  
ահա յայս ողորմութիւր նորա հայելով առէ:

| Ճահար զէքէին եգիստացոց անդրանիօտ իւրովչ հանդերչ.  
զէ յաւելուեան և ողբը: Ա. Հյինքն՝ի կամիլ այ հանել  
զժողովուրդ իւր յեղիպտոսէ՝ իրեւ խստացան եգիպ-  
տացիք, եհար զնապէսպէս հարուածովք. և հուսկ  
յետոյ սատակելով զանդրանիկս նոցա յանդրանկանէ  
մարդկան մինչև ցանդրանիկ անտանոց, և ապա եհան  
զիսրայէլացիս. վասն որոյ յարէ:

| Ճահան զէսրայէլ ՚ի միջոյ նորա. զէ յաւելուեան և ողբը: Դ.  
Ճյեան բարիք՝ և ՚ի բաղնակ հջոր. զէ յաւելուեան և ողբը: Ա. Հյ-  
ինքն յետ վերջին հարուածոյ՝ զոր ևտ աւէր եգիպտո-  
սի, եհան անտի զորդիսն իսրայէլի՝ի ձեռն բարձր  
և ՚ի բազուկ հզօր: Աւը ըստ վարդանայ ձեռամբ

Ա Լ Ա Մ ։ Ճ Ա Տ ։

նշանակի ներդործութին, և բազկաւ զօրութիւնն .  
որով անաշխատ կարէ առնել ած զամենայն ինչ, և  
ոչ վաստակի :

Վ Ճ Ա Յ Ս փոխարերուի բանի եթէ հայիցի առ եղիպ-  
տացիս՝ ցուցանէ թէ խստութք և հզօր զօրութք  
եհար զնոսա ած, զի հարուած բարձր ձեռին և հը-  
զօր բազկի խստագոյն է . իսկ եթէ հայիցի առ իս-  
րայէլացիս՝ ցուցանէ թէ ած մեծաւ խնամով եհան  
զնոսա յեղիպտոսէ՝ իբր հզօր բազկաւ թափելով  
զնոսա՚ի ձեռաց թշնամեաց իւրեանց . որպէս որ զօ-  
րաւորն իցէ՝ յափշտակեսցէ զօրդիս իւր ՚ի հըոյ կամ  
յընկղմանէ, և վանեալ զամենայն ընդդիմութիւն  
զերծուսցէ զնոսա . ըստ այսմարար ած և առ աղջն  
իսրայէլի . զի զօրութք եհան զնոսա, և զօրութք  
առաջնորդեաց նոցա, և որք միանգամ ելին ընդդէմ  
նոցա՝ հալեալ մաշեաց զամենեսեան զնոսա . այլ թէ  
զիարդ՝ կարգաւ իմն պատմէ և ասէ :

Ճ Դ ։ **Ճ** հէրէ զժուն մէծ, և բաժանեաց յերիուս մասուն .  
ոչ յառէ :

Ճ Դ ։ **Ճ** անցոյց զիսրայէլ ընդ մէջ նորա . զի յաւիտեսն և  
ողոք :

Ճ Ե ։ **Ճ** հիմնեաց շնորհառն և պարս իւր . զի յաւիտ :

Վ ւանդեն հրեայք՝ ընդ որս և այլք ոմանք ՚ի նախ-  
նի մեկնչաց, թէ յանցանել իսրայէլացւոց ընդ ծովս  
կարմիք՝ ջուրն բաժանեցաւ յերկոտասան մասունս,  
իւրաքանչիւր ցեղի մի մի ձանապարհ գործելով . բայց  
թէ յինչ վկայութի հիմնեալ իցէ այս կարծիք, ոչ զի-  
տեմ . մանաւանդ թէ զսորին հակառակն վկայէ ա-  
ռաջիկայ բնաբանդ համաձայն այնմ որ աւանդի ՚ի  
զիրս ելից . (Ճ Դ . 21 .) թէ այն բաժանումն ջուրց  
ծովու եղել յերկուս պատառելով ՚ի մէջ որոց գնա-  
ցին որդիքն իսրայէլի ը ցամաք . և այն ջուրք կային  
յաջմէ և յահեկէ նոցա իրբեւ պարիսպ . ըստ որոյ  
ասէ և մարգարես :

Ճ Հ հէրէ զժուն մէծ, և բաժանեաց յերիուս մասուն . զի յա-

222 ԱՐԵԿԻՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԵԿԻՆՈՒԹՅՈՒՆ  
ՆԵՐԵԴՆ Է ԱՌՈՒՇԻ : ՕԿՈՎ մեծ ասելով իմանայ զծովն կար-  
միք , որպէս յայտ է յայլոց թարգմանութեց , ևս և  
յերբայականնեն . ուր փոխանակ մեծի դնի սառչ , որ  
է անուն այնը ծովու . զայս ծով է չերձ ասէ՝ որպէս  
թէ եգեալ էր . հրամայեաց ած ծովու տեղի տալ  
իւրում ժողովորդեան , և նա 'ի հրամանն նորա պա-  
տառեցաւ յերկուս , և եթող 'ի միջի ճանապարհ  
առ 'ի անցուցանելոյ ոյ ընդ այն զժողովուրդ իւր :  
Եւ զայս ահեղիմն ձեացուցանէ մովսէս խորենացին  
'ի գիրս պիտոյից . (թ . շ .) յասելն . \* Եւ 'ի վերայ  
, նորա (այսինքն 'ի վերայ մովսէսի ) զայս առնել  
, սքանչելիս , որպէս ինձ երեւեր վարել զգ այական  
, ծանօթութքն . և 'ի պատրաստելն ընդ ինքեան  
, զթագաւորականն ճանապարհ պարսպածե կա-  
, ուուցմամբ 'ի յաջմէ և յաշեկէ հզօրապէս և ան-  
, վթար հաստատութք . այնպէս 'մինչ զի թէպէտ  
, աստի և անտի յողդողդումն ալեացն ամքոխեալ  
, շարժեր , սակայն 'ի նոսին պարիսպ հասանելով  
, երբե զանշարժ վիմի բազիսեալ՝ անդրէն ը կրունկն  
, դառնայը և ընկրկեր : Խօսի ապա մարդարէն և  
զանցիցն ասելով :

Եւ անցոյ զեւրայէլ ընդ հէջ նորա . զէ յառեդն է : (Յ.իւ  
որդւոցն իսրայէլի՝ որք անցին ընդ ծովն կարմիք՝ էր  
բազում յոյժ . վեց հարիւր հազար երիտասարդք 'ի  
քսանամենից 'ի վեր . թող զորս 'ի խոնարհ մինչեւ  
ցստնդ իայսն . թող և զծերս , թող և զկանայս : Օսո-  
սա ասէ զամնեսեան 'ի պատառիլ ծովուն՝ իբրե  
զիսաշն անցոյց ած ընդ նոյն :

Աւանդեն հրէայք թէ յոց համարձակիլ ժողովը-  
դեան մտանել յանցս ծովուն՝ ամինադար եմուտ 'ի  
նոյն կառօք յոր միտ թերեւս ասի . (երգ . կ . 11 .)  
\* եղ զիս իբրե զկառուն ամինադարայ : Խսկ մովսէս  
խորենացին 'ի գիրս պիտոյից . (թ . շ .) ասէ , թէ  
մովսէս յառաջեաց և կարապետեաց 'ի մտանել յայն  
անցմն և \* յառաջադոյն 'ի չետ մեծին մովսէսի ը  
, իւրաքանչիւր պատուականութե յուղի անկեալք  
, ընդ նորոգ փողոց և ը հրաշագործ ճանապարհ :  
գուցէ յետ մովսէսի նախ ամինադար իշխան ցեղին  
յուղայ , և այլք զկնի նորա : Օայս սքանչելի անցս

մեծ ևս եցոյց տրյալներն զփարաւոն . դորմէ խօսի մարդարէն , ի յաջորդ համարն ասելով :

**Բ**ակալառ պատրան և զարք է - ի ծառ է բարձր . զի յաւետ ունեն է ողբ՝ Այսինքն յանցուցանել ուն զիսրայէլա . յիս ընդ ծովն կարմիր՝ իբրև սկնդեցան զՏետ նոցա եղիստացիք՝ զամենեսին զնոսա կորոյս անդ . քանզի ՚ի հրամայէլ նորա ծովու՝ նոյն ծովն՝ որ տեղի ետ ժողովրդեան տն , տեսանելով առ իւր զեդիստացիս՝ և ոչ ճանաւըլով զնոսա՝ իբրև թէ հարցաներ յնոսա թէ ու իցէք դուք՝ որք աներկիւղ վստահիք կոխել զանցս ժողովրդեանն այ . և գրեթէ բարկութք դի մեալ՝ ի վերայ նոցա՝ ընկղմեաց զնոսա : Օ այն տեսաւը իսրայէլայւոց՝ օրհնեցին զած որ արար զայս պիսի սքանչելիս . և ապա նա ինքն ոծ առաջնորդեաց նոցա անկամիլ՝ ՚ի ճանապարհ և գնալ՝ ի տեղին , զոր խոստացեալն եր . վասն որոյ յարէ զկնի ասելով :

**Ճ**շ. **Ճ** է հան պժողովուրդ էւր յանտառար . զի յաւետ ուն է ողբ՝ :

**Ճ**շ. **Ճ** հար զաղքն մէծանձն . զի յաւետ ուն է ողբ՝ :

**Ճ**շ. **Ճ** սկան զնադասոր հացքն . զի յաւետ ուն է ողբ՝ :

**Ճ**շ. **Ճ** սկ ըսկասոր բասանու . զի յաւետ ուն է ողբ՝ :

**Ճ**րալ . սպատմինի գիրս ելից՝ յետ անցանելոյ որդւոցն իսրայէլի ընդ ծովն կարմիր՝ էած զնոսա ոծ յանապատն սուր , որ է յարեւելակողմն հիւսիսյ կարմիր ծովուն , և անտի յանապատն սին , և անտի յանապատն սինայի , և անտի յանապատն փառանու . և յամենայնի եցոյց նոցա զինամն իւր յանջուր և յանթեր անապատն յայնոսիկ , բղիսեցուցանելով նոցա ՚ի վիմէ

զջուր, և տեղալով առ նոսա յերկնից զկերակուր, հովանի լինելով՝ ի վերայ նոցա ՚ի տունքեան, և ըստ առլով նոցա ՚ի գիշերի, և յամենայնի իրբե հայր զթած փայփայելով զնոսա, թէպէտ և նոքա յոմենայնի ընդդէմ դարձան նմա: Արդ հայելով մարդարեն նախ նախ ՚ի յիշատակեալ անապատսդ՝ ասէ:

**Դ**ա է հան սկզբանը բոր յանուպար. զի յասիտեան է ողբը: Վայինքն յորժամ անցոյց ան զիսրայելացիս ընդ ծովին կարմիր, առաջնորդեաց նոցա ընդ անապատս. մինչեւ է ան զնոսա մօտ ՚ի ոսհմանս երկրին աւետեաց,

ուր է հար զօտար ազգս. վասն որոյ ասէ: Այս հար զայդս մեծալեծս. զի յասիտեան է ողբը: Վայինքն աղջ օք իմացեալ լինին այնոքիկ ամենեքին՝ զորս հարին որդիքն իսրայելի. ընդ որս և զթագաւորս շզօրս. սմին իրի յարե զկնի, և ասէ:

**Դ**ա սպան զնագագառս հզըս. զի յասիտեան է ողբը: Վայինքն նոււաճեցոյց առաջի նոցա, և սպան զայնոսիկ թագաւորս՝ որք էին հզօրք քան զիսրայելացիս և ք զոյլ թագաւորս. բայց տկարք յոց իրբե փոշիք աւաջի զորութէն ոյ. իսկ թէ ոյք էին նոքա, յայտ առնէ ասելով:

**Օ** սէհան բագասոր ամորհացոա. զի յասիտեան է ողբը: Այսպէտ և զբազում թագաւորս ետ ան կոխան ժողովրդեան իւրոյ, բայց քանզի հզօրագոյն եզեւ սէհոն թագաւոր ամորհացւոց, զնանախ յառաջ մատուցանէ մարդարէն. (զորմէ աես թուոց. իտ. 24.) և

**Օ** յետ նորա դասէ զովք թագաւոր ասելով: Ազէի նորդառը բասանու. զի յասիտեան է ողբը: Վայինքն որպէս սպան նոր զսեհոն թագաւոր ամորհացւոց, սոյնպէս սպան և զթագաւորն բասանու զովք. (զորմէ աես թուոց. իտ. 33.) սպան ապա և զայլ երեսուն և մի թագաւորս երկրին քանանացւոց, և զերկիր նոցա ետ իսրայելացւոց, վասն որոյ յարէ զկնի և ասէ:

ին . **Ճ**առ զերին նոյս 'ի ժառանգութելի . զի յասելուն է ողբը" .

իւ . **Ճ**առանգութելի իսրայէլի ծառայի եւրոյ . զի յասելուն է ողբը" .

**Ա**յս նոյն է՝ զոր եղ 'ի նախընթաց սաղ . 12 . և զոր անդ 'ի մի համար բովանդակեաց՝ աստ յերկուս համարս բաժանէ , և յառաջնուումն ասէ :

**Ճ**առ զերին նոյս 'ի ժառանգութելի . զի յասելուն է ողբը" . **Ա**յսինքն զերկիրն ամորչացւոց և բասանու , ևս և զերկիրն քանանացւոց ետ ժառանգութիսրայէլացւոց . այս է՝ ետ զի ժառանգեսցեն զայն՝ ոչ իրըև զիրս օտարի՝ այլ իրըև զիւրեանց ստացուած . վասն որոյ յաւելու ասէլ :

**Ճ**առանգութելի իսրայէլի ծառայի եւրոյ . զի յասելուն է ողբը" . **Ի** վերայ 'ի նախընթաց սաղ . փոխանակ ծառայի եղ զըառդ ժողովութ՝ յասելն . \* ժառանգութիսրայէլի ժողովութէն իսրայէլի ժողովուրդ է թագաւորի կամ իշխանի՝ ասի և ծառայ զովուրդ է թագաւորի կամ իշխանի՝ սմին իրի և իսրայէլ որ էր ժողովուրդ ոյ կոչի ևս ծառայ ոյ , միանգամայն և որդի . զի տիրապես խօսելով՝ որդւոյ է մատանել 'ի ժառանգութիսրայէլ ստացուածոց հօրն կամ ազգին : **Ճ**առդ քանզի յետ ազատելոյն ոյ զիսրայէլացիս և տալոյ նոցա զերկիրն այլազգեաց 'ի ժառանգութիսրայէլ նոցին՝ բազում անգամ փըր կեաց զնոսա , 'ի սոսին հայելով յարէ զինի և ասէ :

իւ . **Յ**էշաց զեղ ուէր 'ի խռարհութելի մերսմ . զի յասելուն է ողբը" .

իւ . **Ճ**առ իւնաց զեղ 'ի յեւաց նշանեաց մերսմ . զի յասելուն է ողբը" .

'ի մատանել որդւոյն իսրայէլի յերկիրն աւետեաց՝ յետ իբր ի ամաց սկսան գնալըստ համոյս իւրեանց զամա իրըև ժդք . վասն որոյ և մատնեցան նախ 'ի ձեռոս քուսարսադիմայ , ապա 'ի ձեռոս եղղոմայ , և յետ այնորիկ 'ի ձեռոս յաբինայ , ապա 'ի ձեռոս մադիա .

Ա պրկեաց զմով ի մասայ և շատաց առջ ։  
Վ այս բանք կարեն հայի և յազատութին յայն՝ ո՞՛ի  
ծառայութէ փարաւոնի, կամ ՚ի գերութէ բարե-  
լացւոց զոր և յարմարաբար մարթ է վերածել յօր  
և իցէ ազատութի, և տռաւել և ս յուղատութէ ազգի  
մարդկան ՚ի գերութենէ սատանայի ։ Վ ըդ քանզի  
յայնմ ստենայնի՝ եթէ ՚ի փրկել ոյ զգողովուրդ  
իւր, և եթէ ՚ի խորտակել զթշամիս նոցա՝ եցոյց  
թէ ամենեցուն զկեալն կամի, որոյ ազագաւ և զա-  
մանեսին դարմանէ, սմին իրի յարէ ՚ի վերջոյ մարդա-  
րէն և ասէ ։

ԱՅ. 11 այս էնցիուր ամենայն էնցիուրնեաց . շն յառեւրեան  
է աղբ՝  
Արտվշետե ոչ ինայեաց ած տալ մարդկան զկեանս  
կարօսս կերակրոյ՝ ոչ ևս խնայէ տալ նոցա զկերա-  
կուր՝ և զամենայն որ ինչ պիտոյ է նոցա ի պահպա-  
նութի կենաց , եթէ բարի իցեն , և եթէ չար . որ-  
պահս ասի և ի գործսն . (ԺԵ . 25 .) մասն արտվիկ

առ ի բարեկար ամենայ ի ենդանեաց . ոչ յաս-էտէն է ողոք :  
Ուր կենդանեօք թէպէտ և մարթ է իմանալ զօր և  
իցէ կենդանի , բայց տիրապէտ օ իմացեալ լինին որդե  
մարդկան . որոց ամենն ցուն տայ ած զկերակուր Համ

սբատշանիք . և ոչ սբահանջըէ ինչ փոխարիէն՝ թայց եթէ  
մի գտանել նոյցա առերախտ առ ինքն , այլ ձանա-  
ցէլով զնա՝ խոստովան լինել , թէ նա է՝ որ տայ զա-  
մենայն , և առնել զամենայն . և առ այս յարէ զինի  
և ասէ :

Եւ կազմութեան եղիքը այս եւ բարեպահութեան այս յաւ-  
լու սպառութեան:

Ուսուց սկսաւ մարդարեն՝ նովին՝ վերջայուցանեց աւելուն:

Առաջումնական եղբայրութ այս երթագործի ։ զի յատիգուն է ողբը ։ Կամի ասել ։ զայս ամենայն լուեալ, և յայս ամենայն բարերարութիս ոյց վայելեալ օրհնեցելք զնա, և դու հացարութք զնմանէ, դուշելով առ նա քոյ է ամենայն և ՚ի քէն է ամենայն ։ Խակ զած կոչել երկնաւոր վասն անհաս բարձրութեն նորա է և վասն ընակելց յերկնաս իբրև յաթու փառաց իւրց ։ ուր զերկնաւորսն ևս իմանալի կերակրով նախախնամէ անմաշապէս, որով և փառաւորի ողջորմութի նորա յաւելեան ։

У В. Г. ВОЛКОВЫХ

Ողբագին հառաջանք գերելցոց 'ի բարելոն՝ 'ի յիշել  
նոցա զսիոն, և 'ի կախել նոցա զկտակարանս իւ-  
րեանց 'ի մէջ ուռեաց, միանդամայն և գուշակութե-  
թշուառութե եղովնայեցոց և բարելացոց:

የኢትዮጵያውያንድ ከስራውን የሚያስተካክለ ስምምነት በኋላ መረጃ ይፈጸማል

1 ፩ - ቁጥሩ የመጀመሪያዎች, ማስታ ንዑስኬው ስለመሆኑ • ይ-  
ቀና ያልጠናው ሲሆን ማስታ ሂሳብ ተስፋ : 2 ( ) ፈቃድ መመራው  
ነውያ ተከተሉዋል ሆኖተከተለውን ሲሆን : 3 ( ) በኋላ ስጋፍነትና ቁጥርና  
ይህ ሂሳብ የመጀመሪያው . ቁጥሩ መተካክለ ሂሳብ ስለ  
ማስታ ሂሳብ የመጀመሪያው . ቁጥሩ መተካክለ ሂሳብ ስለ  
ማስታ ሂሳብ የመጀመሪያው . ቁጥሩ መተካክለ ሂሳብ ስለ

U, b, P, t, C, Q, T, P.

Ա ՅՈՒՅԵՐ'ԵՐԴԻՄ ՅԵՄԵՇԵՐԸ  
ձեռագիրս մեր այլեայլ օրինակաւ զբի-  
յերկուս դնի . \* սաղմոս անվերնադեր  
, յերբայցեւոցն 'ի ձեռն երեմեայ . յայլ հինգ ձեռ  
դնի . \* 'ի դաւիթ 'ի ձեռն երեմեայ , աննշան յերբ .  
'ի միում . \* 'ի ձեռն երեմեայ սաղմոս 'ի դաւիթ .  
յայլում . \* սաղմոս 'ի դաւիթ , աննշան յերբ . \* 'ի  
միում ևս միայն \* սաղմոս 'ի դաւիթ . յայլս որպէս  
և 'ի տպ' \* սաղմոս 'ի դաւիթ 'ի ձեռն երեմեայ .  
չէրբայցականն և 'ի քաղդեականն ամենեին ինչ ոչ  
դնի . որոյ վասն ասի , աննշան յերբայցեւոց . չօրի-  
նակս ինչ եօթ' և այլոց ոմանց դնի . \* սաղմոս 'ի դա-  
ւիթ . \* և յօրինակս ինչ \* սաղմոս 'ի դաւիթ 'ի  
, ձեռն երեմեայ :

Յայսմանէ այլեայլ կարծիք յայլեայլ անձանց ստեղ-  
ծանին . յօմանց թէ դաւիթ ասաց զայս սաղմոս . և  
զի համաձայն գտանի այսմ մարգարեւութիւն երեմեայ  
'ի գուշակել զգերութին բարելացւոց , վասն այն ե-  
ղին սմանք' 'ի ձեռն երեմեայ . յայլոց թէ 'ի դաւ-  
իթ ասացաւ , և 'ի ձեռն երեմեայ տուաւ խօրայե-  
լացւոց երգել զայն առ . 'ի սիսոփանս տառապմանց  
իւրեանց . Յօմանց թէ նա ինքն երեմաս յօրինեաց  
զայս' ոչ 'ի գիմաց իւրոց , զի ինքն ոչ եր 'ի բարե-

լոն, այլ 'ի դիմաց ժողովրդ եանն խրայէլիք. և այս  
չե ինչ ընդգետ, զի որպէս 'ի զերիւ անդ ժողովր-  
դեանն երգեաց 'ի դիմաց երուսաղէմի զայն սբան-  
չելի ողբս, սոյնաբէս մարթ էր նման երգել և զայն,  
ևս և զայլս 'ի դիմաց այսոցիկ՝ ողբ կային 'ի զերու-  
թե, ողբաւ նոցա և տաել առ զետս բարելացւոց,  
անդ նստեաբ և լարաբ, և այլն.

Հայլոց եռ աւանդի՝ թէ զայս ասաց մի ոճն՝ ի հոգե-  
կիր անձանց ՚ի զետացւոց անտի կամ ՚ի վերջին մար-  
դարեկից ՚ի դարձի գերութեն խրայ! լի ։ Եթէ այս-  
պէս և եթէ այնպէս՝ այս սաղմոս որպէս և յայտնի  
տեսանի՝ ասի ՚ի բերանոյ վտարելոց ՚ի բարելոն։ որ  
և եր օրինակ վտարելոյ ազգի մարդկան յաւաղելի  
յայս պանդխտութի, և հառաջելոյ նոցա հանապազ  
առ ցանկալին սիհն։

• 1. 10.

ו. פְּנֵי תָּמִיד אֶל-עַמְּךָ יִשְׂרָאֵל וְאֶל-בְּנֵי יִשְׂרָאֵל וְאֶל-בְּנֵי כָּל-הָעָם.

W b u 'b a l s o b b b 'b

Դ գերիւ խօրայէլացւոց 'ի բարելըն' բազումք 'ի նո-  
ցանէ կապեցան 'ի գործ ծառայութեն գերւաց իւ-  
րեանց 'ի վարել շերկեր, 'ի բրել զհող, 'ի տնկել  
զայդի, 'ի խնամել զպարտելցո, և այլն. որոց 'ի վաս-  
տակին յառաւելութե աշխատութեց, նստեալ յե-  
զերս եփրատայ և այլոց ջուրց՝ որք իջանէին 'ի գետ  
անդը, լային աղլիողորմ զթշուտութիւնքանց, յե-  
շելով զառաջին հանդիսատ և զմիիթ արութեն՝ զըր ու-  
նէին 'ի սիսն. նոյնպէս և որք 'ի բազարս բարելաց-  
ւոց նստէին, տեսեալ զիւրեանց վատրանդուի, յոր-  
ժամ յիշէին զսիսն՝ յորմէ տարագրեցան, անբերելի  
թագձութիւն պաշարեալ սգային.

լու զի բնական իման է մարդոյ՝ յըմբռնիւն՝ ՚ի տրտմու-  
թի և ՚ի սուդ՝ խնդըել զամայի տեղի առ. ՚ի թափեւ-

անդ զծանըութիւն տրտմութեն, սոքա ևս յամայութիւն ելեալ բաղմէին առ գետով, 'ի կողմն սիոնի ունելով զեզերս. և ողբային անդէն՝ յոգւոց հանելով 'ի վերայ այնը՝ զոր կրէին, և հառաչելով առ այն՝ յորմէ զրկեալ էին. ուր և 'ի յիշել նոցա զսիոն՝ մորմոքէին սիրտք նոցա, և գելուին աղիք նոցին, արորէին ոգիք նոցա և հալէին ոսկերք նոցին. այս է ահա զոր խօ-

**Ա** սի աստ մարգարէն 'ի գիմաց նոցա, ասելով:

**Ա** գետս բաբելոնց, անդ նստէատ և լայատ, որպէս յեշէյատ մէտ անդ զսիոն: Գետովք բարելացւոց իմացեալ լինի նախ գետն եփրատ, յորոյ վերայ շինեալ էր քաղաքն բարելոն. երկրորդ իմացեալ լինին և այլ գետք մանունք, որք էին յաշխարհին բարելացւոց. որոց ոմանք իջանէին յեփրատ, և ոմանք 'ի տիգրիս: Առ այսոքիւք գետովք ասէ նստեալ լայաք և ողբայաք. և յիշելով զսիոն սգայաք և մաշէաք:

**Ի**սկ բառդ որպէս՝ դնի փոխանակ բառիս մնչ. որով ոչ միայն նշանակի ասել՝ յորժամ, այլև ասել՝ և. ըստ առաջնոյն (այսինքն ըստ նշանակելոյն՝ յորժամ) յիշելն զսիոն՝ դնի իբր պատճառ լալս. որպէս թէ ասէր. 'ի յիշել մեր զսիոն՝ նստեաք յափն գետոյ, և լայաք անդ, թէ զիա՞րդ զրկեալ յայնպիսի տեղւոյ՝ յայսպիսի վայր թշուառութեն անկաք. և այս համաձայն երբայականին, ուր գրի պէջուանէնու, այսինքն 'ի յիշելն: Իսկ ըստ երկրորդին (այսինքն ըստ նշանակելոյն՝ և) յիշելն զսիոն՝ դնի իբր հետեւութիւն, որպէս թէ ասէր. նստեալ յափունս եփրատայ լայաք զերութիւն մեր, և յիշելով զսիոն յոգւոց ելանէաք, իցէ՞ արդեօք՝ զի տեսցուք միւսանգամ զքեզ սիոնդ ցանկալի:

**Ա**յլ բառդ անդ՝ որ կրկնի աստ, յառաջնումն դնի իբր զարդ՝ հանգոյն այնմ որ ասի 'ի սաղ. իք. \* 'ի „ վայրի դալարւոջ՝ անդ բնակեցոյց զիս ||. ուր անդն դնի իբր զարդ: Իսկ յերկրորդումն փոխանակ տեղւոյ, ուր լային վասն զրկելոյ 'ի սիոնէ:

**Խ**որհիլ արժան է աստ, թէ քանի օգուտ երևեցոյց յիսրայէլացիս գերութիւն նոցին. զի յորժամ 'ի սիոն էին՝ կուռս կուհին, զորս և 'ի տաճարի կանգնէին. իսկ 'ի գերել իւրեանց յորժամ յիշելին զտաճարն և

զսիոն, յոգւոց ելանէին, և առանց արտասուաց ոչ  
կարէին առնուլ զանուն նորա 'ի բերան:

Հոգեօրապէօ գետովք բարելացւոց իմացեալ լինին  
աշխարհային իրք՝ այսինքն մեծութեք, փառք, հեշ  
տութեք, և այլն, որք իբրև զգետս հոսեն, և զորս  
յափշտակեն՝ վարեն 'ի ծովն դժոխոց. իսկ ընտրելք  
ո՞ն հանգոյն տարագրելոց և պանդխտելոց՝ նստեալ  
առ այսոքիւք գետովք լան վասն երից. մի՝ վասն  
տեսանելոյ զաղետս բազմաց՝ որք 'ի գետոց աստի  
գահավէժ ածին 'ի դժոխս. երկըորդ՝ վասն տեսա-  
նելոյ զինքեանս 'ի նմին վտանգի, որոյ աղագաւ-  
սգան՝ և զգուշանան, զի մի և ինքեանք յափշտա-  
կեսցին. և երրորդ վասն տեսանելոյ զանձինս իւ-  
րեանց հեռի 'ի վերինն սիոնէ, որոյ յիշատակութեք  
հեծեն և հառաջեն, մորմոքին և հալին. մանաւանդ  
'ի կախել նոցա զկտակարանս 'ի մէջ ուռեաց. զոր-  
մէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով:

Է. ॥ Ա Էջ սուսեաց նոյտ հախեցաւ զէտակարանս մէք :

Ուռի ծառք՝ ( այսինքն սէօյիւատ ) գոլով ջրասէրք քան  
զամենայն ծառս, առ գետովք ուռձանան. և զի  
չունին ինչ բնաւ պտուղ, յօրինակ բերին անպտուղ  
իրաց. յոր միտ և կախիլն իրիք 'ի մէջ ուռեաց՝ փո-  
խաբերի յօրինակ անգործ և անպտուղ մնալոյ այնը  
զորմէ ասի կախիլ 'ի մէջ նոցա. և քանզի իսրայէլա-  
ցիք որք գերեալ էին 'ի բարելովն, նստեին առ գե-  
տովք 'ի մէջ ուռեաց, և կտակարանք նոցա մնային  
անդ անգործ, վասն այսորիկ ասէին :

|| Ա Էջ սուսեաց նոյտ՝ հախեցաւ զէտակարանս մէք : Այսի ա-  
սել. 'ի նստիլ մեր առ գետովք բարելացւոց և 'ի  
լալ մեր անդ 'ի մէջ ուռեաց, կտակարանք մեր ևս  
գըեթէ կային կախեալ զուռի ծառոց՝ այնոցիկ գե-  
տոց. որ է ասել. 'ի կալ մեր 'ի բարելովն՝ անգործ  
և անպտուղ մնային կտակարանք մեր. զի ոչ կարէաք  
կտակարել զայնոսիկ պաշտամունս, որք աւանդին  
յայն կտակարանս :

Պարէ վարդան՝ թէ իսրայէլացիք տարան զգիրս կտա-  
կարանաց, \* զի մի մոռասցին զյանդիմանիչ բանս՝

„ ո՞ր ՚ի նոսա, զո՞ր ցոեկը լովին գերեցան. և զի ինքեանք  
,, անպտուղք ՚ի զոհից և ՚ի պատարագաց էին՝ յայն  
,, սակա յանպտուղ ծառս կախեցին փոխանակ սենե-  
,, կացն՝ որ ՚ի սիօն։ :

Ո՞ւ աստ բառիւս է բառիւս իմանալ և  
զնուագարանս ըստ որում են զործիք երգելոյ զրանս  
կտակարանաց, կամ իմանալ զերգարանս, յօրս պա-  
րունակիեն բանք կտակարանաց: Ո՞ւ պէս և իմասցի՝  
միտ բանին հայի ՚ի ցուցանել զթաղձութի սրտի գե-  
րելոցն, որք զուրկ տեսանելով զինքեանս ՚ի հոգեռո-  
բական խրախութեանց սինոնի և տաճարին ան՝ ու ՚ի  
նուագարանս ցնծային՝ և ոչ ՚ի կտակարանս միիթա-  
րիեն, այլ յամենայնի և յամենայն ժամանակին:

Ըայց գիտելիք է ևս՝ զի սովորմէք ոչ ցուցանի՞ թէ իսրայէլացիք ՚ի գերութեանդ անդ ոչ երբէք ՚ի գործ ածեին զնուագարանս, կամ թէ ոչ երգեին ինչ, այլ թէ բարձեալ էր ՚ի նոցանէ ու բախութի որով ոչ կարեին զըերկրականս նուագել, այլ զտրտմալիս և զցաւայիս:

Հոգեռորապէս, ծառայք տն և ընտրեալք նորա անձ  
կութք կարօտանաց վերին սիսնի հեծելով՝ ի բաց  
լքեալ զաշխարհային ուրախութիս՝ լան յորժաման-  
գործ տեսանեն զկտակարանս տն. և տիրապին հե-  
ծեն վասն ոչ կարելց յաքսորանս յայս նուազել  
զերգս վերին սիսնի, թէ և յայլոց յորդորեսցին՝ ի  
նոյն. զորմէ խօսի մարգարէն՝ ի յաջորդ երկու հա-  
մարմն ասելով:

33

բելացիք փափաքելին լոել՝ ի նորանեւ զայնովիսի երդու  
և յորդորելին զնոսաւ երդել ինչ յայնցանեւ . յայ-

հայելով առեւ :

Ետ հաշուածեն գերեւ մէր շնչառ օրհնութեւ . գերեւածու  
մէր սուեղեն շնչու և առեն , կամի առել . յորժամ' ի  
բարելոն եաք ի գերութեւ , գերիւք մեր սյսինքն  
այնոքիկ բարելացիք , որք զնեցին զմզ 'ի գերեվա-  
րաց մերոց , ցանկանալով լսել զերգութեր մեր , հա-  
նելին ցմեզ . որպիսի են բանք օրհնութեւ ձերոյ , զա-  
րոց զարմանալիս լսեմք . ընդէլը ու երդելք որպիս  
երդելիք յերկը ձերում , զի և մեք լուիցուք և  
այլն . սոյնովես և գերեվարք մեր սյսինքն այնոքիկ  
այլն . սոյնովես և գերեվարք մեր սյսինքն այնոքիկ  
բարելացիք՝ որք վարեցին զմեզ 'ի սիսնեւ ի բարե-  
լոն , թախանձելին և ստիպելին զմեզ . և ամենելին  
առելին :

( ) հանցէս շնչու յօրհնութեւ մէջ : Այսինքն երդեցիք  
մեզ զերգութերութեցն զորանուագելիք 'ի սիսն ,  
և նովին երդով օրհնեցիք զմել , սյսինքն տուք մեզ  
նովաւ զօրհնութեն , կամ մասնակից արարեք և զմեզ  
այնմ օրհնութեւ :

Մմանք աստանօք զայսոսիկ բանս յայլ միտս առնուն ,  
իբր թէ գերիւք և գերեվարք ու եթէ վասն լսելց  
հարցանելին և ստիպելին զիսրայելացիս , այլ վասն  
ծաղը առնելոյ զնոսաւ , և զիծեցուցանելոյ զողիս նո-  
ցա . որպիս թէ ասելով առ նոսա . արդեօք որպիսի՛  
ծիծաղական ինչ են երդք ձեր . ընդէլը ու երդեք  
յանախորժ օրհնութեց ձերոց և այլն . և թէ վասն  
սյսր ծաղու ու երդելին ինչ նոքա . Այսց այս մեկնու-  
թեն ու թուի հաւանական , և ու համաձայն յաջորդ-  
բանին , ուր ու զծաղը բարելացւոց դնեն խափան  
երդելոյ , այլ զօտարութեն իւրեանց ասելով :

Խաւ շիւրտ օրհնուայուած զըհնութեն թն' յերին օտար : Այս  
բան օրպիս 'ի վերոյ ասացաք 'ու ցուցանեւ : թէ իս  
բայելացիք 'ի գերութեն իւրեանց ովինչ երդելին յօրհ-  
նութեն այլ . այլ թէ ու կամելին նուագել զայնս յա-  
կանջս գերւաց իւրեանց . զի այն առաւել և ու դառ-  
նացուցանելք զսիրանոցա . մանաւանդ զի երդք նոցա  
ածային գոլովա՞ անողատշաճ եր հեղուլ զնոսաւ առաջի  
ոլզոց , զի չէ օրեն տալ զսրբութեն շանց և ու արկա-

Հեւ զմարդարիտաս առաջի խոզաց . (մատ . Է . 6) :  
Աւստի և անվայել համարելով նոցա զայն առելին .  
զիարդ մարթ է մեզ յօտար երկրի աստ 'ի մէջ չեւ  
թանոսաց կալով՝ երգել յականիցս նոցա զերդս ան  
այ մերոյ . մանաւանդ զի երգ օտար երգի աստ , և

օտար պաշտէլիք պատուին :

Այլ ծանիթ , զի եթէ այս բան իմացեալ լինիցի իր-  
րե առ բարելացիս ասացեալ , բառդ էթիր օտար՝ առա-  
ջի դնին վասն ոչ վիրաւորելոյ զսիրաս զ երւաց . զի  
եթէ փոխանակ յերկիր օտար ասելոյ՝ առելին 'ի մէջ  
ձեր կամ 'ի մէջ չեթանոսացդ , այս բան կծէր զնո-  
սա . զի դառնայր յանարդուի նոցա՝ իրը անարժանս  
համարելով զնոսա : Իսկ յերկիր օտար ասելով՝ ոչ  
զանարժանութի նոցա , այլ զթշուառութիս իւրեանց  
յայտնէին . օրով յաւելու 'ի գութ շարժէին զնոսա ,  
քան 'ի գրգռութի : Այլ եթէ այս բան առ միմեանս  
ասացեալ համարեցի , ընդ բառիւս օտար՝ իմացեալ  
լինի և անարժանուի հեթանոսաց՝ 'ի լսել զնծային

երգս ըստ մեկնելոյ մեր այժմ 'ի վերոյ :

Հոգեորապէս , ընտրեալքն այ՝ որք քաղաքացիքն են  
վերին սինսի , գիտելով թէ ձմարիտ ուրախութիւն  
երգոց անդ միայն է , 'ի սուզ աքսորանաց կալով ա-  
սեն . զիարդ կարասցուք զերգս ուրախութէ երգել  
յերկիր օտար 'ի մէջ չեթանոսաց այսինքն 'ի մէջ  
այսլափ փորձութէց և տրտմութէց , 'ի մէջ այսքան  
ախտից և վտանգաց : Լւ սակայն երգ են ևս սոքա  
զերգս ան յերկիրի աստ ոչ զի են յօտարութէ՝ այլ  
զի փափաքին լինել օտար 'ի սինսէ , այլ 'ի նոյն ժա-  
մանել 'ի սինս . կամ զի շարժեցեն զփափաք սրտից  
իւրեանց առ 'ի դիմել 'ի ժառանգութի ուրախութէ  
այնը սինսի . և կամ զի մի իւիր թուլասցին , կամ մո-  
ռացօղ երեւսցին :

Այսոքիկ բանք հային և 'ի զգուշութի հոդւոյ և 'ի  
կասկածանս սրտի 'ի խորհին անդ մարդոյ՝ մի ար-  
դեօք ունայնաձեռն գտցի իրը ուսի անպատւդ , և կը  
պատրեսցի յըմակել յուղիսից անօրէնուե կենցազոյս ,  
և կամ զբանս ան 'ի սնոտիս վատնեսցէ . յոր միտս յա-  
ռաջը երեւալ զայն սարդիս չնորհալի ( 'ի մեկն . ը-  
ոլետ . ա . 19 . ձառ . ը . ) ասէ . \* մի յուռիսն կախես-

, զուք զկտակարանս մեր . վասն զի ծառ անպատճ .  
և ուռախն . մի առ գետմն բարելացւոց նստցուք . և  
մի զուղիս անօրենութե ըմսկեսցուք . մի երգեսցուք  
, զերգս տն յերկիր օտար , այսինքն յանիրաւ միտա  
,, և յաղտեղեալ հոգիս || :

Վ. յաղիսի զգուշաւոր ոգի ոչ գտանէ դադար յու-  
նայնութե կենցաղոյս , այլ տարփանօք բերի ՚ի լիու-  
թի երկնային երանութե . ՚ի նոյն հառաջէ , և զնոյն  
խոկայ , և երբեք ոչ մնուանայ . որպիսի եր և փա-  
փաքումն խորայելացւոց յերուսաղեմ քաղաքն՝ ըստ  
որում յայտ առնէ մարգարեն յաջորդ բանիւն ա-  
ռելով :

Ե. Յիշ նուացոյց զնել երաստացէմ . նուացի զիս աշ էմ :

Հ. Այսոյի լոյսու իմ ՚ի տիմս իմ , ին ոչ յեշեց զնել . ին  
ոչ նուի նուստիւցի զնել երաստացէմ , ոչինքն ուրա-  
կասին իմոյ :

\* Կան մոռացութե հայրենեաց համարեալ լինի՝ յո-  
տար երկրի կալով ուրախութի առնել քնարիւք և  
տաւղօք , և զուրախական երգս երգելով ցնծալ և  
պարել . որոյ վո՞ իսկ հարկ եղե ասել խորայելացւոց .  
\* զիարդ օրհնեսցուք զօրհնուիս տն յերկիր օտար || .  
զի այն իրը նշան մոռանալոց երեկը . կամելով ապա  
հաստատել նոցա թէ երբեք չիցեն մոռանալոց զե-  
րուսաղեմ , երդնուն՝ թէ և ոչ զնշան մոռացութե  
ցուցանելոց են՝ հարկանելով զքնարս կամնուագե-  
լով զուրախական երգս . ապա թէ ոչ ասեն՝ տկա-  
րասցի աջ մեր ՚ի հարկանելոյ զքնարս , և կցեսցի լե-  
զու մեր յերգելոյ զերգս : Հայսօսոիկ հայելով մարգա-  
րենն , և եղակի կարգելով զբան իւր , նախ ըստ ա-  
ռաջնոյն իսոսելով առէ :

Ե. Յիշ նուացոյց զնել երաստացէմ . նուացի զիս աշ էմ :  
Կամի առել . ոչ երբեք մոռացայց զբեղ քաղաքդ ե-  
րուսաղեմ , ապա թէ մոռացայց , և սկսայց ուրախա-  
նալ՝ հարկանելով զքնարս և զտուիզո՞ նուացի վ-  
աշ էմ . այսինքն ոչ ես ծառայեսցէ ինձ աջ ՚ի հար-  
կանել զքնարս , այլ որպիս թէ մոռացի զիս , և ոչ

Մ Ե Կ Շ Ո Ւ Թ Ա Խ Շ Ա  
Հնազանգեսցի կամաց իմաց, և ոչ գործեսցէ ըստ  
հաջոյս իմ. որ է ասել. եթէ մոռացայց զքեզերու  
սաղէ, մ' անպիտանասցի աջ իմ՝ ի գործել. խոկ ներ  
քին դիտումն բանին է ցուցանել՝ թէ որպէս ոչ է  
հնար աջու ձեռին մոռանալ զնա՝ որոյ է, սոյնպէս  
անհնարին է խօրայէլացւոց մոռանալ զերուսաղէ, մ'  
որոյ էին : Արկնեալ ապա զերգումն իւր և 'ի վերայ  
լեզուին՝ ասէ :

**Ա**յնոցի լուս իմ՝ ի տիմ իմ, թէ ոչ յիշեցէ չեն: կամի  
ասել. եթէ ոչ յիշեցից զքեզերուսաղէ, այլ մոռա  
նալով զքեզերու ուրախուու զուարձացոյց, կյես  
ցի լեզու իմ՝ ի քիմ, և ոչ տացէ ինձ թոյլ երգել:  
Որդիմրք ոչ ցուցանել, թէ ոչ կամի երգել զօրհնուիս  
ան, այլ թէ ոչ երգեք կամի մոռանալ զերուսաղէ, մ'  
և երգել զայնպիսիս, որք իցեն նշան մոռացութէ.  
այլ միշտ յիշել զնա. որպէս թէ եղեալ էր, թէ ոչ յի  
շեցից զքեզերուսաղէ, երգով օրհնութէ, այլ հա  
ճեցայց զուարձանալ երգով ուրախութէ, համրացի  
թերան իմ յաւիտեան. որով ցուցանել՝ թէ ոչ յիմքը  
ուներ զուրախութի, և ոչ իւիք կամէր ուրախանալ,  
բայց միայն երուսաղէմաւ. և վասն նորա միայն կա  
րէր յայլ ուրախանալ, և զայն միայն ունելով սկիզբն  
ուրախուու իւրոյ՝ միմիթարիլ. վասն որոյ յարէ զկնի  
և ասէ :

Ուն ոչ նուի նոստեցից պեղ էրուսաղէմ, սինըն ռաբանա-  
թէ իմ: կամի ասել. համրացի թերան իմ յերգելոյ  
եթէ՝ ի նուագելս իմ ոչ եղից նախ զքեզ սկիզբն  
երգով ուրախութէ իմայ, որ է ասել. ի նուագելս  
իմ զերգով ուրախութէ զքեզ նախ յիշելով սկսոյց  
երգել. կամ զքեզ զնելով հիմն յերգով ուրախութէ,  
երգեցից վասն քո, և 'ի քեզ ուրախացայց. խոկ ե-  
թէ ասէ այսպէս ոչ արարից, համրացայց և անպի-  
տանացայց :

**Վ**ասն փոքր մի այլազգ ևս կարէ մեկնիլ. այս-  
ինքն եթէ համրացայց, եթէ զայլմէ երգեցից, կամ  
զայլ ինչ քան զերուսաղէ, մինդրեցից վասն ուրախա-  
նացայ. զնա ուրեմն նախ ինդրեցից, և ապա զայլո-  
ւ. և 'ի նա ևեթ միմիթարեցայց, և յամենայն ուրախու-  
թիս իմ նա լինիցի ինձ սկզբնական ուրախանալին

Ա Ա. Պ. ՇԼ. Հ.  
էմ, և յիշատակ նորա եղեցի յիս առաջինն իրբե-  
զըուիք բովանդակ ըերկրութե և հանգստեան իմոյ:  
Ասմթէ դու երուսաղէմ սկիզբն լիցիս ուրախուենս:  
յորժամ վերջ լինիցի եօվ անսամնամեայ գերութես:  
Նոգեօրապէս, այս բանք նկարագրեն զփափաք սըլ-  
տի ընտրելոցն ոյ, "ըք յամենայնի անմոռաց ունե-  
լով զերուսաղէմ մի վերին ՚ի նոյն հառաջեն և զնոյն  
ինդրեն ՚ի յաջողութե և ՚ի ձախորդուե, ՚ի նեղուե  
՚ի հանգստեան, ՚ի ննջել և ՚ի յանել, և ՚ի պատ-  
րաստի են կորուսանել զամենայն քան զցանկալին  
զայն իւրեանց մոռանալ, կամ ոչ նախադասել զիե-  
շատակ նորա քան զամենայն բերկրութի կենցաղցա-  
զի զնա և եթ ունին սկիզբն ուրախութե իւրեանց  
յամենայնի. և յամենայն գործո իւրեանց այս միայն  
է փափաք նոցա, իցէ թէ ժամանեցեն յերուսաղէմ  
յոյն. և լսիցեն ՚ի տնեւ, մուտ յերուսաղէմ յուրա-  
խութի տն քո. (մատ. իե. 21.) և ՚ի կատարածի  
ցնծալից բերկրուցին ՚ի բանն յայն զոր ասելոց է որ.  
\* եկայիք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատ-  
\* ըաստեալ ձեզ արքայունն ՚ի սկզբանէ աշխարհի. (մատ. իե. 34.)

Վիրտք այսպիսեաց հանապազ ՚ի վեր հային. թէ ե-  
՚ի մէջ ալեաց փորձութեց տագնապիցին: Հողամաղ-  
թուունն (ալլ. տօ ասացեալ), շինէ մերձ յափն ծովու  
զոյն զնդակածե. և կարծը, ՚ի վերուստ ունելով  
զծակ մի, և ՚ի ստորէ քար առկախեալ հիւսեալ թե-  
լիւ. ՚ի յանել ալեաց (թէ պէտե տատանեն զնայե-  
րեսս ջուրց, բայց ոչ կարեն չընել և ոչ ՚ի ներբա-  
մտանել, զի ելանէ նա ՚ի վերայ ալեացն. և ծակն  
միշտ ՚ի վեր հայի: Այնպիսի իմն է և սիրտ արդարոյ,  
ունելով զփափաք իւր միշտ ՚ի վեր յերկինս և պահե-  
լով զմիտան առ կախեալ զզ աստութեամբ. և ոչ տայ  
թոյլ մտանելոյ մոլութեց ՚ի ներբա, զայս փափաք  
սրտի ընտրելոց ան լըորդի և սոսկումն ՚ի վերայ ոյ-  
նոցիկ՝ որք մերժեալ լինելոց են յերուսաղէմէ անտի  
վասն մերժելոյ նոցա զարդարութի ընտրելոցն. զո-  
րոց և իսօսի մարդարեն ը անուամբ օրդւոցն եղով  
մայ և բարելացւոց՝ այժմէն գուշակելով զոր հան  
գերձեալ էին կրել յայնժամ. վասն որոյ ասէ,

Յ. Յ է շ ն ա մ ա լ ա զ ի ն ։ Ե ր ո ւ ս ա ղ ե մ ի ։ ո ր դ ի բ ն ։

Հ. Ո վ ա կ ա մ ա լ ա զ ի ն ։ ա մ ա կ ա յ ե մ ։ ա մ ա կ ա յ ե մ ։ մ ի ն լ ։ ի հ ի ն ։ հ ա ս ա յ ե մ ։

Դ. գ ա լ բ ա ր ե լ ա ց ւ ո ց ։ ի վ ե ր ա յ ե ր ո ւ ս ա ղ ե մ ի ։ ո ր դ ի բ ն ։  
Ե ղ ո վ մ ա յ ։ ո ր ի ի ն ո ր դ ի ք ե ս ա ւ ա յ , փ ո խ ս ա ն ա կ ց ա ւ ա-  
կ ի ց լ ի ն ե լ ո յ ի ս ր ա յ ե լ ա ց ւ ո ց և օ գ ն ե լ ո յ ն ո ց ա յ ի բ ը ե լ ։  
Ր ա ր ց , ձ ե ռ ա ն ա տ ու ե ղ ե ն թ շ ն ա մ ե ա ց ն ո ց ա ։ ա յ ս ի ն ք ն ր ա-  
բ ե լ ա ց ւ ո ց , և յ ո ր դ ո ր ե ի ն զ ն ո ս ա թ շ ո ւ ա ւ ա ց ո ւ ց ա ն ե լ ։  
զ ի ս ր ա յ ե լ ա ց ի ս և կ ո ր ծ ա ն ե լ զ ք ա ղ ա ք ն ո ց ա ։ ո ր պ է ս  
տ ե ս ա ն ի ա յ ս ։ ի մ ա ր գ ա ր ե լ ո ւ թ ե ա ր դ ի ո ւ ։ (ի հ ա մ ա ր ն ։  
1. և 6. և 10--14.) և ե ղ ե կ ։ (ի ե ւ 12--14.) զ ո ր մ է  
խ օ ս ի և ե ր ե մ ի ա (ժ ը ւ 6.) Օ գ ո ր ծ ս ս ո ց ա յ ի շ ե ց ո ւ-  
ց ա ն ե լ ո վ մ ա ր գ ա ր ե ի ն ա ռ ա ս ն ի ն ո յ ։ կ ա մ ի յ ո յ ա տ ա ն ե լ ,  
թ ե ւ ա յ ն ա մ ե ն ա մ ն ծ թ շ ո ւ ա ռ ո ւ թ ի ւ ն գ ե ր ո ւ թ ե ։ յ ո ր  
ա ն կ ա ն ի ս ր ա յ ե լ ա ց ի ք , ո չ զ ի ս է ր ն ո ց ա ։ ե թ ե ւ ե ղ ո վ-  
մ ա յ ե ց ի ք չ է ի ն լ ե ա լ ձ ե ռ ա ն ա տ ու բ ա ր ե լ ա ց ւ ո ց . բ ա յ ց ք ա ն-  
զ ի ն ո ր ա ս ո չ մ ի ա յ ն ե ղ ե ն ձ ե ռ ա ն ա տ ո ւ , ա յ լ ւ զ ր դ ո ւ ի ։  
վ ա ս ն ա յ ս ո ր ի կ շ ա ր ժ ե ց ի ն զ ն ա ։ ի վ ր է ժ ի ն ո ր ը ո ւ թ ե ։ ի վ  
վ ե ր ա յ ա ն ո ր է ն ո ւ թ ե ի ւ ր ե ա ն ց ։ Օ ա յ ս կ ա մ ե լ ո վ ց ո ւ-  
ց ա ն ե լ մ ա ր գ ա ր ե ի ն ։ ա ս է ։

Յ է շ ն ա մ ա լ ա զ ի ն ։ Ե ր ո ւ ս ա ղ ե մ ի ։ լ յ ս  
ա մ ե ի ն ։ ա մ ա կ ա յ ե մ ։ մ ի ն լ ։ ի հ ի ն ։ հ ա ս ա յ ե մ ։ յ ի շ ե լ ն  
ն ո յ թ ե պ է տ և հ ա ս ա ր ա կ օ ր է ն ը ս ա բ ի ն ա ռ-  
ե ա լ լ ի ն ի ։ ի ն ր զ ի ր ս , բ ա յ ց ե ր ր է մ ն և ը ս ա պ ա տ ժ ո յ  
։ ի գ ո ր ծ ա ծ ի ։ յ ա յ ս մ ի տ ա ռ ե ա լ զ յ ի շ ե լ ն ։ ս ո վ ի ն ո չ  
խ ն ո ր է մ ա ր գ ա ր է ն ։ զ ի ն ա ծ պ ա տ ժ ե ս ց է ։ զ ո ր դ ի ս ն ե-  
ղ ո վ մ ա յ , ա յ լ զ պ ա տ ժ ի ն ո ց ա յ ։ յ ա յ տ ա ր ա ր ա կ ա ն  
բ ա ն ի ք ո ւ շ ա կ է ։ մ ի ա ն գ ա մ ա յ ն և զ պ ա տ օ ւ թ ե ։ ո ր դ-  
ւ ո ց ։ ի ս ր ա յ ե լ ի կ ա մ ի փ ո ւ թ ա ց ա ն ե լ ։ ո ր պ է ս թ ե  
ե ղ ե ա լ է ր , զ ո ւ զ ի տ ե ս տ է ր ։ թ ե զ ի ն չ զ ո ր ծ ե ց ի ն ։ ի  
մ ե զ ե ղ ո մ ա յ ե ց ի ք ։ ի ժ ա մ ա ն ա կ ի ա ն ո դ ։ յ ո ր ժ ա մ զ ե ր ե-  
ց ի ն զ ն ա զ բ ա ր ե լ ա ց ի ք յ ե ր ո ւ ս ա ղ ե մ ի ։ զ ի ա ր դ զ ր գ ո ւ ի ն  
զ ն ո ս ա ։ ա ս է ի ն ։ մ ի ո ղ ո ր մ ի ք ա ն ձ ա ն ց ն ո ց ա ։ և մ ի  
ի ն ա յ ե լ ի ք ։ ի ք ա ղ ա ք ն ո ց ի ն , ա յ լ ք ա կ ե լ ո վ ք ա կ ե ց է ։ և  
մ ի ն չ ե ։ ի հ ի մ ի հ ա ս ո ւ ց է ։ լ յ ւ ա ր դ տ է ր ։ զ ո ւ ո ր ո չ  
ե ս թ ա ղ ո ց զ ն ո ս ա ա ն պ ա տ ի ժ ։ մ ի և զ մ ե լ թ ո ղ ց է ։

միաւ ՚ի պատիվ զերութե՛ն, ոյլ այց արա մել ըստ  
ողոքմութե՛քում, ՚Կարծուցեալ ասլա մարդարելին  
զբան իւզ առ բարելացիս ասէ,

Ե. Պահանջման բարեւացուց նշանակած էն. Երանէ ո՞յ հա-  
ռայ չհաստից առ առ առ մել հարուցիք :  
Դաստիք բարեւացուց կոչեւ զբարեւոն քաղաք կամ  
զժողովուրդն բնակեալ ՚ի բարեւոնք . քանզի ՚ի որ  
զիրս ՚ը և իցէ ժողովուրդ՝ որպէս և քաղաք՝ դուստր  
կոչեւ ազգին՝ կամ գաւառին : Առ զի ժողովուրդու  
սյս թշուառացոյց զժողովուրդն իօրայէլի՛ ինքն և ո  
մասնեցաւ ՚ի յետին թշուառութի՛ . քանզի եկեալ  
կիւրոսի ՚ի վերայ նորա եհար չարաւար , և մերկա-  
ցոյց զնա յամենայն փառաց նորա , և եարի ընդ իշխա-  
նութիւն պարսից . որպէս զբեն արտաքին պատմիւք .  
ընդ որս և զանիէլ . (Ե. 31.) ըստ որում և զուշ-  
կեալ եր եսայի . (Ճ. 1-19 : և Ճ. 1-7 : ) և  
երեմիա . (Ճ. 9-46 : ) Օայօսսիկ կամելով յայտ-  
նել մարդարին՝ առ :

Դաստիք բարեւուաց թշնամին : Կամի տաել . մվ  
թշուառական ժողովուրդ բարեւունի , դու որ այդ-  
պէս անողորմ գտար առ որդիսն իսրայէլի՝ միթէ-  
անպարտ վճարեսցէս . տես թէ քանի չարիք վրէ . ժ-  
ինդըութե հասցեն 'ի վերայ քո . և 'ի հասանել  
չարեաց՝ որչափ թշուառասցիս դու , այնչափ երանի  
տացի նմա որ թշուառացոյ զքեզ . և առ այս յարի  
և առ :

Հյանէ որ հստայց շնորհաւածն ու՝ զըզ դու եւ հստայեց։  
Ծառդ երանէ՝ ոչ ցուցանէ աստ զջմարիտ երանուի,  
այլ զբարեթաղցութի այնք՝ որ արացեց զայս, այն է  
կիւրոս. որպէս թէ առելք. այնչափ մեծ համարեալ  
լիցի հատուցումն քո սվ բարելոն, մինչև երանի տալ  
մեղնմա այսինքն կիւրոսի՝ որ զայն հատուցումն հա-  
տուցեց քեզ, ըստ որում դու հատուցեր մեղ. և ե-  
թէ առաւելուցու ևս նա ի հատուցաննելքեզ, առա-  
ւելուցու և յերանուեւ։ Ծառդ երանէ՝ կարէ առեալ  
լինել աստ արձակապէս. որպէս թէ եղեալ եր. երա-  
նի, զի հատոյց ած զհատուցումն քո. ըստ սմին մարթ  
է իմանալ զօր զնէ ՚ի յաջորդ համարն ասելով:

Ժ. Արտանի որ հալաւ զմանկունս չո , և էհար զժաբի :

Դ մարգարեանալ եսայեայ զվրեժինդրութե բարելացւոց ասացեալ եր , \* զորդիս նոցա ( այսինքն ըա „ բելացւոց ) առաջի նոցա սատակեսցեն || . և դարձեալ , թէ \* որդւոցն ձերոց մի ողորմեսցին , և 'ի ման , կունս ձեր մի խնայեսցէ ակն նոցա || . ( եսայ . ժկ . 16-19 : ) Եւ քանզի 'ի լրման այսր գուշակութե հասեալ լինէր վախճան գերութե իսրայէլացւոց , յայս հայելով ասէ մարգարէն :

Արտանի որ հալաւ զմանկունս չո , և էհար զժաբի : Այամի ասել . երանելի լիցուք՝ եթէ կատարեսցի . գուշակութե մարգարէութեն 'ի քեզ ով բարելոն , որպէս և կատարեցաւ իսկ . զի եկն 'ի վերայ քո կիւրոս , և կալեալ զմանկունս քո եհար զքարի . որով և նա ինքն իբրև բարեբախտ գովի 'ի մէնջ , և երանի :

Այս ոՃ՝ այսինքն է հարկանել զմանկունս զքարի՝ ոչ միշտ ցուցանէ զիրօք այնպէս լինելն , այլ յայտառնէ զանխնայ հարուած մանկանց : Իսկ մանկամքք իմացեալ լինիննախ՝ ժողովուրդք բարելացւոց , զորս եհար կիւրոս . երկրորդ՝ իմացեալ լինին տղայք որոց այսպէս հարուածիլ թէպէտ պարզապէս խօսելով չէ արժան , զի նոքա անմեղ գոլով ոչ անկանին ընդ այսպիսի պատժովք , սակայն յորժամ'ի վրեժինդրութե չարեաց լինիցի , կարէ արժան ևս ասիլ՝ հայելով ոչ յայն՝ որ լինի , այլ յայն՝ որոյ վասն լինի , մանաւանդ ուր հրաման արարչին ևս ազգեսցէ :

Այլաբանօրէն բանք այսոցիկ չորից տանց հային 'ի վրեժինդրութի թշնամեաց եկեղեցւոյ . զի բարելացւովք իմացեալ լինին հեթանոսք , իսկ եղովմայեցւովք հրեայք , որք 'ի դիմել հեթանոսաց 'ի վերայ ժողովրդեանն քո՞ի՝ գրգռիչ եղեն նոցա . որպէս և հանապազ գրգռեն զնոսա՝ քակելով քակել զերուսազմ այսինքն զեկեղեցի ոք , և 'ի հիմանց բառնալ , զի հրեայք ինքնին անձեռնհաս գոլով յայս հեթանոսաց լինին ձեռնուու և յորդորիչ :

Օ այս արարին և 'ի տէր մեր , զի ինքեանք ոչ կարելովսալանանել զնա խաչիւ , զհեթանոսս գրգռեցին ,  
Ժ.Ե.

և ետուն՝ի խաչ հանել զնա : Այսպէս ջանացան առնել և ընդ աշակերտս նորա . զի զյակոք և զպետրոս մատնեցին հերովդի . սոյնպէս և զպօղոս կամեցան պարտաւոր մահու ցուցանել 'ի հռովմ . ( տե՛ս և 'ի դործ . ժկ : )

Վ. Ա. սակայն հեթանոսք՝ որք յանգետս գործելով հատուցումն չար կամէին տալ քրիստոնէից , հատուցումն բարի ընկալան 'ի նոցանէ . վասն զի բանիւ նոցա թողեալ զմեռելութի պաշտաման կոոց՝ մեռան մեղացն , և կենդանացան արդարութե ըստ առաքելոյն ( հռովմ . կ. 2 : ) Եւ սոյն այս առաւելապէս պատահեցաւ մանկանց նոցա՝ այսինքն այնոցիկ որք պարզամիտքն էին 'ի մէջ նոցա . առ որս հայեցեալ երանի տամք այնոցիկ որք կալան զայնոսիկ մանկունս և հարին 'ի քար , այսինքն 'ի քո 'ի վէմն կենդանի :

Խսկ զազգն անադորոյն նուածեցոյց առանց ներելոյ նոցա և առանց թողլոյ զմեզս նոցին : Բարոյապէս , բաբելացւովք իմացեալ լինին դեք , և եղովմայեցւովք ախտք մարմնոյ . դեք գերեցին զմեզ , և մարմնոյ ախտք ձեռնտու եղեն նոցա : Վ. Ա. օծեալն ո՞ն հատոյց նոցա զհատուցումն՝ և կալեալ զմանկունս նոցա . այսինքն զչար խորհուրդս զորս ծնանին նոքա 'ի մեզ , եհար և հարկանէ զքարի , այսինքն զհաւատոյ , զյուսոյ , և զսիրոյ . և 'ի հարկանիլ նոցա այսպէս՝ ստիպին ինքնին փախչիլ աղաղակելով . \* փա „, խիցուք՝ զի տէր պատերազմի ընդ նոսա || . և 'ի փախչիլ նոցա՝ թօթափէ տէր զնոսա 'ի ծով . ( Ելից . ժկ . 25 . ) ո՞պ գոչէ մովսէս . \* տէր տայ պատերազմ „, ընդ ձեր , մի երկնչիք || . վասն զի \* պահէ տէր „, զերկիւղածս իւր 'ի փորձութէ , և փրկէ 'ի չա „, ըեաց || . ասէ սիրաք . ( Գլ . 1 : )

Վեք ևս կալեալ զայսպիսիս , ևս և զմանկունս , և առաւել ևս զնախծինս՝ հարցուք զվիմի , 'ի մտածելն անդ զզօրութի չարչարանաց կենդանի վիմին քոփի . որ է ասել . խորհելով զչարչարանս քոփի և զհեղումն արեան նորա վասն մեր՝ յաղթեսցուք ո՞ր և իցէ ախտից և իշխանի նոցին այսինքն սատանայի . Ը որում ասաց յովհաննէս զոքք , թէ \* նոքա յաղթեցին նմա

„արեամբ գառին, (այսինքն ապաւինելով՝ ի հե-  
„զումն արեան նորա), և բանիւ վկայութե նորա.  
„և ոչ հաճեցան ընդ վիշտան մինչև՝ ի մահ։ (յայտ  
ժը. 11:)

Ասացի նախ՝ զմանունս, ըստ որում մանկունս դնէ.  
որով նշանակին ախտք մանունք. իսկ որ յաղթէ մա-  
նունց՝ զօրանայ յաղթել և մեծաց. և որ տկարանայ  
՚ի մանունց՝ յաղթի ՚ի մեծաց. մանունք թէպէտե  
չերեխն, բայց ապականեն զվարս. զորոց (ասի. երգ.  
ը. 15) \*կալարուք մեզ զաղուեսունս փոքունս ապա-  
„կանիչս այգեաց։ այն փոքունք են, բայց մեծա-  
պէս մնասեն. փոքրիկ ծակ բացեալ յանօթ, թորի  
հիւթն որ ՚ի նմա։ Փոքրիկ իմն է նաւակալ ձուկն՝  
որպէս ասենն, այլ նահանջէ զնաւն յընթացից. փո-  
քրիկ իմն է խայթոց կարծի, և չարաչար կոկծեցու-  
ցանէ. փոքրիկ իմն է որդն, յանկանիլն ՚ի կերակուր  
զվուելի առնէ։ Ապա պարտ է ունել այսինքն կալ-  
նուլ զփոքրկունս մնասակարս, և սատակել զնոսա։  
Ասացի երկրորդ զնախծինս, որով նշանակի եթէ  
առաջինն յախտից, և եթէ սկզբնաւորութի նոցին։  
Եթէ զնախնին սպանցես, և եթէ զիւրաքանչւրոց  
զսկզբնաւորութի հարցես և խորտակեսցես, ազատիս  
՚ի բռնակալութէ զիւաց, ՚ի մեռանիլ նախծին զա-  
ւակաց եգիպտոսի՝ ազատեցան որդիքն իսրայելի։  
(Ելից. ժը. 29.) Եթէ դու տկարանսաս՝ ապաւինեա՛  
՚ի զօրութի վիմին, և ՚ի զօրութի գաւաղանի նորա-  
նը խաչին. նա հարցէ նովաւ. և ապրեցուսցէ զքեզ  
ևս և զօրացուսցէ, առ ոտս հարկանել զնոսա, և կո-  
խելով զնոսին վերանալ ելանել յիմանալին երուսա-  
լէմ, և անդ ցնծալ յաւիտեան։



## ՍԱՀՄ ՃՎ. ՃՎ:

**Ը**նորհակալութե առ ած վասն ողորմութե և շշմարտութե նորա, և հրաւիրումն թագաւորաց յօրհնութե այ. միանդամայն և ցոյց մեծութե և բարձրութեն այ. ընդ նմին և յուսագրութե ապաւինելոյ յած և ազատելոյ յամենայն վտանգից :

Ապահով ՚ի դաւելու :

**1** **Խ**ոստովան Եղեց ժեղ աէր՝ Բոլորով սրբիւ իմով. առաջե հրեշտակաց սաղմոս ասացից ժեղ։ 2. **Օ**չ լուսր զբանս Բերանոյ իմոյ. Երիեր պագեց ՚ի պամար պբ չո. և խոստովան Եղեց անուան չում վասն ողորմութե և ճշմարտութե 3. **Ո**ւծ արարեր յամենայնի զանուան պբ չո. յորում առուր հարդամ առ ժեղ, վաղվաղահի լուր ինչ. և բաղում արասցիս զօրութես յանչն իմ։ 4. **Խ**ոստովան Եղեցին առ ժեղ ամենայն Ռագաւորք Երիեր, զե լուսն զբանս Բերանոյ չո, և օրհնեացին զմանապարհու չո։ 5. **Ո**ւծ էն ժառա թե. Բարձր է աէր. զետոնարհու պեսանէ, և զբարձունս ՚ի հետասպանէ մանաչէ։ 6. **Ժ**իւ գնացից Է՞ ՚ի քջ նեղութեց, ինցուացիս զիս ՚ի Բարիութե Ռշնամույն։ 7. **Ջ**գեցեր զբեռն չո և ժրիեաց զիս աջ չո. և աէր հապուսցէ ընդ իմ։ 8. **Տ**ը ողորմութեն չո յաւետեան. զգործս Յեռաց ժոց մի անդէս առներ։

4. b p 'b p q p.

11-2560-72-7-2-10

**Թ** ԹԱՐԱՊԻ ԽԵՕԹՈ Դ ՀԱՅՈՐԴԻ  
օրինակոն դնի ՚ի վերնագրիդ յաւելուած  
անուանցս անգեայ և զաքարիայ , որ ոչ  
գտանի ոչ յերբ և ոչ ՚ի քաղդդ , ոչ ՚ի լատ և ոչ իսկ  
՚ի նախնի մեկնիչս յունաց . ռևսաի երեկի թէ ՚ի յետ  
նոց ունաց եղեալ իցէ այդ . յերբ դնի միայն ՚ի դա-  
փիթ . Վայ թէ երբ և յորմէ իցէ ասացեալ այս ասպ-  
մուս , և յինչ առթէ , այլեայլ կարծիք են . ունանք  
տան անգեայ կամ զաքարիայ՝ յօրինեալ յետ դարձի  
գերութեն՝ յորժամյամնայն կողմանց անդ որբացան  
որդիքն խօսայլի յերկրի իւրեանց .  
Վայք տան եղեկիայ արքայի՝ յետ խորտակման զօ-  
րացն սենեքերիմայ , յետ առողջանարոց ՚ի հիւանդու-  
թէ իւրմէ . Խակ այլք տան դաւթի , իրը թէ յետ  
ազատելց նորա ՚ի ձեռաց սառուղյ և ՚ի յարձակ-  
մանէ թշնամեաց ասացեալ իցէ զայս , յորժամյա-  
զաղոյաւ ՚ի թագաւորութէ իւրումն իւր և հրաւի-  
րէ զմի ըմակայ թագաւորս և զիշխանս իրըն զկիայս  
պրանչելեացն ոյ՝ ՚ի խօստովան լինել նմա . և այս  
կարծիք թուի հաւանական քան զայլս .  
Օ այս սաղմոս՝ սովորութի է եկեղեցւոյս հոյոց ա-  
սել յերեկոյի կիրակամտից ընդ մէլք . սաղմանին ,  
որ սկսանի . \* Վաս օրհնեցիք և այլն ։ զորոյ անմի-  
ջապէս զինի յարեմք զայն զայս նէ սաղմոս , վասն  
յիշատակեալ լինելց ՚ի սմա տաճարին ոյ , որպէս և  
անդ . ես և վասն խօստովանութէ փառացն ոյ՝ զոր  
՚ի կիրակամուտս հաշակեմք ՚ի պաշտամունս . Օ այս  
համառօտիւ ծանուցեալ մատիցուք ՚ի մեկնութի :

• 100 •

W b W b W b W b

Պ մատչիլ առա մարդ արեն ՚ի խոստովանութեն գունքութեն առաջի ոյ՝ խոստանայ ընծայել զնոյն իբրև զպատարագ ընդ ունելիք . և զի առ այսպիսի խոստովանութեն պահանջի և յորդոր ըոլորանուելը սրտի , և զգաստութեն մատց հանդերձ պատկառանօք , ՚ի մին հայելով զնէ՝ բոլորով սրտիւ , և ՚ի միւսն հայելով յաւելու առաջի հըեշտակաց . ուստի ըստ առաջնոյն առէ :

|| Եսաստածն եղէց անը ուրի բազմով սրբեա իմաւ. Վ. յանինքն  
մատուցից քեզ պատարագ օրշնութեա ոչ եթե, բե-  
րանով միայն, այլև սրտիւ, և այն ոչ եթե. մասամբ  
սրտիւ, այլըլուրութեա նորին: Աթով ցուցանեւ թէ ՚ի  
խոստպվան լինելիւր առ անձ՝ ոչ ուներ զսիրան յայս  
կամ յայն տարածեալ կամ յայլ ինչ հակամիտեալ,  
այլ միայն յանձ հաստատեալ և ՚ի նա բորբռքեալ, և  
իրըն բոց ուղղակի առ նա ցոլացեալ. ՚ի մէջ բերե-  
ապա և զայն՝ որ հայի ՚ի զգաստութիւն մատց՝ ա-  
սելով:

Ղազակի հրեւլսություն առնես առաջից տեղ։ Ղւաճնդութիւն  
էր՝ 'ի մէջ հըեւից՝ թէ՝ 'ի տաճարի տն կային բազմու-  
թէք հըեւտակաց՝ 'ի յարգութիւնի տապանակի տն, և  
'ի պահպանութիւն սպասուց նորին, 'ի նպաստաւորու-  
թիւն պաշտօնելից և 'ի մատուցումն աղօմէից ժողովը-  
դեանն առ ած։ Օսոյն աւանդեն և որ հարք վ՛ս  
եկեղեցեաց մերոց՝ մանաւանդ յաղօթել մեր՝ 'ի նո-  
սուա, և 'ի պաշտամունս մատուցանել։ Քայսովիսի ըն-  
թէրակայութիւն հըեւտակաց հայելով մարգարինն  
խոստանայ առաջի նոցա սազմու ասել տն որով ցու-  
զանել նախ։ թէ՝ 'ի սազմուսելն զայնպիսի բանս ունի

246 Ա է Կ ՞ Ա Ռ Ւ Տ Ե Ռ Ա  
ասել՝ որպիսի վայել էր զերապահնձ մեծութե լսո-  
ղացն այսինքն հըեւտակաց . և այն այնպիսի զգաս-  
տութք և պատկառանօք, որպիսի արժան էր ունել  
առաջի այնպիսի ոքանչելաւուք իշխանաց՝ որք համին  
ուշադիր լինել թէ զինչ է՝ զոր առե սազմոսովն :  
Չուցանէ երկրորդ՝ թէ ի սազմոսելն յօրինակ առ-  
նու զօրշնութիւն հըեւտակաց, և ըստ նոցին փափա-  
քի ուղղութք սազմոսել առ առ :

Վ ըդ յոյց է թէ՝ որ ունի զայսպիսի համարումն՝ ի  
սազմոսելն, և զնէ ՚ի մտի թէ ներկայացեալ է յայն-  
պիսի տաեան՝ յորում կան բազմութէք այսպիսի զե-  
րագոյն զօրութեց՝ որք լսեն զբանս նորա և ՚ի միտ  
առնուն զնոսին . ևս և գիտէ թէ տեսանեն նորա  
նաե զանկատարութիւն վարուց իւրոց և զտգեզութիւն  
շարժմանցն, այնպիսին առաւելապատիկ իմն զգաս-  
տութք և պատկառանօք ամփոփեալ պաշէ զանձն  
իւր ՚ի սազմոսերգութե . և ահա յայսպիսի հանգա-  
մանս ունելով մարգարեին զանձն իւր ՚ի սազմոսելն՝  
համարձակի ասել թէ առաջի հըեւտակաց սազմոս  
ասացից քեզ :

Ամանը ՚ի ձեռն հըեւտակաց իմանան աստ զբահա-  
նայս և զսարկաւագունու . ըստ որում քահանայք և  
սարկաւագունք հըեւտակը կոչին ուրեք ուրեք ՚ի  
դիրս . (ա. կօր ժամ. 10.) և ահա սոքիմք և տառ  
ջի սոցա խօստանաց գոհանալ զայ : Օ այս այսպէս  
եգեալ մարգարեին՝ մատուցանէ և զարիթն իսու-  
տովանութե հանգերձ այլով իմն խօստովանութք ,  
և ասէ :

Ը . **Օ** է ըստ զբանս բերանոյ ինոյ . երիբ պատիշ ՚ի սո-  
մանը ուր ու, և խօսումն էլլէց անուան ուսմ վասն  
ուսումնունք և ձշմորութիւն ուոյ :

Լ անը ոյ ոչ այլ ինչ ցուցանէ ասա՝ բայց եթէ հա-  
միլ նորա ընդ բանս ազօթից, և կատարել զինդ-  
րուածան որք պարանակին յաղօթսն անդ, որպէս  
այլուր ևս ասացեալ է մեր . յոր միտս խօսի և աստ  
յասելն :

Օ է ըստ զբանս բերանոյ ինոյ : Ի այս բան կրկնակի յա-  
ըք ՚ի նախընթացն . մի՛ իբրև պատճառ վատահանա-

լոյ, և մի ևս՝ իբրև պատճառ գոհանալոյ. ըստ առաջնոյն կամի ասել, ես ու կարելի վատահանալ՝ կալով առաջի հրեշտակաց սազմոն ասել քեզ, եթե ու զիակի թէ զիջանիս լսել աղօթից թշուառացելոյս, որպէս և լուար իսկ, որով և վատահանցուցեր զիս սաղմոսել:

Բայտ երկրորդին կամի ասել. որովհետեւ լուար աղօթից իմոց, և կատարեցեր զինդրուածս իմ, գոհացայց և ես զքէն՝ հռչակելով առաջի մարդ կան և առաջի հրեշտակաց զերախտիս բարերարութեւ և մարդասիրութեւ քո. Որովհելով ապա և զպատշաճուոր աեզի գոհանալոյն ասել:

Երեսուագիշ 'ի սամաց սէ ոչ : Որպէս 'ի վերոյ 'ի մշջ բերելով զնքեշտակս՝ եցոյց շնանդամնս սազմնասայն յարժանապատուութեւ լսողաց, սոյնովէս և աստ առաջի առնելով զտահարն կամի ցուցանել զնոյն 'ի սրբուե տաճարին. իբր թէ ասէր. մասնելով 'ի տաճար որ քո՝ զայնովիսի աղօթս մատուցից քեզ՝ զորպինի պահանջէ սրբութի աեզոյն հանդերձ երկրոպագութիւն:

Հասել մարդարեն զայյա բան՝ զիտէ յայտ առնել միանդամայն և զպատեհաւոր տրամադրութիւն մարմնոյ յազօթեն. զի երկիրպագաննելն արտաքսապէս առեւալ պատկանի 'ի զիրս մարմնոյ. նոյնովէս և մուտ տաճարին. Իսկ հայելով 'ի սպարտաւորութիւն բարեոք տրամադրութիւն հոգւոյ առաջի առնել իբր զնիւթ զողորմութիւնն ոյ և զնչմարտութիւնորա՝ ասելով:

Ես իստուածն էից առանձ ում կան ողբեաթեւ և ճշմարտութեւ ոչ : Ույսինքն մեծացուցից և հռչակեցից լանուն քո, նիւթ ունելով այսր մեծացուցման զողորմութիւնն և զնչմարտութիւն քո. իբր 'ի փառաւորելու իմ զանուն քո ասացից. մեծ է ողորմութիւն վեհան, և անսատելի է չնմարտութիւն բանից և խոստմանց նիք. զի զոր չնմարտութիւն խոստանայ, ողորմութիւն կատարէ. և զոր յողորմութիւն իւրմէ կամի, 'ի չնմարտութիւն իւրմէ ստիպի կատարել:

Այս բան ցուցանեւ յանձն խօսազին երկու ինչ. մի զողորմելի վիճակ, և մի ևս՝ զյուօսցողութիւն. ըստ ողորմելի գոլոյ զողորմութիւն ոյ առնու իւր սպանեն.

իսկ ըստ յուսացօղ լինելոյ՝ զշմարտութիւն բանիցն այ  
և խռատման նորա ձգէ յինքն ՚ի քաջալերութիւն, որ  
պէս թէ եղեալ էր . յոզորմելի իմում վիճակի տա  
ռապելով առաւենեցայ յոզորմութիւն քո, և յանդերծ  
վտանգ մտանելով յուսացայ ՚ի չշմարտութիւն քոյ. և  
քանզի գտի զոզորմութիւն, և տեսի զշմարտութիւն,  
վասն այդը ողորմութեն քոյ և չշմարտութիւն խռատո  
վան եղեց քեզ, և մեծացուցից զանուն քո. և զի  
նու ինքն ած ողորմութիւն և չշմարտութիւն ցուցանե  
լով մեծացոյց զանուն իւր, ՚ի նոյն հոյելով յարէ  
զինի և առէ :

Դ . **Ա** նձ որբեր յամենայնի զանուն նը ու . յորում ա  
ռար իորդում ու տեղ, վաղաշունի ընդ ինչ . և  
բաղամ արացես զօրութիւն յանցն իմ :

Մեծ առնել ումեք զանուն իւր է մեծամեծ գոր  
ծովք հաշակելի ցուցանել զնոյն ըստ հանգամանաց  
գործոյն . իբր զի եթէ գործն իցէ ողորմուե, անուն  
գործովին հաշակի ողորմած . եթէ արդարուե՝ ար  
դար, եթէ հաւատարմութեն՝ հաւատարիմ և չշմա  
րիտ և այլն . և զի ած յամենայնի մեծամեծ գործս  
արար և առնէ, նովին իսկ յամի մեծ ցուցանէ զանուն  
իւր . ՚ի սոյն ակնարկելով մարդարէին առէ :

**Ա** նձ որբեր յամենայնի զանուն նը ու : Եյսինքն յամե  
նայն իրս ըստ ամենայն կարգի մեծ և հաշակելի ցու  
ցեր զնոր անուն քո՝ մանաւանգ ըստ ողորմութիւն և  
ըստ չշմարտութիւն : Ծայս վատահացեալ՝ համարձակի  
ևս կարդալ առ նա . և ակն ունելով՝ թէ նաև առ  
ինքն մեծ երեւեցուցէ զանուն իւր լսելով ինքեան,  
յարէ զինի և առէ :

Ծայս առար իորդում ու տեղ, վաղաշունի ընդ ինչ :  
Եյսինքն յորում ժամանակի և իցէ եթէ դիմեցից  
առ քեզ և կարդացից զանուն քո, մի անտես արասցես  
զիս, այլ գթասցիս ՚ի վերայ իմ . և վազվաղակի տա  
ցես ինձ զոր ինդրեմ . իսկ թէ զինչ էր՝ զոր ինդրէր,  
և կամ ՚ի կատարել այ զինդրուած իւր՝ զոր  
պիսի ինչ ցուցաներ նման, յայտ առնէ առելով :

Եյս բաղամ արացես զօրութիւն յանցն իմ : Եառդ բաղամ  
երբակի կարէ նշանակել աստ . մի՝ ըստ յաձախուեն,

յոր միտս կամի ասել. ըստ բազում լինելոց յիս ակա-  
րութեց բազմացուցես յանձն իմ այսինքն՝ ի հոգեց  
իմ զգօրութիս, կամ ըստ բազում անդամ տկարանա-  
լոյ իմ՝ բազում անդամ զօրացուցես զիս. կամ ըստ  
բազմապատիկ ընդդիմութեց յարուցելոց՝ ի վերայ  
իմ՝ բազմապատիկ զօրութիւ հաստատեցես զիս:  
Երկրորդ՝ ըստ սաստկութեց, յոր միտս կամի ասել.  
ըստ առաւելութեց տկարութեց՝ իմոյ՝ առաւելուցուշ  
յիս զգօրութիս, կամ արացես զիս որպէս գնամ ես  
միշտ՝ ի տկարութեց՝ ի տկարութի, սոյնպէս գնացից  
ե՝ ի զօրութեց՝ ի զօրութի. կամ առնը ինձ որ զի ա-  
ռաւել լիցի յիս զօրութի յառաջանալոց՝ ի բարին՝ ը  
տկարութի դիմություն՝ ի չարն որով և զօրութի քո՝  
տկարութեց իմում կատարեցի. (Ը. Կոր. Ժ. 2. 9.)  
Երրորդ՝ ըստ ընդարձակութեց, յոր միտս կամի ասել.  
որպէս ընկճեն և անձկացուցանեն ընդդիմութիւնք  
զգօրութիւնս իմ, սոյնպէս ընդարձակեցի զնոսին  
չնորդք քոյ յիս: Եւ համառատիւ, կամի ասել. բա-  
զում իրաք զօրացն զհոգի իմ՝ ի վանել զւարն և՝ ի դի-  
մութի բարին:

Օ այս առևէ մարդարենու ոչ միայն վասն անձին իւրոց  
ի գիտաց իւրոց խօսելով, այլև վասն ազդին իսրայել-  
կ ի գիտաց նոցա կարգելով զբանն՝ առ ի գտանե-  
լոյ յայց զօգնութեա և զգորութե, և առ ի ցուցանելոյ  
առաջի պյուղ ազգաց և թագաւորութեց՝ թէ ընդ  
նոսաւ է ած, և առ նոսաւ է յայտնեալ զինքն՝ որպես  
զի և նոքա ծանիցեն զգորութե նորա, և խօստովան  
եղիցին թէ նաւ է ած Տշմարիտ, չայս ակնարկելով

፩. የ..... እንደ..... ይ..... ይ..... ይ..... ይ..... ይ..... ይ.....

և 'ի բան քո : Վ ա պինութիւ այլոց ընդէլը մոլի առ-  
նե զքեզ . զուցէ յասելդ՝ նա իցէ 'ի դաժան արա-  
մադրութեն , և յայնժամ վառեսցի իբրև զվառօդ 'ի  
բանից քոց : Դու 'ի վերայ քո սափեա զոր ասես .  
եթե ոյլ ոք քեզ առեր՝ զինչ զգայիր . \* զընկերիդ  
,, յանձնէ ծանիր !! . ( առև սիրաք . լու . 18 : ) Երբեմն  
նրբարանութիւ խայթես զիրտ եղարդ՝ քան յայտնի  
և պարզ բանիւ . իսկ այս եղանակ առաւել տպաւորի  
'ի նմա վասն նրբութեն . և դու 'ի տեսանելդ զուսր-  
հանաս , զի զայնպիսիս խօսեցար . բայց եղայրդ մե-  
ռաւ :

Վ ա յ ա պիսի արարք վատթարագոյն և չարագոյն յուցա-  
նեն զմարդիկ քան զօս և քան զիժս , և քան զայլ  
վասակար կենդանիս : Աւ յայսամանէ յուցանիթէ 'ի  
զուր բարբանջեն ոմանք յասելն անդ թէ զի պիտոյ  
էր ստեղծել զայսասիկ կենդանիս , զի թէ չը պիտոյ  
ստեղծել զսոսա ապա ևս առաւել չը պիտոյ ստեղծել  
զմարդիկ . որովհետեւ չարագոյն գտանին քան զսոսա .  
մանաւանդ զի չարաշար վասեն ոչ միայն գործովք ,  
այլ և շրթամբք , ևս և ոչ միայն մարմնոյ այլեւ հոգ-  
ւոյ , զորպիսիս ոչ առնեն օձք և իժք , և այլ սողունք  
և ժժմունք , լու :

Խ ն ո զ զայն՝ զի սոքա բազում անդամ օգուտ ևս ըն-  
ծայէն մարգոյ : Վ ա րդիկ ևս այն ընծայէն , բայց  
առաւել է այն յորում վասեն՝ քան յորում օգտեն .  
կամելով ապա մարգարէին զերծ մնալ 'ի ձեռաց նո-  
ցին՝ կրկին աղաւէ զած , և ասէ :

Դ . **Պ**ահեմ զիս ար ՚ի յեւաց մեշտորի . և ՚ի մարդոյ լու-  
րէ իրին զիս :

Առաջին հատուած այօթ համարոյ հայի յերկրորդ  
հատուած առաջին համարոյն . բայց զոր անդ եղ  
փրկեալ , աստ դնէ պահեալ . իսկ երկրորդ հատուած  
սորոս հայի յառաջին հատուած նորին . բայց զոր անդ  
եղ ապրեցն , աստ դնէ փրկեալ : Երապիսի փոխիսու-  
թք բարից կամի սաստկացուցանել զգօրութի ազա-  
շանաց իւրոց , որով փափաքի թափանձել զամծ՝ մի  
անտես առնել զինքն , այլ անսոլ , և պատսպաքել .

զայս դիտելով՝ ասէ :

Պահեմ զիս ար ՚ի յեւաց մեշտորի . և ՚ի մարդոյ լուրէ իւը-  
ին զիս : Եստանօր ձեռօք մեզաւորի նշանակին ուժգ-  
նութիք կամ բոնութիք գործոց նորին որով վնասէ  
այլոց . և զի յայսպիսիս պաշարեալ ետես զինքն մար-  
դարէն՝ աղաւէ զամծ ասելով , պահեան զիս ամծ իմ ոչ  
միայն ՚ի չար չրթանց մեզաւորի , այլեւ ՚ի ձեռաց նը  
այսինքն ՚ի վնասուց նորին . նոյնուրեա ասէ և ՚ի մար-  
դոց չարէ և նենդաւորէ փրկեալ և ապրեցն զիս :  
Կասելով ազա և զհնարից նոցին ասէ :

Ե . **Ա**յսրհեցան խոժանել զինացս իմ . Ասդարձին ամբարդա-  
ռանք զըսդայն ինչ :

Այսնամիք մեր կրկնակի կարեն վնասել մեզ . մի՛ խա-  
փանելով զընթացս մեր առ ՚ի բարին՝ զոր մեր կա-  
միմք և նորա ոչ կամին . երկրորդ՝ արկանելով զմեզ  
՚ի չարն՝ զոր նորա կամին և մեր ոչ կամիմք . վասն  
առաջնոյն . ասէ :

Այսրհեցան խոժանել զինացս իմ . Վնացիւք իմացեալ  
լինի աստ ընթացք կենաց առ բարին , կամ ջանք  
գործելոյ զբարիս , կամ գործք բարեաց արարեալ  
վասն անձին և վասն այլոց , ևս և փոյթք ժամանե-  
լոյ առ յաւիտենական կեանս , և կմ պարզապես բա-  
րի կեանք յինքեան մատածեալ , և բարի ջանք վասն  
բարեայ այլոց : Օ այսպիսի դնացս իմ ասէ՝ յորում  
յաջողլէր ինձ ընթանալ ՚ի բարին՝ թշնամիք իմ կա-  
մեցան խափանել , այսինքն առնել զի մի յաջողեացի  
որպես արարին իշխանք բարելացւոց ընդ դանիլ՝ ՚ի

խափանել նոցա զկալ նորա յաղօթս յաւուրն երիցս  
ըստ յիշելոյն վարդանայ : Հայելով և յերկրորդ հը-  
նարս նոցա ասէ :

Ուագուշին ամբարտառներ զբրուժայն ինչ : Օորս 'ի վերոյ  
կոչեաց չարս և անիրաւս , թունալեզուս և մեղա-  
ւորս , զնոսին ամբարտաւանս անուանէ . զի լցել էին  
ամբարտաւանութք . և 'ի տեսանելն զյաջողութիւն  
ընթացից արդարոյն՝ տապէին և խեղդէին յամբար-  
տաւանուէ անտի , և զայրանային , և գուն գործէին  
խափանել զընթացս նորա , և 'ի չարաչար անարգու-  
թի շաղախել զանուն նորա . բայց ոչ կարելով յայտ-  
նապէս առնել զայս , որոգայթ կազմեցին նմա 'ի  
ծածուկ , որպէս զի ըմբռնեսցի 'ի չարն և կորիցէ .  
այլ թէ զիարդ կազմեցին զայս որոգայթ՝ յայտ առ-  
նէ ասելով :

**Է.** արս հգեցին որոգայթ սպէց իմոց . շուրջ շշաւոտ իմուշ  
երին ինչ գայթականութեն :

Խ արն որ է բարակ չուան , պէսպէս օրինակաւ կազ-  
մի յորոգայթ . մի՛ խեղդկապ առնելով . այսինքն իւ-  
մէկ ընելով՝ որպէս առնեն թոշնոց 'ի վերոյ ձեան :  
Երկրորդ՝ ուղղագիծ ձգելով 'ի ճանապարհի ը ծած-  
կութք հողոյ . որոյ 'ի քարշիլն կործանի մարդն՝ որ  
պատահի այնմ : Երրորդ՝ հիւսմամբ՝ իբրև զարդ երե-  
եցուցանելով հանգոյն ուռկանի՝ որ պաշարէ ըզ-  
մարդն : Վրդ քանզի սյալիսի որոգայթք վտանգա-  
ւոր են յոյժ վասն ոչ երեւելոյ , բերին յօրինակ այն-  
պիսի գաղտնի հնարից , զոր նենգութք մեքենայեն  
թշնամիք առ 'ի ըմբռնել զմարդն կամ կործանել :

Հայս հայելով ասէ մարդարէն :

Ա պէս հգեցին որոգայթ սպէց իմոց : Այս ասացուած եթէ  
իմասցի իբր բացատրութի նախընթաց բանին՝ ցու-  
ցանէ թէ այն որոգայթ զոր թագուցին ամբարտա-  
ւանք՝ եր արարեալ 'ի լարից , այսինքն 'ի նուրբ մտա-  
ծութեց նոցա : Խոկ եթէ իմասցի իբրև որոշ բան ,  
յայտ առնէ , թէ յետ թագուցանելոյ նոցա զորո-  
գայթ մէծ՝ տեսեալ թէ ոչ կարեն որսալ զարդարն ,  
կազմեցին որոգայթ 'ի նուրբ թելից՝ առ 'ի կարելոյ  
նոցա դիւրաւ որսալ :

Ոչ ասէ ձգեցին ինձ, այլ ոտից իմոց . \* Եւ շինք  
,, են ոտք՝ քան թէ այն՝ որ բառնայ և տանի . որ է  
,, յետին և անարդ յամենայն անդամն մարմնոյն || .  
( ասէ բարսեղ վարդապետ . 'ի մեկն . մարկ . գլ .  
ժո : ) թշնամիք անձինն արդարոյ կամէին ձգել 'ի  
նա զորոգայթն , բայց ոչ համարձակեալ 'ի նոյն՝ յա-  
նարդ ինչ իրս նորա եղին զայն՝ խորամանկ նրբութ  
և կեղծուպատիր նենգութք , առ ՚ի խոտորացուցա-  
նել զնա յուղղութէ ճանապարհի , և կործանել 'ի  
չարիս . զոր և այլով իմն բանիւ առաջի առնէ մար-  
դարեն և ասէ :

**Ը** ուրջ շշաւոտ իմով երին ինչ գայթակութ : **Ը** աւղօք  
իմացեալ լինի աստ ուղիղ և ընտիր ճանապարհ կե-  
նաց . արդ թէպէտ և ոչ կարեն թշնամիք յայսպիսի  
ճանապարհի դնել արդարոց գայթակղութի , զի որ-  
պէս այլուր վկայէ սաղմոսերդուն , \* ոչ գոյ 'ի նոսա  
,, գայթակղութի || . ( սաղ . ՃԺ . 165 . ) բայց կա-  
րեն զնել շուրջ զայսպիսի ճանապարհաւ 'ի ծածուկ ,  
և ջանք նոցա է՝ փոքր մի հանել զմարդն 'ի դուրս ,  
զի յելանելն անդ ըմբռնեսցի 'ի գայթակղութի :  
Խոկ գայթակղութք իմացեալ լինի աստ որոգայթ  
գայթակղութէ , կամ այն ինչ՝ որ տայ մարդոյ ըմ-  
բռնիւ և կործանիւ . զի այս բառ դնի աստ փոխա-  
նունութէ ձեռվ որով անուն գործոյն դնի փոխանակ  
անուան պատճառին . և զի գայթակղութին է գործ  
գայթակղեցուցիչ որոգայթի , դնի աստ փոխանակ  
այնպիսի որոգայթի՝ որ գայթակղեցուցանէ՝ այսինքն  
կործանէ զմարդ 'ի չարն :

**Բ** արոյապէս , ըստ վանական վարդապետի . ('ի  
մեկն . յոբ . գլ . ժը .) այս ամենայն հայի 'ի հնարս  
սատանայի , որ զամենայն չարիս ընդ պատրուակաւ  
բարւոյ որոգայթէ առաջի մարդկան . զի յինչ և իցէ  
չար գործողութիս՝ յորս կամի արկանել զմարդն , ա-  
ռաջի առնէ զբարին , և ծածկէ զչարն . տայ անձնա-  
սիրին և մարմնասիրին խորհիւ զօգուտն կամ զհեշ-  
տութին , և ոչ զտուգանսն՝ որք զհետ գան այնմ .  
նկարէ առաջի աչաց վավաշոտին զդեղեցկուի կնոջ  
կամ զզդածումն հեշտութէ , և ծածկէ զտգեղուին  
մեղաց և զգարշութիւն գործոյն . ցուցանէ ագահին

զշահ գրամոց, և ծածկէ զզրկիլն 'ի մեծութէ արքայութէ. ցուցանէ հպարտին զբարձրութի գերագոյն աստիճանի, և ծածկէ զվտանդ մեծի կործանմանն և զանհանգստութի սրտի. յամենայնի ցուցանէ զառերեսյթ քաղցրութի մեղացն, և ծածկէ զիրական դառնութի պատժոցն. և միովն արկանէ 'ի միւսն: Յուցանէ կրօնաւորի զօգուտ կենցաղավարելոյ ընդաշխարհականս. և ծածկէ զպակասիլնորա 'ի հոգեսորբարեաց. ցուցանէ նմա ունիլ իրաւունս յայս ինչ, և ծածկէ զանիրաւութի խորհրդոցն. լարս ձգէ զփառու և զմեծարանս սրբութէ, և արկանէ յորոգայթ անզերծանելի: Եցոյց եւայի զնծանալն, և թաքոյց 'ի նմանէ զմահանալն. ոչ յորդորեաց զնա 'ի մեղս, այլ յառիթն մեղաց. և յըմբունիլնորա յառթի՝ ըմբըռնեալ գտաւ 'ի մեղս:

**Ա.** Ե հանապազորդեան ջանք նորա. յոր և պարանին բազումք, ևս և հսկայք, արք մեծութէց, սամփսոն և սողոմոն, այլովքն հանդերձ. եթէ սոքավտանդեցան, գաճաճք զիարդ ապրեսցին: Իւայց որք խոնարհքն են սրտիւք, և յուսացեալ են յած և դիմեն առ նա աղօթիւք՝ զիւրաւ զերծանին յայսպիսի որոգայթից նորա. որպէս առներ և մարդարէն յապաւինիլ իւրում յած. ըստ որում յայտ առնէ և յաջորդ բանիւդ ասելով:

**Է.** **Ա**սայի՛ դր ած իմ ես դու. ունին դեր դր չայնի աղօթից իմոց:

**Ա.** յս ասելս երբ լեալ իցէ՝ ոչ որոշէ մարդարէն. սակայն հայելով 'ի յաջորդ համարն և որ զկնի, երեկ լեալ 'ի ժամանակի որոգայթադրութէ թշնամեաց. որպէս զի մի անիցի 'ի նոյն. յորպիսի ժամանակի պարտաւորիմք և մեք կարդալ առ ած աղօթիւք. յոյը սակս իսկ յորդորէր որ զաշակերտս իւր 'ի ժամանակ վտանգի փորձութէ նոցա, ասելով. \* յաղօթս „ կացէք՝ զի մի մաջիք 'ի փորձութի ||. ( մարկ. ժդ. 38: ) Յայսպիսի ժամանակի աստ և կարդալ մարդարէն առ ած՝ զոր բայիւդ ասել յայտ առնէ և ասէ:

**Ա**սայի՛ դր ած իմ ես դու. ունին դեր դր չայնի աղօթից իմոց:

կամի ասել. 'ի ժամանակի փորձութե՛ յորում զհետ  
իմ սինդեալ էին թշնամիք իմ՝ ոչ յայլ ոք ապաւինե-  
ցայ. այլ կարդացի առ ած, և ասացի, դու միայն  
ես ած իմ, դու արարիչ իմ, դու փրկիչ իմ՝ որ ա-  
զատեցեր զիս յամենայն վտանգէ, և ես ոչ զայլ ոք  
ծանեայ ած և որ. վասն որոյ և առ քեզ միայն դի-  
մեցի աղօթիւք. և արդ աղաչեմ լուր զձայն աղօթից  
իմոց, զի թէ լուիցես՝ կատարեսցես զոր ինդըեմ.  
և լինիցիս ինձ ձեռնտու և զօրացուցիչ, պաշտպան  
և ապաւէն փրկութե՛ : 'Ի սոյն ակնարկելով շարու-  
նակէ մարդարէն զաղօթս իւր և ասէ :

Ե. **S**էր առ զօրութե՛ ժըհութե՛ իմոյ. հովանէ գլեռոյ իմոյ  
յաւուր պատերազմի :

Ա՞ծ ասի լինել զօրութի փրկութե՛ մարդոյ կըկին  
օրինակաւ. մի՛ յորժամ զօրացուցանէ զնա՝ զի կա-  
րասցէ նա վանելով զթշնամին՝ փրկել զանձն ՚ի ձե-  
ռաց նորա. որպէս արար ընդ դաւիթ ընդդէմ գո-  
ղիադու, ընդ յուդիթ ընդդէմ հողեփեռնեայ և  
այլն : Երկրորդ՝ յորժամ առանց զօրացուցանելու ըգ-  
մարդն՝ ինքնին իւրով զօրութե՛ յաջողէ նմա զփըր-  
կութի, այսինքն առնէ՝ զի փրկեսցի : Ըստ այսոցիկ  
կոչէ մարդարէն զած զօրութի փրկութե՛ իւրոյ ասե-  
լով :

**S**էր առ զօրութե՛ ժըհութե՛ իմոյ : Արկնումն բառիս աէր  
որոյ փոխան յեթը՝ դնի էէհօջա ապօնայ՝ այս է տը ած,  
ցուցանէ զառաւելութի վստահութե՛ սրտի առ ած.  
իսկ այս վստահութի հիմնի ՚ի ճանաչել մարդոյ զած՝  
թէ է որ իւր, և զօրացուցիչ. և յայս միտս կամի ա-  
սել. վասն այսորիկ վստահացայ դիմել առ քեզ, զի  
դու գոլով տէր և ած ամենայնի, լինիցիս ինձ զօ-  
րութի փրկութե՛, որպէս և եղեր բազում անդամ,  
և ՚ի վտանգիւ իմում պահեցեր զիս. և առ այս յարէ  
զկնի և ասէ :

Հովանէ գլեռոյ իմոյ յաւուր պատերազմի : Օգործս թշնա-  
մեաց իւրոց՝ զհակառակիւ նոցա, և զորոգայթադիրն  
լինել և այլն՝ պատերազմ կոչէ . և զայսպիսի պա-  
տերազմունս զօրութե՛ իմն տապոյ արեգական նմա-  
նեցուցանէ կամ տարափոյ, կամ կարկտի, և այլն,

և զպաշտպանութին ոյ հովանաւորուել համեմատէ ,  
որով և զած կոչէ հովանի գլխոյ . որպէս թէ ասէք .  
'ի յանախել տապոյ և անձրես այսինքն չարութել և  
անօրէնուել թշնամեաց 'ի վերայ իմ , և յու գտանել  
ինձ տեղի ապաւինի գու ինքն եղեր հովանի գլխոյ  
իմոյ , զի մի ինչ ներգործեսցէ ինձ չարութին նոցա :  
Իսկ պատճառ զգլուին 'ի մէջ բերելոյ՝ յասելն , հո-  
վանի գլխոյ իմոյ , ըստ երկուց մտածի . մի՝ զի մար-  
դիկ 'ի նեղիլն 'ի տապոյ կամ յանձրեոյ՝ առաւել  
գլխոյ խնդրեն գտանել հովանի քան բոլոր անձին .  
և երկրորդ՝ զի ընդ գլխով իմացեալ լինի և բոլոր  
անձն :

Իսկ բարոյապէս՝ հովանի լինելն ոյ 'ի վերայ գլխոյ  
մարդոյ է պահպանել զոգին , կամ զանձնիշխան  
կամ իբրև զգլուին հոգւոյն , զի մի վտանգեսցի 'ի  
պատերազմի փորձութեց թշնամեացն՝ այսինքն դի-  
ւաց , որք առաւել ցանկան զգլուին վեասել ք զայլ  
անդամն հոգւոյն : Քայս իսկ կրկին աղալէ մարդա-  
րէն զած և ասէ :

**Յ.** Ա մատներ զիս թը 'ի շահեռելի եղանակաց , ոյտ  
նորհեցան վասն էմ . Ա ընդ կայ հարիմաներ զիս :  
**Դ.** ասի մատնել զմարդն 'ի ձեռս մեղաւորաց ըստ  
ցանկութե սրտից նոցա , յորժամ թոյլ տայ նոցա  
կատարել 'ի նա զշար կամ իւրեանց . և այս՝ վասն  
այլեայլ վախճանի . մի՝ 'ի պատիժ մեղաց առ 'ի զգաս-  
տութիւն . որպէս թոյլ ետ օտար ազգաց դիմել 'ի  
վերայ իսրայէլացւոց և նուաձել զնոսա 'ի պատիժ  
մեղաց նոցա , զի զգաստասցին . ուստի ասէ զիրն .  
('ի դատ . թ . 14.) \* և մատնեաց զնոսա որ 'ի ձեռս  
, աւարառուացն , և աւերեցին զնոսա : Երկրորդ  
դարձեալ 'ի պատիժ մեղաց , բայց ոչ առ 'ի զգաս-  
տութի , այլ առ 'ի կորուստ . որպէս թոյլ ետ ոծ  
հռովմայեցւոց դալ 'ի վերայ հրէից , և եղծանել  
զնոսա իսպառ . ըստ որում գրի 'ի պատմութիս կոր-  
ծանմանն երուսաղէմի և աւերման տաճարին : Եր-  
րորդ՝ 'ի ցոյց հանդիսի առաքինութե արդարոցն ,  
որպէս թոյլ ետ սատանայի դիմել 'ի վերայ յորայ , և  
դործել 'ի նա ըստ ցանկութե սրտի իւրոյ . ուստի

և ասուց ցնա ամք . \* ահա մատնեմ զնա քեզ . բայց  
յաւել ևս թէ . մի սպանցես զնա . (յոթ . թ . 6 .)  
**Չորրորդ՝** 'ի կը թութիւ և 'ի հոգեօր շահ , որպէս  
բազւմ անգամ թոյլ տայ ամք չարաց նեղել զարդարս  
վասն օգտի նոցին . զի արդարք նեղելով 'ի չարաց  
կը թին յառաքինութիս , զտին 'ի պակասութեց , և  
շահին զհոգեօր բարիս : Հինգերորդ՝ առ 'ի ստա-  
ցումն մեծի պասկի , որպէս եղեւ յառաքեալս և 'ի  
մարդարես , 'ի մարտիրոսս և 'ի խոստովանօզ : || ե-  
ցերորդ՝ 'ի կատարումն գաղտնի իմն խորհրդոյ՝ զոր  
ինքն ամք միայն գիտե : Ըստացանե զորն արդեօք իմա-  
նայ աստ մարդարեն՝ յասելն , մի մատներ զիս առ ՚ի  
ցանկութիւ մեզաւորաց՝ մեզ ոչ է որոշելի :

Ա. Ա. Դ գ ի ս ե լ ի է զ ի ՚ ի մ ա տ ն ի լ մ ա ր դ ո յ ՚ ո ր և ի ց է օ ր ի ն ա կ ա ւ ՚ ի ձ ե ռ ս մ ե ղ ա ւ ո ր ի ՚ մ ա ր թ է զ մ ա ա ծ ե լ կ ը կ ի ն կ ա մ ա ց կ ա ս տ ա ր ու մ ն ։ մ ի ն է լ ր ու մ ն ա մ ե ն ս ա բ ա ր ի կ ա մ ա ց ն ա յ , զ ի յ ա յ տ է թ է ա ռ ա ն ց կ ա մ ա ց ն ո ր ա ո չ մ ա տ ն ի մ ա ր դ ՚ ի ձ ե ռ ս մ ե ղ ա ւ ո ր ի ՚ ի ս կ մ ի ւ մ ն է զ ե ղ ծ ո ւ մ ն շ ա ր կ ա մ ա ց մ ե ղ ա ւ ո ր ի ՚ զ ո ր մ ա ր դ ա ր է ն կ ո չ շ ց ա ն կ ո ւ թ ի մ ե ղ ա ւ ո ր ա ց : ՞ ա ռ ա ջ ի ն ն հ ա յ ե լ ո վ ք ա ջ ա լ ե ր ի հ ա զ ի ն , զ ի ս ե լ ո վ թ է յ ա մ ե ն ս ա ք ա ղ ց ը ա ղ ե ր է ա ն ա տ ի ո չ բ ղ խ է ի ն չ դ ա ռ ն : Խ ա կ յ ե ր կ ի ր ո ր դ ն հ ա յ ե լ ո վ ս ո ս կ ա յ ՚ զ ի ս ե լ ո վ ը ն դ հ ա կ ա ռ ա կ ն թ է յ ա մ ե ն ս ա դ ա ռ ն ա կ ա ն է ո չ բ ղ խ է ի ն չ ա ն ո յ շ . բ ա յ ց ե թ է ա ն ՚ ի ք ա ղ ց ը ո ւ թ ի փ օ խ ե ս ց է : ՞ ա յ ա ս ո ւ ի կ ա շ ա ա կ ն ս ա ր կ ե լ ո վ մ ա ր դ ի ն ս ա ր է ի ն , ա ղ ա չ է զ ո ն ծ և ա ս է :

Այս խորհեցան վասն էմ : Կամի ասել . բազում ինչ խորհեցան վասն իմ մեղաւորք . եթէ մատնես զիս 'ի ձեռս նոցա , զոր խորհեցանն՝ կատարեացեն յիս . սմին իրի աղաչմ զբեզ՝ մի մատներ զիս 'ի ձեռս նոցա , այլ խնայեա յիս . զի քո եմ , և մի իրը զօտար ոք 'ի բաց թողուր զիս : Հայս հայելով յարէ զկնի և ասէ :

Ո՞ւ շնորհաներ չիս : Ի՞նդ վայր հարկանելն է իրը զանալիտան ինչ 'ի բաց թողուր ( զորմէ տես 'ի սաղ . լ. 28 . ) յոր միտս կամի ասել . որովհետեւ քոյ եմ ես որ , և 'ի քեզ եմ ապաւինեալ մի 'ի բաց լքաներ զիս իրը զանարդ և զանալիտան , թոյլ տալով ինձ մատնիլ 'ի ցանկուի անօրէն խորհրդոց մեղաւորացն :

Վրդ թեպէտ և թոյլ տայ ած երբեմն ծառայից իւրոց չարչարիլ 'ի մեղաւորաց ևս և 'ի դիւաց , և յայլ ազգի ազգի նեղուեց , բայց ոչ ընդ վայր հարկանէ զնոսա , ըստ այնմ . ( սաղ . լ. 28 . ) \* և ոչ ը վայր ։ հարկանէ զորս իւր . այն թոյլ տայ վշտաց՝ բայց ըստ չափու , և ոչ առաւելքան զոր կարեմք . ը այնմ . ( ա . կոր . ժ . 13 . ) \* հաւատարիմէ ած՝ որ ոչ արկ . ։ ցէ զձեզ 'ի փորձութիւ առաւելքան զկար ձեր . ։ Այնչափ չափէ և կշուե թժիշկն զդառնութիւ դեղոց ըստ տկարութե հիւանդին , որչափ ած . և եթէ առաւելուցու գառնուին՝ մեղմացուցանէ զայն , կամ զօրացուցանէ զկրօղն . ուստի յետ ասելոյ առաքելոյն զնախագրեալսդ՝ յարէ զկնի . \* այլ արասցէ ընդ փոր . ։ ձութեն և զելս՝ զի համբերել կարասնիք . ։ ըստ բարձրանալոյ ելից տայ զելս . այսինքն թէ ըստ ելանէլոյ փորձութե 'ի վեր , տայ և զելս աղատութե և համբերութե . կամ ըստ զայրանալոյ նեղուե ցուցանէ զզօրութիւ փրկութե .

Եթէ յամեցուցէ՝ մի վշտանար և մի զայրանար , մի երկեայիր և մի երկնչիր . ինքն գիտէ զժամանակն : Շնուտն գիտէ՝ թէ որքան ժամանակ պիտոյ է անօթոյն մնալ 'ի հնոցի , ած ոչ գիտիցէ : Վրչափ ժամանակ եթող զյովսէփ 'ի բանտի՝ զի փառօք հանցէ . \* և բարձր արար զիս 'ի դրանց մահուլ . ( սաղ . ժ . 15 . ) ։ Ես զի ոչ միայն աղատէ , այլև բարձր առնէ և ս

փառօք։ Եթրեւ լուսւ յո՛ թէ զազարոս հիւանդացեալ է, զտեղի եառ, և զաւուրս երկուս եթող զնա։ (յովհ. ժամ. 41) իւողու և զքեղ տծ առ ժամանակ մի՝ ի հիւանդութէ, ևս և յանչնարին տրտմութե իբրեւ ի գերեզմանի. գոյ և յարուցանու, զի փառաւոր ցուցցի յարութի քո։ \* Իւյց թէ անագան, նեսցի՝ համբեր նմա, զի գալով գայցե, և ոչ անագանեսցի։ (ամբակ. թ. 31)

Եթէ երկար թուեսցի գալուստ նորա՝ այդ ոչ է՝ ի կարի անագանելց նորա՝ այլ՝ ի պակասութէ երկայնմտութե քո։ Առողջ մարդոյ ոչ այնչափ անագան թուի ծագումն առաւօտու. հարց ցհիւանդն, զիարդ երկար թուի նմա զիշերն. տակաւին անագանի արդեօք ասէ առաւօտ. գոյ լոյսն և հասանէ առաւօտն և միխթարէ. գոյ արդարեւ առ քեղ լոյսն տծային և քաջալերէ զքեղ. այլ երբեմն յամէ՝ զի դիմեսցես առնա։ Քալէկոծիլոյ ննջէ՝ զի զարթուցես զնա. (մատ. ը. 231) Այ առնէ անտես, և ոչ ը վայր հարկանէ ըս առաջիկայ բնաբանիդ. և ոչ տայ թոյլ ընկղմիլ. սաստէ ծովու և հանդարտեցուցանէ. նուաձէ զնեղիչս քո և սաստէ, և ոչ թողու նոցաբարձրանալ և առնել զոր կամին. ըստ որոյ և մարդարէն մաղթէ ասելով։

J. **Օ** չ կ երբէս բարյըսոցին. և իսրհուրդն նոյս կ ճիշտարեսցին. կտեման իսրարածն նոյս կտառու շընանց իւրեանց ծածինցէ ընուս։

Իւրձրանալն ի մէջ բերէ զնշանակութի վերագոյն լինելոյ, որ կարէ լինել ըստ այլեայլ բանի. մի՝ ըստ բարձրութե տեղւոյ կամ բնակութե և այլն. երկրորդ՝ ըստ գերազանցութե պատուոյ կամ մեծութե կամ իշխանութե կամ իմսստութե և այլն. երբորդ՝ ըստ յաղթող լինելոյ կամ զօրանալոյ և այլն. չորրորդ՝ ըստ մեծամտելոյ մարդոյն յինքեան կամ ըստ պարձելոյ արտաքոյ, և այլն. իշլ յայտ է թէ աստ ոչ խօսի մարդարէն ըստ առաջնոյն և ոչ ըստ երկրորդին, այլ ըստ երբորդին և ըստ չորրորդին, յասելն։

**Օ** չ կ երբէս բարյըսոցին. և իսրհուրդն նոյս կ իսրա-

բեստին : Իւառդ Ք ԵՐԵՒՏ ԹԵՎԼԵՏԵՆ Նշանակէ մի բնաւ  
ամենակին , բայց դնի աստ փոխանակ բառիս գուշէ  
ԵՐԵՒՏ , կամ Ք ԳՈՒՇԷ . ըստ որումյայտ է յայլ Թարգ-  
մանութեց . որպէս թէ եղեալ էր . աղաչեմ զքեզ  
նոր , մի ընդ վայր հարկաներ զիս , գուցէ մեղաւորք  
անպատսպար գտեալ զիս յաղթեսցեն ինձ , և պար-  
ծեսցին 'ի կատարել նոցա յիս զչար խորհուրդս իւ-  
րեանց , և յայս սակս յաւելու աղաչել , զի մի կատա-  
րեսցին խորհուրդք նոցա : Այլ թէ զի՞նչ պատիժ  
ողատուհասի ունեին կրել նոքա , յայտ առնէ ասելով :  
Ա ախճան հագարածէ նոցա՝ և վաստան լրեանց իւրեանց ծած-  
իւցէ զնոսա : Իւառս հախճան նշանակէ 'ի սմին բանի  
զայն ինչ՝ յոր վերջանայ կամ աւարտի իմն . որպէս  
շրջանակին է այն ինչ , յոր աւարտին ամենայն  
գիծք ձգեալք 'ի կետէ , և կեղրօնն է այն ինչ՝ յոր  
աւարտի շարժումն դիմողին 'ի նոյն . զոր օրինակ և  
գլուխն է այն ինչ՝ յոր աւարտի հասակ մարդոյ . և  
օթեանն է այն ինչ՝ յոր աւարտի ընթացք ուղեորին :  
Խոնզ զմահն , յոր աւարտի կեանք մարդոյ : Խոկ բառդ  
հագարած՝ առեալլինի աստ 'ի թանձրացեալն փոխա-  
նակ այնը՝ որ է 'ի կատար ածելի , որպիսի են գոր-  
ծողութեք , հնարք , և այլն . և ըստ այսմ բառիւդ  
հագարած՝ պարտ է իմանալ աստ զչար հնարս մեղաւո-  
րաց՝ զորս նիւթեն ընդդէմ արդարոց , և ջանան 'ի  
կատար ածել . յոր միտս կամի ասել . այն ինչ՝ յոր ա-  
ւարտի ջանացողութիւնոցա՝ ծածկեսցէ ոչ եթէ զար-  
դարն , այլ զնոսա . ուր ծածկեսցէ դնելով ցուցանէ  
թէ այն վնաս՝ յոր դիմէ հնարք նոցա , պաշարեսցէ  
զնոսա ոչ ըստ մասին ինչ , այլ ըստ բոլորին . իբր  
թէ ասէր . յամենայն կողմանց և ըստ ամենայնի պա-  
շարեսցէ զնոսա :

**Յայս վերածէ զնոյն և վարդան . և յաւելու ասել .**  
\* այլ Թարգման ասէ . ժողով գլխոյ նոցա . իբր թէ  
,, որ ինչ ( հնարք ) ժողովեալ է 'ի գլուխս նց ( այս  
,, ինքն ) 'ի խելս և 'ի յիշողութիս նոցա վասն իմ՝  
,, դարձի առ նոսա || :

**Խոկ եթէ բառիւս հագարած՝ իմացեալ լիցի վերջ ո՞ր  
և իցէ իրի , և տիրապէս վերջն կենաց , միտ բանին լի-  
նի այս . 'ի հասանել վախճանի նոցա՝ վերջ լիցի նո-**

յա, ևս և վերջ կենաց նոցա . զի որպէս ասէ բար-  
սեղ վարդապետ . ( 'ի մեկն . մարկ . գլ . ժկ . ) \* իւ  
,, ըաքանչիւր ( մարդոյ ) վախճան իւրոյ կենաց կա-  
,, տարած է : Իւայց այս մեկնուի համարի իբր յար-  
մարական . իսկ առաջինն իբր բնական , և կարգի բա-  
նին համաձայն : Եւ քանզի զոր հնարեն մեղաւորք,  
զնոյն և շրթամբք խօսին երթեմն , վասն որոյ յաւելու  
մարդարեն և զայն 'ի մէջ բերել՝ ասելով :

Ասսակի շրեանց եւբեանց ծածկեացէ զնոսա : Իւառդ կաս-  
տակ՝ ոչ դնի աստ իբր նշանակօղ՝ այլ իբր նշանակել,  
զի ոչ դնի փոխանակ բանից շրթանց վաստակողաց ,  
այսինքն աշխատողաց , այլ փոխանակ նոցին իսկ աշ-  
խատութեց կամ չար հնարից մեղաւորաց՝ որք նշանա-  
կեալ լինին բառիւս կաստակ . և զի շրթամբք ևս ար-  
տաբերին , ասին վաստակ շրթանց՝ այսինքն աշխա-  
տութիք կամ չար հնարք բանիւք շրթանց արտաբե-  
րեալք և յայտնեալք :

Եւ ըստ այսմ՝ սոյն այս յաւելուած նոյնանայ ընդ  
նախընթացին . որով և երկոքին բանքս լինին իբր քա-  
ցայայտիչք միմեանց , որպէս թէ եղեալ էր . չա-  
րաչար աշխատութի կամ ջան մեղաւորաց՝ զոր հնա-  
րին ըդէմ արդարոց , և արտաբերեն ևս շրթամբք ,  
'ի վախճանի ծածկեացէ զնոսա՝ այսինքն դարձցի 'ի  
գլուխ նոցա , և ըստ ամենայնի նուածեացէ և ձմլես-  
ցէ զնոսա : Կամ թէ վախճան և կատարած նոցա  
լիցի այս , զի վաստակ շրթանց նոցա ծածկեացէ ըզ-  
նոսա :

Իսկ պատճառ մթութե այսր բանի է նախ այն , զի  
ոչ դնի շաղկապ ինչ 'ի միջի . զոր եթէ դիցուք , բանն  
պարզի այսպէս . վախճան կատարածի նոցա , նոյնպէս  
և վաստակ շրթանց նոցա ծածկեացէ զնոսա : Երկ-  
ըորդ պատճառ մթութեն է այն , զի երկու անուանց  
յայլեայլ դիտողաց՝ մի բայ դնի . զոր եթէ կամի-  
ցիմք պարզել , մարթ է առաջի դնել այսպէս . աւարտն  
կատարելի աշխատութի նոցա , դարձցի առ նոսա .  
և նոյն իսկ չար աշխատութի նոցա , զոր շրթամբք  
ևս յայտնեն՝ պաշարեացէ և ծածկեացէ զնոս իսպառ :  
Իւարոյապէս , 'ի հասանել մեղաւորաց 'ի վախճան  
կենաց՝ վաստակ շրթանց նոցա ծածկեացէ զնոսա .

սյսինքն այն բանք զորս ասեն՝ թէ 'ի վախճանի ապաշխարեմք՝ յամօթ արասցեն զնոսա. զի որ անփոյթ լինի ապաշխարել, և զապաշխարութի իւր ձգէ 'ի կատարած կենաց, անփոյթ լինի և 'ի կատարածի ըստ այլեայլ պատճառաց. մի՝ զի եթէ յորժամ առողջ էր և կարօղ՝ ոչ կարաց, որչափ ևս յորժամ տկար է և 'ի ցաւս տրորեալ. մանաւանդ զի 'ի նեղիւ մարդոյ հիւանդութք՝ ոչինչ խորհի քը զոր զգայ: Վահն փութացուցանէ. մեղքն զարհուրեցուցանէ. ընտանիք շփոթեցուցանեն. և այլ ազգի ազգի դիպուածք և խորհուրդք անձկացուցանեն. և զիարդ կարիցէ մարդ զգաստութք ապաշխարել: Երկրորդ՝ զի ոչ գտանէ զշնորհսն՝ այ, զոր արհամարհեաց. \* վայ որ արհամարհես, միթէ և դու ոչ արհամար,, հեսցիս ||. (Եսայ. իդ. 16:) Տես զի մեծամեծք սպասեն դարձի քում, նու ինքն ած և երկնային զօրութիք. զի ևս յապաղես. փութամինչդեռ առողջ ես, դուցէ փակեսցին ճանապարհք: Երրորդ՝ զի խաւար պատէ յայնժամ. քանզի գիշեր է մահ. ոչ է ժամանակ ապաշխարելոյ, այլ մեռանելոյ: Եթէ դիշերայն հասցես յօթեան, պակասի քեզ բազում ինչ. որպէս ասի յառակս. ապա եթէ դու 'ի դիշեր մահու կամիցիս հասանել յապաշխարութի՝ ոչ գտցես՝ զոր խնդրես: Չորրորդ՝ զի ծանրացեալ են մեղք և բազմացեալ. այժմ թեթև է՝ և սակաւ, այժմէն ձեռն արկ ապաշխարելոյ: Եթէ չքաւոր ոք կարիցէ սակաւուք վճարել զպարտս իւր վասն վաղագոյն հատուցանելոյն, յիմար է՝ եթէ թոյլ տացէ աճել պարտուցն վասն յապաղելոյն. \* մի ասիցես, երթ և վա, „ զիւ տաց քեզ ||. (առակ. կ. 28:) Խսկ արդ 'ի յամել ապաշխարութե աճէ, մեղքն, ապա սլարտ է փութալ 'ի ջնջել. և մի 'ի վաղիւ արկանել, և մանաւանդ 'ի կատարած կենաց, ասելով, ունիմ ժամանակ, 'ի հասանել մահու ապաշխարեցից. զի այս վաստակ շրթանց ծածկեսցէ յայնժամ զայնպիսին. և նա ինքն ած թափեսցէ 'ի վերայ նորա վրարկութիւնը. և զայս յայտ առնէ մարդարէն նմանաբանութք իմն, խօսելով առ ած, և ասէ:

ԺԹ. լիշես 'ի վէրայ նոցա հայծակունս հրոյ. և հոր-  
ծանեսցես զնոստ. 'ի պատապանաց մի հարասցէն  
իւալ:

Կայծակամբք հրոյ նշանակին հրեղէն շանթք արձա-  
կեալ յամպոց, ևս և կայծք խարուկաց, որովք օրի-  
նակին պատիժք ածային բարկութե՛ զորս առաքէ-  
ած առ մեղաւորս 'ի հատուցումն անօրէն գործոց  
նոցա հնարելոց ընդդէմ արդարոց. և կամըստ վա-  
նական վարդապետի ( 'ի մեկն . յոթ . գլ . առ . ) նշա-  
նակին դեք անկեալք իբրև զփայլատակունս յերկիր.  
և զի անվրէպ և անխափան պատահելոց է այս, սմին  
իրի և մարդարէն իբր անստելի և աննահանջելի  
կանխագուշակութ իմն խօսի զայսմանէ ասելով:  
լիշես 'ի վէրայ նոցա հայծակունս հրոյ : Կամի ասել. 'ի  
խորհիլ մեղաւորաց չարիս հասուցանել արդարոց, և  
կամ 'ի չարչարել անդ նոցա զարդարս, 'ի կատարիլ  
ժամու չարեաց նոցա արկցես 'ի նոսա զկայծակունս  
հրոյ, այսինքն հեղցես 'ի նոսա զպատիժս բարկուե-  
քո, կամտացես նոցա ոչ զայն միայն՝ զոր նոքա խոր-  
հեցան և արարին, այլև զոր արդար վրէժխնդրուե-  
քո արժանի դատեցաւ տալ նոցա 'ի պատիժ նոցին,  
որպէս արարել ընդ սոդոմայեցիսն, և ընդ սենեքե-  
րիմեանսն և ընդ այլս բազումն : Եւ զի ցուցցէ մար-  
դարէն՝ թէ առանց գթութեան հանդերձեալ է ած-  
առնել զայս՝ ոչ ասէ արձակեսցես, այլ արկցես, այս-  
ինքն անխնայ հեղցես 'ի նոսա զպատիժս. և առ ցու-  
ցանելոյ զսաստկութի պատժոյն՝ յարէ զկնի և ասէ :  
Եւ հործանեսցես զնոստ : Կամի ասել. արկանելով 'ի  
վերայ մեղաւորաց զպատիժս՝ կործանեսցես զնոսա  
յայնպիսի թշուառութի՝ յորմէ ոչ կարիցեն կանգ-  
նիլ. և յայս սակս յարէ զկնի և ասէ :

Դ պատապանաց մի հարասցէն իւալ: լ. յսինքն 'ի նեղու-  
թեց անտի պատժոց՝ յորս ունիս կործանել զնոսա՝  
մի կարասցեն զերծուցանել զկեանս իւրեանց. այլ  
'ի նոսին մնալով՝ 'ի նոսին մեռցին՝ բայց առանց մե-  
ռանելոյ. և այս լինի, յորժամ 'ի մահացուցիչ տան-  
ջանս ունիցի ոք զկեանս չարագոյնս քան զմահ, որ-  
պիսի է սարսափելի վիճակ յաւիտենական դատա-

Մ Ե Կ Շ Ա Խ Թ Ֆ Ե Կ Շ  
պարտութե . զոր գիտէ աստ մարդարէն առաջի առ-  
նել , հոյելով միանգամայն և ՚ի պատիժու աստի կե-  
նաց , զոր կը են մեզաւորք , ընդ որս և արք լեզուա-  
գարք . զորոց խօսի ՚ի յաջորդ համարն , և ասէ :

**Ճ**ի . **Վ**որդոյ ֆշուանոյ կ յաջողեցի ՚ի վերայ երիշ .  
շոյ հշուար՝ լորիս իւր որուացին ՚ի իւրուար :  
Բառոդ լշուանին՝ նշանակի , զշատախօսն՝ ոչ ըստ բար-  
ոյ մասին այլ ըստ անկարգութե . և այս երրակի .  
մի՛ ըստ շաղփաղփութե , ըստ բաջաղանաց , ըստ ան-  
պատշաճ բերման բանից , ըստ վայրապար զրու-  
ցաց , ըստ ձանձրացուցիչ աւելորդախօսութեց լու :  
Երկրորդ ըստ խարերայութե , ըստ խորամանկութե ,  
ըստ սառութե , ըստ երկերեսութե , ըստ քսութե ,  
և այլն : Երրորդ՝ ըստ չարաչար բամբասանաց ըստ  
նախատանաց , ըստ հայհոյանաց , ըստ անիծանաց ,  
և այլն : Վրդ որք միանգամ յայնպիսիս ՚ի գործ ա-  
ծեն լեզուս իւրեանց՝ լեզուագարք կոչին , և երբեմն  
լեզուանիք ասին , այսինքն այնպիսիք՝ որոց կեանք  
տռուեալ են լեզուի իւրեանց , և են գերի լեզուի .  
իսկ թե զի՞ն վասա լինիցի սոցա ՚ի լեզուէ անտի՝ հա-  
մառօտիւ իմն յայտ առնէ մարդարէն ասելով :

**Վ**որդոյ ֆշուանոյ կ յաջողեցի ՚ի վերայ երիշ : Վ. յա-  
նիքն՝ որ լեզուագար իցէ՝ որով օրինակաւ և իցէ ,  
այնպիսին ոչ ունիցի յաջողութիւն կամաց իւրոց կամ  
փափաքանաց որտի . և պատճառն է , զի որով լեզու-  
մարդոյ և յատուկ՝ լեզուաւ վարիլ և լեզուաւ յայտ-  
նել այլոց զայս ինչ և զայն , յորժամ լեզուագարի՝  
խանգարէ զայն զօր ասէ . իսկ այս խանգարումն ՚ի  
յայտնին՝ լինի առիթ արհամարհեալ և անարգեալ  
լինելց իսոսովին իւրեւ խորչելոյ , կմ տռիթ անուան-  
արկ լինելոյ իւրեւ խարերայի կամ իւրեւ չարաբա-  
րոյի և այլն . և այսու ստանայ զայլու՝ ատեցօզս ան-  
ձին իւրոյ , կմ խորչոզ յիւրմէ . և մնայ անձեռնուու  
յօդնականութէ նոցա : Իւ զի յաջողութիւ գործոց  
ըստ քաղաքական կենաց կախի զայլոց՝ յոչ նպաստա-  
ւորիլ այնպիսւոյն յայլոց՝ ոչ լինի նմա յաջողել . և ե-  
թէ երբեմն յաջողեցի , որպէս և աւեսանեմք ՚ի բա-  
զումն՝ գիպուած է . ուստի կամ սակաւ տեւէ . և

կամ եթէ երկար տեղոցէ, յեւ ամաչու նորա ունայ նասցի ոչ միայն ըստ հանգերձելոյն, այլև ըստ առտի կենաց . զի ե ՚ի վերայ երկրի ու յառաջանայցէ յա ջողովիւնյիշատակի նորա իրքեւ բարւոյ , այլ երբե այնպիսւոյ , որպիսի եր :

Վարդ որովհետեւ այսպիսիքս հասարակօրեն չարք են , և հնարիչք չարեաց , նոյն իսկ չարիք նց ևս խափան լինին յաջողովովե նոցին և առիթք բազում ձախողութեց , մանաւանդ թէ պատճառ կորստեան . սմին իրի յարե զինի մարդարեն վասն նոցա , և վասն ու ե իցէ մեղաւորի՝ ասելով :

Օ այդ հշանա՞ր՝ շրէս իւր պասացին ՚ի իսրաւու : Կամի անել զոր ինչ չարիս գործէ մեղաւորն՝ եթէ ոչ չեւ ացուացէ զայնոսիկ յանձնէ իւրմէ , նոյն չարիք նորա արկանեն զնա ՚ի կորուստ . զի կամ տան նմայ յանպատեհութիւն , և այնու կորնչիւն , որպիս եղեւ ադսնիայ . ( դ . թագ . թ . 13--25 . ) կամ տան չհամարիւն ինչ ե ՚ի մոռացօնս արկանել , և մատնիւն ՚ի մաշ . որպիս եղեւ սեմեայ . ( դ . թագ . թ . 37--46 . ) կամ տան շփոթիւն , և յայլ ինչ ըմբռնիւն . որպիս եղեւ արեստ զուայ . ( դ . թագ . ժշ . 9--15 . ) կամ տան մնուրիւն ՚ի բանս , և իսօսիւն ՚ի կորուստ անձանց . որպիս եղեւ տան այնմիկ ամազղեկացեայ՝ որ տաց թէ սպանի զաւուզ . ( դ . թագ . ան . 10--15 . ) կամ տան տագնաւ պիւն ՚ի իւղձնէ և յամօթայ , և զիւրովի գնալ . որպիս եղեւ սաւուզայ . ( ան . թագ . լար . 3--5 . ) կամ տան յուսահատիւն և անձնասպան լինիւն , որպիս եղեւ աբետորելայ . ( դ . թագ . ժէ . 23 . ) կամ տան յայտնութք չարութեն պարտաւորիւն ՚ի մաշ , որպիս եղեւ յօվաբայ . ( դ . թագ . թ . 23--34 . ) զորօրինակ լինի և մարդասպանից , և զողոց և այլն : Կամ տան գըգաիւն այլոց ՚ի վերայ նորա ՚ի վրեժինգրութիւ . որպիս եղեւ ամնայ . ( դ . թագ . ժդ . 28 . ) Վաստ սոյին պակի և այլ ես որ և իցէ օրինակաւ՝ չար գործք կամ չարութիւք մեղաւորաց , մատնեն զնոսս ՚ի կորուստ : Բայց քանզի այսպիսի անցք պատահին նոցու ոչ յորժամ կարծեն , այլ երբ թէ յայլակարծուց՝ յորժամ ոչ այնպիս լինիւն համարին , վասն այսորիկ ոչ առե մարդարէն , մատնեսցին ՚ի կորուստ . այլ թէ նոցին

որսասցեն . որպէս թէ առէր . նոյն չարիք մեղաւորի իրը որսորդք զգուշութք զհետ պնդեալ նոցա՝ յանկարծելի ժամնւ մատնեսցեն 'ի կորուստ . որ է առել . լինիցին պատճառ կորնչելոյ նոցա . և այս կամ ըստ կենաց , և կամ ըստ այլ իրաց :

Այն այս առաւել 'ի գէպ գայ այնոցիկ՝ որք 'ի կամիլն չասուցանել այլոց՝ ինքեանց հասանեն նոյն չարիք . որպէս եղեւ համանայ ( եսթեր . դ . 4 . և է . 9 : ) ՚ Բանզի պատահի երբեմն՝ զի 'ի փոխիւ հանգամանաց անձինն , այն չարն՝ զոր մեղաւորն կամ մէր հասուցանել նմա՝ հասանէ ինքեան :

Վ'ո քեզ օրինակ զայս դիպուած , որ պատահեցաւ 'ի կողմանս պանկալայու . այր ոմն 'ի ձանապարհորդել իւրում ընդ գետն գանգէս՝ ելեալ 'ի ցամոք եհատ զփայտ , և ցելոց առ ափամբ գետոյն , ուր կայր 'ի մէջ ջրոյ կոկորդիլոս մի բերանաբաց , զոր ոչ տեսանէր այրն . իսկ առիւծ մի ելեալ յանտառէ՝ անմուռնչ և մեղմով սկսաւ մերձենալ առ այրն յափշտակել զնա . և 'ի նմին պահու՝ յորում այրն այն կորանայր ուժգին 'ի վայր 'ի ձեղքել զփայտն՝ ուտեաւ . միանգամայն և առիւծն 'ի վերայ նը . բայց 'ի թափոյ յարձակմանն և 'ի կորանալոյ առն՝ զանցեաւ զնովաւ , և անկաւ 'ի միւս կողմն 'ի բերան կոկորդիլոսին և կորեաւ . ուր ահա չարիք առիւծուն՝ օրսացին զնա 'ի կորուստ :

Ըստ այսմ պատահի բազում անգամ և մեղաւորաց , որք 'ի կամիլն չասուցանել արդարոց՝ մանաւանդ տկարաց , այնպէս փոփոխէ անձ զհանգամանս իրացն , զի տկարք զերծանին 'ի չարեայ անտի , և մեղաւորք մատնին 'ի նոյնս . և զի զայս առնէ անձ արդարութք և իրաւամբք , զսոյն զայս խոստովլան լինելով մարգարէին՝ յարէ զինի և ասէ :

Ճ՛կ . **Օ**ւանեայ , զի առնէս թը զշաբասունն աշխարի . և շիւաւանն գնանի :

Արկնակի առնէ անձ զդատաստանս աղքատի յաստի կեանս . մի՝ զի 'ի տեսանել զանմեղութի նորա յայն ինչ՝ յորում հարստահարի 'ի մեղաւորաց՝ դատաստան առնէ զնմանէ անպարտ լինիլ . որպէս բազում ան-

դամ արար ընդ դաւիթ : Երկրորդ՝ զի տեսեալ  
շարստահարիլ աղքատին՝ թէպէտե թոյլ տայ ,  
բայց յետոյ աղատէ զնա . և երբեմն փառօք ևս բարձ  
բացուցանէ . և զարիսն՝ որով հարստահարիւր , դար-  
ձուցանէ 'ի հարստահարօղն :

Այնպէս առնէ և տնանկի , ցուցանելով սմա զիրա-  
ւոնս կրկին օրինակաւ . մի' զի 'ի տեսանելն զմեզա-  
ւորս անիրաւութէ բերիլ առ տնանկն կամ զրկել  
զնա և այն , արժան դատի կալ 'ի կողմն նորա և  
պաշտպանել զնա . և երկրորդ՝ 'ի տեսանելն զանիրա-  
ւութէ մեղաւորաց ընդդէմ տնանկին՝ զնոյն զայն  
իբրև զտուն արկանէ 'ի պարանոց նոցա , առ 'ի մատ-  
նել զնոսա 'ի չարիս կամ 'ի կորուստ : Եւ զի զայս  
ամենայն յայտնի տեսեալ էր մարդարէն բազում ան-  
դամ յանձն իւր և յայլ , վասն այսորիկ վատահու-  
թէ ասէ :

( ) Հանեայ չէ առնէս թը շապաստանս աշխատի . և չէրա-  
ւունս գնանէ : Այսինքն ստուգիւ զիտացի 'ի բա-  
զում փորձոյ անձինս , և 'ի տեսութէ այլոց բազմաց ,  
ևս և յօրինաց քոց՝ զի ոչ թողուս զաղքատն իսուառ  
'ի ձեռս մեղաւորաց , այլ իննամ ունելով 'ի վերայ  
նորա 'ի տեսանելով զնա հարստահարեալ 'ի մեղաւո-  
րաց՝ պաշտպան լինիսնմա . սոյնպէս առնես և տնան-  
կին , և ինդքես վրէժս 'ի հալածչաց նորա :

Խոկ բառիւքս աղջտաք և դնանէ ոչ է պարտ իմանալ  
սոսկ զանստացուածս , այլ զայնս՝ որք ոչ կարեն ան-  
ձամք զանձինս զերծուցանել 'ի հալածչաց իւրեանց ,  
և չունին զոք ինքեանց պաշտպան՝ բայց միոյն զած .  
որոյ վասն և ած տիրապէս զգուշանայ 'ի վերայ նո-  
ցա , իբրև 'ի վերայ այնոցիկ՝ որք իւրքն են :

Խորհրդաբար՝ 'ի ձեռն աղքատի և տնանկի իմա-  
ցեալ լինի աղքատացեալ և տնանկացեալ բնութիւն  
մարդկային որում արար ած զգատաստան , և եցոյց  
զիրաւունս . և զի զայս ծանեաւ մարդարէն հոգւով՝  
վասն այսորիկ ասէ ծանեայ , և այլն . Օ այս եղեալ  
մարդարէին , 'ի գոհութէ աւարտէ զբան իւր , և ասէ :

ԺԴ. Արդարության գոհասցին զանուանէ ժումիլ. և բնակեացին ռաշից առաջի երեսաց չոյ :

Արդարովք և ուղղովք կարեն իմացեալ լինիլ աստ նոքա՝ զօրս 'ի նախընթաց համարն կոչեաց աղքատս և տնանկս . որք վասն պաշտպանեալ լինելոյ յոյ՝ գոհանան զնմանէ . բայց պատշաճ ևս է արդարովք և ուղղովք իմանալ աստ 'ի հասարակի զու և իցե արդարս և ուղիղս սրտիւք , որոց անկ է օրհնել զոծ և գոհանան զնմանէ . ուստի և անորոշակի խօսի մարդարեն՝ ասելով :

Արդարտ գոհասցին զանուանէ ժումիլ : Այսինքն , տեսեալ արդարոց զբարերարութիւնս այ և զինամս նորա 'ի վերայ արարածոց՝ ուրախ լիցին և գոհասցին զնմանէ . և զի 'ի գոհանալն զոյ՝ յիշեն զանուննորա , փոխանակ ասելոյ գոհասցին զքեն՝ ասէ գոհասցին զանուանէ քումմէ , որ է ասել . 'ի բերան առեալ զանուն քո՝ գոհութի և փառաբանութի մատուսցեն քեզ : Եւ քանզի այսպիսիքս ունելով զուղղութիւն սրտի աներկեան ցնծութք կան առաջի նորա , յայս հայելով յարե զկնի և ասէ :

Եւ բնակեացին ռաշից առաջի երեսաց չոյ : Բնակիլ առաջի երեսացն այ չորեքկին կարե լինիլ . մի՝ ըստ այնմ՝ ըստ որոյ մարթ է արժանապէս յանդիման լինիլ նմա 'ի տաճարի նորա , և անդ օրհնել զոծ . և այս յայտ է թէ ուղղոց վայել է : Երկրորդ՝ ըստ այնմ՝ ըստ որոյ հնար է ունել զանձն 'ի ներկայութեն այ , և առաջի մեծ վայել չութեն նորա կալով բերկրիլ 'ի նա , և անդ որբանալ յանձին՝ չունելով տանջանս խղճի 'ի վերայ չար գործոց . և կամլի լինիլ աչօք մտածութեց առաջի այ ըստ այնոցիկ չորից կենդանեաց՝ զորոց ասէ յովհաննես 'ի յայտնութեն . ( դ . 6 . ) թէ \*լի „ էին աչօք ” : Երրորդ՝ ըստ այնմ՝ ըստ որոյ արժան է խաղաղութք վայելել 'ի նախախնամութեն այ , և 'ի բազմապատիկ բարերարութիս նորա : Եւ չորրորդ՝ ըստ այնմ՝ ըստ որոյ ակնկալեալ լինի գեմ յանդիման տեսութք վայելել զերեսս նորա , և զմայլիլ յաւիտեան , որ խօստացեալ է ուղղոց սրտիւք . և երեկ թէ այս է յատուկ իմացուած առաջի եղեալ

բանիս՝ զի բնակիլ առաջի երեսաց՝ է տեսանել զե-  
րեսս և կալ գեմյանդիման . և զի որ տեսանէ զե-  
րեսս այ՝ նովին տեսանէ և զած, նոքա՝ որք ուղիղք  
են սրտիւք, կամ՝ ոքք սրտիւք, տեսանելով զերեսս  
այ՝ այնու տեսցեն զած . ըստ այնմ. ( մատ . Ե . 8 )  
\* երանի այնոցիկ՝ որք ոքք են սրտիւք՝ զի նոքա զած  
,, տեսցեն || , ևս և բնակեսցեն յանդիման նորա 'ի  
տան նորուն յաւիտեան :



## ՍԱԴԻ ՈՒ ՃԱԹ:

Պաղատանք առ ած վասն ընդունելի լինելոյ աղօթից  
իբրև զխունկ, և համբարձման ձեռաց իբրև զպա-  
տարագ երեկոյի, և վասն ընդունելոյ զօդնականու-  
թի առ 'ի զուսպ ունելոյ զյարձակումն լեզուի, և  
վասն զերծ լինելոյ 'ի կցորդութիւն ամպարշտաց, և  
հաղորդ գտանելոյ արդարոց . յայտ առնելով միան-  
գամայն և զչարիսն՝ որք հասանեն նոցին իսկ ամարշ-  
տաց :

## Աղջոս 'ի դաւիլ :

**1** *Տ*էր հարդացի առ ժեշ՝ և լուր ինչ, նայեա 'ի չայն ա-  
շունեց իմոց՝ 'ի հարդալ իմում առ ժեշ : 2 Ուշել եղե-  
ցին աղօնտ իմ որդիկ խունի առաջի չո թր . համբարձուն չե-  
տաց իմոց պատարագ երեիոյի : 3 'Պ'էր աէր՝ պահապան բերա-  
նոյ իմոց . և դուռն ամուր շրմանց իմոց . չի մ' խոպոբեսցի  
սիրո իմ բանիւ չարութե : 4 Պատճառել զպարճառ մշաց  
ընդ մարդու, որ գործեն զանօրնութիւն . և ոչ եղեց նորու ընդ-  
րելեցաց նոյա : 5 Խրառեսցի չիս արդարն ոշորմութե՝ և յան-  
դիման արտացէ . իւշ մշառորէ մ' օծոյէ զգըւին իմ, և աղօնտ  
իմ 'ի համո նոյա : 6 Արգելան մերչ առ վեհին դադառորդնո-  
յա . լունեցին բանից իմոց՝ և տաղըրացին : 7 Արդիւն նանչըու-  
թիւն, չի ստուալ է 'ի վշրայ երիւէ . շրմեսցին ոսկերէ  
նոյա մեջ 'ի դժուս : 8 Առ ժեշ թր՝ թր՝ են աշ իմ . 'ի  
ժեշ յուսացայ . մ' հաներ շհոգի յինէն : 9 Պահեա չիս յոր-

Գայլէ՝ որ Ասգուշտ էնք, 'ի Գայլագլութէ Գործողին շահովէնութէ։ 10 Անհնին 'ի շանցս նորա մշտորտ, մայն էմ էս՝ մինչև անցից։

## ՎԵՐՆԵՐ ԳԻՅ.

Ապղմոս 'ի դաւելւ։



**Յ**ԵՐԱՄՈՒՋԵԼԵՎՈՎԻ ԱՎԵՐ ՄՐՈՍ  
մեր, նոյնպէս և 'ի քանի մի տպագրեալս  
յաւելեալ լինի 'ի վերնագրի աստ և  
բառդ 'ի հագարած։ և 'ի միում բառս ալչըւեա։ բայց  
քանզի ոչ գտանի այդ ոչ յայլ ձեռագիրս և ոչ յերը<sup>ն</sup>  
և ոչ 'ի թարգմանութիս եօթ<sup>ն</sup> և լատ<sup>ն</sup>։ վասն որոյ  
պարտ է 'ի բաց թողուլիքը և աւելորդ։

Օ այս սաղմոս ոմանք տան եզեկեայ արքայի հայե-  
լով 'ի սպառնալիս սեննաքերիմայ։ այլք վերածեն 'ի  
ժամանակ գերութեն բաքելացւոց։ իսկ հասարակաց  
կարծիք է թէ զայս ասաց դաւիթ հայելով 'ի ժամա-  
նակս հալածանացն սաւուղայ, 'ի խնդրել նորա յայ  
պաշտպանել զինքն, և տալ տանիլ համբերութը հա-  
լածանացնորա։ և մի անկանիլ 'ի տրտունջ ընդդէմ  
նորին կամ ընդդէմ այլոց, աղաչելով և ևս զի ան-  
կցորդ պահեսցէ զինքն յընտրելոց նոցա, և պատժոց  
նոցին։

Եւ քանզի 'ի սաղմոսի աստ 'ի համարն։ 3. յիշի պա-  
տարագ երեկոյի, այս սաղմոս կոչի յոմանց երե-  
կոյեան։ որոյ աղագաւ և 'ի ժամերկութ մերում  
յերեկոյն ասի այս՝ յարելով 'ի նախընթաց սաղմոսն  
հանդերձ յաջորդ սաղմոսիւ, առ 'ի խնդրել մեզ յայ  
ընդունիլ զաղօթս մեր, և պահել զմեզ 'ի խաւարային  
փորձութեց և 'ի գիշերային վտանգաց։

## Բ Ե Ւ :

Թ. **Տ**էր հարդաշի առ ժեղ՝ և ընտ ինչ. նայեա' ՚է չայն  
աշօնեց եմոց ՚է հարդալ եմում առ ժեղ:

## Մ Ե Կ Շ Ո Ւ Թ Ի Ւ :

**Վ**արդալ առ նա նշանակէ սրտի մտօք աղաղակել  
առ նա. և եթէ այս լինիցի կոչմամբ անուան նորա  
ասի կարդալ զնա, այսինքն է ասել, նա իմ, կամ նա  
չհմարիտ, կամ նա իսրայէլի, կամ տէր և այն:  
Օ երկոսին ևս առնէ աստ մարդարէն՝ նախ կարդայ  
զած յասելն կոչականապէս տէր. և ապա ցուցանէ  
աղաղակել առ նա՝ յասելն յայտնապէս՝ կարդացի առ  
քեզ. իսկ այս կարդալս թէպէտ և ըստ իւրում նշանա-  
կութե՛ ՚ի մէջ բերէ զարտաքին ինչ ձայն, բայց ոչ  
է պարտ իմանալ սոսկ ըստ արտաքին կոչման, այլ  
յաւէտ ըստ ներքնոյն. որով նշանակի բոլորով սրտիւ  
ապաւինիլ յած՝ առ ՚ի գտանել ՚ի նմանէ զպաշտ-  
պանութե՛ ՚ի չարէ կամ զօդնականութե՛ ՚ի բարին:  
Վ սացի բոլորով սրտիւ. քանզի որպէս առ արտաքին  
աղաղակումն պահանջի բոլոր ուժգնութիւն ձայնի,  
սոյնպէս և առ ներքինն ինդրի բոլոր զօրութե՛ սըր-  
տի: Վ յսպիսեաւ ահա ներքին աղաղակաւ դիմէ աստ  
մարդարէն առ նա և ասէ:

**Տ**էր հարդաշի առ ժեղ՝ և ընտ ինչ: Տէր ասելով յայտ  
առնէ՝ թէ ոչ կարդայ իբրև օտար անձն առ օտար  
ոք, այլ իբրև ծառայ առ որ իւր. առ քեզ ասէ ա-  
ղաղակեցի բոլորով սրտիւ՝ և ոչ առ այլս. և արդ դու  
որ լսես զամենայն և տեսանես զամենայն, լուր  
ինձ աղաչեմ: Ոչ ասէ լուր աղաղակի իմում, այլ  
ինձ. որով յայտ առնէ՝ թէ ինդրէ հայիլ ոչ ՚ի պա-  
կասութե՛ աղաղակի իւրոյ, այլ ՚ի կարօտութե՛ ան-  
ձինն. բայց քանզի վստահի ևս թէ աղաղակ իւր ոչ  
է ընդդէմ հաճոյից նորա, այլ է իբր ընդունելի ա-  
ղօթք յայտարար այնը իւրոյ կարօտութե՛ զայն ևս

ՄԵԿՆԱԽԹԻՒՆ  
յառաջ մատուցանէ, և ասէ :

Եայէա 'է չայն աղօնէց իմոց 'ե հարդալ իմում առ ժեզ : Վայ  
նայիլս՝ ըստ որում աստ դնի, յերկու ինչ կարէ ակն-  
արկել. մի՝ յուղղել զաղօթմն. և մի ևս՝ յընդունիլ  
և 'ի կատարել. ըստ առաջնոյն կամի ասել. յորժամ  
աղաղակեցից առ քեզ, դու ինքն ուղղեա՛ զաղաղակ  
իմ, և մի մերժեր իբրև զթիւր և զպակասաւոր. իսկ  
ըստ երկրորդին՝ այս բան իբր հետեւութե՛ յարի 'ի  
նախընթացն, որպէս թէ եղեալ էր. լուր ինձ և ըն-  
կալ զաղաշանս իմ այժմ և առ յապայն ևս՝ յորժամ  
կարդացից առ քեզ : Եւ առ առաւելընդունելութե՛  
աղաշանաց իւրոց յաւելու ասել:

Է. **||**-շեշ եշեցին աղօնէտ իմ որդէս իսունի առաջէ չո դր.  
համբարչուն չեւաց իմոց՝ պատարագ երեկոյի :  
Վայ բան սաղմոսիս յամենայն երեկոյս ասի 'ի մեսե-  
դիս առաջի կենդանարար նրյ խաչին, ընդունելի  
առնել սովաւ զբանաւոր պատարագս մեր . ուստի  
գրէ յովհան խմաստասէր 'ի բանսն՝ որ 'ի մեսեդիս .  
երես . 335 . \* մեսեդին կայ ասէ առաջի խաչին, և  
,, ուղղեալ աղօթք՝ խնկոցն նման . որով զուարձա-  
,, նայ եկեղեցի . զի թէ (աղօթքն) բանական պա-  
,, տարագ ասի 'ի պօղոսէ, ապա 'ի սաղմոսաց ոմն  
,, նաշիչ, ոմն իւղ, ոմն գինի, ոմն խունկ գեղեցիկ,  
,, որպէս խնկարկու հաշտարարն և սաղմոսն ցուցա-  
,, նէ զհամբարձումն ձեռաց պատարագ || :

Վեր ուղիղ լինիլ աղօթից՝ զոր առաջի առնէ մար-  
դարէն, ոչ նշանակէ աստ ունել սոսկ զկատարելունի  
աղօթից, զի այս ենթադրի . այլ ուղղութք ելանել  
աղօթից առ նծ այսինքն ախորժելի լինիլ նմա և հա-  
ճոյական իբրև զբուրումն անուշահոտ խնկոց . յոյը  
սակս և զխունկն յաւելու ասելով :

**||**-շեշ եշեցին աղօնէտ իմ որդէս իսունի առաջէ չո դէր :  
'ի սմին բանի բառդ առաջէ՝ եթէ յարեսցի յանունդ  
աղօնէտ, միտ բանին լինի այս . աղօթք իմ՝ զոր մա-  
տուցանեմ քեզ, այնպէս քաղցրասցին և ընդունելի  
լիցին առաջի քո, որպէս քաղցրանայ հոտոտելեաց  
անուշահոտութե՛ խնկոց : Իսկ եթէ այս բառ յարես-  
ցի յանունդ իսունի՝ միտ բանին լինի այս . այնպէս

ընդունելի լիցին քեզ տէր աղօթքիմ, որպէս ընդունելի էր խունկն՝ որ մատուցանիւր առաջի քո յառաւոտու և յերեկոյի։ Այս յետին խմացուած հարազա.

տագոյն երեկի հայելով՝ ի յաջորդ հատուածն։

Այլ թէ զի՞նչ էր և որպիսի այն խունկ՝ որ մատուցանիւր առաջի նոյ յառաւոտու և յերեկոյի, աւանդի ՚ի զիրս ելից։ (Ե. 34-36.) ուր հրամայէ նուվուիսի առնուլ զըրս տեսակս խնկոց հաւասարաշափ, ստաշին, եղունգն. քաղբան անոյշ, և կնդրուկ երեւլի. և խառնեալ զնոսա ընդ միմեանս՝ առնել յայնց խունկ եփեալ մաքուր ամենեին, և ապա աղալ զայն մանր, և դնել յանդիման խորանին վկայուե՛։ Այս խունկ մատուցանիւր ՚ի տեղւոջն՝ որ կոչիւր սրբուի, ուր էր ոսկի սեղան խնկոց առաջի ներքին վարդուրին, որ բաժանէր զտելին զայն ՚ի տեղւոջէ՝ որ ասիւր սրբութի սրբութեց. և այս էր գործ քահանայից. (Երը. թ. 7. Ելից. Ե. 8:)

Այս մատուցումնս առաւելապէս վասն այսորիկ հաճոյ և ընդունելի լինէր նոյ, զի էր տիպ և ցուցակ կենդանի աղօթից՝ որ մատուցանիւր նոյ ՚ի դիմաց եկեղեցւոյ իբրև խունկ անուշից՝ զանգեալ չորեքումք, այսինքն հաւատով զոր նշանակէ ստաշին. յուսով՝ զոր նշանակէ քաղբանն. սիրով՝ զոր նշանակէ կնդրուկն. և խոնարհուք՝ զոր նշանակէ եղունգն, աղացեալք բեկմամք սրտի, և նուիրեալք ՚ի վերայ ոսկեղէն սեղանոյ հոգւոյն՝ բուրվառաւ կամաց, և բորբոքեալք հրով ջերմեռանդութե։

Դ վերայ այսր խառնման խնկոց գրի ՚ի լուծ. նար. ՚ի բանն ժառ. այսպէս. \* չորս ազգ խունկ խառնեալ, աղային ՚ի սպաս խորանին, այսինքն կնդրուկ, քաղբան, ծակոտկէն, ժեռաւորի. նմանապէս և մարդ չորիւք առաքինութք, որ է խոհեմութի, արիուի, ողջախոհութի, և արդարութի, խառնի ընդ երեք առաքինութիս նաձային. որ է հաւատն, յոյսն և սէրն. և յորժամ այսպիսեօք մատչի ոք, աղաչել զած, քան զտմենայն անուշսհոտ խունկս առաւել հաճոյ և պարարումն է նոյ։ Հայսոսիկ հայելով նարեկացւոյն ՚ի բանն. նո. և զսոյն զայս համեմատելով նուիրման անարժան աղօթից, ասէ։

332 Ա Ե Կ Ի Ն Ո Ւ Թ Խ Ե Վ Ե  
\* Եր 'ի գնելս իմ ընդ քեզ գատ խառնեալ աղեր  
,, սիւ հզօր, մի իրրե զհամբարձումն ձեռաց ամսպարշ  
,, տելոյն յակորու լու բողոքելոյն էսայեայ, և իրրե  
,, զանիրաւուի բարելոնի տաղակալի քեզ երեւեսցի,  
,, զոր առակ եօթանասներորդի երկրորդի սաղմու  
,, սին ազդէ . այլ իրրե զբուրեալ խունկն հաճյա-  
,, կան 'ի խորանին սելովայ, զոր դաւիթ կանգնեալ  
,, նորոգեաց տապանակին հանգստեան 'ի գերութէ  
,, դարձելոյ || . ( ք . թագ . դ . 17 : )

Վ յս մատուցումն խնկանուեր աղօթից կատարելա-  
պէս առնոյր զարժանաւորութէ 'ի հնումն 'ի ձեռն  
մատուցման մեծի քահանայապետին, որով նշանա-  
կիւր օծեալն ած՝ այն է յա քն որ մեր . զի թէ 'ի  
հնումն և եթէ 'ի նորումն՝ նորա ձեռամբ միայն  
իրրե հշմարիտ քահանայապետի հաճյական նուի-  
րիւր և նուիրի որ և իցէ աղօթք և մատուցմանք պա-  
տարագաց . 'ի հնումն՝ հոյելով յապագայ արժանա-  
ւորութէ նորա՝ որ սահմանեալն էր լինել . իսկ 'ի  
նորումն՝ հոյելով 'ի լրացեալ արդիւնս նորին . յոյր  
սակս իսկ բազում անգամ 'ի վերջ աղօթից մերոց  
յարեմք . \* 'ի քոյ յա 'ի որ մեր || :

Վ հա ըստ այսոցիկ հանգամանաց խնդրէ մարդարեն  
ուղիղ 'ի վեր ելանել աղօթից իւրոց . Վ պա եթէ  
պակասեսցին աղօթք մեր յայսպիսի հանգամանաց,  
պակասին և յընդունելութենէ . վասն զի եթէ պա-  
կասեսցի իւիք 'ի հաւատոց կամ 'ի յուսոյ, անկա-  
տար է . եթէ պակասեսցի 'ի հրոյ, այսինքն 'ի սիրոյ  
կամ 'ի բորբոքմանէ ջերմեանցուե՛ ոչ բուրէ զհոտ  
իւր . եթէ պակասեսցի սեղան հոգւոյն կմ բուրվառ  
դիտաւորութե՛, և միայն մարմառ կամ բերանով մա-  
տուսցի, անպիտան համարի . եթէ պակասեսցի 'ի  
զգաստութէ ժողովման մասց՝ ոչ ուղիղ 'ի վեր ելա-  
նէ՝ այլ ցրուի աստ և անդ հողման շփոթուե մասց .  
հուսկ յետոյ որ մեծն է՝ եթէ պակասեսցի 'ի մաս-  
նակցութէ արժանաւորութե՛ ոնն մերոյ՝ ամենեին ու-  
նայն է և սնոտի . Օ այս ամենայն դիտեալ մարդա-  
րէին՝ կամելով ապա առաւել ևս թափանձելի առնել  
զբան իւր՝ կրկնէ զնոյն այլովք բառիւք, և ասէ :  
Համբարյան յեւոյ ինո՞ դարսուստ եւենոյի : Համբարձ.

Ա Ա Դ Ա Տ Տ Ա Խ Ա Խ  
մամբ ձեռաց նշանակի աստ աղօթքն մատուցեալ՝ 'ի  
վեր ունելով զձեռս . ըստ որում սովորութիւն է մանա-  
ւանդ յարեելս 'ի վեր համբառալով զձեռս աղօ-  
թել . յոր միտսյորդոր եղեւ մարդարեն ('ի սաղ . չէք .  
շ.) ասելով . \*'ի գիշերի համբարձէք զձեռս ձեր  
,, (յաղօթս) 'ի սրբութիւն , և օրհնեցիք զմբը || . յայս  
յորդորէ և առաքեալն ասելով . (ա . տիմ . թ . 8 .)  
\* կամիմ զի արք կայցեն յաղօթս յամենայն տեղիս .  
,, բառնայցեն զոր ձեռս 'ի վեր առանց բարկութե-  
,, և երկմտութեկ || . 'Կ սոյն յորդորէ զմեզ և քարոզն  
առաւտեան . և զոյն առաջի առնել աղօթքն երե-  
կորի . յորոց վերայ ասէ մեծն խոսրով ('ի մեկն . ժա-  
մագը . երես . 334 .) \* քանզի աղօտելը մարդարեն  
,, զհամբարձումն ձեռաց լինել պատարագ երեկիոյի ,  
,, (սմին իրի) համբառամբ և մեք փոխանակ պա-  
,, տարագի զձեռս առ անկարօտդ տծ , բովանդակ  
,, զմեզ պատրաստելով պատարագ կենդանի . (ըստ  
որում և ասեմք 'ի քարոզիս , ամենեքին համբառ-  
,, նալով զձեռս մեք փառաւորեմք զքեզ տծ մեր) || .  
Օ սոյն և յերեկոյի աղօթսն ասեմք , ընկալ զաղա-  
չանս մեք զհամբարձումն ձեռաց մերոց և զբանս աղօ-  
թից , սրբելով զերեկոյի պատարագս մեր 'ի հոտ ա-  
նուից . (զորմէ գըլէ երես . 338 .)

որ կից է ընդ նմա , ըստ այսմ և աստ անուն գործութեամբարձման ձեռաց դնի փոխանակ անունն այնը իր՝ որ կից է ընդ նմա , ըստ այսմ և աստ անուն գործութեամբարձման ձեռաց դնի փոխանակ անունն աղօթից՝ որ կից է ընդ այնմ : Ալստի և բառիւս համբարձուն յեւաց ուղղակի նշանակի աստ այն աղօթից՝ բարձուն յեւաց ուղղակի նշանակի աստ այն աղօթից :

\* սրբեացնւք զմեռս շխառնակելով՝ հրաժարելիսն .  
,, զի ընդ յափ յազօթ ս ամբառնայց եմք . և լինիցի մեզ  
,, այն ըստ մարգարեին որատարագ երեկորի իրըն  
,, զիսունկ անուշահոտ կացեալ առաջի ոյլ || .

Խսկ պատճառ յիշելոց մարգարեին զհամբարձումն ձեռաց՝ բազմապատիկ կարե մասածիլ . մի զի յարգոյ ցուցցե զազօթ սն . վասն զի յաւելումն աշխատութե ձեռաց ՚ի գործ ինչ յայտ առնկ յաւելուլ և զյարգ այնը գործոյ , նաև զի նոյն իսկ ձեռն յարգուհ ցոյց է՝ առ ՚ի լրումն գործոյն . և ՚ի նշանայօր՝ ասեմք , թէ ած ձեռամբ իւրով ստեղծ զմարդն . որով ցուցանել կամիմք զյարգոյ լինել մարդոյ քան զայլ մարմնաւոր ստեղծուածս . ըստ որոյ որպէս և տեսանեմք՝ ՚ի վաստակս ձեռաց յանձնեաց ած զկատարումն մեծամեծ գործոյ . յայտ իսկ որպէս ասէ գեորգ վարդապետ ՚ի մեկն . եսայի . \* զմեռս համբուրեմք զքահանույից և ոչ զգլուխ . զի ձեռացն հաւատացան մեծամետ . ծացն սպասաւորուիք , զի նորօք ծնանի հոգեոր ծնունդն . յորոց վերայ գնէին զմեռս առաքեալքն՝ ընդունեին զհոգի ոք || . նա և յաշխարհականն յարգոյ են ձեռք . զի ոչ միայն տան համբուրել զայնս , այլև նորօք վարին յողջունելն և ՚ի հրամայելն :

Երկրորդ՝ զի ցուցցե թէ իբրե ընծայ և պատարագ ձեռամբ մատուցանէ զազօթ սն առ ած , հանդերձանօք անուշութե ինկոց : Հոր միտս մազթէ նարեկացին ՚ի բանն . դ . ասելով . \* եթէ ձեռն մաքուր ինն . կով հանդերձեալ առ քեզ համբարձի , հասեալ միացեալ ընդ իմա ձայնի և աղաւանացն աղերս յա . ուաջ մատուցեալ :

Երրորդ՝ զի ցուցցե թէ յազօթելն ՚ի վեր ամբարձեալ ունի զինքն և զգործս իւր՝ ըստ որում ձեռաօք իրը մասամք նշանակի բոլոր անձն , և իբր գործեօք նշանակի գործքն :

Չորրորդ՝ զի ցուցցե թէ աղօթքն յաւետ պարտի լինիլ համբարձմամք մտայ՝ որ է ձեռք հոգւոյն քան բարձրացուցմամք ձայնի : Հոր միտս ասէ եզնակ կողքացի ՚ի խրատան . արդարե չլաւագոյն է զմեռս համ . բանալ առ ած յորժամ աղօթեցի մարդ . բայց առաւել կարեօր է ( ամբառնալ ) զմիտսն || : Հօրի .

Հինգերորդ՝ զի ցուցցի թէ, խալակցութէ ան մատուցանէ զազօթսն. ըստ որում՝ ի համբառնալ մարդոյ զձեռս իւր յաղօթսն՝ յանդիման առնել զձե խաչի. յոր միտս ասել բարսեղ վարդակետ ( 'ի մեկն. մարկ գլ. ժէ. ) \* ձագք ի ձե խաչի թռչնին յերկինս. նաև մարդ յորժամ աղօթէ՝ զկերպ խաչի ունի ( թռչնի առ անծ ) . Արդ մալթէ և պաղատի մարդարեն, զի այսպիսի լինելով աղօթից իւրոց՝ ընդունելի լինի.

ցի այ իբրև զպատարագ երեկ կոյի ։  
Խոկ այսու երեկ կոյէան պատարագ աւս իմացեալ լինի  
նախ նուիրումն իննկոց ։ զորմէ խօսեցաք ՚ի վերց ։  
զի ոչ միայն յառաւօտու ։ այլև յերեկ կոյի մատուցա-  
նիւր այն ։ յոր միտս կամի ասել ։ աղօթք իմ զոր մա-  
տուցանեմք եղ ։ համբարձմամբ ձեռացս լինիցի իբրև  
զպատարագ իննկոց ։ որ մատչի յերեկ կոյի առաջի քո ։  
տես և ՚ի վերց յառաջնում հատուածի զի ոնպին

Արեկը որ հաւանականագ զյն ևս է, իմացեալ  
լինի զոհն երեկոյեան գառին. քանզի որպէս աւան-  
դի ի սր դիբս. ( Ելից. իթ. 41. և Յուոց. իթ. 8.  
և դ. Բագ. ժշ. 15. և ի. և զը. թ. 4. և 5. )  
յիւրաքանչիւր աւուր երկու տարեօր անարատ զ-  
ունք զոհեալ լինէին առաջի ման. մին ընդ առաւու-  
ս և միւսն ընդ երեկոյս. ընդ որում մատուցեալ լինէր  
նաշին թրմեալ իւղով մզելով, ևս և զինի. որպէս  
և տեսանի ի նշանակեալ տեղիով. ( և զետ. դ.  
15. ) Հայս միտս առեալ կամբ առել. որպէս հաճոյ  
և ընդունելի է առ քեզ զոհ գառինն մատուցելով  
յերեկոյի, սոյնպէս հաճոյ լիցին քեզ աղօթք իմ.  
Օ այս զոհ գառին պատրագ անուանէ, և զաղօթք  
իւր հանգոյն նմին իբրև զուտարագ ընծայել փա-

փաքի . զոր և այլուր պատարագ օրհնութե կուլ .  
վասն զի որպէս զըէ ծործորեցին ( 'ի մեկն . մատ .  
գլ . ե . ) \* պատարագ ոչ միայն զողակե զն է կար .  
ո ծել որպէս 'ի հինն , և կամ 'ի նորս զմարմնոյ և  
զարեան տն մերոյ ընծայութն , այլե զաղօթ մն . ը  
ո այսմ պատարագ օրհնութե փառաւոր առնե . և  
թե համբարձութն ձեռաց իմոց պատարագ երե .  
կոյի ! : { որոյ վերայ ասէ բարսեղ վարդապէտ . ( 'ի  
մեկն . մարկ . գլ . ֆ . ) \* եթէ զմեռսդ չկարես տու .  
րածել , տարածեա զմիսոդ 'ի վեր քան զերկինս  
, իբրե զպատարագ երեկոյի ! : Աշ 'ի գլ . ժշ . յայտ  
առնե թէ այս ընծայութի յաջողի 'ի ձեռն խոնար .  
հութե աղօթից . յասելն . \* հոսովք բարեգործուե  
ո և կակլութք , այսինքն խոնարհութք աղօթից  
իբրե անոյշ իւզովք ընծայաբերք լիցուք այ . մինչ  
զի կարասուք ընդ դաւթի տակ . ուղիղ եղիցին  
, աղօթք իմ որպէս խունկք առաջի քո տր , համ .  
բարձութն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի . զի  
որքան առանց զզման լուսոյն աղօթեմք , ը վայր  
, և , և չողտիմք ! :

Խոկ թէ ընդէր զերեկոյին ասէ մարդարեն , մարթ .  
է զայլեայլ պատճառս 'ի մէջ բերել ըստ այլեայլ  
մասց : Իստ նկարագրին՝ ասի յոմանց՝ թէ վասն զի  
զայս սազմոս ընդ երեկս երգեաց մարդարեն , սմին  
իրի մաղթէ համոյ ընծայել ըստ երեկոյեան պատա .  
րագի : { Յոմանց ևս ասի՝ թէ վասն զի զայս սազմոս  
մասց մարդարեն վասն երգելց 'ի տաճարի յերե .  
կոյեան պաշտաման . որոյ աղագաւ աղաւէ , զի և այս  
աղօթք լինիցի պատարագ երեկոյի հանգոյն երե .  
կոյեան զոհի : { Յուելու վարդան թէ վասն զի զայս  
մասց դաւիթ 'ի հալածման , որ օրինակի յերեկոյ :  
Իստ բարոյական իմաստից՝ ասի յոմանց , թէ որով .  
չետե անդ որբութք և անզբաղութք մատուցանիւր  
երեկոյեան պատարագն , վասն այսորիկ և մարդարեն  
ինդքէ յայ , զի և աղօթք իւր իբրե այնպիսի ընկա .  
լեալ լինիցի 'ի նմանէ : { Յայլոց ևս ասի՝ թէ երե .  
կոյեան պատարագն գոլով վերջին պատարագ առուրն  
ինդքէ մարդարեն՝ զի աղօթք իւր ընդունելի լիցի  
այ իբրե ծայրագոյն պատարագ :

Ոստ այլարանական խորհրդոյն՝ որ առանո՞ք իրը  
նպաստեկ գիտի, ոյցն այս հայի ՚ի գեմա քոփ բազում  
օրինակաւ, մի՛ զի քոյ յերեկոյանալ կմ' ի լրանալ ժու.  
մանակի եկեալ յաշխարչ պատարագ եաց զանձն վո  
փրկութե մերոյ : Երկրորդ՝ զի յերեկոյանալ զատկի  
աւուրն պատարագ մասուցաւ ՚ի վերայ խաչին . եր  
բորդ՝ զի զոր միանգամ կը եաց ՚ի կեանա իւր, որ հու  
մեմատի ցերեկի զայցն լրացոյց ՚ի մաշու՝ որ հանե  
մատի երեկոյի . առ որս հայելով յերեկոյի մասոյց  
զանարին զայցն ամենահրաշ պատարագ ՚ի վերեա  
տան : Չորրորդ՝ զի որպէս ասի՞ քոյ երկիցս մասոյց  
զինքն պատարագ հօր. մի՛ ՚ի տղայութե ՚ի քառա  
նօրեայ աւուր ՚ի տաճարի . և այս կոչի առառ ստեան,  
զի յառաւ օտու կենաց նորու եղեւ . ըստ որում հասակ  
տղայութե յառաւ օրինակի . և մի ևս՝ ՚ի լրացեալ  
հասակի ՚ի վերայ խաչին . և այս կոչի երեկոյան,  
զի եղեւ իւր յերեկոյի կենաց . յորում և բովանդա  
կեցաւ լրութե փրկագ ործութեն :

զնոսա հաստատուն՝ զի մի անկցին . իսկ ՚ի տեսանելն  
զնոսա գլորեալս, ձեռն կարկառէ նոցա, և ՚ի վեր  
առնու . և զայս պարտ է իմանալ առաւել և հոգե-  
որին քան ըստ մարմնաւորին . որպէս արար ը դա-  
ւիթ, ընդ պետքոս, և ընդ այլս բազումն :

Վ. յլ քանզի ընդ հանրապէս դնէ մարգարէն յասելն՝  
զամենայն վտանգեալս պահէ անձ և զամենայն գլո-  
րեալս կանգնէ, յայսմանէ կարէ ոք առարկել՝ թէ  
զիարդ ապա բազումք որք գլորին և կործանին՝ մնան  
՚ի կործանման անդ՝ եթէ ըստ հոգւոյ և եթէ ըստ  
մարմնոյ : Վ. յսմ համառատ պատասխանի այս է . ամե-  
նեքին որք միանգամ ՚ի վտանգի են անկանելոյ՝ և  
ոչ անկանին, այս վասն այսորիկ է՝ զի անձ օդնէ նո-  
ցա, և պահէ զի մի անկցին . սոյնպէս և ամենեքին  
որք միանգամ անկեալն են և կանգնին, այս վասն  
այսորիկ է՝ զի անձ կանգնէ զնոսա : Իսկ որք անկա-  
նին, և որք յանկմանէն ոչ կանգնին՝ այս է՝ կամ ՚ի

452 ԱՐԵ Կ Շ Ո Ւ Խ Թ Ֆ Ե Ռ Շ  
պակասաւորութէ և կամ 'ի շարութենէ նոցա , և  
ոչ 'ի պակասութէ օգնութեն այ կամ բարութեան  
նորա , որ յամենայնի անպակաս է առ ամենեսին՝  
որպէս և յայտ է ամենեցուն՝ վկայութեամբ խղճի  
մտաց իւրեանց . զի որք վտանգին մերձ 'ի գլորիւ , 'ի  
վտանգի անդ զգան՝ թէ ած իւրով պաշտպանութք  
հասանէ նոցա յօդնութի 'ի հաստատել , զի մի անկ-  
ցին . սոյնպէս և որք անկեալ իցեն և կործանեալ ,  
զգան՝ թէ ած ձեռնտուութիւրով ժամանէ նոցա ,  
զի կանգնեսցին . և քանզի յամենայնի և առ ամենե-  
սին այսպէս վարի ած , չշմարտիւ ասի՝ թէ \* հաս-  
,, տատէ : ար զամենայն գայթակղեալս և կանգնէ  
ո զամենայն գլորեալս : Վ պա թէ մարդու ոչ անսաս-  
ցէ ազդարարութեն այ և գլորեսցի , կամ մերժելով  
զձեռնտուութին այ ոչ կանգնեսցի , իւր համարեսցի  
յանցանքն կործանելոյ կամ կործանեալ մնալոյ ,  
որպէս եղե 'ի սաւուզ , 'ի յուդա և յայլս բազումս :  
Վ յս ինամք այ թէպէտե ըստ մարմնոյ և ս իմացեալ  
լինին , ըստ որպէս ասացաք՝ առաւել ըստ հոգւոյ  
եր իմանալի . խօսի ապա և զայնց ինամոց որք առա-  
ւել ըստ մարմնոյ իմացեալ լինին քան ըստ հոգւոյ :  
Վ Ա Հ Գ ի տելի է՝ զի այս ինամք զորմէ խօսեցաք թէ  
հայի 'ի պահպանութի հոգւոյ , մտածի ըստ ոչ կոր-  
ծանելոյ և ըստ ոչ կորմնելոյ . սոյնպէս և այն ինամք  
զորմէ ունի խօսիլ մարդարէն՝ հայի 'ի պահպանութի  
մարմնոյ ըստ ոչ նուազելոյ և ըստ ոչ պակասելոյ խօ-  
սառ . և զի այս պահպանութի լինի սննդեամբ և լիու-  
թք բարեաց , վասն այսորիկ ասէ :

Ժ Ա Հ Ա Յ Ն . Ա Հ Ա Յ Ն Ե Ր Ա Յ Ն Ի Ա Յ Ն Ե Ր Ա Յ Ն Ի Ա Յ Ն  
գոտ ի երախոր նոցո ՚ի ժաման .

Վ Ա Յ Ն որ է երկելի մասն մարդոյ՝ գնի աստ փոխա-  
նակ ըոլորին , այսինքն փոխանակ մարդոյ ըստ ձեռյ  
թելամութեն , որով ըստ մարտասանից անուն մա-  
սին գնի փոխանակ անուան բոլորին . և պատճառ  
այսպէս գնելոյն աստ այն է՝ զի մարդիկ հասարակօ-  
րէն 'ի յուսամբ յած առ 'ի ընդունիլ 'ի նմանէ զալի-  
տոյս մանաւ անդ զկերասկուր՝ համբառան զալս իւ-  
րէ անց . 'ի վեր առ ած ըստ որոյ ասէ նարեկացին .

( 'ի բանն : լը . ) \* ոռո քեզ հայի ամենայն ակն տեսու .  
,, զի ածդգ ամենայնի . յայս հայելով փոխանակ ասե .  
լոյ ամենէքին 'ի քեզ յուսան , ասէ :

**Ա** մէս ամէնէցուն 'ի սէշ յուսան ուեր . և դու դաս ի բահուն  
նայ՝ ի ժամու : **Ա** յսինքն ամենէքին առ քեզ համբառ .  
նալով զայս իւրեանց զհոգւոյ ես և զմարմնոյ յօւսան  
ընդունիլ 'ի քէն զկերակուր իւրեանց . և դու որ ա-  
բարեր զամենայն , և ամենէցուն ցուցանես զինամն ,  
ոչ զոք առնես անտես , այլ ամենէցուն լիապէս տաս  
զայն կերակուր նոցա 'ի ժամու :

**Ա** յս թէպէտ չարք ոչ յուսան , նոյնպէս և անբանք  
չկարեն , բայց բնական բէրումն կարեաց նոցա լու-  
լեայն գուշ : առ ածդ . և նա ինքն ածդ՝ որ տակաւին  
պահէ զնոսա , գիտելով թէ ոչ ոք է՝ որ նու զպէտս  
նոցա՝ տայ զկերակուր նոցա և զովիտոյս նոցին :

**Ա** յս տալս կրկնակի կարէ իմացեալ լինիլ . միջապէտ  
և անմիջապէս . միջապէտ 'ի ձեռն երկրորդ պատճա-  
ռաց , այսինքն 'ի ձեռն հողոյ , անձրեոյ , արեու , և  
այն . ես և 'ի ձեռն մարդոյ . զի որովհետեւ սօրինըք  
պատրաստէ ած իւրաքանչիւրոց զկերակուր նոցա ,  
սօրիմըք ասի տալ : **Ա** նմիջապէտ ըստ որում ինքն է՝  
որ տայ 'ի բաշխելն իւրաքանչիւրոց անմիջական նա-  
խախնամութք իւրով 'ի ժամու զկարեոր պիտոյս ու-  
տելոյ և ըմպէլոյ :

**Ի** սկ 'ի ժամու տալն՝ 'ի կողմանէ տառղին մասնեալ  
չորեքին կարէ իմացեալ լինիլ . մի՝ յորժմ հարկ քաղ-  
ցուն պահանջէ , և ոչ մոլութին չեշտացուցիլ : **Լ** ըկ-  
րորդ՝ յորժամ ժամանակի ինդրէ , և ոչ թէ յամե-  
նայն ժամու : **Լ** ըրորդ՝ յորժամ արժան իցէ տալ ,  
քանզի կարէ լինիլ թէ շիցէ արժան տալ յայնժամ :  
**Չ** որրորդ՝ յորժամ պատշաճ է յաւետ զայս ինչ տալ  
քան զայն , զի ոչ յամենայն ժամանակի նոյն ինչ է .  
ընծայելի : **Ի** սկ որք միանգամ առանց հարկի . և ար-  
տաքոյ ժամանակի , կամ անարժանութք և յանողատ-  
շամս ուտեն , թէպէտեւ ածդ տայ նոցա զայն , բայց նո-  
քա ոչ առնուն յոյ , այլ իբր յինքեանց , ոչ 'ի ժամու՝  
այլ 'ի տարաժամու :

**Ա** յս զայս պարտ է իմանալ զնոցանէ որք 'ի զէղիութիս  
անցուցանեն զկեանս իւրեանց , և յաւելորդս բէրին ,

որով և վտանգեն զանձինս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ . առ որս հայելով ասէ գեորգ վարդապետ ( 'ի մեկն . եսայ . ) \* վասն այսորիկ տուան կերակուրք . „ զի կերակրիցիմք . և ոչ զի կերակրովք զոգի և „ զմարմին կորուսանիցեմք || : Խսկ որք 'ի պատճառս կարեւոր զբօսանաց՝ վասն փոքր մի հանգիստ տալոյ մարմնոյ արտաքոյ ելանեն հասարակ կարգի , ուրախանալ կամելով 'ի փառս ո՞յ , այն չե ինչ ստգտանելի . զի է 'ի ժամու ըստ ուղիղ զետաւորութե , և ըստ պատշաճաւոր հանգամանաց : Արդ եղեալ մարգարեինթէ տայ ած կերակուր ամենեցուն , 'ի մէջ բերէ այժմ և զեղանակ տալոյն ասելով :

**ՃԵ . ՔԷ .** **Պ**ահաս զիեռն ո՞ . և յշուցանես զամենեսան  
տաշըրութե համօտ ո՞վ :

Խւրաքանչիւր բառք այսր համարոյ յայտնի ցուցանեն  
թէ քանի առատ է ած 'ի տալ ամենեցուն զկարեւոր  
պիտոյս իւրեանց . զի նախ ասէ :

**Պ**ահաս զիեռն ո՞ : Խամի ասել . ոչ ամփոփեալ ձեռօք ,  
և ոչ ձիշդ մատուցմամբ , այլ բացեալ ձեռօք առա-  
տապէս տաս : Այս նմանաբանութի կարէ ցուցանել  
և զդիւրաւ տալն ո՞յ զբարիս իւր . զի դիւրին իմն է  
բանալ զձեռն և տարածել զմատունս , և տալ զոր 'ի  
նմա : Այ զի ձախարակեայ ևս են ձեռք նորա . (Երգ .  
Ե . 14 .) ինքնին և առատ հոսին պարզեք նորին . և  
յոյս միտ կամի ասել . բաւական է բանալդ զձեռն  
քո առ 'ի տալ , և առ 'ի դարմանել :

**Յ**աւելով զբառդ ո՞՝ յայտ առնէ 'թէ ած իւրովի և  
իւր իւրով ձեռամբ մատակարարէ զբարիս , իսկ 'ի  
պատուհասելն՝ ձեռամբ այլոց վարի . որպէս տեսանի  
այս յառակն յայն . յորում ո՞ր քանքարացն ինքնին ետ  
ումեմն տասն քանքար , ումեմն հինգ , և ումեմն մի  
իսկ 'ի պատժել զքանքարաթագոյցն՝ 'ի ձեռն այլոց  
վարեցաւ . ուստի ասէ ծործորեցին 'ի մեկնութեան  
այսր առակի . (մատ . իԵ .) \* 'ի բարեացն տուրս  
„ առանց միջնորդի վարեցաւ . իսկ զվրէժինդրուին  
„ այլոց հրամայէ սպասաւորաց (առելք 'ի դմանէ  
„ զքանքարդ ) || : Այ զի 'ի մատակարարութե բա-  
րեաց՝ լիութե վարի ած , վասն այսորիկ յաւելու

մարգարեն և ասէ :

Եւ լուսանես : Այսինքն՝ ՚ի տալդ զբարիս արարածոց  
քոյ՝ ոչ թողուս զնոսայիմիք մասին կարօտ, այլ զա-  
մենայն կարօտութիւնոցա լցուցանես, և առաւել-  
ես . և այս՝ առ ամենեսին, վասն որոյ դարձեալ յա-  
ւելու և ասէ :

Օ ամենեսէան : Կամի ասել. ՚ի լցուցանելդ զնոսա այս-  
ինքն զարարածո քոյ՝ ոչ ՚ի բաց առնուս զոք, և ոչ  
իսկ զանարգ կենդանիս, այլ զամենեսին առհասա-  
բակ առատապէս խնամես . ոչ ճշդելով այսմ և ոչ  
այնմ ժխտելով՝ այլ հաւասար յամենեսեան ըստ իւ-  
րաքանչիւր կարգի : Ուստի ասէ սարգիս շնորհալի  
(՚ի մեկն . տ . պետ . ե . շառ . ժամ .) \* համապա-  
, տուաբար բանայ զձեռն իւր . և լցուցանէ զամե-  
, նեսեան պարգևոք քաղցրութե կամաց իւրոց ||, զի  
ոչ եթէ ակամայ, այլ յօժարութք տայ . ըստ որոյ  
ասէ :

Վաշշրութիւն էամօք ժող : Ուր բառդ աշշրութիւնշանակէ  
զյօժարակամութիւն կամ զհաճութիւն բարի կամաց .  
որպէս յայտ է յերայականէն . յոր միտ կամի ասել.  
ոչ իրը բռնադատեալ յումեքէ կամստիպեալ ՚ի հար-  
կաւորութիւն, այլ ՚ի բարեյօժարութիւն քաղցր կամաց  
քոց տաս ամենեցուն զսկիտոյս իւրեանց, և նոքիմքք  
լնուս զամենայն . կամ որ նոյն է քաղցր կամօք առա-  
տաձեռնես յամենեսին զամենայն՝ որ կարեսօր է նո-  
ցա . ՚ի սոյն միտս բացատրէ և մեկնէ խոսրով զայտ  
բան . (՚ի մեկն . ժամագր . երես . 382 .) յասելն .  
\* բանայ զձեռն . և կերակրէ զամենեսեան քաղցր կա-  
, մօք իւրովք || . զի արարիչ գոլով ամենեցուն՝ առ  
ամենեսին ցուցանէ զքաղցր կամս իւր : Ուստի գըէ  
դարձեալ նոյն մեծն խոսրով . (երես . 81 .) ասելով .  
\* ըստ սաղմոսողին բանալ հարկիս զամենաբաւական  
, ձեռսդ և լցուցանէս զամենեսեան ՚ի կամացդ քաղց-  
, ըութիւն . քանզի արարչական կամքդ քաղցր է ՚ի վե-  
, ըայ չարաց, և ապաշնորհաց || :

Այլ թերես ասիցէ ոք . ապա զի՞ է զի ոմանք ՚ի կա-  
րօտութիւն : Այս, ոչ զի տայ, այլ զի կի՞  
յայլոց խափանեալ լինին զօր տայ տայ, և կմյանձանց  
յայն կարօտութիւն պարտաւորին . և դարձեալ կամ

զտուեալսն որպէս պարտ եր ընդունիլ այնպէս ոչ  
ընդունին, վասն որոյ և զրկին. և կամ յընդունա-  
կութէ իւրեանց պակասեալ գտանին. և այս ամե-  
նայն որ մեղ իրը անըմբոնելի թուի, յաւուրն յետ-  
նում յայտնի երևեսցի: Յժակ զայլ գաղտնի պատ-  
ճառսն՝ զորս տուատաբաշխ տրն ծածկեալ ունի ՚ի  
շտեմարանս իմաստութէ իւրոյ: Բայց ասելի է ևս,  
թէ սակաւք են նոքայոյժ՝ որոց կարեօր կարօտութք  
ոչ ընուցուն ՚ի բարեաց ըստ բաւականուն իւրեանց.  
զի թէ թռչունք երկնից, և գաղանք երկրի, և ձը-  
կութք ծովու՝ ոչ մնան կարօտ, սյլ պահին ՚ի խնա-  
մոցն ոյ և կերակրին, քանի ևս մարդիկ. և զայս  
եթէ ոք ուշի մտօք զննեսցէ՝ գրեթէ աջօք իսկ տե-  
սանէ. և խոստովան լինի, թէ ոչ իւիք անտես առնէ  
ած զարարածս իւր, զի արդար է յամենայնի և անըստ-  
գտանելի. ըստ որում յայտնէ մարդարէն ասելով:

**Ժ** ժառէ. **Պ** ըտար է աէր յամենայն ճանապարհս իւր և  
նբ է յամենայն ՚ի գործս իւր:

**Ճ** անապարհօք իմացեալ լինի աստ խնամք տեսչուն  
ոյ՝ որով կառավարէ զամենայն արարածս. սոյնպէս  
և գործովք իմացեալ լինին այն ամենայն գործողու-  
թէք՝ զորս ցուցանէ ած ՚ի տիեզերո. և զի յայսմ  
ամենայնի երևի արդարութիւն և սրբուն նորա, վասն  
այսորիկ ասէ:

**Պ** ըտար է աէր յամենայն ճանապարհս իւր: Ավամի ասել.  
որովհետեւ ած է արարեալ զամենայն, և տեսանէ  
զնոսա կարօտեալս՝ ՚ի կերակրելն և ՚ի խնամելն զնո-  
սա՝ արդար գտանի յամենայնի: Այս գարձեալ թէ  
ոչինչ գործէ ած ՚ի կառավարութէ իւրում՝ որ իցէ  
ընդդիմ արդարութէ. այլ զամենայնն արդարութք  
առնէ, զորմէ տես և ՚ի համարն. 14: Այս զի կարէին  
ասել մարդիկ, թէ բազում իրք գտանին յարարածս՝  
որք երևին լինիլ անիրաւ, կամ պիղծ և չար, մանա-  
ւանդ մեղք մարդկան, յայն սակս յաւելու և ասէ:  
Այս նբ է յամենայն ՚ի գործս իւր: **Ա**յսինքն՝ եթէ ան-  
կարգ ինչ գտանի յարարածս՝ այն ոչ է յոյ, այլ յա-  
րարածոց՝ զի ինքն յամենայնի ոք է, և միայն զբարին  
կամի, և զբարին առնէ:

ԵԱՅԼ առ բարւոք իմանալոյ զայս՝ արժան է գիտել,  
զի ամենայն գործք՝ որք գործին յարարածոց, կրկնա-  
կի փաղանշանին . մի՝ զի են գործք այ, և մի ես՝ զի  
են միանդամայն և գործք արարածոց . զորօրինակ  
խօսքն՝ զորս խօսին մարդիկ՝ են միանդամայն գործք  
այ և մարդկան, զի անձ է՝ որ տայ խօսիլ, և առնե-  
իսկ զխօսիլն զայն . միանդամայն և մարդն է՝ որ խօ-  
սի . արդ ըստ որում այ է այն՝ է ար, և անձ ասի  
ար՝ ի նմին, զի զայն միայն առնէ՝ ի խօսս անդ՝ որ է  
բարի : Իսկ այն խօսք ըստ որում է մարդոյ, կարէ  
ունիլ և ունի իսկ զպակասութի ինչ կամ զըարութի .  
և ըստ այսմ պակասաւորութե կամ չարութե այն  
գործ ոչ է այ՝ և ոչ ըստ այսմ ասէ ար լինիլ, այլ  
ըստ այնմ զոր եղաք . և յայս իսկ ոչ դնէ սոսկ՝ ար է  
անձ՝ ի գործս, այլ յաւելու և զիւրն՝ ասելով, 'ի  
գործս իւր:

Իսկ թէ ասիցես, ընթը թոյլ տայ անձ՝ զի այն գործք  
ըստ որում են մարդոյ՝ իցեն պակասաւորք կմը չարք:  
Պատասխանեմ. անձ՝ ի կողմանէ իւրմէ միշտ զայն  
առնէ՝ որ է ար և բարի . իսկ մարդս գոլով պակասա-  
ւոր՝ ի կամիլն գործել իւրով պակասաւորութը՝ անձ  
ոչ բռնադատէ զնա՝ այլ թոյլ տայ . ապա թէ ոչ՝ ոչ  
և գործէր նա ազատութը: Ուստի մարդոյն է յան-  
ցանքն և ոչ այ, մանաւանդ զի և ի պակասաւորու-  
թե անդ մարդոյ անձ ոչ պակաս առնէ՝ ի նմանէ ըզ-  
շնորհս իւր, այլ և ըստ բաւականին տայ՝ կամելով  
առ բարին ուղղել զգործս նորա: Ե՞ւ քեզ այսմ օրի-  
նակ զջանս ձարտար գրադրի, որ առեալ՝ ի ձեռին  
զգըիչ գրէ նովաւ . և ի գրելն միշտ ջանայ ըստ ար-  
հեստի և բարւոք գրել . սակայն եթէ գրիչն իցէ  
վատթար՝ ի գիրն անդ տեսանի պակասաւորութի մեծ.  
և այս պակասութի յայտ է թէ ոչ է՝ ի ձարտարութէ  
գրագրին՝ որ առ ուղիղն մղէ զգըիչն, այլ՝ ի վատթա-  
րութէ գըշին: Այսնպէս առնէ և անձ՝ ի գործել մար-  
դոյ իւրով պակասաւորութը, զի՝ ի նմին իսկ պա-  
կասաւորութե միշտ յուղիղն վարէ զգործ նը . բայց  
պակասաւորութի մարդոյ կամ մանաւանդ չարութի  
նորա ըդէմ գառնալով արատաւոր կացուցանէ ըզ-  
գործն: Ե՞պաքէն հոգի մարդոյ ուղիղ շարժէ զան.

**ՄԵԿՆԱՏԹԻՒՆ**  
 զամս իւր . և սակայն եթէ կաղիցէ ոտն՝ 'ի թիւրն  
 բերի . և այդ թիւրութի ոչ է 'ի շարժելոյ հոգւոյն ,  
 այլ 'ի կաղութէ ոտին . Այնպէս և 'ի շարժել ոյ  
 զմարդն 'ի բարին՝ եթէ նա թիւրեսցի , այն թիւ-  
 րութի ոչ է յոյ , այլ 'ի մարդոյ . և այս՝ կոմ ըստ  
 շարութեանն և կմ ըստ ոչ տեղի տալոյն : Խսկ եթէ  
 տեղի տայր մարդ ուղիղ շարժմանն ոյ , կամ ոչ  
 ընդդէմ դառնայր այնմ , այլ զօրացեալ նովաւ՝ դի-  
 մէր առ նա , օժանդակիւր 'ի նմանէ՝ գործել ա-  
 ռանց այնորիկ պակասաւորութե : Օ այս օժանդա-  
 կելո ոյ՝ նմանութք իմ առաջի դնէ մարդարէն 'ի  
 յաջորդ համարն 'ի մերձ կալոյ նորա , 'ի մէջ բերե-  
 լովիրը առիթ զդիմել մարդոյ առ ոծ . ուստի ասէ :

**ԺՂ. Հօֆ.** **Ա** Երչ է տէր առ ամենեսեան , որ էաբդան առ  
 նա . առ ամենեսեան՝ որ էաբդան առ նա  
**Ճշմարտութե**

Բառս Երչ լինիւ՝ ոչ ցուցանէ աստ զայն ներկայութին  
 ոյ՝ որով ասի լինիւ յամենայն տեղիս . զորմէ և խօ-  
 սեցաւ մարդարէն . 'ի սաղ . Ճլը . 5-9 . այլ յայտ առ-  
 նէ զմասնաւոր ձեռնտութին ոյ յօդնել և 'ի պաշտ-  
 պանել այնոցիկ՝ որք կարդալով առ նա՝ ապաւինին  
 'ի նա . յայս ակնարկելով ասէ :

**Ա** Երչ է տէր առ ամենեսեան՝ որ էաբդան առ նա : Այսի  
 ասել . թէպէտ և բարձր է որ քան զամենայն արա-  
 րածո , բայց որք միանդամ կարդան առ նա և ապա-  
 ւինին 'ի նա՝ առ 'ի օգնութի ինչ գտանել 'ի նմա-  
 նէ , և կամ պաշտպանիւ նովաւ , մերձ լինի առ նո-  
 ստ , այսինքն լսելով նոցա՝ օդնէ և պաշտպանէ : Այլ  
 զի մի ասիցէ ոք՝ թէ բազումք կարդացին առ նա , և  
 ոչ գտին զօդնութի նորա , յաւելու ասել :

**Ա** ամենեսեան որ էաբդան առ նա ճշմարտութե : Այս կար-  
 դալս է սրտի մտօք աղօթել . ուստի ասէ բարսեղ  
 վարդապետ . ('ի մեկն . մարկ . գլ . ժառ .) \* մերձ է  
 , տէր առ ամենեսեան՝ որ աղօթեն առ նա Ճշմար-  
 , տութք . իսկ Ճշմարտութք աղօթել կամ կար-  
 դալ առ ոծ , է կարդալ առ նա արժանաւորութք .  
 և նախ՝ հաւատով . ապա թէ ոչ՝ ոչ լինի առ ոծ  
 կարդալ , այլ առ այն՝ զոր ունի 'ի մեշնինի մսաց իւ-

ըոց : Երեկորդ՝ յուսով, ապա թէ ոչ զիարդ օդնեացի յայնմանէ, առ որ ոչ յուսայ : Երրորդ՝ սիրով, ապա թէ ոչ զիարդ ապահնեացի յայն՝ զոր ոչ սիրէ, մանաւանդ եթէ գիտիցէ՝ թէ ատի ՚ինմանէ : Չորրորդ՝ ջերմեռանդութեամբ՝ այսինքն փափաքելով դտանել զայն՝ որոյ վասն կարդայ . ապա եթէ միայն վասն լնլս լկարդ պաշտամանն կարդայ և սաղմոսէ, և կամ վասն եղանակին, ոչ եթէ առ ած կարդայ, այլ առաջի այ առ այլս կարդայ կամ առ ինքն կամ առ հաճոյս իւր : Հինգերորդ՝ ուշադրութեամբ և պարզամտութք, զի թէ առանց իմանալոյ կարդայ կամ առանց գիտելոյ՝ թէ առ ո կարդայ, ոչ եթէ կարդայ՝ այլ զընդունայն նշան կարդալս ցուցանէ : Վեցերորդ՝ խոնարհութք . զի առանց այսր ունայն հնչէ ձայնն առ ած : Խակ որ ըստ վեցեցունցս ըսյսոցիկ որչափ կար իցէ մարդկային տկարուե կարդայ առ ած, անտարակոյս լսէ նմա ած՝ որպէս լուաւ մովսէսի, ահարոնի և սամուելի . սաղ . զը . 6 . 7 . և հասանէ նմա յօդնուի՝ և լնու զփափաք նորա . զորինակ առնէ առ երկիւղածս իւր . և զայսմանէ խօսի մարգարէն ՚ի յաջորդ համարն ասելով :

**Ե. աէլ.** **(** Համա երիեւղածաց իւրոց առնէ պր . աղօնից  
■ նոյտ լուէ՝ և իւղուցանէ զնոսա :  
Բառս համէ՝ թէպէտ և հասարակօրէն ՚ի գործ ածի փոխանակ այնր կարողութէ հողւոյ՝ որ բերի առ բարին ըմբռնեալ մտօք, բայց բազում անգամ դնի և փոխանակ այնր բարւոյ՝ առ որ յօժարի նոյն կարողութին, որ այն ինքն է կամեցեալ բարին, կամ այն՝ զոր խնդրէ . յայս միտ դնի և աստ բառս համէ յասելն :

**(** Համա երիեւղածաց իւրոց առնէ պէր : Այսինքն զամենայն զոր կամին երկիւղածք՝ առնէ ած : Աչ ասէ կատարէ այլ առնէ, որով ցուցանէ՝ թէ թէպէտ և երբեմն երեխ ոչ կատարել զայն՝ զոր կամին երկիւղածք, բայց ՚ի տեղի այնր զայլ ինչ առնէ, զի թէ տեսցէ՝ թէ բարի է նոցա զոր խնդրեն՝ կատարէ . իսկ եթէ տեսցէ՝ թէ բարեգոյն ևս լինի նոցա զայլ ինչ առնել զայն առնէ . և ոչ երբէք ունայն արձակէ զնոսա . զի

որովհետեւ ոչ անտես առնեն նոքա զկամս ոյ՝ երկն-  
չելով՝ ինմանէ, ած ևս ոչ անտես առնէ զբարի կամս  
նոցա, և 'ի վերայ այսր ամենայնի միշտ պատրաստ  
կայ հայիլ՝ ի նո և լսել նոցա, և լսուլ զինդրուածս  
նոցա, մանաւանդ եթէ խնդրուածք նոցա իցէ ըստ  
կամաց իւրոց. սմին իրի ասէ մեծն խոսրով. ('ի մեկն.  
ժամագր. երես. 329.) \* անհնար է՝ թէ ոչ առնու-  
,, ցումք զինդրուածս՝ որ ըստ կամաց նորա լիցի.  
,, զի քան զամենայն հայր գթածէ, և քան զամենայն  
,, մայր գորովադութ. և զկամս երկիւղածաց իւրոց  
,, առնէ. աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա ||:  
Բայց որպէս գրէ սարգիս շնորհալի. ('ի մեկն. ա.  
պետ. ը. 12. Ճառ. է.) ոմանց ոչ լսէ վասն ՚ի խո-  
նարհութեան պահելոյ զնոսա. որպէս պօղոսին. \* շատ  
,, է քեզ շնորհք իմ. զի զօրութի իմ՝ ՚ի տկարութեան  
,, կատարի ||. (ը. կոր. ժը. 9.) Ոմանց ոչ լսէ վասն  
անարժանութեանոցիկ՝ որոց վասն խնդրեն. որպէս  
ոչ լուաւ երեմեայ. ըստ այնմ. \* և դու մի կարյա-  
,, զօթս ՚ի վերայ ժողովրդեանդ այդորիկ ・・・ զի ոչ  
,, լսեմքեզ ||. (երեմ. է. 16.) Ոմանց ոչ լսէ վասն  
անպատեհս աղօթելոյն. ըստ այսմ. \* եթէ յաճա-  
,, խիցէք յաղօթս՝ ոչ լուայց ||. (եսայ. ա. 15.) Ոյն-  
պէս ոչ լսէ և այլոց ոմանց վասն այլ ինչ պատճառի:  
Այլ ՚ի հասարակի խօսելով՝ որք միանգամ երկիւ-  
ղածքն են ոյ՝ լսէ ած աղօթից նոցա, և օգնական լի-  
նի նոցա. որոյ վասն յարէ զկնի մարգարէն, և ասէ:  
Աշունից նոցա լսէ՝ և իւրացանէ զնոսա: Այսինքն յաղօ-  
թել նոցա՝ լսէ նոցա, և այնու կեցուցանէ զնոսա,  
այսինքն փրկէ զնոսա ՚ի չարէ վտանգաւորողէ կե-  
նաց: Այլքանզի բազում դիպուածք պատահին ըստ  
հոգւոյ և ըստ մարմնոյ, որոց ոչ գոլով նոցա նախատես,  
ոչ ուշ դնեն դիմել յայնպիսի առիթս աղօթիք առ  
ած, նա ինքն ած զգուշանայ զնոքօք՝ տեսանելով զնոց  
միացեալս ընդ իւր սիրով. յայս հայելով մարգարէին  
յարէ զկնի և ասէ:

իա. շին. **Պ**ահէ աէր զամենեսեան՝ ոյտ սէրեն զնա. և զա-  
մենայն մշաւորս սապահէ աէր:  
Պահելն թէպէտե բազում նշանակութը կարէ ՚ի

գործ ածիլ, բայց ասա դնի ըստ անվաս ուահելոյ  
'ի չարէ, և ըստատուն ունելոյ 'ի բարին. և զի  
զայս անվրէսլ առնէ ած երկիւղածաց իւրոց՝ որք սի-  
րեն դնա, սմին իրի ասէ :

**Պ**ահէ աէր զամենեսէտն ոյս սիրէն զնա : Այսինքն տեսել  
այ թէ սիրելիք իւր շրջին 'ի պէսպէս վտանգս, և  
կրեն զբազում վիշտս 'ի չարաց, պահէ զնոսա՝ զի մի  
'ի վտանգից անտի յափշտակեսցին և կորիցեն. և 'ի  
չարչարիլն 'ի չարաց՝ հաստատուն կացուցանէ զնոսա  
'ի բարին, զի մի խախտեսցին. որպէս արար ընդ ա-  
ռաքեալս և ընդ մարդարէս, ընդ մարտիրոսս և ը  
խոստովանօղս : Իսկ թէ զինչ ունիցի առնել չարաց  
այսինքն մեղաւորաց, յայտ առնէ ասելով :

**Ե**ւ զամենայն մշղաւորս սափահէ աէր : Այտակելն՝ կամ  
առ նոսա լինի՝ որք յետ մահու չքանան, որպէս պա-  
տահի անքանից . և կամ առ նոսա՝ որք յետ մահու  
մատնին 'ի թշուառագոյն վիճակ . և զի այսպէս լինի  
մեղաւորաց, վասն այսորիկ ասէ՝ թէ սատակէ ած զա-  
մենեսին զնոսա :

**Յ**երկոսին հատուածսդ ևս դնելով զբառդ թէ, ցու-  
ցանէ թէ իրաւամբ առնէ ած այսպէս . զի տէր գո-  
լով արդարոց և մեղաւորաց՝ որպէս 'ի պաշտիլն յար-  
դարոց՝ իրաւամբք փրկէ, սոյնպէս և յարհամարհիլն  
'ի մեղաւորաց՝ իրաւամբք կորուսանէ աստ և 'ի հան-  
դերձեալն : Առ սիրելիսն բարբառելով ասէ . \*եկայք  
,, օրհնեալք հօր իմոյ . և առ մեղաւորսն \*երթայք  
,, յինէն անիծեալք . ուր երեք ինչ տեսանի . մին-  
է այն, զի յասելն եկայք օրհնեալք յաւելու ասել  
հօր իմոյ, իսկ յասելն երթայք յինէն անիծեալք՝ ոչ  
յաւելու ասել՝ 'ի հօրէ . զի յիւրեանց էր անիծիլն,  
և ոչ յայ : Երկրորդն է այն, զի յասելն եկայք՝ ոչ  
յաւելու առիս . իսկ յասելն երթայք յաւելու ասել՝  
յինէն, որով յանհնարինս սաստկանայ դառնութիւն  
ցաւոցն : Երրորդն է այն՝ զի յասելն պատրաստեալ  
է՝ ոչ եդ ձեզ, այլ սատանայի . որով կամի ասել, թէ  
ոչ էր այն վասն ձեր, այլ վասն սատանայի, և դուք  
ձեզէն ընտրեցիք զնոյն :

**Ե**թէ այսպէս լինելոց իցէ՝ ասիցէ ոք, ընդէր ծնան  
չարք : Այսմ պատասխանի տայ ծործորեցին . ('ի

Մ Ե Կ Ա Ռ Ո Ւ Թ Ւ Տ Կ Ա ,  
մեկն . մատ . գլ . իշ . ) և ասէ . \* նորքա են մեղադ րե .  
ու լի , և ոչ ած . յայտ ՚ի լաւացն է . զի պիտանիք ե .  
ու զեն և ՚ի չարացն չվասաւցան ինչ . որք և կրկին  
պատկօք պատկեցան . նոյնպէս և յոռիքն ունեին  
իշխանութիւն լաւ լինել ( ՚ի լաւացն , ) և ոչ եզեն  
այլ չարացան . յիրաւի ապա կրկին պատժովք պատ .  
ժեսցին ! : Օ այս ամենայն եղեալ մարդարէին՝  
մատի յօրհնութիւն այ . և որպէս օրհնութիւն սկսաւ  
զսաղմոսս զայս , սոյնպէս և օրհնութիւն աւարտէ՝ ա-  
սելով :

**Ի՞ն . Բառ .** **Օ** օրհնութիւն ոն խօսեցի բերան իմ . օրհնեա-  
նայ ունենայն իննունի զնուան ոչ նորո յ-  
ախտան , և յասիրեանս յասիրենից :  
**Վ.յս եղանակ խօսից յայտ առնէ զզեզումն լիութե-**  
սրտի մարդարէին յօրհնութիւն այ . իբր զի փափաքումն  
օրհնութեն այ լցեալ լինելով ՚ի սրտի նորա՝ ընդ  
բերանն զեղեալ լիներ բարբառիւ և ասել .  
**Օ** օրհնութիւն ոն խօսեցի բերան իմ : Լամի ասել . այն  
չափ է փափաք իմ օրհնելոյ զանձ՝ մինչև ընդ բանալ  
բերանոյ իմոյ՝ ոչ այլ ինչ զեզու ընդ այն , բայց միայն  
օրհնութիւն այ : Լամ դարձեալ կամի ասել . օրհնեցից  
զանձ ոչ միայն սրտիւ , այլև բերանով իմով . և կամ  
դարձեալ ոչ տաց հանգիստ ոչ սրտի իմոյ և ոչ բե-  
րանոյ , այլ ամենեքու միք օրհնեցից զանձ , և այն լիցի  
հանդիստ իմ քայլ քանդի լիութիւն սրտի նորա ոչ  
բաւական համարէր ինքնին վճարել զայս՝ յաւելու  
ես ասել :

( ) Ենեցի անենայն իննունի զնուան ոչ նորո : Ծառիւս  
իննունի՝ թեպէտ և կարէ նշանակիւ այն ամենայն՝  
յորս կայ շունչ , բայց տիրապէտ նշանակի աստ բա-  
նաւոր կենդանի , այսինքն է մարդս . յօր միտ ՚ի ժա-  
մագիրս փոխանակ կենդանոյ դնի մարդին ըստ եօ-  
թանասնից , որով նշանակի մարդն . սոյնպէս և ՚ի  
տպագրեալ սաղմոսս ինչ գնի ամենայն մաեզի , որով  
դարձեալ իմացեալ լինին ազգք մարդ կան . ոչ առհա-  
սարակ ասէ օրհնեցեն զանունն այ . զօր ոք կուէ ,  
զի է նշանակօղ անսահման սրբութեն , և է ես սրբա-  
րար ամենայնի՝ օրովշեակ յօրոց վերայ կոչ անունն

այլ սրբին նոքա , և ասին իսկ որք կամ որբեալք :  
Այդ օրպէս ոչ շատացեալ մարգարէին իւրեւ օրհնել  
զած՝ ցանկացաւ զի և ամենայն կենցանիք օրհնես-  
ցեն զնա , սոյնպէս ոչ շատանայ՝ զի առժամանակեայ  
լինիցի օրհնելն այն , այլ միշտ , վասն որոյ յարէ , և  
առէ :

Համար բառին և յատիքնենս յաւիտէնէց : Երբեակ կրկնում  
այսր բառին ցուցանել զկատարելութիւն յաւիտենակա-  
նութե , որպես երիցս կրկնել զբաղդ սբ՝ ցուցանել  
զկատարելութիւնը որբութե . իսկ կատարելութիւն յաւի-  
տենականութե է յերիս . մի՛ յանփոփոխութե , զի ոչ  
յենթակային փոխի՝ յորում է , ոչ յառարկային՝ առ  
որ է , և ոչ՝ ի պարագայից՝ զորովք է : Երկրորդ՝ ի  
պարագը ըողութե , զի պարագը է յինքեան զամենայն  
տեսդութիւն զանցեալն զներկայն և զապագոյն : Եր-  
րորդ՝ յանտահմանութե , զի ոչ սկիզբն ունի , և ոչ  
կատարած , ուստի և ոչ զմէջ : Վրդ փափաքելով  
մարգարեին՝ զի օրհնութիւն ոյց տեսեցլ միշտ , առա-  
ւելութիւն փափաքանաց նորա յայտնիսի կատարելութ  
յաւիտենականութե հայեցուցանել զնա ասելով . օրհ-  
նեցլ ամենայն կենդանի զանուն որ նոր յաւիտեան  
և յաւիտեանս յաւիտենից . տես զայտանին՝ և ի հա-

Վ. յլ երկու ինչ արժան է առա ՚ի քննութիւն մատու-  
ցանելը ։ Վ. ու աջինն է՝ զի մարդարեն որպես և աեւա-  
նի, զայս երրեակ կրկնումն երիցս առնե ՚ի սաղմո-  
սիս. մի առա. երկրորդ՝ ՚ի համարն. 2. և երրորդ՝  
՚ի համարն. 2. որով երեխ թէ որպես ըստ մասին՝  
այսինքն ըստ միոյ բառին երրորդ ելալ կամցաւ ցու-  
ցանել զի ատարելութիւն յաւիտենականութե. տյնողեօ  
և ըստ բոլորին երրորդ ելով կամի յայտ առնել զա-  
ռաւելութիւն փափաքանաց իւրոց յօթհնութիւն, զի  
իցէ յերիս յաւիտեանո, այսինքն յամենայն յամի-  
տեանու. (նարեկ - բան. թ+)

Երկրորդ քննելին է այս՝ զի զայս երրորդելս առնել մարդարձն յայնմ օրհնուել յորում յիշչ զանունն այ. որոյ պատճառն թուի լինիլ այս, զի անունն ամ, յամենայն ազգս փառաւորեալ է նաև յայսմ յաւեւ-տենիս, թէ և այլ ինչ ուաշաերցի ը այնու անուամբ,

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ւ Ի Ն,  
 և դարձեալ անունս ամ՝ յամենայն յաւիտեանս փա-  
 ռաւորի ևս և ակամայ՝ նաև յատելեաց նը. զի թէ  
 և 'ի բաց դարձեալ իցեն նոքայոյ, բայց 'ի նմին իսկ  
 'ի բացարարձութեն աչաւոր իմն ըմբռնելով զանուն  
 նորա՝ սարսին, որով և բարձրացեալ և փառաւո-  
 րեալ ցուցանեն զայն անուն. յորմէ և նոր իմն առիթ-  
 ընծայի նրց օրհնելոյ զֆառաւորեալ անունն այ յա-  
 ւիտեան :



### Ս Ա Գ Վ Ա Ս Ո Ս Դ Խ Ե :

Հրաւեր օրհնելոյ զամ. և խրատ յորդորանաց ոչ  
 յուսալոյ յիշխանս աշխարհի, զի են ունայն, այլ  
 յամ որ արար զերկինս և զերկիր. որ և պահէ ջնու-  
 մարտութի, և առնէ իրաւունս, և խնամէ զամե-  
 նեսեան :

Վ ե լ լ ո ւ ս . ա կ է ա յ և զ ա տ ա ր ի ա յ :

1. **(**ընկած անց իմ զար. օրհնեցից զար իմ ինձնու իմ.  
 աղման առողից այ իմոյ գնուն եմ ես : 2. || իմ յա-  
 սոյ յիշխանս յորդիւն մարդիւն. զի ու գոյ քիշունի ի ամ:  
 3. | յաւ հագի ի նոյսնեն և դարձյան անդրեն ի հաշ. և  
 յայն առուր իսրեցին անեայն իսրահորդու նոյս : 3. | յաւոնէ  
 աղմի օրում ուեր ած յահորդ օգնուան և նմա. և յայ նորս  
 'ի ուեր ած ե : 5. || արոր չիշին և չիշիր, չիշուն և զա-  
 մանայ որ է 'ի նոյս : 6. || պահէ չաշուրութիւն յաւիւնուն.  
 և առնէ իրաւունս չիշելոց : 7. Տայ հայ տաշելոց. և արյու-  
 ն պատեսոց պէ : 8. Տեր բանոյ զալ խորաց. և ինձնէ  
 չիշուելոց ուեր : 9. Տեր ուեր չըրտոր. ուեր պահէ զալ-  
 ուունուն. զարին ընդունի պէ. և զամանուուն  
 ամերշաց իսրաւունէ : 10. | յասդասորեցէ պէ յաւիւնուն,  
 ած ու անը աղմի գնուն յաց :

وَبِهِمْ يَرْجِعُونَ

U.S. GOVERNMENT PRINTING OFFICE: 1913

Ա ՅՈ ՎԵՐԱՇՎԻՔ ՅԵՐԱՌՈՒ ԵԽ Դ  
քաղց" պակասի յանուանցդ անգեայ և  
զաքարիայ, զորս ոչ գտանեմք և առ  
ումանս 'ի նախնի մեկնիւս. և սակայն գտանին այդո-  
քիկ անուանք առ քաջում յառաջնոց, և 'ի թարգ" և օթ" և լատ" և այլոց. սոյնպէս է և 'ի հետեւեալ  
հինգ սաղմոսս, թէպէտե ոչ յամենեսին միօրինակ.  
ուր ասէ վարդան թէ այս անուանք յեօթ անասնից  
չէ եղեալ. Ի յլ թէ արգեօք յանգեայ և զաքարիայ  
յօրինեցաւ սոյն այս սաղմոս և հետեւեալք սորա,  
թէ յայլոց, ոչ է յայտ. Ի աղումք իբր ընդունելի  
համարին թէ այս սաղմոս, և երկու յաջորդք սորա  
հային 'ի ժամանակ գարձի գերութեն բարելացւոց,  
զսոյն ասեն և զմանցեալ երից սաղմոսաց. Հայր կար-  
ծիս հաստատեալ ոմանց՝ ասեն թէ որովհետեւ 'ի  
ժամանակի անգ՝ այսինքն 'ի գարձի գերութեն՝ այ  
սորիկ երկու մարգարելք անգէ և զաքարիա քարոշին  
զայնպիսի աւետիս, զորպիսիս տեսանեմք յայսոսիկ  
սաղմոսս, սմին իբր և անուանք նոցա եգան 'ի վեր-  
նագրի սոցա ըստ յարմաքութե կամ ըստ հեղինա-  
կութե, այսինքն կամ յարմաք տեսանելով զբանս  
նոցա, և կամ հեղինակ սոցա ձանալելով զնոսա.  
||մանք աստօնօր զաքարիայ անուամք իմանան զլովի-  
դա քահանայն, որ կոչիւը ևս ասեն զաքարիայ. զո՞  
սպան յովաս թագաւոր ընդ մէջ տաճարին և սեզա-  
նոյն. այլ զոր սպանաւն՝ ծործորեցին. (մատ. իդ.)  
համարի լինիլ հայրն յովհաննու մկրտի. զաա ասէ,  
\* սպանին հրայք ընդ մէջ տաճարին և սեզանոյն  
,, վասն կարգեց զմարիամ 'ի կարգ կուսանացն' յո՞  
,, ժամ ընծայեաց զմանուկն յա (որպէս ասէ բար-  
,, սեղեարացի 'ի գիրս պահոց) || Առպէս և իցէ  
9 |

այս սաղմոս ոչ կարէ ընծայիլայլում զաքարիայ, բայց  
եթէ մարդարէին որ 'ի դարձի գերութեն։ Այլ  
քանզի 'ի քննելն շշիւ ոչ հայի սա ուղղակի 'ի ժա-  
մանակ դարձի գերութեն՝ որպէս հային երկու յա-  
ջորդք ս՛ը, բազումք պնդեն՝ թէ սա է իբր կանխա-  
բանութին նոցա. և հետևեալքն իբր վերջաբանութին։  
Բատ եղելոցդ ըստ այդոցիկ՝ իմաստ վերնագրիդ բա-  
ցատրի այսպէս. այս սաղմոս սկսանելի է ալելուիայիւ  
և է ասացեալ համաձայն ասացուածոց անգեայ և  
զաքարիայ, կմ յօրինեալ 'ի նոցունց։ Խոկ մեք զսոյն  
զոյս սաղմոս առանց վերածելոյ յայս կամ յայն 'ի  
հասարակի ունիմք մեկնել իբրեւ հրաւեր անձին օրհ-  
նելոյ զած. որոյ վասն խոկ դնի բառդ ալելուիա, և ս  
և իբրեւ յորդոր յուսալոյ յած յարարիչ և 'ի խնամող  
ամենայնի և ոչ յիշխանս։ Խոկ զերկու յաջորդ սորա-  
ունիմք վերածել 'ի ժամանակ դարձի գերութեն։

## Բ Ա Կ :

ամ. (Օրհնեա անցն էմ զրէր. օրհնեցից զրէր 'ի հեանա  
էմ. սաղմոս սսացից այ իմոյ՝ դնշե էմ էս։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ:

Գերապանծութին սաղմոսիս ըստ բովանդակութե-  
իւրում առեալ՝ բերէ յինքեան զնմանութինչ ինչ բոլո-  
րածե շրջանակի, յորում սոյն այս բան դնի իբրեւ  
կեդրոն. առ որ ժողովին ամենայն գիծք այսինքն ա-  
մենայն խորհրդածութեք արարեալք 'ի մարդարէին.  
իբր զի 'ի յածիւ նորա խորհրդով շուրջ զմեծվայել-  
չութեն այ 'ի նախընթաց սաղմոսի, և յասել՝ զօրհ-  
նութիս առ խօսեսցի բերան իմ, և 'ի թեածել աստ  
շուրջ զգօրութեք ամենակարողութեն այ 'ի համարն.  
5. և զշմարտութեք բանից նորա 'ի համարն. 6.  
և զքաղցրութեք ինսամոց նորին 'ի համարն. 7. և  
յորս զկնի. ևս և զանպիտանութեք յուսոյ մարդ-  
կայնոյ, և զունայնութեք մարդկան 'ի համարն. 2.

և Յ. յայսմամենայնի իւրաքանչիւր խորհրդածուիք  
նորա իբրև գիծք ձգեալք՝ ի շրջանակէ՝ միանան յայս  
կէտ օրհնութե. զոր և իբրև նպատակ ունելով իւր  
դնէ՝ ի ճակատ սաղմոսիս և ասէ:

(Ծրհնեան անցն իմ շրեք: Խխողեալ մարդարէն զայլս,  
ևս և զմարմին իւր՝ ընդ հոգւոյ իւրում խօսի. զի  
բառս անցն՝ փախանակ հոգւոյ դնի աստ. օրհնեան ա-  
սէ զտէր ովլ հոգի իմ. օրհնեան զնա որ արար զքեզ  
'ի պատկեր իւր և պահէ զքեզ և խնամէ, օրհնեան  
զնա և հանգիր յօրհնութե նորա: Օ այս եղեալ  
հետեւեցուցանէ և իբրև թէ պատասխանի տալով  
ասէ:

(Ծրհնեցի շրեք՝ ե իւանս իմ: Այս բան եթէ առեալ  
լիցի իբրև պատասխանի հոգւոյն՝ առաջի դնի իբրև  
ձայն արձագանգաց՝ հնչեալ՝ ի հոգւոյ անտի, ոչ ըստ  
նոյնութե գիմաց, այլ ըստ հաւանութե յորդորանաց.  
որպէս թէ եղեալ էր. այն օրհնեցից զտէր ոչ միայն  
յայս կեանս՝ յօրում կապեալ եմ ընդ մարմնոյս այլէ  
'ի հանդերձեալն՝ յօրում յաւիտեան ունիցիմ զերա-  
նական և զանվախճան կեանս: Խսկ եթէ այս բան  
առեալ լիցի իբրև՝ ի բերանոյ բոլոր մարդոյ, առաջի  
դնի ըստ հաստատութե, որպէս թէ եղեալ էր. օրհ-  
նեցից զտէր ցորչափ կեանք իմ յիս է: Աւ զայս  
իբրև թէ բացատրել կամելով մարդարէին՝ կրկնէ և  
ասէ:

(Պաղմոս ասացից այ իմոյ մինչեւ եմ ես: Այսինքն՝ սաղմոս  
ասելով մատուցից այ իմոյ զօրհնուի մինչեւ եմ ես,  
այսինքն յամենայն ժամանակս՝ յօրս եմ և լինելոց  
եմ, որ է ասել. ոչ դադարեցայց յօրհնելոյ զնծ ցոր-  
չափ կեամ՝ ի մարմնի. զայս այսպէս դնելով լոե-  
լեայն իմն կամի հետեւեցուցանել՝ թէ նաև յետ ելա-  
նելոյ՝ ի մարմնոյ աստի՝ մինչեւ՝ ի յաւիտեան ունի  
օրհնել զած. ըստ որում՝ ի ձեռն անմահութե հոգ-  
ւոյ մնալոց է յաւիտեան:

Այս օրհնուի որ ուղղակի հայի՝ ի բարուին ածային՝  
առ՝ ի փառաւորել զնա՝ հայի ևս՝ ի բարերարուինո-  
րա՝ առ՝ ի հատուցումն ինչ ընծայել երախտեաց նո-  
րա. ըստ որում գրէ իգնատիոս վարդապետ. (՚ի  
մեկն. զուկ. ա. 46.) յասելն. \* և մարդոյ՝ ածային

, երախտեացն չիք այլ ինչ՝ ի ներքս բերել, բայց  
,, միայն օրհնել և մեծացուցանել. ըստ այնմ՝ օրհ-  
,, նեա անձն իմ զնը. օրհնեցից զտեր՝ ի կեանս իմ։  
Յայսպիսի փափաք օրհնութեն այ վառեալ մարգա-  
րեին, և տեսեալ թէ մարդիկ փոխանակ զնծ օրհնե-  
լոյ՝ մոլեգին բերմամբ մեծացուցանեն զմեծատունս  
աշխարհի և զիշխանս նորա, և յանկանիլն ՝ ի նեղու-  
թիս փոխանակ առ ած դիմելոյ՝ ի նոսա ապաւինին,  
զարմանայ, մանաւանդ թէ տաղտկանայ, և ապա  
երե թէ զթալով՝ ի նոսա՝ յորդորէ զնոսա յետս  
կալ յայնպիսի յիմար յուսոյ ասելով։

Ե. **Ա**յ յուսայտ յէշխան՝ յորդես նարդիան. զէ ոչ գոյ  
գրենունի՝ ի նոսա։

Արկին օրինակաւ կարէ մարդ յուսալ յիշխան ոք. մի՝  
իբրե ՚ի նողաստիչ առ այն՝ որոյ վասն յուսայ՝ առ ՚ի  
օգնիլ իւիք ՚ի նմանէ կամ պաշտպանիլ. և յայտ է  
թէ մարգարեն ուղղակի ոչ խօսի աստ զայսմանէ. .  
զի և ինքն իսկ ՚ի ստիպել հարկին՝ այսպիսի օրինա-  
կաւ յուսացաւ. կամ ասացից ապաւինեցաւ յիշխանս,  
որպէս յարքայն գեթայ յանքուս յորդի մովաքայ. (ա.  
թագ. իէ. շ.) ևս և յիշխանս զօրաց իւրոց. սոյն-  
պէս արարին և այլք բազումբ յածապաշտից ՚ի ժա-  
մանակի պիտոյուն. Ասացի ուղղակի ոչ խօսի զայս-  
մանէ, զի անուղղակի յայս ևս կարէ ակնարկել բան  
մարգարեին. քանզի և այսպիսի օրինակաւ յուսալ  
յիշխանս թէև չիցէ չար, բայց երբեմն լինի անպի-  
տան, գուցէ և լիսասակար։

Երկրորդ՝ լինի մարդոյ յուսալ յիշխան ոք՝ ոչ իբրե  
՚ի նողաստիչ՝ այլ իբրե ՚ի մի միայն տուիչ այնը որոյ  
վասն յուսայ, բոլոր ՚ի նա դնելով զոյս իւր, որպէս  
թէ առանց նորա չիցէ հնար փրկիլ կամ հասանիլ  
այնմ՝ զոր յուսայ գտանել։ Օ այսպիսի յուսոյ ուղ-  
ղակի և տիրապէս խօսի աստ մարգարեն յասելն։

**Ա**յ յուսայտ յէշխան՝ յորդես նարդիան, զէ ոչ գոյ գրենու-  
նին՝ ի նոսա։ Այսինքն, մի դնեք զոյս ձեր բոլոր  
յայս ոք իշխան կամ յայն. զի նոքա կամ ոչ կարեն,  
և կամ ոչ կամին, և եթէ կամիցին ևս՝ առանց այ

առնել ոչ են կարօղ. վասն զի են իբրև զձեզ սոսկ  
որդիք մարդկան տկարք և ողորմելիք : Եւ ըստ այս մ  
բառքդ յորդիս մարդկան՝ զնին իբր բացայայտիչ բա-  
ռիդ յէլլահնա :

Յամի տն 1791. թագաւորն գաղղիացւոց լուտովին.  
կոս ժղ. որոյ կին եր քոյր լեռփոլտոսի թ . կայսեր  
գերմանիոյ . արգելական լեալ 'ի տան հրամանաւ ա-  
ւագանւոյն՝ որք ապստամբեալ եին , եղ զյոյս իւր 'ի  
կայսրն՝ գտանել զազատութեն : Եւ նա զամենայն  
մարդկան հնարս 'ի դործ արկեալ , եհան զնա 'ի  
փարեզ քաղաքե՝ յորում փակեալ կայր . և փախոյց  
զնա հանդերձ թագուհեաւ և քերբն և որդւովն :  
Իայց ոչ կարաց զամենայն արգելս խափանել . զի  
իբրև մերձեցան նոքա 'ի սահմանս գերմանիոյ , կո-  
լեալ եղեն 'ի գաղղիացւոց . և գարձուցան 'ի փա-  
րեզ , և եդան 'ի դիպահոջ , և սպանան : Ահա սոքա  
իշխանք մեծամեծք՝ յուսացան յիշխանս , և կորեան :  
Այլ քանզի կարե ոք ասել , թէ հարկ իրացն պա-  
հանջէ յուսալ 'ի նոսա վասն գտանելոյ զփրկութեն՝  
որպէս տեսանի 'ի պատմութեղ , պատասխանե մար-  
դարեն ասելով :

Օչ ոչ գոյ ժըհութիւն 'ի նոսա . կամի ասել . գիտեմ,  
զի վասն փրկութեն յուսայք դուք յիշխանս , բայց 'ի  
զուր է այդ . զի զայն փրկութեն՝ որում ակնունիք ,  
ոչ գտանեք 'ի նոսա , այլ յած . զի ոչ թէ նոքա ,  
այլ նաև ձեռամբ նոցա տայ ձեզ զփրկութեն . ուստի  
պարտ է ձեզ յած յուսալ , և ոչ թէ 'ի նոսա . ապա  
թէ 'ի նոսա յուսասջիք բոլոր , ունայնասջիք 'ի յուսոյ  
ձերմէ . զի և ինքեանք ունայն են , և իշխանութենք  
նոցա անցաւորք են . ըստ որոյ ասէ լուսաւորին մեր  
'ի յաճախապատում գիրս . (Ճառ . ժեն .) \*մի յուսալ  
, յիշխանս ասէ մարդարեն . զի լուծանելոց են յերկ-  
, ըէս ամբարտաւանեալ իշխանութենքն . և շիջանին  
, հպարտ կամքն : Յայս սակս ասէ նարեկացին 'ի  
(բանն . ծառ .) միթէ արժան իցէ ինձ յուսալ \*առ  
, իշխանս երկրաւոր գահից . (ոչ ապաքէն ասացեալ  
, է ) եթէ անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն  
, բարութեն :

Եա և զոր ունին՝ առ երեսյթ իմն է . և առ որս

զօրեն՝ ինքեամբ չկարեն. և որոց հրամայեն՝ բազ-  
մօք ակն ածեն. և որոց իշխեն՝ ի նոցունց իշխին.  
զի որպէս ասէ սարգիս շնորհալի. (՚ի մեկն. յուղայի:  
համար. 25. ձառ. դ. յորդ.) \* որ ամենեցունց իշ-  
,, խէ՝ յամենեցունց դողայ, յամենեցունց երկնչի ||:  
Օի վիճակ կենաց նոցա, և անցաւորութի աւուրց  
նոցին՝ յայսպիսի սահման պարափակէ զնոսա առժա-  
մանակ մի, մինչեւ հասցէ նց կուտարած նոցին. իսկ  
թէ զիարդ՝ զայն առաջի նկարէ մարգարէն ՚ի յաջորդ  
համարն ասելով:

դ. **Ե**ւսէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձյին անդրէն ՚ի հող. և  
յայնմ առուր իրեւն ամենայն խորհուրդն նոցա:  
Ծասել մարգարէին ՚ի վերոյ՝ թէ իշխանք աշխարհիս  
են սոսկ որդիք մարդկան, այսու արդարն բաւակա-  
նապէս եցոյց՝ թէ զիք փրկութի ՚ի նոսա, վասն զի  
են տկարք, փոփոխամիտք, խաթեթայք, և չարք.  
թող զայն՝ զի որպէս ասացաք, այժմ զոր կարեն՝ բա-  
զում անգամ ոչ կամին. և զոր կամին՝ ՚ի բազում իրս  
ոչ կարեն: Եւ սակայն զսոյն զայս ոչ շատ համարե-  
լով, ՚ի մէջ բերէ և զայն՝ որ է յետինն և յայտնի  
ամենեցուն, մինչեւ ոչ ումեք կարել ժխտել, այն է  
մահկանացութի իշխանաց կամ մեռանիլ նոցին՝ յա-  
սելն:

**Ե**ւսէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձյին անդրէն ՚ի հող: **Ա**յս-  
ինքն՝ եկեսցէ ժամանակ՝ զի բարձցին յերկը այն  
իշխանք. վասն զի հոգի նոցա մեկնեսցի ՚ի նոցանէ.  
և մարմինք նոցա՝ ՚ի հողոյ գոլով՝ դարձցին վերստին  
՚ի հող, ըստ իմաստնոյն բանի. (ժողով. ժը. 7.)  
\* դարձցի հողն յերկիր ոնկ և երս, և հոգին դարձցի  
,, առ ած՝ որ ետ զնա||:

՚ դնել մարգարէին զայս՝ գրեթէ ձեռնարկելով  
կամի ցուցանել զբան իւր. որպէս թէ ասացեալ էր.  
եթէ իշխանք աշխարհիս ոչ կարեն ցուցանել և ոչ  
իսկ անձանց զփրկութի, կամ ազատել զինքեանս ՚ի  
մահուանէ, զիարդ ապա կարիցեն փրկել զայլս՝ որք  
յուսան ՚ի նոսա. որում չետեւեցուցանէ՝ թէ ուրեմն  
ընդ վայր է յուսալ ՚ի նոսա, մանաւանդ թէ յիմա-  
րութի է. զի այն յոյս նոցա ընդունայն ելանէ. և

զայս հաստատէ ասելով:

Եւ յայնմ աւուր իրիշեն ամենայն խորհուրդն նոցա: 'Ե փառաւորիլ իշխանաց՝ բազում խորհուրդք յածին 'ի միտս նոցա՝ այսինքն է տիրել բազմաց, իշխել աշխարհաց, մեծանալ ստացուածովք, զօրանալ յաղթութք, հռչակիլ համբաւօք, փայլիլ անուամք, և երեւելի լինիլ առ ամենեսին: Եւ սակայն 'ի հասանել մահու, 'ի նմին աւուր՝ յորում հոգի նոցա մեկնի 'ի նոցանե, որպէս ինքեանք բառնին յաշխարհէ, սոյնպէս և այս ամենայն խորհուրդք նոցա բառնին և իսպառ կորնչին. որպէս եղեւ մեծատանն այնմիկ՝ որոյ անդք ետուն տոհմականս. (Պուկ. Ժք. 16.) Եւ յայնժամ զի՞նը օդուտ լինիցի այնոցիկ՝ որք ապաւինին 'ի խորհուրդս նոցա և 'ի զօրութի նոցին:

Եւ յս կորուստ խորհրդոց կարէ յարմարիլ և յուսացելոց յիշխանս, իբր զի որք յուսան 'ի նոսա՝ խորհին նոքիմքք հասանել փրկութէ, կամ փարթամութէ, կամ իշխանութէ և այլն: Եւ սակայն 'ի մեռանիլ նոցա այս խորհուրդք սոցա ևս կործանին և կորնչին: Օ այս ամենայն եղեալ մարգարեին կամի հետեւցուցանել զայն զոր ասաց՝ այսինքն թէ ոչ է պարտ յուսալ 'ի նոսա և ապաւինիլ յօգնութի նոցա, այլ յած միայն և յօգնականութի նորա. զի որք 'ի նոսա յենուն, ըստ նոցա թշուառանան. իսկ որք յած յենուն՝ նովին երանանան: Հայելով յարէ զկնի և ասէ:

Դ. Արանի աղջի՝ որում տէր ած յահոբայ օգնական էնմա. և յոյս նորա 'ի տէր ած է:

Ճշմարտապէս և կատարելապէս երանի ասի այնմ՝ որ հասեալ է 'ի ժառանգութի ածային երանութէ յերկինս. իսկ որ չէ հասեալ, անկատարապէս ասի երանեալ. և այս կրկնակի. մի՝ ըստ ունելոյ յանձին իւրում զպատկեր այնը երանութէ. և մի ևս՝ ըստ ունելոյ յինքեան զյոյս ժամանելոյ 'ի նոյն: Առաջինն այսը անկատար երանութէ՝ լինի ունելով մարդոյ զած 'ի հոգի իւր 'ի ձեռն շնորհաց. տես զայսմանէ և 'ի սաղ. ա. 1: Իսկ երկրորդն որ հետեակ է այսմ, լինի 'ի ցնծալ մարդոյ յուսով որ առ ած: Ա-

ռազինն մտածի 'ի կողմանէ այ ըստ հաճելոյ, և ըստ օգնական լինելոյ նորա . իսկ երկրորդն մտածի 'ի կողմանէ մարդոյ ըստ ապաւինելոյ յած : Բատ երկուցս ըստ այսոցիկ դնէ աստ մարդարէն զայս քան, և նախ ըստ առաջնոյն խօսելով ասէ :

**Ա**յստեւ աղքէ՝ որում աէր ած յակոբայ օգնական է նմա : Կամի ասել . ոչ նա է երանելի՝ որոյ օգնականն թագաւոր ոմն է, և կամ իշխան ոք երեելի, ոչ ածն մովաբացւոց և ոչ պաշտեալն ամոնացւոց, այլ ածն յակոբայ . որ ոչ եթէ սոսկ արտաքուստ, այլև 'ի ներքուստ 'իներքս 'ի հոգի մարդոյ բնակելով ձեռն տու լինի նմա յամենայնի, առաջնորդելով 'ի բարին և պաշտպանելով 'ի չարէն, միսիթարելով 'ի վիշտս և պահպանելով 'ի վտանգից, և այլն :

Իսկ ած յակոբայ ասիլն ըստ երից է . մի՝ զի աղղին յակոբայ (այսինքն երրայեցւոց) յայտնեաց զինքն, և ետ զօրէնս իւր : Երկրորդ՝ զի ըստ ասելս մեր այժմ՝ զոր պաշտէր ազգն յակոբայ՝ էր Շմարիտ ած . իսկ զոր այլք պաշտերն 'ի կուռս՝ ոչ էր Շմարիտ : Երրորդ՝ զի յազգէ անահի հանդերձեալ էր գալ . ուստի ըստ զիջանելոյ՝ ած յակոբայ անուանեցաւ . սմին իրի ասէ նարեկացին . ('ի մեկն . երգ . Ե . 15 .) թէ \* որ ամենայն երկրի էր թագաւոր, յակոբայ , միայն ասիւր ըստ մեզ զիջանելոյ || : Խօսի ապա մարդարէն և ըստ երկրորդին, և տսէ :

Եւ յոյն նորա 'ի աէր ած է : Եւ յսինքն երանի մարդոյ որ զոյս իւր եղեալ է յայն՝ որ է ած ամենայնի, և ած ամենակալ . զի զայնպիսին ապաւէն ունելով նորա՝ յամենայնի աներկիւլ և աներկեան մնայ, և յիշելով թէ յետ աստեացս ժառանգելոց է զնա՝ աստէն իսկ սկսանի վայելել յուսով զերանութիւնուրա : Եւ թէ յիրաւի մեծ իմն է յուսալ յած, և օգնական ունիլ զնա, ցուցանէ զայս մարդարէն 'ի բազում իրաց, և նախ յարարիչ լինելոյ նորա ասելով :

Ե . **||** արար չերինս և չերիր, զծով և զամենայն որ է 'ի նոստ :

Օ այս բազում ուրեք իշտ մարդարէն 'ի քաջալերէլ

զորդիս մարդկան՝ յուսալ յոնծ, առաջի զնելով զամակաբողութեարա յարաբչագործել զամենայն, յամեկին:

Ուստի զերինս և զբուռ, շնով և ամենայն որ է ՚ի ա-  
ս: Կամի ասել. ածն յակորայ՝ զոր յիշեցի, ոչ է  
իբրև զանգս այլոց ազգաց, որք ոչինչ կարեն առնել,  
այլ է ած ամենակալ, որ իւրով անքառ զօրութք ա-  
րար յոցնչ: զերկինս և զերկիր, ընդ որս և զծով,  
և զամենայն որ ինչ է ՚ի նոսա, այսինքն որ ինչ  
է յերկինս և յերկրի և ՚ի ծովու՛ եթէ երեւելիք իցեն  
և եթէ աներեսոյթք: Օ այս եղեալ մարդարէին իբ-  
րև յորդոր յուսալոյ յած՝ յաւելու և զայլ յորդ որպանս  
ասելով:

፩. **፪** ማኅና ብሔራዊሮች ከተማውን የመስክበት አልፎ . ተ መሰረት የጥዣውን  
የግብኝነት ተጠናል .

Բառս ճշմարտութեան՝ դնի աստ փոխանակ խոստման,  
զոր արար ոոծ ճշմարտութք, և կատարէ հաւատար-  
մութք. զի ոչ է իբրև զմարդ, որ թէպէտ և կարէ  
խոստանալ ճշմարտութք, բայց ՚ի բազում իրս կամ  
ոչ կարէ կատարել, և կամ ոչ կամի. որում զշէտ  
գայ, թէ չէ արժան յուսալ յայնպիսին, այլ յած:

Այս հայելով ասէ : Եսինքն աճ որ  
խօստացաւ օգնական լինիլ յուսացելոց իւրոց՝ և տալ  
նոցա զժառանդ ուի յաւիտենական կենաց, ոչ հրա-  
ժարի 'ի պահելոյ և 'ի կատարելոյ զայն ձշմարտուի,  
այսինքն զայն խօստումն, այլ անշուշտ կատարել և  
կատարելոց և յաւիտեան : Օ այս եղեալ մարդարեին  
խօսի ապա և զարդարութե՛ գատաստանացն այ և  
ասէ :

լուսաւանս զբիելց, Այսինքն, տեսեալ ոյ,  
թէ բազումք զրկանս կրեն՝ ի բռնացելոց կամ՝ ի զօ-  
րաւորաց, տայ զիրաւունս ոչ զրկողաց, ոյլ զրկեցե-  
լոց. և զայս առնէ կամ ազատելով զզրկեալսն՝ ի  
զրկողաց, և կամ պատժելով զզրկօղսն. և դարձեալ  
զայս առնէ յայտնելով երբեմն զանմեղութի զրկեցե-  
լոցն, և երբեմն զանիրաւութի զրկողացն. և եթէ  
պատի կեանս ոչ ցուցցի զայս՝ թողու՝ ի հանգեր-

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

474

Ճեալն ցուցանել։ Արար իրաւունս և մեզ զրկելոցս  
'ի գըախտէն՝ նուաճեալ զզրկօղ մեր։ Եթէ այսպիսի  
տէր է ած, ուրեմն 'ի նա արժան է յուսալ և ոչ 'ի  
մարդ սնոտի Խօսի ապա մարգարէն և զգթասիրե-  
լոյն այ, և ասէ։

Ե. **S**այ հաց ժաշկելոց. և արջահեղակեալս աէր։

Գործ գթասիրութեն այ 'ի բազում իրս տեսանի,  
բայց առաւելես ՚ի ցուցանելնորա զինամս իւր առ  
վտանգեալս ըստ պէսպէս իրաց, յորոց զոմանս ՚ի  
մէջ բերէ աստ մարգարէն, և նախ խօսելով զինամոց  
նորա առ քաղցեալս, ասէ։

**S**այ հաց ժաշկելոց։ Այսինքն որք միանդամ քաղցեալն  
են ըստ մարմնոյ ևս և ըստ հոգւոյ, ոչ անտես առ  
նէ զնոսա ած, այլ տայ նոցա գտանել զհաց՝ եթէ  
ըստ հոգւոյ և եթէ ըստ մարմնոյ, առ ՚ի կերակրիլ  
նովաւ. յորոյ ապացոյց բաշխեաց զեօթն նկանակոն,  
ևս և զինգոն. (մատ. ժկ. 9. 10.) Խօսելով ա-  
պա և զինամոց նորա՝ զոր ցուցանէ առ կապեալս  
ասէ։

Եւ արջահեղակեալս աէր։ Այսինքն՝ տեսեալ այ զըա-  
զումս կապեալ 'ի շղթայս կամ 'ի գերութ կամ յայլ  
թշուառութիս, և կամ 'ի մեղս գթայ 'ի նոսա. և  
եթէ հաճոյ իցէ ինքեան սքանչելի իմն ձանապար-  
հաւ արձակէ զնոսա 'ի կապանաց անտի. յորոյ ապա-  
ցոյց արձակեաց զկինն կարկամեալ, որպէս և զծե-  
րունին սիմէօն մահուամբ. և խորհրդաբար՝ զհոգիս  
եղեալս 'ի դժոխս լիմպոսի։ Այսպէս առ ամենայն  
վտանգեալս որք կարօտին օգնականութե, զորոց խօ-  
սի մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով։

Ե. **S**եր բանայ զալս իուրաց. և հանգնէ զգւրեալս աէր։

Առաջին հատուած այսր բանի հայի առ այնոսիկ վը-  
տանգեալս՝ որք վասն զուրկ գոլոյ 'ի զգայութեանց  
ինչ տառապին յոյժ. և զի 'ի մէջ սոցա մեծ համա-  
րեալ լինի տառապիլն կուրաց, զայն դնէ առաջի-  
երը օրինակ. իսկ երկրորդ հատուածն հայի առ այ-

ՆՈՍԻԿ՝ որք գրեթե ըստ բոլորին են վտանգեալ այլ  
և այլ օրինակաւ։ Յառաջինսն հայելով ասէ։

**Տ**եր բանայ շախ իռարաց։ Բառաս իրաց՝ առեալ լինի աստ  
'ի փոխաբերական միտս, որով նշանակին նոքա՝ որք  
անկեալ յանշնարին վիշտոս մթագնին 'ի միտս, և  
հանգոյն կուրաց ոչ կարեն տեսանել, թէ զի՞նչ պարտ  
է նոցա գործել. այլ եթէ դիմեսցեն առ ած՝ լու-  
սաւորէ ած զնոսա, տեսանել զոր արժան է առնել.  
յոր միտ 'ի թարգ"եօթ" գնի՝ իմաստուն առնէ զկոյրս.

իսկ յեթը" և 'ի լատ" գնի լուսաւորէ զկոյրս։

**Օ**այս պարտ է իմանալ և զհոգեոր կուրութէ՝ որ  
սլատձառի 'ի մեղաց. որպէս պատահեցաւ և նմին  
իսկ գաւթի գրեթէ զամ մի. այլ տէր եթաց զաց  
նորա։ Այս կուրութիւն տիրէ և յայնոսիկ, որք ոչ  
կամին մերձենալ առ քն՝ որ լսս եկն յաշխարհ, առ  
'ի փրկել զկուրացեալս մեղօք, և զխաւարեալս հոգ-  
ւով. զկապեալս 'ի բանտի, և զգերեալս 'ի սա-  
տանայէ։ Ուստի իգնատիոս վարդապետ 'ի մէջ բե-  
րելով զայս բան գրէ ( 'ի մեկն. զուկ. դ. 19.) \* եկն  
,, նա ասէ ազատել զգերեալսն 'ի բռնաւորէն . . .  
,, պարտ է և մեզ նպաստ լինել մերում ազատուես.  
,, և այս լինի 'ի յանսալն մեր քարոզութէ նորա, և  
,, հաւատալ նմա. և ապա ազատուին 'ի նմանէ կա-  
,, տարեալ լինի. առ այս բանայ և զաց կուրաց ը-  
,, դաւթեան երգոյն։

**Հ**նար է զբնական կուրութէ ևս իմանալ զառաջիկայ  
բնաբանդ. ըստ որում բազում անգամ եթաց տէր  
զացս այնպիսեաց. զորօրինակ արար յ'իծնէ կոյրն  
և յայլս, ևս և ոչ միայն 'ի սոսկ կոյր այլ և 'ի կրկին  
կոյր, այսինքն 'ի կոյր՝ յորդի կուրի. այն է բարտի-  
մէոս, որ թարգմանի որդի կուրի ըստ ասորւոց. որ-  
պէս գրէ ծործորեցին. ( 'ի մեկն. մատ. գլ. ի. )  
\* գտաք ասէ յասորի բարբառ, զի տիմէն կոյր լսի.  
,, իսկ բարտիմէն որդի կուրի. զի բարն որդի ասէ.  
,, որ է այսպէս. նստէր յանցս ճանապարհին կոյր  
,, կուրի որդի. (վասն այսօրիկ) մատթէոս կրկին ա-  
,, սէ զկոյրն։ Առքիմբք ցուցանի՝ թէ ոչ միայն գը-  
թած է տէր. այլև ամենակարօղ՝ որ զայսպիսի սքան-  
չելիս գործէ։ Աամելով ապա խօսիլ մարդարէին և

476 Մ Ե Ւ Ն Ո Ւ Թ Ե Ւ  
զ ձ ե ռ ս տ ո ւ ո ւ է ն ա յ ՝ ի կ ա ն դ ն ե լ զ յ ե տ ի ն վ տ ա ն դ ե լ ս ն  
ա ս է :

Ե ւ ս հ ա ն դ ն է զ գ լ ր ե ա լ ս ա բ է : Կ լ ո ր ե լ ո վ լ ք ի մ ա ց ե ա լ լ ի ն ի ն ա ի ս տ ն ա ն կ ը գ լ ո ր ե ա լ ք և ա ն կ ե ա լ ք ՝ ի մ ե ծ ո ւ թ ե ն է :  
Ե ր կ ը ր դ ՝ ց ա ւ ա գ ա լ ք ա ն պ ի տ ա ն ա ց ե ա լ ք : Ե ր ը ր դ ՝  
ն ո ք ա ո ր ք մ ա տ ն ե ա լ ե ն յ ա յ ն պ ի ս ի ո ղ ո ր մ ե լ ի վ ի ձ ա կ ,  
յ ո ր ո ւ մ տ ա ռ ա պ ի ն , և ո չ գ տ ա ն ե ն զ ո ք օ դ ն ա կ ա ն .  
և կ ա մ ո ր ք ը մ բ ո ւ ն ե ա լ ե ն ՝ ի հ ո զ ս ա ն ե լ ս և խ ե ղ -  
դ ի ս : Չ ո ր ը ր դ ՝ ն ո ք ա ա մ ե ն ե ք ի ն ո ր ք կ ո ր ծ ա մ ն ե ա լ  
կ ա ն յ ա խ տ ս ի ն չ է , և ս և ն չ ք ո ր ք կ ա պ ե ա լ ե ն ՝ ի մ ե զ ս .  
Օ ս ո ս ա զ ա մ ե ն ե ս ի ն կ ա ն դ ն է ո ծ պ է ս օ ր ի ն ա կ ա ւ .  
ե ր ք ե մ ն ն ա և ա ռ ա ն ց ի ն չ է կ ա ր դ ա լ ո յ ն ո ց ա ա ռ ն ա :  
Ա յ ր ո ւ չ ի ն մ ա ր կ ա ր ի դ ա , կ ո ր կ ո ն ա ց ի ՝ ի մ ա ն կ ո ւ թ ե ա ն  
հ ա ս ա կ ի գ լ ո ր ե ց ա ւ ՝ ի մ ե զ ս . և ը ն դ ս ե ղ ե խ ի ն ի ւ ր ո ւ մ  
փ ա խ ե ա ւ ՝ ի ծ ն ո ղ ա ց ի ւ ր ո ց մ ե ծ ա տ ա ն ց , և ե կ ա ց ՝ ի  
մ ե զ ս զ ա մ ս ի ն ն : Հ ա ւ ո ւ ր մ ի ո ւ մ շ ո ւ ն ս ե ղ ե խ ի ն ձ գ ե ա լ  
տ ա ր ա ւ զ ա մ ա ր կ ա ր ի դ ա և ե ց ո յ ՝ ի ն ե ր ք ո յ փ ա յ ա մ ի ց զ ի  
ս ե ղ ե խ ի ն : Հ ո ր մ է զ ա հ ի հ ա ր ե ա լ ն ո ր ա ա պ ա շ ն ա ր ե ա ց ,  
գ ն ա ց ա ռ ծ ն ո ղ ս ի ւ ր և մ ե ր ժ ե ց ա ւ . գ ն ա ց ա ռ փ ր ա ն  
կ ի ս կ ե ա ն կ ո ւ ս ա ն ս , և չ ե ղ ե ը ն կ ա լ ե ա լ . գ ն ա ց ա ս ր ա  
յ ե կ ե ղ ե ց ի , և գ լ ո ր ե ց ա ւ ա ռ ա ջ ի խ ա ւ ե լ ո ւ ն . ձ գ ե ա ց  
՝ ի ն ա ք ո զ ձ ե ռ ն ի ւ ր , և կ ա ն դ ն ե ա ց զ ն ա : Վ լ ի ն ի ւ  
ա յ ո ր ը ն կ ա լ ա ն զ ն ա կ ո ւ ս ա ն ք ՝ ի վ ա ն ս . յ ո ր ո ւ մ ե կ ա ց  
ն ա խ ս տ ա մ բ ե ր վ ա ր ո ւ ք . և մ ե ռ ա ւ ս ր բ ո ւ թ է : Ա ր ո վ  
ց ո ւ ց ա ն ի , թ է ո ծ կ ա ն դ ն է զ գ լ ո ր ե ա լ ս . և ի ն ա յ է յ ա մ ե ն  
ն ե ս ե ա ն ՝ ո ր ք տ ե ղ ի տ ա ն շ ն ո ր հ ա ց ն ո ր ա . և ո չ զ ո ք  
մ ե ր ժ է : Օ ա յ ս ե ղ ե ա լ խ օ ս ի ա պ ա մ ա ր դ ա ր է ն և զ ա յ  
լ ո ց ն ե ր գ ո ր ծ ո ւ թ է ց գ թ ա ս ի ր ո ւ թ է ո յ ՝ ի մ է ջ բ ե ր ե -  
լ ո վ ն ա խ զ ս է ր ն ո ր ա ա ռ ա ր ս ն , յ ա ս ե լ ն :

թ . **Տ** է ր ս է ր է շ ա ր դ ա ր ս . տ է ր պ ա ն է շ ա ր ա ն դ ա ր ս ի ս ո ր ս . շ ա ր դ ՝  
Լ շ ա ր ի ս շ ա ր ա ն է տ է ր . և շ ա ն ա ս պ ա ր հ ս ա մ է ա ը ը ը ը լ  
ո ր ա յ է ր ո ւ ս ա ն է :

Ա կ ր ն ա յ ո ր ա ռ ա ռ մ ե լ ՝ ի կ ո ղ մ ա ն է ի ւ ր մ է հ ի մ ն ի յ ո ր ը -  
մ ո ւ թ է ն ո ր ա , և ՚ի շ ն ո ր հ ս ն ո ր ի ն . յ ո ղ ո ր մ ո ւ թ է ՝ ա ր -  
մ ա տ ա պ է ս , և ՚ի շ ն ո ր հ ս ՝ մ ե ր ձ ա ւ ո ր ա պ է ս . վ ա ս ն զ ի  
ա ծ ո ղ ո ր մ ե լ ո վ տ ա յ մ ա ր դ ո յ զ ն ո ր հ ս ի ւ ր և ա յ ն ո ւ  
շ ն ո ր հ օ ք ա ռ ն է զ ն ա ա ռ ա ր կ ա յ ս ի ր ո յ ի ւ ր ո յ . և զ ի ա յ ս  
մ տ ա ծ ի յ ա ր դ ա ր ա ց ե լ ս կ ա մ ո ր ն ո յ ն է յ ա ր դ ա ր ս , վ ա ս ն

այսորիկ զարդարսն՝ ի մէջ բերէ աստ մարդարէն։  
Վասցի ՚ի կողմանէ իւրմէ, զի ՚ի կողմանէ արդա-  
րոյն մտածեալ սէրն այց հայի և ՚ի փոխագարձ ներ-  
գործուի սիրոյ արդարոյն, որ յառաջ գոյ ՚ի հոգւոյ  
նորա տրամակայեցելս չնորհօք այց իրը զի արդարն  
ունելով յինքեան զհաճնյալրար չնորհօք այց՝ նովին շը-  
նորհօք ելուզանէ զներգործութի սիրոյ առ ած, և  
գործէ զհաճնյու նորա, և ոչ զհաճնյու անձին իւրոյ։  
որով և առնէ զինքն առարկայ սիրոյն այց, կամ որ  
նոյն է, առնէ զի ած՝ որ ետ և էառ, այսինքն որ  
ետ նմա զշնորհս իւր, և էառ ՚ի նմանէ զլնծայս սի-

րոյ, սիրեսցէ զնսա: Հայս հայելով ասէ:

**Տէր** սէրէ լորտպու: Վ. յախնքն՝ ած որ ամենայնի տէր  
է, և ոչ ումեք կարօտի, սիրէ զայնոսիկ որք սիրեն  
զնա, որպիսի են արդարք, իսկ ներգործութի այսը  
սիրոյ, որով սիրէ ած զարդարսն, ՚ի պէսպէս իրս տե-  
սանի. ոչ միայն ՚ի գերբնական կարգի՝ յորում ցու-  
ցանէ նոցա զգերբնական ինամս իւր, այլև բազում  
անդամ՝ ՚ի բնական կարգի՝ ՚ի պահելն զնոսա և յօդ-  
նական լինին նոցա յայնպիսի գործու՝ որք են սոսկ  
գործք բնութէ, ևս և պաշտպանելով զնոսա ՚ի մարմ  
նաւոր փորձանաց: Իսայց քանզի սիրելի լինիլ նոցա  
մտածի ՚ի գերբնական կարգի, իննամքն այց զոր ցու-  
ցանէ առ նոսա ՚ի բնականս՝ ըստ վախճանին հայի ՚ի  
գերբնականն: Խօսելով ապա մարդարէին և զայլց  
ինամոցն այց ասէ:

**Տէր** պահէ սղոնդաւորս զորին՝ և զայրէն ընդունէ անէ:  
Իրբե փորձ խօսի մարդարէն, զի ՚ի բազմամեաց  
պանդխտութի իւրում յամենայնի ետես զպահալա-  
նութի և զպաշտպանութին այց. որով և յայտնի ետես՝

թէ ած ինամէ գթով զպանդուխտս:

Հոր յաւելու ևս՝ թէ ընդունինաե զորքս և զայրիս  
իւրե տէր նոցա. ուր բայս ընդունէն՝ ըստ երկուց  
դնի. մի՝ փոխանակ առնլս և կարգելս այց զմարդ-  
՚ի ծառայութի իւր. որպէս թէ ասէր. ած զամենե-  
սեան ընդունի՝ եթէ կամիցին և նոքա. ևս և հաճի  
կարգել զնոսա ՚ի ծառայութի իւր ՚ի կամիլ նոցա ծա-  
կարգել ինքեան, և ոչ զոք խտրի՝ յորում վիճակի և  
ռայել ինքեան, և ոչ զոք խտրի և եթէ որքք, եթէ այրեք  
իցեն, եթէ պանդուխտք և եթէ որքք,

478      Մ ԵԿՆՈՒԹԻՒՆ

և եթէ ամուլք, եթէ աղքատք և եթէ ախտաժետք։  
Եւս և հայելով՝ ի յաջորդ համարն ոչ խորշի առ-  
նուլ զնոսա՝ ի զինուորութիւն թագաւորութիւն իւրոյ։  
որպէս խորշին երկրաւոր թագաւորք։ \* Յարտաքին  
,, զինուորութիւն։ ( ասէ բարսեղ վարդապետ . ՚ի  
,, մեկն . մարկ . գլ . ձը . ՚ի յորդ . ) զմարմնոյ չափ և  
,, զանձին բարեձև հասակ և զքաջութիւն ինդրեն և  
,, քննեն՝ որք հանդերձեալ են ածել զնոսա՝ ի զի-  
,, նուորութիւն . նաև աղատութիւն ինդրի . վասն զի  
,, զծառայս արտաքսեն յայսմանէ . իսկ երկնաւոր  
,, թագաւորն քո՞ ոչինչ յայսցանէ ինդրէ . այլև զծա-  
,, ռայս ընդունի , զծերս և զախտաժետս, զկաղս և  
,, զկոյրս , և զամենեսեան՝ որ հաշմ են մարմնով . և  
,, ոչ ամաչէ . զի՞նչ քան զայս մարդասիրութիւն լինիցի  
,, և քաղցրութիւն : Աս՝ որ ՚ի մէնջ պարտ է լինիւ  
,, ինդրէ . իսկ նոքա՞ զոր ոչ ՚ի մէնջ : Ո՞իայն զայ-  
նոսիկ ոչ ընդունի՝ որք ոչ կամին ընկալեալ լինիւ .  
առ որ կարէ հայիւ ասացեալն , թէ \* ոչ ընկալար  
,, զնա՝ ՚ի պատերազմի : ( սաղ . ձը . 44 : )

Երկրորդ՝ ընդունին դնի աստ փոխանակ ինսամելց ,  
յոր միտ կամի ասել՝ ած որ արարիչ է ամենայնի և  
տէր՝ ինսամէ զամենայն կարօտեալս և զանօգնականս  
և զտառապեալս . որպիսի են պանդուխտք , որբք , և  
այրիք . և ՚ի դիմելնոցա առ նա աղօթիւք՝ ոչ մերժէ  
զնոսա , այլ ընդունի , այսինքն ապաւէն լինի նոցա ,  
պահապան և պաշտպան , և լնու զպիտոյսնց : Օ այսմ  
ամենայնէ տէս և ՚ի սաղ . ձք . 6-8 :

Այս բան հայի ևս և յարդարսն իբրև ՚ի պանդուխտս  
զի ոչ են քաղաքացիք աշխարհիս , այլ երկնային դա-  
ւառին , և պանդխտութք կան ՚ի վերայ երկրի հա-  
նապազ հառաչելով ժամանել ՚ի հայրենիս իւրեանց :  
Օսոսա պահէ ած՝ զի մի յարեսցին յերկրաւորս , այլ  
շահեսցին ՚ի նոցունց , և այնու ծանրաբեռնեալք  
յարդիւնս իբր զբարելից նաւո՝ հասցեն յերկինս : Առ-  
ջին սոքա և որբք , զի չունին յերկրաւոր իրս զայն .  
պիսի հարս՝ որք կարիցեն ժառանգեցուցանել նոցա  
զյաւիտենական բարիս , առ որս փափաքեն : Առջին  
և այրիք , զի ՚ի մարմնի գոլով ոչ վայելեն զերկնաւոր  
փեսայն իւրեանց յաւիտենական գրկախառնութք :

ԱՅԼ ԵԿԵՍԳԵ ԺԱՄԱՆԱԿ զի ԸՆԴՈՒՆԻԳԻ ՊՆՈՍԱ ՈՐ Ա.  
ԸԱՐՆ ՊՆՈՍԱ յառագաստ իւր յԵՐԿԻՆՍ . և լիցի նոցա  
հայր և փեսայ . և տացէ նոցա վայելել զինքն յաւի-  
տեան . զորոյ զհակառակն ունի ցուցանել առ այնո-  
սիկ՝ որք ամբարշտութե վարեցին զկեանս իւրեանց .  
որոյ վասն յարէ զկնի մարգարէն և ասէ :

Եւ զմանապարհս ամբարշտաց իրուսանէ : Այսինքն զայն  
ամենայն հնարս և զգործս , ևս և զյաջողութիս և  
զբերկութիս , ընդ որս իբր ընդ ձանապարհս գնան  
ամբարիշտք , կորուսանէ ած , այսինքն ցըուէ և ու-  
նայնացուցանէ , և առնէ՝ զի ոչինչ օդտեսցեն նոցա  
այնոքիկ , այլ մանաւանդ լինիցին պատճառ կորո-  
տեան նոցին : Օ այս ամենայն եղեալ մարգարէին՝  
կնքէ զբան իւր 'ի գովեստ թագաւորութեն այ՝ ա-  
սելով :

Ֆ. **Ձ**ԱԿԱՆՐԵՄԵՍ ՊԵՐ յաւիտեան . ած չո սիռչ՝ աղէէ  
մնչե յաղէ :

ՁԱԿԱՆՐԵԼՆ այ թեպէտ և ըստ բազում իրաց կա-  
րէ մտածիլ , բայց տիրապէս ը երկուց , այսինքն ը  
իշխելոյ և ըստ փառաւորելոյ : Օ այսոսիկ ունին և  
երկրաւոր թագաւորք , բայց նուաստութե և չափա-  
ւորապէս եթէ ըստ գոլոյ և եթէ ըստ տեսելոյ . զո-  
րոց տես 'ի սաղ . Ճիշդ . 11 . և 13 . իսկ ած ունի  
անբաւութե և անչափապէս յինքեան և 'ի տեսողու-  
թե . յինքեան՝ ըստ անսահման իշխանութե , և 'ի  
տեսողութե՝ ըստ անեզը յաւիտենականութե : Յայ-  
սոսիկ հայելով ասէ մարգարէն :

**Ձ**ԱԿԱՆՐԵՄԵՍ ՊԵՐ յաւիտեան . ած չո սիռչ՝ աղէէ մնչե  
յաղէ : Այսինքն ած որ է արարիչ երկնի և երկրի ,  
թագաւորէ և թագաւորեսցէ 'ի յաւիտեան՝ որ է ա-  
սել . փառք թագաւորութեն այ է յաւիտենական  
և բարձրացի յաւիտեանս յաւիտենից : Եւ զայս  
դնէ մարգարէն իբր աւետիս տալով սիօնի . որպէս  
թէ ասէր . երանի է քեզ սիօն , զի ած քո՝ որ է տէր  
ամենայնի՝ և թագաւորէ 'ի վերայ ամենայնի և թա-  
գաւորեսցէ յաւիտեան . և ոչ է իբրև զթագաւորս  
երկրի , որք ոչ կարեն ամենայնի և յաւիտեան թա-  
գաւորել . և ոչ ևս է իբրև զածս օտար աշխաց , որք

յետ ժամանակաց եղծանին և չքոտին : Եւ զի այս  
թագաւորելո այ հայի մասնաւորապէս՝ ի սիոն՝ այս-  
ինքն յեկեղեցի այ ըստ հնումն և ըստ նորումն , սմին  
իրի յաւելու ասել :

**Առաջի Քնչւ յաղգ :** Այսմի ասել . Երանի քեզ սիոն՝ զի  
ոչ թողցէ զքեզ ած՝ որ թագաւորէ յաւիտեան , այլ  
իբրև յատուկ թագաւոր քո թագաւորեսցէ՝ ի վերայ  
քո՝ թէ յառաջիկայ ազգիդ՝ և թէ յայնմ՝ որ գալոց  
է , այսինքն ոչ միայն ըստ այժմու վիճակի ազգիդ  
եբրայեցւոց , այլև ըստ ապագայ վիճակի ազգին հե-  
թանոսաց . և այս՝ մինչև՝ ի կատարած աշխարհի .  
( տես զայսմանէ և՝ ի սաղ . Ղը . 1 . և Ղը . 1 . և  
Ղը . 1 : )

**Այլ այս բան տիրապէս և յատկապէս հայի՝ ի թա-  
գաւորութին քնի . զորմէ աւետիս տայ մարդարէն  
նորոյս սիոնի , թէ թագաւորելոց է նա՝ ի վերայ ա-  
մենայնի՝ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի , և մաս-  
նաւորապէս՝ ի վերայ քոյ սիոն , ցորչափ տեսէ ազգ  
մարդկան՝ ի վերայ երկրի : Այսը թագաւորութե-  
փառաւորութի հանդիսացի յաւուրն դատաստանի ,  
յորում մեր ցուցցէ զինքն թագաւոր թագաւո-  
րաց , և ժողովեալ առ ինքն զընտրեալս իւր՝ ածցէ  
՝ ի վերինն յայն թագաւորութի , և անդ թագաւո-  
րեսցէ՝ ի վերայ նոցա և ընդ նոսա յաւիտեանս յաւի-  
տենից :**

## ԱՐԴՅՈՒՆ ՃԽՁ:

Յօրդոր օրհնելոյ զանձ , հայելով 'ի բարերարութիս նորա , ևս և յանչափ գիտութիւն և յիշխանութիւն ուրին , նաև 'ի մեծութիւն 'ի զօրութիւնորուն . միանգամայն 'ի մէջ բերելով և զբազմասլատիկ խնամն՝ զորս ունի ած 'ի վերայ արարածոց :

Լուլութիա . անգեայ և զատարիա :

I (Օ) քհնեցէտ զտէր՝ զի բարի են սաղմոս . այ մէրու ժաշու եշեց օրհնութեն : 2 Ը ինէ զերուսաշէմ թը . և զերուեալսն իսրայէլէ ծոշովէ : 3 Բաժշնէ զբէիւալ սէրպս , և պատէ զամենայն վէրս նոյա : 4 Ո բուէ զբաղմութեն ասաւեցայ . և զամենեսեան զնոսա յանուանէ հոչէ : 5 Ո եծ է աէր , և մէծ է զօրութենորա . իմաստութենորա ոչ գոյ բաւ : 6 Ո նդունէ զհեղս աէր . և խոնարհ առնէ զամբարպատանս մինչեւ յերիէր : 7 (Օ) քհնեցէտ զթը խոստովանութեն : սաղմոս ասացէտ նմա օրհնութեն : 8 Ո զտեցոյ զերիէնս ամուվէ . պարզաստ արար զանչը իւր յերիէր : 9 Բառուրոյ զեռպ 'ի լերինս , զդալոր 'ի ծառայութեն մարդիան : 10 Ո ապա անասնոյ իւրահուր . իսգուր ագուաւուր 'որ իարդան առ նա : 11 Ո չ ընդ զօրութեն ինոյ համեցաւ աէր . և ոչ ընդ եւանս առն սէայէ հաճեցաւ : 12 Լոյլ հաճեցաւ աէր ընդ երիւ-շածս իւր . և ընդ այնուին 'ոյք յուսան յողորմութենորա :

## Ա Ե Բ Ե Ա Գ Ի Բ .

Ա Խ Ա Վ Ա Հ Ա Յ . Ա Խ Ա Վ Ա Հ Ա Յ :



**Յ**ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԴԱՏԵՎՈՅ Ա Ա Մ Ա Վ Ա Յ .  
մի՞նի վերջ նախընթաց սաղմոսին , և մի  
ևս՝ ի սկզբան այսր սաղմոսի : Խոկ թարգ-  
մանիչք զերկոսին ևս աստ եղին , զմին իբր վերնա-  
գիր ըստ բուն երբայական ձայնի . իսկ զմիւսն իբր  
սկզբնաւորութի՞ ոչ ըստ երբայական ձայնի , այլ ըստ  
նշանակութեանն , յասելն . \*օրհնեցէք զտէր || . ըստ  
որումբառդ ալէլուտա՝ նշանակէ օրհնեցէք զտըր , կամ  
դովեցէք զտէր :

**Դ**Թարգ" լատ" ի հասարակ օրինակս դնի ՚ի վեր-  
նագրիդ միայն ալէլուիայ : Ծայց յայլ ամենայն թարգ"  
ևս և յասորւոցն , նոյնպէս և ՚ի բազում օրինակս  
լատ" դնի ըստ եղելոյդ ՚ի վերոյ . \*ալէլուիայ անդեայ  
և զաքարիայ || . զորմէ տես և ՚ի վերնագրի նախըն-  
թաց սաղմոսին :

**Ա**յս սաղմոս՝ որպէս ՚ի նշանակեալ տեղիդ ասացաք ,  
ըստ կարծեաց հասարակաց հայի ՚ի ժամանակ դարձի  
գերութեանն բարելացւոց , և հաւանականագոյնս է  
ասել ըստ վերնագրի ասորւոց , թէ բանք սաղմոսիս  
առաջի դնին իբր յորդոր ՚ի բերանոյ զօրաբարելիք և  
յեսուայ յովսեղեկեան , և եղբասայ , առ ՚ի ձեռն  
արկանել ՚ի շինուի տաճարին : **Ա**յլ թէ ՚ի նոցունց  
արդեօք եղեւ յօրինեալ , թէ յանգեայ և ՚ի զաքա-  
րիայ , և կամ յայլմէ հոգեկիր անձնէ և կամ ՚ի դաւ-  
թայ նախագուշակութիք , չէ յայտ :

## Բ. Ե. 'Ե.'

ա. ( ) բնեցէտ շրեր՝ չէ բարի են սաղմոս. այ հեռամ  
ժաղցը եղեց օրհնութիւն :

## Մ. Ե. 'Ե' Ա Ի Թ Թ Ի Ե' Ե'

Արկին զօրութիւն ըմբռնի յօրհնութիւն սաղմոսաց,  
այսինքն է օգուտ և փառք. օգուտ՝ հայելով՝ ի մեջ,  
և փառք՝ հայելով յած : Օ այսոցիկ զՃաշակն ա-  
ռեալ մարդարէին՝ յօրդորական բանիք՝ ի մէջ բե-  
րէ զսոսին, և նախ վասն առաջնոյն խօսելով ասէ :

( ) բնեցէտ շրեր՝ չէ բարի են սաղմոս : Ա յսինքն օրհ-  
նեցէք զած, սաղմոս ասելով. վասն զի բարի են՝ այս-  
ինքն օգտակարք են յոյժ սաղմոսասացութիւն : Իսկ  
այս օգուտ ըստ բազում իրաց մտածի . մի՝ զի՝ ի  
ձեռն սաղմոսաց հոգիք մեր սփոփին, և 'ի վիշտո  
միսիթարին, և 'ի տապիլն 'ի փորձութեց՝ զովանան  
և թեթևանան : Երկրորդ՝ զի միտք մեր նոքօք հրա-  
ժարեալ 'ի ծանրաբեռնութէ երկրաւորաց՝ յերկ-  
նայինսն բերին : Երրորդ՝ զի 'ի ձեռն սաղմոսաց ձայ-  
նակից լինիմք երկնային զօրաց, և մասամբ իմն հա-  
ղորդք երանելեացն, որք են յարքայութե՛ : Ըորրորդ՝  
զի սաղմոսիք իրք փոխադարձ իմն տրովք ըստ իմիք  
հատուցումն առնեմք բարերարութեցն այ 'ի մատու-  
ցանել նմա զշնորհուկալութիւն : Հինգերորդ՝ զի ստա-  
նամք նոքօք զարդիւնս ընդունելոյ զվարձս յարքայու-  
թե՛ : Քանզի խոստացեալ է ած՝ թէ \* զփառաւորիլու-  
,, իմ փառաւորեցից || . (ա. [թագ. թ. 30:] ) Օ այս  
եղեալ մարդարէին՝ խօսի ապա և վասն երկրորդին  
ասելով :

Ա սպանծոյ հեռամ ժաղցը եղեց օրհնութիւն : Կամի ասել.  
որպէս օգուտ մեծ իինի մեջ օրհնել սաղմոսիք զած,  
սոյնպէս քաղցր լինի նմա և հաճոյ՝ օրհնելն զնա.  
որովհետեւ կարգի այն 'ի փառս նորա : Եւ թէպէտ

484 Մ Ե Կ Շ Ո Ւ Թ Ի Ե Շ  
մարդարեն յառաջնումն եղ սաղմոս, և յերկրորդումն  
յայսմ՝ օրհնութի, բայց հայելով յայն՝ զոր ասաց,  
օրհնեցիք, յերկոսին ևս զնոյն տայ իմանալ, այսինքն  
է օրհնել սաղմոսիւք :

Խակ թէ արդարեւ քաղցը և հաճոյ է ոյ այս օրհնու-  
թի, յայտ է ՚ի բազում վկայութեց, յորոց մին բա-  
ւական լիցի, այն՝ զոր ասէ ած բերանով մարդարենին  
՚ի սաղ. խմ. ՀՅ. \* պատարագ օրհնութե փառա-  
,, որ արացի զիս. Ա. Այս յայնժամ լինի, յորժամ  
ըստ արժանուոյն մատուցանի ոյ այն օրհնութի, զորմէ  
անես ՚ի յիշատակեալ տեղիդ: Ա. արդ յետ առաջի դնե-  
լոյ մարդարենին զյորդորանս օրհնելոյ զած, ՚ի մէջ  
մատուցանէ այժմ զբազմապատիկ բարերարուիս ոյ  
իբրև զառիթս օրհնելոյ զնա. և նախ ասէ :

Է. Ընէ զբառապաշէմ ուէր. և զյորակալն իսրայէլ ժռ-  
շէ:

Դ. Աժշի զբառակալ սիրոս, և պատէ զամենայն վէրս նո-  
յու:

Ա. յս բարերարութի ոյ՝ զոր եցոյց առ իսրայէլացին՝  
՚ի դարձի զերութե նոցին, ոչ փոքր ինչ եղեւ քան  
զոր եցոյց յելանել նոցա յեգիպտոսի. արդարեւ այն  
եղեւ մեծամեծ նշանօք և զօրութք, բայց և այս  
եղեւ ամենամեծ գթութք և անքննին տեսչութք.  
քանզի ցիրուցան լեալ նոցա յայեւայլ գաւառս, և  
յուսակառուր տարագրեալ ՚ի հայրենեաց՝ և իբր ան-  
գարձ հեռացեալ ՚ի ցանկալի քաղաքի մասի իւրեանց  
օր էր պարծանք նոցա, և չարաչար տուայտեալ ՚ի  
մէջ օտար ազգաց, այն ինչ կարծէին իսպառ Ծնջիլ  
և կորնտիլ, յայտնի տեսին յինքեանս զայցելութին  
ոյ, և զհայրագութինամն նորա՝ գառնալ ՚ի գերու-  
թէ անտի և ժողովիլ ՚ի տեղիս իւրեանց, և շնել  
զտաճարն և զերուսալէմ քաղաք. վասն որոյ իբր  
մեծ ինչ երախտիք զսոյն զայս առաջի մատուցանէ  
նոցա մարդարեն՝ առ ՚ի յորդորելոյ զնոսա՝ գոհանալ  
զնոյ: Աւ քանզի զայս ամենայն մանաւանդ զշնուի  
քաղաքին և տաճարի յաջողեաց նա ինքն ոծ, և  
գրեթէ ինքնին արար՝ շարժելով զսիրոս թագաւո.

բաց , վասն որոյ նմա միայնոյ տալով զսոյն ասէ : Հ բնէ պէրսուալէն աւէք . և պշտուեալն էսայէլէ ծողովէն : Այս բան հայի յուրախութէն օրտի դարձելոյն 'ի գերութէ . որք յանձ պարձելով երդէին բերանով մարդ գարելին , և ասէին . ոչ մեջ՝ այլ ոյլ տամբ զայս մեծ բարերարութի , որ ոչ եթող զմեզ 'ի գերուե մերում , այլ գթալով 'ի վերայ մեր դարձոյց զմեզ 'ի գերուե անտի . և աւասիկ նա ինքն յաջողեաց մեզ կանգնել զտաձար իւր , ևս և շինել զերուաղէմ քաղաք \* ուր ունի ժողովիլ և զայլ մնացեալ որդիսն իսրայէլի , որք յըրուեալ են յայլեայլ տեղիս : Եւ քանզի 'ի յաջողիլ այսր՝ միսիթարութի մեծ լիներ նոցայն , յայն հայե-

լով յարէ զինի և ասէ :

Ի չէլէ լընէլէալ սիրոս , և պատէ զանձնայն վէրս նոյս : Վ յսինքն զայսպիսի բարերարութէն յուցանելով մեզ ոյլ սփոփեաց և սփոփիէ զտառապեալ սիրոս մեր . և որպէս ինքն եշար զմեզ , սոյնպէս և ինքն պատեաց և պատէ զտանձնայն վերս մեր , այսինքն փարատէ զցաւս մեր՝ դադարեցուցանելով զայն . զորօրինակ առնէ վիրաբոյժն դնելով զագեղանիս 'ի վերայ վերաց , և պատելով զայնս , որով և տայ դադարել հոս ման արեան և ապականութէ :

Օ այս յուցանէ ո՞ծ և առ այնոսիկ՝ որք դիմեն առնա . ըստ որում և ասէ բերանով մնված սի . ( թ . օրին . լր . 39 . ) \* Ես սպանանեմ և ես կեցուցանեմ , հար . , կանեմ և բժշկեմ . և ոչ ոք իցէ որ հանիցէ 'ի ձեռ . , ուաց իմոց . զայս ասաց և աննա . ( տ . թագ . թ . 6 . ) \* Տէր մեռուցանէ և կեցուցանէ . . . կանգնէ յերկը . , զտնանկն , և յարուցանէ զաղքատն յաղթեաց . Հ այս հայի և բանն յօրայ . ( ժաք . 2 . և ե . 18 . )

Վ յլաբանօրէն , այս բանք հային 'ի շինութի նորոյս եկեղեցոյ , որ եզե 'ի ձեռն քարոզուե առաքելոց . ուր ժողովիաց և ժողովի . տէր զցըրուեալ ազդ մարդկան . ըստ որում ասաց յովաննես աւետո՞ 'ի վեպեն անդ զըսէ . թէ \* զորդիսն ոյլ զցըրուեալսն ժողովիուս . , ցէ 'ի մի . ( յով . ժամ . 52 . ) և զայս արար թէ լը կելով 'ի ձեռն մլրտութէ զիրտս նոցա այսինքն դհո . դիս նոյս զըսէկեալս սկզբնական մեզօք , և պատելով . և զվերսներդորձական մեզաց 'ի ձեռն սպեղանեաց .

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն  
այսինքն խորհրդոյ ապաշխարութե՛, Օ սոյն զայս յա-  
ռաջ բերեալ իգնատիոս վարդապետ (՚ի մեկն զուկ-  
դք. 18.) զրե այսպէս . \* Արդ վասն զի բեկան ամե-  
,, նայն անձինք 'ի սատանայական հարուածոց անտի,  
,, վասն որոյ եկեալ այն՝ որ յուշութե՛ էած 'ի լի-  
,, նելութե՛ բժշկե զվերս . ըստ այնմ զոր ինքն իսկ  
,, առակաւ առեալ յայտնեաց զինամո՛ զոր եցոյց  
,, առ այն՝ որ անկաւ 'ի ձեռս աւազակոցն . պատեաց  
,, ասէ զվերսն . արկեալ 'ի նա ձ! թ և գինիի :  
Ա երածաբար, շինէ տէր զերուսաղէնն վերին՝ ժողո-  
վելով անդր զժողովս յամենայն ազգաց ցրուելոց . ու ը-  
ոչ ես տեսցի բեկումն որտի , և ոչ երեւսցի վերք  
մեզաց ինչ :

Տարոյապէս՝ շինէ տէր այսինքն նորոգէ տէր զհոգի  
մարդոյ, և ժօղովի՝ անդր զյրուեալ արդիւնս գործոց  
բարեաց և առաքինութեց . որով և բժշկե զբեկումն  
սրտի նորա, և պատէ՝ այսինքն անչետ առնէ զվերս  
ախտից նորին . (տես զայսմանէ և 'ի սաղ. Ճը. 3.)  
Հարդ խօսեցաւ մարդարէն զբարեբարութեն այ, և  
զզ թափիրութե՛ նորա . դառնայ այժմ խօսի զինա-  
մոց նորին : Ի այց քանզի այս խնամք կախեալ են  
զգիտութեն այ և զիշխանութե՛ նորա, ևս և զօրու-  
թե՛ և զիմաստութե՛ նորին, նախ խօսի զայսցանէ 'ի  
մէջ բերելով զթուել նորա 'ի ձեռն գիտութե՛ զա-  
տեղս, և զհրամայել նորա 'ի նոսա իշխանութե՛ .  
վասն որոյ ասէ :

Դ. Առաջ զբանանէ սարելոց . և զանեստն զնաս-  
յանանէ ինչ :

Ժառեւ զաստեղս թէպէտ և ոչինչ է առաջի այ,  
բայց առ մարդիկ երսի լինիլ մեծ յոյժ և անշնարին.  
զի թէ չէր այսպէս՝ ոչ ասէր անց ցաբրահամ (ծնն.  
ժե. 5.) \* հայեաց ընդ երկինս, և թուեա զաս-  
,, տեղս, եթէ կարասցես թուել զնոսա : Հայս սակս  
և առ հեթանոսս իսկ թուումն աստեղաց յօրինակ  
բերիւր անշնարին լինելոյ 'ի չափեւ զիր ինչ : Ի ստ  
այսմ մեծի համարման 'ի մէջ բերէ մարդարէն զայս  
'ի ցուցանել զանցափութե՛ գիտութեն այ, ընդ նմին  
և զանբաւութե՛ կարողութե՛ նորա յասելն :

Ուստեւ զբանականէ սոսեղաց : Կյամի ասել . թէպէտ և  
անշափ իմն և անհամար երեխ մեզ թիւ աստեղաց ,  
բայց առաջի անսահման գիտութեն ոյ՝ և ամենենին  
նուազ , և գիւրին յօյժ 'ի թուել . զի թէ գիւրին  
եղեւ նմայ յունչեւ գոյացուցանել զնոսա , քանի ևս 'ի  
թուել զնոսին : Եւ զի մի կարծեսց ոք թէ ած ար-  
տաքուստ միայն կարէ թուել զնոսա՝ առանց գիտե-  
լոյ առ 'ի ներքս 'ի նոր թէ որպիսի իցեն , և առանց  
իշխելը նոցա՝ յաւելու ասել :

Եշ շահնեւեան վնոսա յանուանէ իուէ : Վայս կոչելս յայտ  
առնէ նախ զամենատես գիտութին ոյ , իբր զի գի-  
տելով զնութիւն և զյատկութիւն իւրաքանչիւրոց նո-  
ցին՝ զանուն տայ նոցա . և զայս ու է պարտ իմանալ  
ըստ արտաքին անուան՝ այլ ըն ներքնոյն . որով նշա-  
նակի ձանացի նոցին , թէ այսպիսի և այնպիսի բնու-  
թէ են վիճակեալ . Ըայտ առնէ երկրորդ զամենա-  
կարողութին ոյ 'ի գոյացուցանել զաստեղս . զի ան-  
ուանել նորա զնո՞ւ է այն՝ զոր ասաց , եղիցին , որով  
և եղեն իսկ , և են և կնքեցան 'ի գոյուել իւրեանց .  
ը որոյ առնէ նարեկացին 'ի բանն իթ . \* յոյժ նուազ  
,, են քում մեծութեղ աստեղաց թիւք , զո՞ր գոյա-  
ցուցեալ յունչեց՝ յորթորջմամբ անուանց կնքեցեր :  
Ըայտ առնէ երրորդ զամենահաստիւ տեօչութիւն ոյ  
'ի պահպանել նորա զնոսա 'ի գոյութե իւրեանց .  
ուստի գեորգ վարդասկետ . ('ի մեկն . եսայ .) զայս  
բան 'ի մէջ բերեալ ասէ . \* թուել զբազմութիւ աս-  
,, տեղաց և անուանս կոչել նոցա , զի յայտ արասցէ ,  
,, թէ ու միայն արար , այլեւ հաստատ պահէ զնոսա .  
Ըայտ առնէ չորրորդ զամենազօր իշխանութին ոյ 'ի  
հրամայել նոցա՝ կոչելով զիւրաքանչիւրն յանուանէ,  
նոցին իբրեւ (թագաւոր կամ իբրեւ զօրավար զօրս՝  
'ի հնազանդիւն նմա և 'ի կատարել զբան նորին .  
ըստ այնմ զոր ասէ բարուք . (Վ . 35 .) \* կոչեաց զնո-  
սա (այսինքն զաստեղս) և ասեն ահաւասիկ կամք ,  
,, ծագեցին ուրախութեք արարչին իւրեանց :

Հոգեորապէս աստեղօք իմացեալ լինին որդիք ար-  
րահամու թուեալք ըն աստեղաց՝ այսինքն են ընտ-  
րեալքն , որք գետեալք և զետեղեալք են յերկինս

ՄԵԿԻՆ ՈՒԹԻՒՆ  
զըրոց զբազմութիսն որոշակի դիտէ ած , և զամենե-  
սեան զւոսս իբր յանուանէ կոչելով այսինքն նախա-  
սահմանելով ժաղով՝ յարքայութիւն երկնից : Հայո-  
ամենայն հայեցեալ մարդարեին՝ փառաւոր առանե-  
զնած՝ մեծացուցանելով զնա և զգօրութիւնորա ընդ  
իմաստութենորին , և ասէ :

**Ե.** Ած է ուէր մէր , և մէծ է զօրութենորա . իմաստու-  
թենորա ոչ գոյ բառ :

Ուեծուին այլ կրկնակի մասածի . մի՛ ըստ գոլոյ յին-  
քեան , և մի ևս՝ ըստ երեւելոյ առ արտաքս , կամ  
ըստ փաղանշանեալ լինելոյ յարարածոց . ըստ առաջ-  
նոյն ասէ :

**Ա.** Ած է ուէր : Այսինքն մեծ և անչափ է ած յինքեան  
ըստ ամենայն կատարելութեն իւրոյ : Այլ որպի՛ս ասէ  
իգնատիսս վարդապէտ ( 'ի մեկն . զուկ . առ . 32 . ) 'ի  
վերայ բանին , նաև եղիցի մեծ . \* մեծ ասելն ոչ եթէ  
,, ըստ չափոյ արժանաւորութեն կշռեաց զբանն .  
,, այլ վասն զի զափի բնութեն բանիւ յայտնել ոչ  
,, ունի՛ր ( հրեշտակն ) վասն այսորիկ միայն մեծ ա-  
,, սաց և լուեաց . այս և մարդարեից սովորութիւն է ,  
,, ըստ այնմ մեծ է տէր և մեծ է զօրութիւնորա .  
,, և մեծ քան զամենայն կուռս || . ( զայսմանէ տես և  
'ի սաշ . ձիուդ . 3 . ) Բատ երկրորդին ևս խօսելով  
մարդարեին՝ ասէ :

Եւ մէծ է զօրութենորա : Ծանիր՝ զի յած զօրութիւն  
իմաստութիւն և այլ կատարելութիւն թէպէտ և է մի  
և նոյն էութիւն ածութեն , բայց նոյն էութիւն ասի զօ-  
րութիւն ըստ որումէ սկիզբն առնելոյ զամենայն . և  
ասի իմաստութիւն ըստ որում է սկիզբն ձանաւելոյ  
զամենայն . Բատ որում է զօրութիւն կոչէ զայն մեծ ,  
այսինքն ամենամեծ . զի կարէ առնել յոշնչէ զմե-  
ծամեծս և զանհամարս , և պահել զգոլ նոցա յոշն-  
չութեն նոցին , և կառավարել զգործել նոցա ըստ  
ամենայն շարժմանց նոցին : Իսկ ըստ որումէ իմաս-  
տութիւն կոչէ անբաւ յասելն :

Իմաստութենորա ոչ գոյ բառ : Օ այս ասելով ոչ կոմի  
ցուցանել թէ գոյ յած անբաւ թօռով իմաստութիւն ,  
այլ թէ իմաստութիւնորա գոլով անսահման , ձա-

Ա Ա Հ Ա Մ . Ճ Խ Զ : 489  
 նաւէ զանթուս , այսինքն զանթաւ կարելիս , և զան-  
 համար ապագայս՝ ըստ ամենայն հանդամանաց նոցին :  
 Ու զի գոն այն կարելիք , ոյլ զի ինքն կարէ առնել  
 զնոսա . իսկ գոյն նոցա կարելի՝ հիմնի յայնմ ձանաւ-  
 ման՝ որով ած ըմբռնէ զինքն անթաւ օրինակաւ հա-  
 ղորդելի գոյ առ արտաքս , քանզի յայսմ ձանաշման  
 փաղանշանեալ լինի գոյն կարելեաց այսպիսի կամ  
 այսպիսի ըստ էութե և ըստ յատկութե իւրեանց :  
 Պատ վարդանայ , ասելն աստ \* մեծ է աէր , հայի  
 'ի հայր . և ասելն \* մեծ է զօրութի նորա , հայի  
 յորդի . իսկ ասելն \* իմաստութե նորա ոչ գոյ բաւ ,  
 հայի 'ի հոգին որ , 'ի խոստովանութի ամենաոք եր-  
 բորդութե . Օ այսոսիկ եղեալ մարդարեին խօսի  
 ապա և զիմնամոց գթութե նորա և արդարութե  
 ասելով :

Վ . **Կ** արանի զնելու տէր . և խնարդ առնէ շամբարուան-  
 ինչ յէտէր :  
 Ի սունին այ զոք նշանակէ գթութե իմն առնուլ  
 զնա 'ի կերկս խնամոց իւրոց և պաշտպանել զնա .  
 և զի զայս առաւելապէս առ հեզ և առ խնարհս  
 ցուցանէ , վասն այսորիկ ասէ :

**Բ** արանի զնելու տէր : Ա յախնքն թէ ած որ ամենա-  
 զթածն է և ողօրմած ոչ անտես առնէ զայնոսիկ՝  
 որք հեզքն են և խնարհք . այլ ընդունի զնոսա 'ի  
 ներքոյ պաշտպանուե իւրոց , և բարձրացուցանէ զնո-  
 սա : Իսկ որք ամբարտաւանքն են մերժէ զնոսա ,  
 վասն այսորիկ յարէ զինի , և ասէ :

Վ . ա խնարդ առնէ շամբարուանի ինչ յէտէր : Ա յախնքն  
 ած գոյով ամենելին արդար և շշմարիտ տեսեալ  
 թէ ամբարտաւանք իրը ինքնարաւ համարելով զան-  
 ձինս 'ոչ խոնարհին , լքանէ զնոսա 'ի խնամոց իւրոց ,  
 և առնէ 'զի նուատասային մինչեւ յերկիր , այսինքն  
 մինչեւ կոխիլ ընդ ոտիւք իրը զերկիր , որ է ասել .  
 ամենելին անարդս կացուցանէ զնոսա . և եթէ ոչ  
 արասցէ այսպէս յայսմ աշխարհի 'ի հանդերձեալն  
 ունի առնել . որպէս երկար գրէ եսայի (թ . 11-17.)  
 Կարձեալ խոնարհ արար ածը և զամբարտաւան դեսն  
 'ի հերքոց ժտէց հեզոց և խոնարհաց : Օ այսոսիկ հայե-

490      Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ ՞Ն  
ցեալ մարգարէին , և տեսեալ թէ աճ ոչ մեր-  
ժեաց իսպառ զժողովուրդ իւր՝ թողլով զնոսա յա-  
նարդ գերութէ , այլ 'ի հեղանալ նոցա 'ի նմին' ըն-  
կալաւ զնոսա , մատի 'ի շնորհակալութի և 'ի գո-  
վութի այ ասելով :

Է . ( ) բհնեցէ՛ զրէր խոսքով վանութիք . սաշմու ասացէ՛ նմա-  
օրհնութիք :

(Օրհնել զած լինի ըստ երկուց . մի՝ ըստ գոհանալոյ  
զնմանէ վասն բարերարութէց նորա , և մի ևս՝ ըստ  
գովելոյ զնա վասն բարութէ նորին . ըստ առաջնոյն  
ասէ :

( ) բհնեցէ՛ զրէր խոսքով վանութիք : Ուր բառս խոսքով վանու-  
թի՝ գնի փոխանակ շնորհակալութէ . յոր միտ կամի  
ասել . օրհնեցի՛ք զտէր գոհանալով և շնորհակալ մի-  
նելով զնմանէ վասն ամենայն բարերարութէց նորա  
զոր եցոյց մեզ , և մասնաւորապէս վասն աղատելոյ  
զմեզ 'ի գերութէ բարելացւոց : Այսպէս և ը երկ-  
ըորդին ասէ :

Ասշմու ասացէ՛ նմա օրհնութիք : Կամի ասել . 'ի գոհա-  
նալ ձեր զօյ վասն բարերարութէց նորա գովեցի՛ք  
ևս զնա՝ սաղմոս ասելով նմա վասն անբաւ բարութէ  
և մեծվայելութէ նորին , զի այն բարերարութի այ  
էր իրը զեղումն ներքին բարութէ նորուն :

Ա. յլազգ ևս կարէ կարգիլ այս բան . ըստ որոյ բառս  
խոսքով վանութիք՝ հայի 'ի դաւանութի հաւատոյ . իբր զի  
այնպէս պարտ է մեզ օրհնել զած , զի 'ի նմին օրհնու-  
թէ (որպէս ասէ վարդան) երեւեցի և դաւանութի  
հաւատոյ , գոնէ զօրութի կամ լոելեայն . յայս իսկ  
ասեմք \*օրհնութի և փառք հօր և որդոյ և հոգ-  
,, ւոյն նըլլ . և թէ \*օրհնեալ համագոյ նը երբոր-  
,, գութի . և այլն : 'Կարձեալ աստանօր առաջին  
հատուած այսր համարոյ ըստ յարմարական մեկնուն  
հայի յօրհնել զած գործով . ըստ որում սաղմոս ա-  
սելն գործարանաւ կատարիւր 'ի ցոյց այ բարութէն  
և բարերարութէ նորա , զօր ցուցանէ ոչ միայն առ-  
մարդիկ , այլև յայլ արարածս վասն մարդկան 'ի  
խնամելն անդ զնոսա ըստ իւրեանց հանգամանացն .  
զորոց խօսի մարգարէն 'ի յաջորդող . և նախ ասէ :

Է. **Ղ** զգեցաց զերինս ամուշը . պարբառը արար շահիք է  
իւր յերին :

Ա մակը են գոլորչիք բարձրացեալք յերկըէ . ՚ի բար-  
ձունս օդոյ մինչև յեթերական սահման . ուր ՚ի կա-  
րի իմն թանձրանալ նոցա՝ լուծանին յանձրե . Օ սյօ  
կարգ եղ ած ՚ի սկզբան անդ յերկըորդում աւուր  
արարչութե . (ծնն. առ. 6. 7.) յորում և յայտնի  
տեսաւ սքանչելի կարգնախախնամութե նորա . յայս  
ակնարկելով ասէ մարգարէն :

**Ղ** զգեցաց զերինս ամուշը . պարբառը արար շահիք է  
յերին : Կամի ասել . ՚ի տեսանելո՞ թէ ամպք պա-  
տեալ են զերկինս, մի կարծեր թէ զայն արկանէ ած  
վասն խափանելց զտեսութիւն երկնից, այլ իբրեւ ըզ-  
հանդերձ մերկանալի զգեցուցանէ զայն նմա . ընդ  
որով պատրաստէ զամբարս անձրեաց հոսել շայն  
յերկիբ . (զորմէ տես ՚ի սաղ. Ճ. 13.)

Հոդենորապէս, բառիւս երինս՝ նշանակի ՚որ զիրն,  
զոր ած զգեցոյց ամպովք մթուե . յորս և կան ամ-  
բարեալ անձրեք այսինքն իմաստք անբաւք, որը լու-  
ծանին յերկիբ այսինքն ՚ի միտս մարդկան ՚ի ձեռն  
ածիմաստ վարդապետաց եկեղեցւոյ . դարձեալ նշա-  
նակի ՚որ եկեղեցի . զոր պատեաց քո մարգարէնք և  
առաքելովք, վարդապետօք և թագաւորօք : Օ այս  
եղեալ մարդարէնս՝ առաջի մատուցանէ և զարդիւնս  
անձրեաց յիշանել նոցա յերկիբ . որովք բուսանին  
խոտք և այլ տունկք, և սնանին անսատնք և այլն .  
և նախ խօսելով զիսոտոց՝ ասէ :

Ե. **Բ** զգեցաց զերո՞ ՚ի չերինս, ստուզէ՞ ՚ի ծառայութէ  
յաբդին :

Օ սոյն ասաց մարդարէն և ՚ի սաղ. Ճ. 14. տես  
անդ . բայց զոր անդանօր խօսեցաւ յերկըորդ դէմն,  
աստ յերբորդ դէմն խօսի ասելով :

**Բ** զգեցաց զերո՞ ՚ի չերինս, ստուզէ՞ ՚ի ծառայութէ յաբդ-  
ին : Կամի ասել . ած հրամանաւ իւրով բուսոյց ՚ի  
մերինս և ՚ի դաշտս զիսոտս ՚ի պէտս անասնոց, և ս  
և զգալարիս՝ այսինքն զբանջարեղինս՝ ոչ այնչափ  
վասն անասնոց, որչափ վասն սլիտոյից մարդկան :

Ա. ՅԼ Քանդի յետ ստեղծեալ լինելոյ նոցա՝ եթե ոչ  
ուռոգեալ լինեին 'ի ջուրց՝ ցամաքեին և չորանային։  
մանաւանդ 'ի լերինս յորս տիրե յոյժ չորուհ՝, յայն  
ևս խնամ տանի ած ոռոգանելով զնոսա անձրեօք.  
զի սնանիցին և ամեսցեն, և սերունդ նոցա տեեա-  
ցէ՝ ցորչափ տեեն անասունք և մարդիկ։ Ծես զայռ-  
մանէ և 'ի սազ. Ճկ. 14. ուր որպէս ասացաք կրկնի  
այս բան յերկրորդ դէմս։ և որ անդ յառաջնում  
հատուածի զնի՝ խոտ անասնոց, աստ եղեալ է՝ խոտ  
'ի լերինս. ընդ որով իմացեալ լինի՝ թէ նաև այն՝  
որ յիշի աստ, է վասն անասնոց, առ ՚ի կերակրել  
զնոսա։

Տարոյասկէս 'ի լերինս այսինքն 'ի հպարտս ոչ բու-  
սանի դաշարի՝ արժանի մարդկային ծառայուեն, այլ  
խոտ այսինքն գործողութի՝ անասնոյ արժանի։ Խո-  
սի ապա մարդարէն զինսամելոյն ոյց զսնբանս և ասէ։

Ժ. 11 բայ անասնոց իերահուր. յագուց սկսաւուց՝ որ էար-  
դան առ նա.

Ա. յս բան կարգի 'իցուցանել թէ ած որպէս խնամ  
ունի 'ի վերայ բուսոց և անկոց 'ի սնուցանել և յա-  
ձեցուցանել զնոսա, սոյնպէս և 'ի վերայ ամենայն  
կենդանեաց. և քանզի 'ի կենդանեաց հասարակօրէն  
ցամաքայինք և օդայինք տեսանին մեզ, և սակաւ  
անդամ ջրայինք, վասն որոյ զերկուց միայն խօսի,  
այսինքն զցամաքայնոց և զօդոյնոց, յասեին։

11 բայ անասնոց իերահուր. յագուց սկսաւուց՝ որ էարդան  
առ նա։ 1. նասնովք իմացեալ լինին չորբոտանիք՝ ե-  
թէ վայրենիք և եթէ ընտանիք. և զի սոքա ծանօ-  
թագոյն են մեզ քան այլ կենդանիք, զսոսա 'ի մէջ  
բերէ, որովք և զայլս տայ իմանալ։ Սոյնպէս և ըշ-  
ձագս ագուաւուց 'ի մէջ բերելով ոչ 'ի բաց առնու  
զայլ օդային կենդանիս, այլ զնոսին ևս ընդ սոքոք  
տայ իմանալ։ Օ այսոսիկ զամենեսին ասէ, կերակրէ  
ած. զի որոց իրաց կարօտին 'ի սնանիլ պատրաստէ  
նոցա 'ի լերինս և 'ի գաշտու։ Ա. ՅԼ զի առանձին իմն  
օրինակաւ խնամէ զնագս ագուաւուց. որպէս ունինք  
ասել այժմ, զնոսա և եթ առաջի առնե, ասելով,  
Զագուց սկսաւուց՝ որ էարդան առ նա։ Դ քաղցնուլ

ձագուց ագռաւուց՝ ոչ կարելով նոցա ինքնին զտա-  
նել զիերակուր, աղաղակ բառնան և կունչեն, և այ-  
նու աղաղակաւ՝ որպես թէ առ ած կարդան, և ած  
որ տայ նոցա աղաղակել տայ ևս կերակրիլ, որպես  
գրի և զկորեանց առիւծուց՝ թէ \*ինդրեն յայլ ըլդ-  
,, կերակուր իւրեանց ||. (ՀՊ. 211.) Որով դիտէ մար-  
դարէն ցուցանել թէ ած որ կերակրէ զնոսա  
լլստի ասէ ոքն յակոր մծքնայ հայրապետ ('ի ձառն.  
ժը.) \* և դաւիթ ասաց. ձագուց ագռաւուց որք կար-  
,, դան առ նա, նա է համբարակ և կերակրէ. ըլդ-  
,, մարդ և զանասուն կեցուցանես դու ածը ||.

ի բերան թըքամց, և ուղիւրե ու ու ու  
Օ երկոսին կարծիս զայսոսիկ 'ի մի յարե վանական  
վարդապետ ('ի մեկն . յոր. գլ. լը.) և ասէ . \* Եւ  
,, ձադք նոցա (այսինքն ազուաւուց) առ տեր աղօս  
,, ղակեսցեն . . . ասի թէ 'ի ծնանիլն այս թուուն  
,, սպիտակաթոյը է գունով յորմէ օտարանան ծնողքն  
,, նորա, թէ ոչ իւր իցէ . և 'ի լորձն՝ որ իջանէ 'ի  
,, կտտացն՝ ժողովին մժղուկը, նովաւ կերակրի մինչ  
.. 'ի դարձ մօրն ||

Յաղումք ևս ասեն, թէ աղռաւեն կարի իմն մոռացող գոլով՝ ի մէկնիլն՝ ի բռւնսյ իւրմէ մոռանայ զձադս իւր, կամ լտեզի բռւնսյ իւրոյ թէ և նորոգ հանեալ

494 Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ւ Ւ Ն  
իցէ զձագսն . և նոքա անխնամ մնացեալ՝ աղաղակ  
բառնան , և կերակրին յայ : Քայս միտ վերածեն  
ումնք զայն բան , որ գրի . (զուկ . ժք . 24.) \* հայե-  
,, ցորուք ը ագռաւս , զի ոչ սերմանեն և ոչ հնձեն ,  
,, որոց ոչ գոն շտեմարանք՝ և ոչ համբարանոցք և  
,, ած կերակրէ զնոսա || :

Լիան ևս որք առասպելեն , թէ ագռաւսն յածելն ըդ-  
ձուս՝ նշան դնէ զամկս , և 'ի մեկնիլ նր , և 'ի ցրուիլ  
ամսոց ոչ ևս կարէ գտանել զայն , և եթէ այլ թըռ-  
չուն պատահէ սցի այնմ , և նստցի 'ի թուխս 'ի վե-  
րայ նորա , յելանել ձագռուն՝ տեսեալ թէ չէ 'ի տե-  
սակէ իւրմէ՝ թողու զնա , և յայնժամ ած ինսամէ  
տալով զկերակուր նոցա :

Վոյլ ոմանք ևս ասեն՝ թէ ձագք ագռաւուց փութով  
սկսանին թռչիլ քան զայլոց թռչնոց . և յեւանան  
յոյժ 'ի բունոյ իւրեանց , և ոչ կարելով գտանել կե-  
րակուր՝ թափառական շրջին և աղաղակեն , և ած  
հոգայ վասն նոցա :

Իստ այսոմ կարէ մեկնիլ և առաջիկայ բանդ . որ թէ-  
պէտ և յերը՝ ոչ յաւելեալ լինի բառդ առ նա . բայց  
քանզի յայլս առ հասարակ դնի այն , պարտ է և յերը՝  
իմանալ զնոյն գոնէ զօրութք :

Հոգեորապէս 'ի ձեռն ձագուց ագռաւուց իմանան  
ոմանք զհեթանոսս՝ որք էին որդիք սեւազգեաց ագ-  
ռաւուց այսինքն անհաւատից . և 'ի դառնալ իւ-  
րեանց և 'ի կարդալ առ քո՞ ած 'ի ձեռն հաւատոյ՝  
կերակրեցան 'ի նմանէ հոգեպէս : Վասամբ իմն ը-  
սմին խօսի և վանական վարդապէտ զրելով 'ի վերոյ  
յիշեալ տեղուջ . \*առակէ այսու ասէ զծնունդս մարդ-  
,, կան՝ որք անտեսեալք մինչ 'ի հեթանոսութեն էին ,  
,, եկեալ տէր ծնեալ աւազանաւսն կերակրեաց զնո-  
,, սա || :

Բարոյապէս՝ ամենեքին նոքա՝ որք խոնարհեալ իբրև  
զձագս աղաղակեն առ ած , և երկիւղածութք յու-  
սան 'ի նա , կերակրին 'ի նմանէ . իսկ որք հապարտու-  
թք իբրև զցիւս զռնւան կամ իբրև զձիս խխնջան ,  
ոչ համի ընդ նոսա ած , և ոչ կերակրէ զնոսա հոգե-  
պէս : Եւ զայսմանէ խօսի մարդարէն ձարտարութք  
իմն 'ի յաջորդ համարսդ ասելով :

Ժ մ . Ա ն է ը ն դ զ օ ր ո ւ թ է ս ի ո յ հ ա մ ե ց ա ս տ է ր ։ և ո չ ը ն դ ի բ ա ն ա ս տ ս ա ս տ ս ս կ ա յ ա յ ի հ ա մ ե ց ա ս տ :

Ժ ը . Ա յ լ հ ա մ ե ց ա ս տ է ր ը ն դ ե ր ի բ ա ն ա ր ե մ ե զ լ խ օ ս ի լ ։ մ ե զ լ ս ս տ ո ր ո ւ մ է կ ե ն դ ա ն ի ի ն չ ո ւ ն օ ղ ա յ ն պ ի ս ի զ օ ր ո ւ թ է ն ։ ս տ ե ղ ծ ե ա լ յ ա յ ։ ո ր ՚ի գ ի ր ս յ ո ր ա յ բ ա զ մ օ ք դ ր ո ւ ա տ ի (՚ի գ լ ։ լ թ ։ 19--25.) և ը ս տ ա յ ս մ ո չ է ա ր հ ա մ ա ր ց ե լ ի , և ո չ ա յ ն պ ի ս ի ի ն չ ը ն դ ո ր ո չ կ ա մ ի ց ի ա ն ։ զ ի թ է ո չ կ ա մ է ր ՝ ո չ ա ռ ա ն է ր ա յ ն պ է ս ։ Ե ր կ ր ո ր դ ՝ ը ս տ ո ր ո ւ մ վ ե ր ա բ ե ր ի ա ռ մ ա ր դ ս ։ և ը ս տ ա յ ս մ կ ա ր է լ ի ն ի լ ա ր հ ա մ ա ր ց ե լ ի , ո չ յ ի ն ք ե ա ն ՝ ա յ լ ՚ի մ ա ր դ կ ա ն ։ և ա յ ս յ ա յ ն ժ ա մ լ ի ն ի յ ո ր ժ ա մ մ ա ր դ ՚ի զ օ ր ո ւ թ է ս ձ ի ո յ ա պ ա ւ ի ն ի ՝ ո ր պ ի ս ի ե ղ և փ ա ր ա ւ օ ն ո ր հ ա ն դ ե ր ձ ձ ի ո վ ք կ ո ր ե ա ւ ։ կ մ յ ո ր ժ ա մ պ ա ր ձ ի ո ւ ն ի լ զ օ ր ա ւ ո ր ձ ի ս , և կ ա մ հ պ ա ր տ ա ն ա յ ՚ի վ ե ր ս յ բ ա զ մ ն ո ւ թ է ձ ի ո յ ո ր պ է ս ո ւ ա փ ս ա կ ի :

Ա յ ն պ է ս է ի մ ա ն ա լ և զ ի ր ա ն ա ց ա ռ ա ն , ա յ ն է ա մ բ ո ղ ջ կ ա զ մ ն ու ա ծ մ ա ր մ ի ն ո յ մ ա ր դ ո յ ն , ո ր յ ո մ ա ն ս կ ա ր ի զ օ ր ա ւ ո ր է և ա հ ե ղ , ո ր պ ի ս ի է ա ռ ա ւ ե լ ա պ է ս ՚ի հ ս կ ա յ ս ։ Ե ւ յ ա յ տ է թ է ո չ է ա ր հ ա մ ա ր ց ե լ ի ի ն չ ս ո յ ն պ ի ս ի գ ի ր ք հ ա ս ա կ ի յ ի ն ք ե ա ն ա ռ ե ա լ ։ ա յ լ լ ի ն ի ա ր հ ա մ ա ր ց ե լ ի հ ա յ ե լ ո վ յ ա յ ն ո ս ի կ ՚ո ր ք ա պ ա ւ ի ն ի ն յ ա յ ն ՝ ա յ ս ի ն ք ՚ի զ օ ր ա ւ ո ր ի ր ա ն ս ի ր ե ա ն ց , կ ա մ յ ա հ ե ղ ի ր ա ն ս հ ս կ ա յ ի ց , և կ ա մ պ ա ր ձ ի ն լ ի ն ի լ զ օ ր ա ւ ո ր ք յ ի ր ա ն ս ն , ո ր պ ի ս ի ե ղ և գ ո ղ ի ա դ ո ր ք ա ն կ ա ւ : { } ա յ ս ո ի կ ա կ ն ա ր կ ե լ ո վ մ ա ր դ ա ր է ի ն ա ս է :

Ա ն է ը ն դ զ օ ր ո ւ թ է ս ի ո յ հ ա մ ե ց ա ս տ է ր ։ և ո չ ը ն դ ի բ ա ն ա ս տ ս ա ս տ ս ս կ ա յ ա յ ի հ ա մ ե ց ա ս ։ Ա յ ս ի ն ք ՚ո չ հ ա մ ե ց ա ւ և ո չ հ ա մ ի ա ն ծ ը ն դ ա յ ն պ ի ս ի ՚ո ր ք ա պ ա ւ ի ն ե ա լ ե ն ՚ի զ օ ր ո ւ թ է ս ձ ի ո յ ։ կ ա մ պ ա ր ձ ի ն գ ո ր ձ ե լ ի ն չ զ օ ր ո ւ թ է ձ ի ո ց :

Ա յ ն պ է ս ո չ հ ա մ ե ց ա ւ և ո չ հ ա մ ի ա ն ծ ը ն դ ա յ ն պ ի կ հ ս կ ա յ ս ՚ո ր ք յ ո ւ ս ա ն ՚ի զ օ ր ո ւ թ է ի ր ա ն ա ց ի ր ե ա ն ց , և պ ա ր ձ ի ն յ ա ղ թ ե լ ն ո վ ա ւ :

Ը ս տ ա յ ս մ մ ե կ ն ո ւ թ է բ ա զ մ ա յ ս ր բ ն ա բ ա ն ի դ ն ի ն ը ս տ ա յ ն մ ձ ե ս յ ա ր տ ա ս ա ն ի ց , ո ր ո վ ա ն ո ւ ն ա ռ ա ր կ ա յ ի պ ա ր ձ ա ն ա ց դ ն ի փ ո խ ա ն ա կ ա ն ո ւ ա ն պ ա ր ձ ո ղ ա ց .

կամ անուն յուսացեալ իրի՝ դնի փոխանակ յուսացողի . որպիսի է և աստ . ուր բառքդ զբութիւն և իրանք որք են անուանք առարկայի պարծանաց մարդոյ կամ անուանք յուսացեալ իրաց , դնին փոխանակ անուան մարդոյ պարձեցողի կամ յուսացողի 'ի գօրութիւնից և յիրանս առն հսկայի :

Ո'արթ է փոքր մի այլազգ ևս մեկնել զայս բան՝ ը փոխարերութեալ առեալ , յոր միտ կամի ասել . ոչ համի ամ ընդ այնոսիկ՝ որք հպարտանալով կամին զօրաւոր ցուցանել զինքեանս իբրև զձիս կամ իբրև զհսկայս :

Դարձեալ կարէ այս բան և յայլ դեմն ըրջիւ իբր երկրորդական մեկնութեք . որով և միտ բանին լինի այս . ամ ոչ կամեցաւ զօրութեք ձիոյ մեծամեծ իրս գործել , և կամ իրանաք առն հսկայի յաղթութիւն կատարել . զի ոչ կարօտի այսպիսեաց : Օ այս եղել մարդարէին 'ի մէջ բերէ և զայնոսիկ , ընդ որս համի ամ , յասելն :

Այլ համեցաւ աէր ընդ երիւղածս իւր . և ընդ այնոսիկ՝ ոյտ յանուան յողորմութիւննորս : Ի յսինքն համութիւն ոյց բերքի առ այնոսիկ՝ որք որդիական երկիւղիւ պատկառին 'ի նմանէ . և թողեալ զմնոտի ապաւինութիւն անձին՝ յուսան յողորմութիւնորա . որպիսի են խոնարհք . ընդ սոսա ասէ համի , 'ի սոսա բերկրի , առ սոսա գոյ , զսոսա սիրէ , զսոսա ընդունի , և զսոսա փայփայէ աստ զեղմամբ չնորհաց և ուարդեաց իւրոց . և 'ի հանդերձեալն ժառանգութեան անձառ փառաց յաւետեան :

Ա Ե Գ Ա Մ Ա Ս Շ Յ Ո Ւ :

Բնծայութի հրաւիրանաց առ երուսաղեմ յօրհնել  
զտր որ ամբացոյց զնա, և անդորրացոյց զսահմանս նո-  
րա, և լիացոյց զորդիս նորուն բազմապատիկ բարեօք,  
և որ մեծն է՝ ետ նմա զիրաւունս և զարդարութի,  
զորպիսիս ոչ արար այլոց ազգաց :

Ա Լ Ե Լ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ :

**Պ**ահանձն երուսաղեմ զոեւ : 2 Եթ օրհնեա զած քա-  
մանը : 3 Օյ զօրացոյց զնեփու որոշ ուոց, և օրհ-  
նեաց զորդիս ու է ուեց, 4 Ու եր զահման ու է նորուն-  
թիւն . պարտութեա ուրենաց լուց զոեւ : 5 Ա սահնէ զբա-  
նուր ուեցիւ : զավաշ զնենան պարտութիւն նորս : 6 Դաէ ըշ-  
ցիւն որդիս զար, և զնեփ որդիս իւշէ օսեւաց : 7 Ա բնանէ  
զանան որդիս պարտութիւն . առաջն որոշ ու իւրէ իւ-  
լու : 8 Ա սահնէ զբան իւր՝ և հուլ զնուն . զնունցն հուլմա, և  
գնուոցն զնորս : 9 Պարտութիւն իւր յահնելքայ, զարտութ-  
թիւն և զիրաւունս իւրոյէլս : 10 Ու այսոյէս արար անենոյն  
աշխաց ուեւ : և զարտութթուն եր ու յայրանեց նոցա :

Ա Ե Բ Ե Ա Գ Ի Բ Բ :

Ա Լ Ե Լ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ :



**Զ Ա Ր Ա Զ Ե Ա Ր Գ Ի Բ Ր Մ Ո Ս Ս**  
մեր յաւելեալ լինի և բառս ի բաւել .  
բայց այդ ոչ գտանի յայլս, այլ յամենաւ-  
սին և յայլ ամենայն թարդմանութիւն ըստ զնելոյ  
մեր գրի, Ա Լ Ե Լ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ , զորմէ տես  
'ի վերնագրի ձիւն . սաղմոսի : Քերբայականն այս

9 Ա Բ

Մ Ե Կ Կ Ո Ւ Թ Ւ Ւ Ն  
սաղմոս չունի ինչ վերնագիր և ոչ իսկ բաժանի ՚ի  
նախընթացէն , այլ է մի ընդ նմա : Աշ որպէս այն  
սաղմոս ըստ հասարակ կարծեաց հայի ՚ի ժամանակ  
դարձի գերութեն , սոյնաբէս և այս . և հաւանական  
է ասել՝ թէ այս սաղմոս ասացաւ յետ աւարտման  
սղարսոյի քաղաքին , ՚ի չնորհակալութի առ ամծ վասն  
յաջողելոյ նորա զայն գործ , և վասն անդորրացուցա  
նելոյ զքաղաքն զայն և զազդն ՚ի խաղաղութէ . խօ  
սելով միանդ ամայն և զհատարակական ինսամոյն այ ,  
զոր ունի ՚ի վերայ արարածոց , և ապա զմասնաւոր  
ինսամոց նորա , զոր եցոյց ազգին իսրայէլի : Աշ քան  
զի երուսաղէմ օրինակ էր եկեղեցւոյ՝ ևս և երկնային  
քաղաքի , որ ինչ ասին ՚ի սաղմոսի աստ հայելով ՚ի  
նա , վերածին ՚ի սոսա :

### Բ Ե Ռ Ե

Թ . ♫ Ա ս վ ե ա բ ո ւ ս ա ղ է մ զ է բ :

Ե . ♪ Ա ս հ ն ե ա զ ա ծ ո ւ ս ի ս է ս :

### Մ Ե Կ Կ Ո Ւ Թ Ւ Ւ Ն Ե

Դիմառնութե ձեռվ սկսանի մարդարէն հրաւիրել  
զերուսաղէմ՝ ՚ի գովութի այ . որով դիտէ չքնաղ և  
պանծալի ցուցանել զբանայ յորդ որանաց իւրոց , միան  
դամայն և ազգու առնել զնոյն , և որպէս թէ այսու  
զարթուցանել զերուսաղէմ՝ յասելն :

Գ Ա Վ Ե Ա բ ո ւ ս ա ղ է մ զ է բ : Ա ամի ասել . ով երջանիկ  
քաղաքդ երուսաղէմ ընտրեալդ յայ՝ հայեաց միան  
դամ՝ զինչ ինչ արար քեզ ամծ , յորպիսի թշուառու  
թեց ազատեաց զքեզ , քամնի՞ մեծամեծ երախտիս ե-  
ցոյց ՚ի քեզ , և որքան բարեօք լցոյց զքեզ . գովեա  
ապա և դու զնա :

Ուր գովելն դնի ըստ երկուց , այսինքն ըստ գոհա-  
նալոյ և ըստ փառաւորելոյ . ըստ գոհանալոյ դնի՝  
վասն ընդունելոյ նորա յայ՝ զայնքան բարիս . ըստ  
փառաւորելոյ դնի՝ վասն ունելոյ զայնպիսի ամենա

բարի մոր . ըստ առաջնոյն դնի 'ի յայտնել զբան-  
չելիսն այ . և ըստ երկրորդին դնի 'ի պատմել զիառո-  
նորա . ըստ որում բացատրել մովսես վարդապետ ('ի  
մեկն . ժամագր . երես . 166 .) յասելն . \* գովեա  
,, երուսաղեմ զոր , այսինքն զմեծութիւն փառացն  
պատմեա , և զբանչելիսն յայտնեա . Եւ քանզի սիոն  
էր երեւելի մասն քաղաքին , առ նա դարձուցանէ  
մարդարեն զբան իւր և ասէ :

**Ե**ւ օրհնեա զած ու սիոն : Ինառդ օրհնել դնի աստ 'ի  
նոյն միտս 'յոր միտ մեկնեցաք զգովելն , մանաւանդ  
զի յերբ 'և յայլ թարգ "յերկոսին ևս նոյն բառ դրի ,  
այսինքն գովել . ուստի նոյնպէս մեկնի և այս , որպէ  
թէ եգեալ էր . և դու սիոն՝ որով պարծի քաղաքդ  
երուսաղեմ , օրհնեա զոծ՝ որ եղեւ ած քո , և անուա-  
նեցաւ ած իսրայէլի : Օ այս եգեալ մարդարեին 'ի  
մէջ մատուցանէ ապա և զառիթս օրհնելց զոծ և  
ասէ :

**Է** . **Օ** է շրայնց չնէժա դրանց առ . Ե օրհնեա զորդէն  
ու 'ի տէլ :

' Տ շինել երբայեցւոց զպարիսպն երուսաղեմի և 'ի  
կանգնել զաշտարակս նըր՝ շրջակայ ազգք գրդաեալ  
ընդդէմ նոցա՝ բազում իրօք ջանացան խափանել  
զայն՝ մինչև որպէս գրի . (դ . եզր . դ . 1-10 .) \* Ժո-  
,, զովիլ նոցա 'ի միասին , գալ և պատերազմիլ ընդ  
,, երուսաղեմի : Տեսեալ զայն որդւոցն իսրայէլի  
դիմեցին յած ազօթիւք , և յաջողեաց նոցա տեր .  
որով և կարային նոքա շինել զպարիսպն , և ամրա-  
ցուցանել զքաղաքն , և խազաղութիւն բնակիլ 'ի նոմա .  
և զի մեծ եղեւ առ նոսա այս բարերարութիւն , և օրի-  
նակ մեծի խորհրդոյ , զայն զայս նախ առաջի մա-  
տուցանէ մարգարեն , ասելով :

**Օ** է շրայնց չնէժա դրանց առ : Երիք ասին այն փոկք  
կամ պահանգք՝ որը գնին 'ի յետուստ դրան աղխիւք  
յամբութիւնորին , զի մի կարացեն թշնամիք բա-  
նալ զայն : Օ այսպիսի նիզս գրանց քոց ասէ զօրա-  
ցոյց տէր : Այս բան եթէ փօխաբերաբար առցի ,  
նովիք նշանակին զօրաբարել , յեսու սեղեկեան , և  
այլն , զօրս զօրայոյց տէր : Եսկ եթէ պարզապէս առ .

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն  
ցի՝ սովին ոչ ցուցանի՝ թէ զնոյն զայն նիւթական  
նիգսն զօրացոյց, այլ ոճ իմն է խօսելոյ, որով նշա-  
նակի ամրութիւն քաղաքին, յոր միտ կամի ասել. մի  
երկնչիր երուսաղէմ'ի սպառնալեաց թշնամեաց քոյց,  
զի ած է պաշտպան քո. և աւասիկ նա ինքն յաջողե-  
լով զշինուի պարապաց քոյց՝ ամրացոյց զքեղ շուրջա-  
նակի, և անդորրացոյց զբնակիւս քո. որոյ վասն յա-  
րէ զկնի և ասէ:

Եշ օբհնեաց լըրդիս ժա 'ի տէլ: Որդւովք իմացեալ լինին  
ասաս որդիք իսրայէլի բնակեալք յերուսաղէմ', և յա-  
մենայն սահմանս նորա: Օսոսա ասէ օրհնեաց ած.  
իսկ այս օրհնութիւն ըստ երից եղե. մի՛ ըստ անդոր-  
րանալոյ նոցա յերեսաց թշնամեացն. երկրորդ՝ ըստ  
փութով զարգանալոյ նոցա, և աձելոյ. և երրորդ՝  
ըստ լիանալոյ բարեօք. և քանզի դիմառնութիւն  
սի մարգարեն, յաւելու զբառդ՝ 'ի տէլ, փոխանակ  
ասելոյ յամենայն սահմանս քո կի՞ բովանդակ հրե-  
աստանի, ըստ որում յամենայն տեղիս նոցա եղե  
խաղաղութիւն և լիութիւն բարեաց. զոր բացայացտակի  
ևս առաջի գնէ մարգարեն, 'ի յաջորդ համարն ա-  
սելով:

Դ. ն՛ եր լսահման ժա 'ի խաղաղութիւն. պարագանելք յո-  
քնաց լուս լուս:

Յետ դարձի գերութեն թէպետ և 'ի սկզբան անդ  
տառապեցան որդիքն իսրայէլի 'ի շրջակայ ազգաց,  
բայց 'ի թագաւորելարտաշտի դարեհի որդւոյ վըշ-  
տասպեայ՝ մնացին 'ի խաղաղութե ոչ սակաւ ժամա-  
նակս. քանզի որոն աւանդի (դ. եզր. դ. 16) տեսեալ  
թշնամեաց նոցա, թէ թագաւորն պարսից իբր 'ի  
հրամանացն այ պաշտպան լինի նոցա, ոչ ևս համար-  
ձակին յառնել 'ի վերայ նոցա, և կամնեղել իւիք  
զնոսա. որով և լինել նոցա աներկիւդ վարել և սեր-  
մանել և ժողովել զարդիւնս բարեաց: չչայս հայս  
առաջիկայ բանդ ըստ նկարագրին յասելն:

Դ. եր լսահման ժա 'ի խաղաղութիւն: Լամի ասել. տեսա-  
նեսն երուսաղէմ' (թէ յորպիսի խաղաղութե բնակե-  
ցոյց զքեղ ած յամենայն սահմանս քո, և քանի բարեօք  
լոյց զքեղ. զորմէ 'ի մասնաւորի ևս խօսի ասելով:

Պարաբռառնք շորէնոյ լցոց չէն. Պարաբռառութե յորենոյ իմացեալ լինի ու միայն ազնուութե յորենոյ, այլև առատութե նորին, և բարեսնունդն լինիլ. Ե այսու պարտ է իմանալ և զպարարտութե այլոց արգասեաց. իսկ պատճառ միայն զցորեանն յիշելը այս է, զի 'ի մէջ ոյլ ամենայն արգասեաց պիտանագոյն է յորեանն. ուստի և 'ի յիշելն զայն՝ զիտէ և լոյլու իմացուցանել. որով և կամի ցուցանել՝ թէ ած լոյլ

և լիացոյց զորդին խօրայելի ամենայն բարեօք, հոգեորապէս՝ այսորիկ բանք հային յեկեղեցի որ, զորոյ զնիդմն, այսինքն զհաւատսն զօրացոյց քո, մինչև և ու դրունք դժոխոց կարեն զնայաղթահարել. զօրացոյց և զառաքեալն իբրև զնիդս. օրհնութեամբ. և զորդիս նորա ամենայն հոգեոր օրհնութեամբ. որպէս գրէ առաքեալն ( եփես. տ. 3. ) ևս և յաշխարհ ամենայն զամենայն սահմանս նորա՝ այսինքն զամենայն մասնաւոր եկեղեցիս, և ընդհանրապէս զամենայն վիճակս նորին եղ 'ի հոգեոր խաղաղունք. մինչեւ յամենայն սկսուածս եկեղեցական կարգաց՝ խաղաղութե բանիւք վարիլ յասելն \* և ևս խաղաղութե. և քահանայից անսպակաս զնոյն բաշխել ասելով \* խաղաղութե ամենեցուն || : | ցոյց դարձեալ զորդիս սիօնի պարաբռութե սրբազն խորհրդոց՝ մանաւանդ խորհրդոյ հաղորդութե. և փափկացոյց զնոսա պարաբռութե աւետարանական վարդապետութե :

Ի յլ այսոցիկ ամենայնի լիապատար կատարումն եղի. յի 'ի վերինն երուսաղէմ. ուր է աներկեան ապահովութի և անվլոդով խաղաղութի, ամենաբաւական լիութի, և սխրալի յագուրդ երանական պարաբռութե. ուր և յայտնի տեսցի՝ թէ նա է՝ և ու սա ձըշմարիտն երուսաղէմ. քանզի երուսաղէմ թարգմանի տեսութի խաղաղութե, որ տիրապէս և անխառն գտանի անդ. իսկ աստ 'ի վերայ երկրի ըստ մասին միայն և խառն ընդ անհամար խռովութիս և ընդ դժնեայ հալածմունս :

Օ այսուիկ յառաջ բերելով մարգարեին՝ կամի աղդու առնել շնրաւիրում յորդորանաց իւրոց 'ի խրախուսելն զերուսաղէմ օրհնել և գովել զած : | յլ

որպէս զի ազգողագոյն ևս կացուացէ զայն, 'ի մէջ  
բերէ և զհասարակական բարերարութիւնն այ՝ կամ  
զինամսն զորս ցուցանէ ած առ ամենեսին. և ապա  
բաղդատելով լուդ այնս զմասնաւոր խնամն բարերա.  
բութեն այ՝ զոր եցոյց առ իսրայէլ ցուցանէ թէ  
քանի մեծ եղե այս քան զայնոսիկ. վասն որոյ առե  
նախ :

**Ե.** Առաջ զբան էոր յերիէր. Հաղաղ ընթանոն պար-  
գաճա նորա :

'Ե սր գիրս բանն այ օրինակի յանձրե կամ 'ի ձիւն.  
ըստնմ (եսայ. ծէ. 11.) \* զորօրինակ եթէ իշանի.  
,, ցէ անձրե կամ ձիւն յերկնից, և անդրէն ոչ դառ-  
,, նայ մինչեւ արբուացէ զերկիք, ծնցի և բղխեացէ.  
,, և տացէ սերմն սերմանողի՝ և հաց 'ի կերակուր:  
,, Այնպէս եղիցի բանն իմ, որ ելանէ 'ի բերանոյ  
,, իմմէ. մի դարձցի դատարկ՝ մինչեւ կատարեացէ:  
,, զոր ինչ կամիցիմ: չչայս նմանութիւ առակելով  
և աստ մարգարեին ասէ:

**Ե** Առաջ զբան էոր յերիէր. Հաղաղ . . . նորա: Իւառոս բան՝  
զոր և կոչէ պատգամք՝ ոյլեայլ նշանակութք կարէ  
առեալ լինիլ աստ. մի՝ փօխանակ հրամանացն այ,  
յոր միտ կամի ասել. յամենայն տեղիս առաքէ, ած  
զհրամանն իւր՝ ոչ ձայնիւ, այլ ազգեցութեամք, իբր  
զի հրամանն այ ազգէ յամենայնի և յամենայն տե-  
ղիս, որպէս ազգէ անձրե 'ի ցամաքեալ երկիք. և  
զորօրինակ 'ի յորդել անձրեոյ՝ հեղեղք ընթանան,  
այսպէս և 'ի զօրանալ հրամանացն այ՝ վաղվաղ ըն-  
թանան պատգամք հրամանաց նորա, այսինքն փու-  
թով և անխափան կատարին այն հրամանք նորա.  
զոր և վասն այսորիկ կոչէ պատգամ. որով նշանակի  
բան վերնագունի ևսե բան ազգու և աննահանջե-  
լի: Իստ այսմ մեկնութե հրամանն այ հայի յայն,  
որ նշանակէ զազգեցութիւ արարյական սկզբանն 'ի  
գործել զամենայն. զորոյ զներգործութիւնն ըստ քա-  
նի մի իրաց յառաջ բերէ մարգարեն յերիս յաջորդ  
համարսդ, այսինքն է արտադրել զձիւն, զմէգ, ըզ-  
սառն և այլն:

Երկրորդ՝ բառիւս բան՝ իմացեալ լինի տեսլութիւն

այ, կամ իմաստութի նորա . որ ըստ ասելոյ իմաստ-  
նոյն (ը. 1.) \* ձի ՚ի ծագաց մինչև 'ի ծագս օդ-  
,, տակար առողջութք , և դարմանէ զամենայն քաղց-  
,, րութք . և գարձեալ թէ \* գարմանէ և ընդմել-  
,, տանէ ընդ ամենայն վասն յատակութե . (իմաստ-  
է . 241) Խակ առաքելն ոյ շտեսուի իւր յերկիր  
է նախախնամել նորա զամենայն որ ինչ է յերկիրի ,  
և այն՝ անվրեպ յամենայնի . որոյ վասն դնէ թէ վաղ-  
վաղ ընթանան , այսինքն անվրեպ կատարին . Խւ ը  
այսմ մարթ է զբառդ պարգևանք՝ առնուլ աստ խելա-  
մտութե ձեռվ փոխանակ գործոց նոյն պատգամացն  
այ , այսինքն են ներդ ործութիք նախախնամութեան  
նը , առեալ զանուն պատճառին փոխանակ անուան  
առողջոն բար ձարտասանից :

գործոցն ըստ Ֆարմասանից

Սորբորդ՝ բանն կարէ առեալ լինիլ աստ և ճառին՝  
փոխանակ այնը, որ բերի յօրինակ անձային բանին,  
այսինքն փոխանակ անձրևոյ, առեալ զանուն օրինա-  
կեցելոյն փոխանակ անուան օրինակին. և և այսմ  
կամի ասել. անձ բանիւ կամ հրամանաւ իւրով առա-  
քէ անձրե յերկիր, և ազգուութք պատգամաց նո-  
րա ընթանան հեղեղք մեծամեծք: Վայս մեկնութեն  
թէպէտ և կարէ անախորժ թուիլ ունանց, բայց  
հայելով 'ի յաջորդ բանսդ՝ երկի լինիլ հարազա-  
տագոյն քան զայլս, և կարգի բանին համաձայն. և  
որում զչետ յարէ մարդարեն և զարտագրիլ ձեան,  
և միգի, և ապա սառին և այլն:

Վարդանոսիւն առեալ՝ պարզադոյն նկարի ՚ի սմբն խորհուրդ մարդեցութե. յորում ձշմարտիւ առաքեաց ած զբան իւր այսինքն զօրդի իւր յերկիւը ՚ի մարդանալ, որով և վաղվաշը ընթացան և լցան ամե-

նայն պատգամք հին օրինաց, զորս իբրև զստուերթ ետ ոծ : Դարձեալ նա ինքն որդին այ առաքեաց ըշբան աւետարանին իւրոյ յամենայն երկիր . և պատգամք նորա վաղվաղ ընթացան ՚ի ձեռն առաքելոց : Օ այս եղեալ մարդարէին՝ իջանէ այժմ խօսիլ զմասնաւոր ինչ ներգործութեց նախախնամութեն այ և հրամանի նորա առելով :

**Է.** **¶** Անէ շյիւն որդէս զառ : և զմէդ որդէս դոշէ յանեաց :

**Է.** **¶** Բնանէ զստան որդէս պատառու . առաջի ցրոյ նոր և ինըէ իու :

Զիւնն է թանձր ամսպ սառուցեալ՝ որ ոչ ևս կարելով կալ ՚ի բարձունս՝ թօթափի ՚ի վայր, և երեխ իբր զասր սպիտակ : Խսկ մշգն է գոլորշի ամսպանման և երեխ իբրեւ փոշի ջրեղէն . որ եթէ ՚ի բարձր տեղիս իցէ՝ իբրեւ ամսպ տեսանի . ըստ որումնչմարեմք ՚ի վերայլերանց բարձանց : Ա. Հ. կարկուտն է անձրեսառուցեալ յիջանելն ընդ ցրտային սահման օդոյ : Խսկ սառն է պաղեալ ջուր միազանդուած, յերեսս գետոց կամ լճից, և այլն . որ բեկեալ բաժանի ՚ի համուածս իբրեւ պատառս : Օ այս ամենայն թէպէտ և ՚ի ձեռն երկրորդ պատճառաց գործէ ոծ, բայց քանզի ինքն է որ առնէ, բանիւ կամ տեսլուը նախախնամուել իւրոյ . սմին իրի նմա տայ մարդարէն . և նախ զձեանէ խօսելով ասէ :

**¶** Անէ շյիւն որդէս զառ : Ա. յախնքն առնէ՝ զի թանձր ամսպ սառեսցին, և իջեալ ՚ի բարձանց նստցին ՚ի վերայ երկրի, և սփռեսցին որպէս զասր, այսինքն որպէս սպիտակ բուրդ : Եւ ըստ այսմ բայս դնէլ յաւետ հայի ՚ի սփռել զձիւն յերեսս երկրի՝ ուրնստի, քան յարտադրել զնոյն : Խսկ պատճառ օրինակ բերելոյ զասրն՝ այն է, զի ՚ի գզիլ նորա թազիւ՝ որ է աղեղանման գործիք բամբակագործաց, առաւել ևս սպիտակագոյն ծուատեալ և ցնդեալ՝ իջանէ ՚ի վայր, և նստի իբրեւ զձիւն . յոր միտ բաշօւմք յարտաքնոց զձիւնն կոչեն ասը ծուրց : Այսելով ապա մարդարէին և զմիդէ՝ ասէ :

Եւ զիկ որդես քոշի ցանեաց : Ի յսինքն արար ած՝ զի լինիցի մէ գ ՚ի սասորին կողմն օդոյ . և քանզի մէ գն իբրև փոշի երեխ աչաց մերօց , փոշոյ նմանեցուցանե զայն , որ իբրև թէ ցանմամբ դայ . որոյ վասն դնե զցանելն : Եւ զի մէ գ յիջանելն՝ երբեմն իբրև զե ղեամն նստի , վասն որոյ եզնիկ կողըացի փոխանակ միգի՝ եղեամն ընթեռնու . (՚ի գլ. ծը .) յասելն . \* դնե զձիւն իբր զասր , և զեղեամն իբրև զփոշի ցա ։ նեաց ։ Խօսի ապա և զսառնե կամ զկարկտէ ա սելով :

**Ա** բիանէ զսառն որդես պարունակու : Եթէ բառս աբիանէ ղիցի աստ փոխանակ առնելոյ կամ գոյաւորելոյ կամ մածուցանելոյ և այլն , յայնժամ և բառդ ստու առել լինի ըստ յատուկ նշանակութէ . և միտ բանին լինի այս . ած առնէ՝ զի ջուրք կարծրացին և լինիցին սառն , և մասունք նոցա լինիցին իբրև զպատառս վիմաց : Խակ եթէ բայդ աբիանէ ղիցի փոխանակ հոսելոյ , բառդ ստու առեալ լինի փոխանակ կարկ տի . զի կարկուտք առ երբ ՚ փոխարերութը իմն կոտորք սառին կոչին՝ զորս արկանէ ած՝ այսինքն հոսե յերկնից : Եւ զի յայսցանէ այսինքն ՚ի ձեանէ և ՚ի սառնէ պատճառի ցրտութի մեծ , զայնմանէ ևս կա մելով խօսիլ յարէ զկնի և ասէ :

**Ա** սաշէ յրոյ նորա ՚ իտէ իւլ Ի յս եղանակ խօսից եռ մարտասանական , որպէտք մարդարէն ցուցա նել զսաստկութի ցրտութէ , և այնու մեծացուցանել զտեսութին ոյ . որպէս թէ եգեալ եր . զորօրինակ յամառան առնէ ած՝ զի ջերմասցին օդք , սոյնպէս և ՚ի ձմերան առնէ՝ զի ցրտասցին նոքին . զոր և այն չափ սաստկացուցանէ երբեմն , մինչ զի եթէ երկար թողցը՝ ոչ կարէր կալ մարդ : Ի ստանօր յինն ձեռա գիրս՝ կեալ զըթ . իսկ յայլս կալ . որպէս եւ յերբ ՚ : Եւ այս ամենայն կարգի տու ՚ի բարեռք մնունդ տըն կոց և յառողջ պահպանութի կենդանեաց . զի թէ միշտ ջերմ լինէր , ցողէին սննդարար և առողջարար ողիք , և պատճառիւր տկարութի ՚ի մարմին . թէ պէտ և կարէր ած այլուստ զայլ գարման մստակա րարել . օ այսոսիկ յառաջ բերելով մարդարէին՝ ընդ սոքիմք տայ իմանալ և զայլ գործս տեսչութեն ոյ .


508 Մ Ե Կ ՚Ն Ո Ւ Թ Ւ Ւ ՚  
որով և կամի յորդորել զմարդիկ և առաւել ևս զո՞ր-  
դիսն խրայէլի ՚ի գովութիւնը, և ՚ի չնորհակալուն  
նորս վասն այսչափ խնամոց նորին :

Հոգեորապէս ՚ի ձեռն ձեան և միգի, ևս և սառին և  
կարկտի՝ մարթ և իմանալ զգէսպէս նեղուին, զո՞րս  
կրեցին մանկունք եկեղեցւոյ. բայց գտանելով՝ ՚ի  
նոսան և միսիթարութիւն մեծ, ըստ առաքելոյ՝ թէ լի  
եմք միսիթարութիւնը ... ՚ի նեղութիւն. ( բ . կոր . է .  
4 . ) վասն զի այն նեղութիւնը զորս տայ անձ, թէպէտ  
իբրև զձիւն ցրտազին վշտագնեն, բայց նաև իբրև  
զասր ջերմացուցանեն զհոգին. և դարձեալ թէպէտ  
և իբրև զմէգ մթացուցանեն, բայց տուեալ լինին  
իբրև զփոշի առ ՚ի շարժել ՚ի փոշիմանուի՝ այսինքն  
յտպաշխարութիւն : Խւ ևս թէպէտ և իբրև զառն  
երեւին՝ բայց անձ տայ զայնս իբրև զպատառս սննդա-  
բար հացի ՚ի միսիթարել և ՚ի սնուցանել զհոգի մար-

դոյ :

Դարձեալ այլով իմն փոխարերութիւնը ՚ի ձեռն միգի  
նշանակի կամ փարթամութիւն աշխարհի, որ իբրև ըշ-  
մէգ մթացուցանէ զտեսութիւն մտաց, և իբրև փոշի  
ցնդի. ըստ որում ասէ սարդիս չնորհալի ( ՚ի մեկն .  
ա . պետ . ա . 24 . ձառ . է գորդ . ) \* մեծութիւն մեր  
,, իբրև զաւազ անպիտան կամ իբրև զփոշի՝ զոր տա-  
,, բաւ մըրիկի : Խսկ ՚ի ձեռն սառին նշանակին աղ-  
գի ազգի պատահարք եթէ ըստ յաջողութեց մասին  
և եթէ ըստ ձախորդութեց : Ըօրս եթէ ՚ի թոյլ  
տուութէ այ տիրեսցէ ցրտուի ՚ի հոգին կամ իւը-  
տութիւն, յերկարիլ այնը՝ գժուարին լինի կեալ . ըստ  
որոյ ասէ . \* առաջի ցրտոյ նորա ո կարէ կալ . զի  
\* եթէ ոչ կարձեին աւուրբն այնոքիկ՝ ոչ ապրէր ա-  
,, մենայն մարմին . ( մատ . ինք . 22 : )

Վըդ յետ առաջի գնելոյ մարդարէին՝ թէ զիարդ-  
բերի խնամքն այ յարտագրուի ձեան, և սառին և  
այլն, խօսի ևս թէ զիարդ բերի և յայլափոխութիւն  
նոցին . վասն որոյ յարէ զկնի և ասէ :

Ե .  առաջ զբան իւը՝ և հուշ շնորս . նշնոցին հումք՝  
լ գնասին չարք :

Դառդ բան՝ աստանօր զնի ըստ այնմ առաջին առ-

ման՝ զոր եղաք՝ ի նախընթաց համարն, այսինքն փռ-  
խանակ հրամանին այ. զի որով բանիւ հրամանին նո-  
րա լինին ձիւն, և սառն, սոյնովէս և բանիւ հրամա-  
նին նորա լուծանին. Այս հայելով ասէ:

Ա սորա լուսաբան է ի յու բարեկալ  
վարէ զբան իւր՝ և հալէ չնոսա : Լամփ ասել . առա-  
քէ զըրաման իւր , կամ հըրամայէ ձեան և ստոին ,  
նոյնպէս և միզի և եղեման . և հըրամայէ լոյլ լուծա-  
նէ զնոսա 'ի ջուր . և զայս թէպէտ բազմապատիկ  
օրինակաւ առնէ , բայց որ հասարակն է զայն 'ի մէջ  
բերէ մարգարէն ասելով :

ոչ յամենեսին բերի , այլ յարգարս , և որք խոնարհին  
են և հեղք , զի առ սոսա ցուցանէ ած զմանաւոր  
խնամն իւր , և զսոսա փառաւորէ . վասն որոյ և յա-  
ւելու ասել :

Եշ բարձր առնէ զնելս 'ի քրիւն : Լ յսինքն զորս միան-  
գամ տեսանէ ած 'ի ժողովրդեան իւրում հեզս և խո-  
նարհս , պաշտպան լինի նոցա 'ի նեղութիս և 'ի փոր-  
ձութիս նոցին , և բարձր առնէ զնոսա 'ի փրկութե ,  
այսինքն ցուցանէ նոցա զիրկութի իւր . և 'ի փրկելն՝  
բարձր առնէ և փառաւորէ զնոսա :

Հայս բան բառդ հեշ՝ ը հանրապէս ևս կարէ հայիլ  
առ ժողովուրդն իսրայէլի , որք 'ի սկզբան անդ հեղ  
էին՝ յորժամ կային 'ի ծառայութե եգիպտոսի , յոր-  
մէ փրկեաց զնոսա ած , և բարձր արար . և 'ի խո-  
տորիլ նոցա յուղղութէ՝ ոչ եթող զնոսա խոպառ ,  
այլ խրատեաց , մատնելով 'ի ձեռս աւարառուաց նո-  
ցա . որով և դարձեալ խոնարհեցան , և հեղացան .  
և ած միւսանգամ բարձր արար զնոսա 'ի փրկելն զն .  
սին . սոյնպէս առնէ , և զսոյն արասցէ նոցա ասէ

միշտ, մինչեւ յայտնի տեսանել նոյն զիսնամս նը ՚ի վերայ ինքեանց, և պարծիլ այնուշետե ՚ի զօրութիւն նորա, և հանգչիլ ընդ հովանեաւ պաշտպանութենորին. ցնծալ ՚ի նաև որ հակը լինա, վասն որոյ յաւելու զինի մարդարեն և ասէ :

E. ¶ የዕለታዊነው ማኅና ተመሪያ እና ጽንሰውንጻነው ነት ስሙኑትሁም  
ከሚከተሉት ነው . እና የዋና መመሪያዎች ሆኖም ይረዳውን ነው .

Պարծին է բարբառիլ կամ ասել զայնպիսի ինչ՝ որ  
դառնայ կամ՝ ի գովութի այնը՝ որ ասէ, կամ՝ ի դո-  
վութի այնը՝ յորոյ անուն ասէ. զորօրինակ եթե՝ որ  
ասացէ զայսպիսի ինչ բան. արդելի զթնամիս՝ զի  
մի մոյեն՝ ի քաղաք, այս բան դառնայ՝ ի գովութի  
ասողին. իսկ եթե ասիցէ. զօրութի իշխանիս մերոյ  
զօրացոյց զիս արդելու զթնամիս՝ զի մի մոյեն՝ ի  
քաղաք, կամ թե՝ թագաւոր մեր իմաստուն է և փա-  
ռաւոր, այս բան դառնայ՝ ի գովութի իշխանին՝ յո-  
րոյ անուն ասացաւ. Իստ առաջնոյն բացումք պար-  
ծին, որ և կարէ լինիլ բարի և չար, և կամ անտար-  
բեր ըստ դիտելոյ պարծողին. իսկ ըստ երկրորդին  
սակաւք պարծին՝ նոքա միայն՝ որք հաւատարիմք են  
՝ ի բանս, և արդար. Իստ այսմ պարծանաց խօսի  
աստ մարդարէն՝ պարծիլ որց յանուն ոյ, յասէն.

**Պ**արծեսցին զբան քառօտ : Այլք իմացեալ լինին ասու  
ըստ նկարագրին որդիք իսրայէլի՝ եթէ՛ հնոյն և եթէ՛  
նորոյս . սոքա ասէ բազում իրօք փառաւորեալ յայ՝  
պարծին նովին փառօք ոչ յանձինս , այլ յած , ասէ-  
լով . տէր ած մեր որ 'ի վեր է քան զամենայն՝ յաջո-  
ղեաց մեզ առնել զայս և զայն . կամ թէ մեծամեծա-  
արար ընդ մեզ ած , ընտրեաց զմեզ իւր ժողովուրդ ,  
եցոյց մեզ զկամ իւր , և պանձացոյց զմեզ փառօք  
այսինքն այնպիսի իրօք՝ որովք երանիմք և փառա-  
ւորիմք , և կամք այնպէս պաշտպանեալ 'ի նմանէ՝ մին-  
չե ոչինչ հոգալ մեզ , այլ 'ի հանդստեան վայելել և  
ուսախ մինի . և առ այս յարէ , և ասէ :

խաղաղութեն, ոչ զի ոչ գոյր նոցա պատերազմ, այլ  
զի զած պաշտպան ունելով ինքեանց՝ 'ի ժամանակի  
անդ ևս 'ի խաղաղութե վայելէին: Երկրորդ՝ ըստ  
ներքին խաղաղութեն, զի գիտելով նոցա զկամն ոյ,  
և ձանաչելով թէ, ըստ կամաց նորա կան, կարեին  
վայելէլ 'ի խաղաղութեն հոգւոյ:

Յառաջինն յայն հանգիստ վերածի և անզրադութի  
արտօքին պիտոյից. զի ած խոստացեալ էր նց ըսուե  
զամենայն պիտոյս նոցին, և լիացուցանել օրհնութք  
զորդիս նոցա և զբնակութիս և զանդաստանս նոցին:  
Երկրորդն հայի բարեկարգութի պաշտամանց և  
այլոց հոգեօրական իրաց, յորս կարեին նոքա միսի-  
թարիլ և սփոփիլ: Հայս ամենայն հայելով յոդնակի  
դնել մարդարեն զհանգիստն. և զի նոցա էին այն հան-  
գիստ, վասն այսորիկ յաւելու և զբառդ իւրեանց: որ-  
պէս թէ ասեր. յայս ամենայն հանգիստս՝ զորս վայ-  
ելեն, ցնծասցեն և ուրախ լիցին: Ի սոյն յաւելու  
և զփառաւորեն զած ասելով:

Եւ բարձր որոշուն զած բերանոտ իւրեանց: Այսինքն՝  
խոստովան լինելով զմեծամեծս ոյ՝ բարձր և սփառնե-  
լի ցուցցեն զփառս նորա. և զայս արասցեն ասէ իւ-  
րեանց իսկ բերանով:

Խորհրդաբար, փառօք իմացեալ լինի աստ խաչն քոն  
յոր պարծէր պօղոս, ընդ նմին պարծիմք և մեք. նա  
և հանգուցեալ ընդ հովանեաւ նորա, բարձր առ-  
նեմք, այսինքն քարոզեմք զբարձրանալն քոնի 'ի վերայ  
նորա 'ի փրկել զմեզ:

Այս բանք տիրապէս և ուղղակի վերածին 'ի  
դէմս երանելեաց՝ որք են յարքայութեն. ուր և պար-  
ծին փառօքն ոյ, և 'ի սոյն զմայիեալք ցնծան և ցըն-  
ծասցեն յանսահման հանգիստն, և բարձր արաս-  
ցեն զած բերանովք իւրեանց, եթէ բերանով հոգւոյ  
և եթէ բերանով մարմնոյ յետ յարութեն:

Այս հանգիստ և բերկրութի որգ է 'ի ժառանգուե  
ածային անսահման ուրախութեն և խաղաղութեն և  
այնպիսի երանութեն, \*զօր ակն ոչ ետես, և ունկն  
ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ. ( ա. կոր.  
թ. 9:) Եւ զայս ունին՝ բովանդակ վայելէլ որք ոյն-  
պիսի ժառանգութք՝ մինչեւ նոցա լինիլ. որոյ վասն

դնել զբարդ էւրեանց . որպէս քաղցրութեն մեղու վայ  
եւեալ լինելով՝ ի ձաշակողէն՝ ասի լինիլ ձաշակողէն,  
Ճաղակօղն ոչ է մեղը , սակայն՝ ի ձաշակելն՝ զամե-  
նայն քաղցրութիւն նորա վայելց և լինի այն իւր :  
Փառք այսր երանութեն սրց՝ որ մասածի ըստ հոգւոյ  
՚ի տեսութեն այ , ՚ի յառնելնոցա զեղանի և ՚ի մար-  
մինս նոցին . զի որպէս լոյսն եղեալ յապակի անօթ՝  
զեղանի և թափանցէ յապակին . սոյնպէս և փառք  
և ուրախութիւն հոգւոց սրցն՝ զեղանի և թափանցէ  
՚ի մարմինս նոցա . որով և մարմինք նոցա զգենուն  
զյատկութիւնս լուսոյ . ըստ առաքելոյն . ( ա . կոր-  
ժէ . 42-44 . զորոց տես ՚ի գիրսն կոչեցեալ կշո-  
ժամանակի : )

Հայնժամ և զգայարանք մարդոյ լիտացին այնպիսի  
փափկութք , զորոց չէ առեալ ումեք զփորձ յերկըն -  
այնչափ գերազանց , որչափ գերազանց համարի ոսկի  
քան զհող , կամ որչափ մարդ քան զպատկեր մար-  
դոյ , կամ որչափ Հմարիտն քան զսուտ :

Օ այսպիսի և զայսքան փառս մասածելով սրց արհա-  
մարհեցին զամենայն . մատնեցին և զանձինս ՚ի տան-  
ջանս և ՚ի մահ . և զորս կրեին յաշխարհի՝ ոչինչ  
համարիին . մինչեւ ասել ումեմն . ( այն է սրն փրան-  
կիսկոս . ) \* այնքան մեծ է բարին որում ես սպասեմ ,  
,, մինչեւ ամենայն վշտաց բերկրեցուցանել զիս || :

Սոքա չէին յիմար , այլ իմաստութ ծանեան , և հա-  
սին , յոր ծանեան : Հիմար նոքա են , որք զսուտի  
մեծութիս և բերկրութիս մեծ համարին , և վասն նո-  
ցին տանջին . իսկ զանհունն զայն մեծութեն ոչ հա-  
մարին ինչ : Քանիք կան՝ որք գիտելով թէ յիշխա-  
նութի հասանելով , կամ ՚ի հեշտութիս զեղիսելով  
ունին վտանգիլ և չարաչար մեռանիլ . այսու ամե-  
նայնիւ տաժանին գտանել զայն . իսկ զանսահման  
փառաց և զանձառ փափկութեանց անփոյթ լինին :

Ա ասն որոյ և որ տըն է փառաց՝ իրաւամքք ոչ տայ  
նոցա զայն , այլ սրց իւրօց . որք ՚ի նոյն վայելեալ  
բարձր առնեն զնա յաւիտեանս յաւիտենից . ըստ  
որում և ասէ մարդարին յառաջիկայ բնաբանիդ .  
ուր յաւելու ևս խօսիլ զիշխանութէ նոցա զայնմանէ  
զոր ետ և տալոց է ած ՚ի ձեռո նոցա , առ ՚ի վրէժ-

ՄԵԿՆ ՈՒԹԻՒՆ  
Ինդիր լինիւ նոցա ածային արդարութեա . վասն որոյ  
ասէ :

Ղ. Առ երկայրի ետ՝ 'ի չեռա նոցա , առնու հապուցուն  
'ի հերանուաց . յանդիմանութի ամենայն ժողովրդու :

Ե. Ապէլ շնագաւորս նոցա հապանօք . և զզօրավարս նոցա  
չեռանակալօդ երկանեօք :

Առ երկայրի է այն՝ որ յերկուց կողմանց հատա-  
նէ . որով և օրինակի զօրութի վրէժինդիր արդա-  
րութեա յերկու ինչ . մի՝ 'ի պաշտպանութի և 'ի ջատա-  
գովութի օրինացն ոյ . և մի ևս՝ 'ի վանումն և 'ի  
հատուցումն թշնամեաց նորին : Հայս միտ առեալ

լինի աստ բառդ սուր երկայրի՝ յասելն :

Առ երկայրի ետ՝ 'ի չեռա նոցա : Այսինքն ետ ած ժո-  
ղովրդեան իւրում զայնպիսի զօրութի , որով վառեալ  
նոցա 'ի նախանձ բարի՝ կարիցեն պատսպարել և ջա-  
տագովել զանձային օրէնսն , և նուածել զայնոսիկ՝  
որք հակառակին այնմ՝ կամ թշնամի ցուցանեն զին-  
քեանս : Այս զայս պարտ է սկզբնաբար իմանալ ը-  
հոգեորին , և երկրորդաբար ըստ մարմնաւորին :

Օստ հոգեորին , 'ի հնումն քահանսոյք իսրայէլացւոց  
'ի գործ դնէին զայս պաշտօն բանիւն ոյ իբր որով  
'ի պաշտպան լինիւ նոցա օրինաց և 'ի պատուհասել  
և կմ 'ի մերժել զհակառակորդս և զօրինազանցս 'ի  
մէջ ժողովրդեան . իսկ որք էին արտաքոյ , այլով  
օրինակաւ վարէին ընդ նոսա , այսինքն յորդորելով  
և համոզելով 'ի հաւանութի ածադիր օրինաց , զո-  
րոց խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն . սոյնպէս և  
'ի նորումն եկեղեցականք բանիւ ոն իբր որով վա-  
րեն զայս պաշտօն 'ի քարոզել նոցա զօրէնս , և 'ի դա-  
տել զօրինազանցս՝ երբեմն խրատու , և երբեմն ա-  
պաշխարութք , երբեմն բանադրանօք և երբեմն կա-  
պանօք . այլ որք արտաքոյ են հեթանոսք , համոզե-  
լով զնոսա յընդունելութի քրիստոնէական հաւատոց :  
Իսկ հայելով յաներեւոյթ թշնամին 'ի սատանայ և  
'ի զօրս նորա՝ զայս սուր վարեն երդմնեցուցիչք և  
արդարք 'ի նուածել և 'ի հալածել զնոսա . յոր միտ  
գըէ նարեկացին . ( 'ի գով . մծք . ) \* ածեն ( ասէ

Պստ մարմաւորին, զայս սուր կամ զայս զօրութե՛  
վարեին իշխանք եթէ 'ի հնում և եթէ 'ի նորումս  
'ի պաշտպանել զեկեղեցի 'ի թշնամեաց՝ վանելով  
զնոսա, որպէս արարին 'ի հնում նոքին իսկ իսրոյե-  
լացիք մինչե 'ի ժամանակս մակաբայեցւոց . և 'ի  
նորումս բազումք բազում անգամ, որպիսի եղեն և  
'ի մեզ վարդանանք, և որք ըստ նոցա առաքինացան .  
և զի սոքիմք առին զվորէժ ածային օրինաց 'ի հե-  
թանոսաց անտի, յայս հայելով մարդարեին՝ յարե-  
զկնի և ասէ :

լունուշ հապուցումն 'ի հեթանոսաց , յանդէմանութէ ամենայն  
ժողովրդու : Այսօքան 'ի փոխաբերական միտո առեալ  
ցուցանէ՝ թէ եկեղեցի ոյ ոչինչ օրինակաւ կարէ  
խախտիլ 'ի բռնութէ հեթանոսաց , թէև չարչարիցի  
'ի նոցանէ , այլ մանաւանդ ունի իշխանութի նուա-  
չելոյ զնոսա 'ի հաւանութի օրինացն ոյ . եթը զի  
գործածութք հոգեոր որոյ քարոզութե՛ տայ նոցա  
զբանն կենաց , և առնու 'ի նոցանէ զհատուցումն .  
իսկ այս հատուցումն նոցա՝ է դառնալ նոցին 'ի կրօնս  
ածպաշտութե՛ : Այլ որք ոչ կամին դառնալ , լինիցի  
նոցա այն սուր 'ի յանդիմանութի . վասն որոյ և յա-  
ւելու \* յանդիմանութի ամենայն ժողովրդոց || . այս-  
ինքն թէ այն քարոզութի բանին կենաց՝ յանդիմա-  
նեսցէ և դատապարտեսցէ զանհաւանսն զամենայն  
յորմէ ժողովրդենէ և իցեն :

Ասացի 'ի փոխաբերական միտո , զի եթէ ըստ յա-  
տուկ նշանակութե բառիցն իմասցի , այս բան ցու-  
ցանէ՝ թէ եկեղեցի ոք թէ 'ի հնումն և թէ 'ի նո-  
րումս կարօղէ 'ի յառնել հեթանոսաց 'ի վերայ եւը՝  
ընդդէմ գառնալ , և հատուցանել նոց զհատուցումն  
նոցին 'ի պաշտպանութի ածային օրինաց , և յանդի-  
մանել զամենայն անհաւան ժողովուրդո . ըստ որոյ  
ասէ \* յանդիմանուի ամենայն ժողովրդոց || . Եթէ թէ  
ոչ միայն 'ի հեթանոսաց կարէ առնուլ զհատուցումն

այլն զանհաւան ժողովուրդսն յանդիմանելով նուածել. որպէս ըստ դրելոյ մեր այժմ արարին մակաբացեցիք, և այլք բազումք. թող զորս արարին իսրայելացիք 'ի մտանել իւրեանց յերկիրն աւետեաց, որ հոգենորապէս նկարէր զնուաձութիւ ազգաց 'ի նորս եկեղեցի: Եւ զայսմանէ խօսի մարդարէն 'ի յաջորդ համարն ասելով:

**Ա**սողէլ զնագագառոս նոցա էապանօք. զնօրավարս նոցա չեանադոք երիտեօն: Այս բան ըստ այլաբանութե ձեռյառ եալ նոյնանայ ընդ բանան եսայեայ. (իսթ. 6-26.) ուր յետ խօսելոյ նորա 'ի դիմաց եկեղեցւոյ \* անձն իմէ ինձ զօրութիւ. յաւելու ասել զեկեղեցւոյ. \* թագաւորք տեսցեն զնա և յոտն կացցեն. իշխանք " երկիրպագցեն նմա վասն ան . . . և եղիցին թա . . դաւորք դայեակք քո, և կանայք նոցա մանկակալք . . քո. 'ի վերայ երեսաց երկրի երկիրպագցեն քեզ, . . և զհող ռախց քոց լիզեսցեն և այն: || Որովք նշանակի նուածիլ թագաւորաց և իշխանաց ը ձեռամք իսրայէլի եթէ հնոյն և եթէ նորոյս: Հնոյն կապանօք հարատակութե, և ձեռնակապօք ծառայութէ. որպէս եզեւ առ ժամանակօք դաւթի և ոռղոմնի: Խոկ նորոյս՝ այլով իմն կապանօք և ձեռնակապօք, այսինքն հաստատութիւ հաւատոյ, և առաւելութիւ սիրոյ:

**Ա**սացի ըստ այլաբանութե. քանզի ըստ յատուկ նըշանակութե բառից՝ այս բան որպէս և զնախընթացե ասացաք, ցուցանէ թէ տուեալ և եկեղեցւոյ իշխանութիւ, զի 'ի յանել թագաւորաց և զօրավարաց 'ի վերայ նորա 'կարասցէ վասն պաշտպանութե հաւատոյ և անձային օրինաց ելանել ընդդէմ նոցա, և ըմբռնել զնոսա, և կայել և արկանել յերկամթի շղթայս. որպէս 'ի հնուամ արարին որդիկքն իսրայէլի. և 'ի նորումն բազումք բազումքանգամ' եթէ առ հեթանոս թագաւորս, և եթէ առ հերետիկոսապէտս, որք ըստ մոլորութե մասին գրեթէ եղեն իրբե թագաւորք հերետիկոսաց, և զլիսաւորքն 'ի նոսա՝ իրբե զօրավարք նոցին:

**Ա**յլ այսոքիկ բանք ուղղակի ևս հային յիշխանութիւ արց, զոր ունին վարել յաւուրն դատաստանի, յո-

ըռումսրեաց! ած զսուր իւր, այսինքն զվրեժինդրու.  
Ըիւն իւր, և տացէ զայն 'ի ձեռս նրա իւրոց: ( ը .  
օրին . լը . 41 . 43 . ) և յայն ամբ կացցեն նք հանդէպ  
թշնամիւոց իւրեանց, և ամենայն չեթանոսաց. (իմաստ .  
ե . 1 . ) և սբանէլի երեւամբն ցուցցեն նոցա՝ թէ  
զինչ հատուցումն հատուցանելի իցէ նոցին, և զինք  
յանդիմանելի իցեն դործք նոցա: Աւ ապա 'ի հրա-  
մայել դատաւորին՝ կոտկել զձեռս և զոտս այնոցիկ  
թադաւորաց և իշխանաց և հետեղաց նոցին, և  
հանել զամենեսին 'ի խաւարն արտաքին, ինքեանք  
ևս լիցին հաստատիչք այսօր հրամանի, որով զըեթէ  
իրքե երկրորդաբար դատաւորք ունիցին դատել զնո-  
սա և դատապարտել. զօրմէ 'ի մամնաւորի ևս խօսի  
մարգարէն 'ի յաջորդ համարն 'ի մէջ բերելով զիշ-  
խանութին տուեալ եկեղեցւոյ 'ի դատել. յոր և վեր-  
ջացուցեալ զբան իւր՝ ամ:

Ե. Անելնոյա դատաստան՝ ի գրոց. դառն այս էն ամենայն սբիոց նորու:

Վ. անել դատաստան՝ ի գրոց, կամ դատաստան ըստ գրոց, կամ դատաստան զբեալ է դատել ոչ ըստ սեփական ձանաշման՝ այլ ըստ ձանաշման օրինաց, այսինքն դատել այնպէս՝ որպէս հրամայեն օրենք աւանդեալք՝ ի գիրս, յասելն անդ թէ զգողոս պարտ է, այսովու պատժել, և զշնացօղն այնպէս և ոյլն, կը զի զայս իշխանութիւն ետ ած եկեղեցւոյ իւրոյ եթէ, ի հնումն և եթէ, ի նորումն, յայն հայելով առէ:

Վահագութեան դաստիարակութեան է Գյալութ և յա-  
րաբերել զորս, այլ զդատելիս. և միտ բանին է այս  
թէ ած հայելով՝ ի հինն ետ խօրայէլացւոց՝ մանա-  
ւանդ քահանայից նոցա՝ իշխանութիւն դատաստան առ-  
նելոյ ի վերայնոցա, որք իւիք յանցանօք պարտաւոր  
դատանին. բայց զայս դատաստան ասէ ունին առնել  
ի գըոց՝ այսինքն յաւանդելոց անտի ի գիրմն մով-  
ունսի: Ոյսնպէս հայելով և ի նորս՝ քո ետ իշխանու-  
թիւն եկեղեցւոյ առնել ըստ հօգեստին դատաստան  
ի վերայ յանցուցելոց. որպէս և առնէ խօկ՝ թէ ը-  
ներքին ատենի ի խօրհուրդ ապաշխարութէ, և թէ

Ար Ե Կ Կ, Ո Ւ Թ Ւ Ւ Ն  
ըստ արտաքնոյն՝ ի վեճու հաւատոյ բարի վարուց, և  
դատապարտելով զգիմաղարձան, այսինքն զհերետի-  
կոսս, զհերձուածօղս և զյանդգունս և այլն։ Եւ  
զայս դնէ մարդարէն լինիլ փառք նրց, ասելով։  
Ուստած այս էն ամենայն սրբոցնորս։ Ես ստանօր եթէ բառդ  
այս՝ դիցի իբրև անուն բայիս էն՝ միտ բանին լինի այս-  
դատողունն այն՝ որով նրք դատին յածային օրինաց է  
նց փառք մեծ։ Խսկ եթէ բառդ այս՝ դիցի իբր ածա-  
կան ժաման՝ անունդ ժաման դնի փոխանակ դատողու-  
թէ նրց։ որով և միտ բանին լինի այս։ այսոքիկ փա-  
ռաւորուիք ացսինքն է դատել ըստ գրոց՝ ոչ է այսմ  
կամ այնմ նրյ միայն, այլ ամենայն նրց, որ է ասել-  
նոցա է դիտել՝ զինչ զրեալ կան յօրէնս այց, ոչ զի  
ամենեքին դատողք իցեն, այլ զի այն փառք՝ նոցա է

ըստ որում են յեկեղեցւոջ։

Խսկ յաւուրն յետնում՝ ի մեծի ահեղ ատենին նրքն  
ունին դատել զազդս ամենայն ընդ քոթի։ և այս լիցի  
նոցա փառք ։ յոր միտ մեկնեն ոմանք զայն բան առա-  
քելոյն, որ ասէ։ \* նրք զաշխարհ դատեն ։ ( ա-  
կորն ։ Է ։ Հ ։ ) Եւ ըստ այսմ գրովք իմացեալ լինի  
աստ նախ յաւիտենական օրէնք որ ՚ի միտս այց ։ երե-  
րորդ՝ բանք կամ պատգամք տուեալք յայց ՚ի հնումն  
և ՚ի նորումն ։ և երրորդ՝ գրուածք խղչի մտաց իւ-  
րաքանչիւրոց՝ որք բացեալ լիցին յաւուրն յայնմիկ ա-  
ռաջի ամենեցուն ։ առ որս հայի և բան դանիւլ՝  
յասել նորա, թէ ՚ի նստիլ այց յատեան, \* գպրուիք  
։ բացան ։ ( դան ։ Է ։ 10 ։ ) Եւ ըստ այսոցիկ գրոց  
ունին յայնժամ դատել նրքն ։ որ է փառք մեծ ։ և  
այս փառք ոչ միոյ նրյ միայն լինիցի, այլ ամենայն  
նրց ։ և մնասցէ ՚ի նոսա յաւիտեանս յաւիտենից ։

Ա Ա Դ Մ Ռ Ջ Ա Ռ Ո Վ Ռ

Խրախոյս օրհնելոյ զանք բաղմադիմի նուագարանօք:

Ա Ա Դ Մ Ռ Ջ Ա Ռ Ո Վ Ռ

1 (Օրհնեցէս զանք ՚ի սըբառնեն նորա . օրհնեցէս զնա ՚ի  
հասպատառնեն ՚ի շըբառնեն նորա : 2 (Օրհնեցէս զնա  
՚ի շըբառնեն նորա . օրհնեցէս զնա ՚ի բառամ մեծառնեն նորա :  
3 (Օրհնեցէս զնա ՚ի յայն օրհնառնեն . օրհնեցէս զնա սաղմա-  
սիս . և օրհնառնեն : 4 (Օրհնեցէս զնա շնձառնեն , գուլուցէս  
զնա սըբառնեն : 5 (Օրհնեցէս զնա ՚ի բառա տաշը . գուլու-  
ցէս զնա ՚ի բարբառ լսելու : 6 (Օրհնեցէս զնա ՚ի յայն գո-  
ւուննեն . մինայն հոգիս օրհնեցէս զնէր :

Ա Ա Բ Ե Ր Գ Վ Ի Բ

Ա Ա Բ Ե Ր Գ Վ Ի Բ



Ա Ա Յ Ա Զ Ձ Ե Մ Ի Ր Գ Վ Ի Բ Ա Ե Տ  
՚ի սաղ՝ վարդանայ յաւելեալ լինին ասս  
և բառքդ անգեւայ և շատարիայ , որպէս դնի  
և ՚ի քանի մի օրինակս եօթ անասնից , այլ ՚ի հասա-  
րակ օրինակս նոյցա , և յայլ թարդ՝ ոչ դտանի , որ-  
պէս և ոչ յեօթն ձեռագիրս մեր : ՚ի միում ձեռա-  
գրի ևս յաւելեալ լինի բառոդ օրհնառնեն . և յայլում  
դնի միայն զաքարիայ . և յոմանս նաև բառք սաղմա-  
նայց քանզի հասարակաց է դնել միայն ալելուիայ  
համաձայն երբ” , մեք ևս այնպէս եղաք . (զորմէ տես  
՚ի սաղ . ձնէ . ձեւ . և ՚ի սաղ . ձինէ : )

Ա Յ Ս սաղմոս է հրաւեր և խրախոյս տռ ծառայս այ,  
և մասնաւորպէս առ պաշտօնեայս նորա , օրհնել

C. U. "U."

iii. ( ) የትክክለኛው ሂዕስ ነት ማረጋገጫውንና ክፍያው . የቅርቡንን ሂዕስ በትክክለኛው ሂዕስ ነት ማረጋገጫውንና ክፍያው :

## W b u 't a t o s h p h 't.

Ա Երջին գոլով այս սաղմոս 'ի կարդս օրհնուեց  
լեալ է ընդունաբան և գանձարան օրհնութե . ուր  
և Երկուտասանիցս կրկնէ 'ի սմա մարդարէն զբառս  
օրհնեցէ . որոյ փոխան յերայականն դնի ալլահա-  
այլեայլ օրինակաւ . յառաջնումն ալլահէ . այսինքն  
գովեցելք զած . յերկրորդ ուժն ալլահաւ . այսինքն գո-  
վեցելք զնա . յերրորդ ուժն նմանապէս ալլահու . ըստ  
սոցին և յայլս : Ձւյամենեսին 'ի սոսա յառաջին եր-  
կուս համարսն 'ի մէջ բերէ մարդարէն զայլեայլ  
սքանչելի նիւթս օրհնելոյ , և 'ի մնացեալ համարսն  
զայլեայլ ընտիր գործիս նուագելոյ . և սկիզբն արա-  
րեալ օրհնութե իւրոյ ասէ նախ :

Արեգոբդ՝ առեալ լինի՝ ի փոխարերական միտս իբր վերած աբար փոխանակ արքայութեան երկնից . յոր միտ կամի ասել . օրհնեց զանձ՝ որ բնակեալն է յերկինս ի յաթռու իւր . կամ գարձեալ՝ օրհնեց զանձ որք եք յարքայութեան ըստ ոյսմ բառդ օրհնեցէն՝ կամ-

192

զի նաև առ հրեշտակս և առ երանեալս՝ որք են  
յերկինս :

Երբորդ՝ առեալ լինի բարոյապէս, փոխանակ մա-  
քուր հոգւոյ՝ յորում է սրբութի ոյ. յոր միտ կամի  
ասել՝ օրհնեցէք զած՝ ի հոգիս ձեր սրբեալս սրբու-  
թին ոյ. որ է ասել՝ օրհնեցէք զած՝ ի ժողովս որց. ըստ  
որոյ՝ ի մեկնութիս ոմանց ոք հարց փոխանակ ասե-  
լոյ՝ ի սրբութենորա՝ դնի ի ոքս նորա. ըստ որում  
դնի և ի նարեկի ( 'ի բանն . կա.) յասելն. \* օրհնե-  
,, լի է ած՝ ի ոքս նորա տիրապէս ||. Հօրինակս ինչ  
է օթ" ըստ վարդանոյ դնի \* վանն որց նորա ||. իբր  
զի ասէ տեսանելով զսրս շինիմք և յորդորիմք օրհ-  
նել զած :

Ըստրորդ՝ առեալ լինի իբր յարմարական մեկնութեն  
ը հնչման բառին փոխանակ ներքին սրբութեն ոյ,  
յոր միտ կամի ասել՝ օրհնեցէք զած՝ որ յանսահման  
սրբութեն է, կամ որ յանբաւս որ է. Օ այս եղեալ  
մարդարէին՝ դառնայ յորդորեկ և յայլիմն օրհնութի  
հայելով յարտաքին դործս ոյ երևեալս ի հաստա-  
տութեն՝ ասելով :

( Հնեցէտ չն ՚ի հաստատութեն զօրութենորա. ( պիտիս  
ուղ. ՚ի յերկինս զօրութենորա. ) Ի առդ հաստատու-  
թազմօրինակ կարէ առեալ լինիլ աստ. մի՛ ըստ հա-  
մեմատութեն նախընթաց բանին՝ փոխանակ խորանին  
ոյ, յորում էր հաստատութի ներկայութեն ոյ, ևս  
և զօրութի նորա, յոր միտ նոյն մեկնութի առաջի  
դնի որինչ ասացաւ յառաջնումն :

Երկրորդ՝ առեալ լինի փոխանակ հաստատութեն երկ-  
նից՝ այսինքն փոխանակ օգային կմեթերական երկ-  
նից՝ զոր մովսէս կոչէ հաստատութի. զի յերբ ՚ի նոյն  
բառ դնի ՚ի ծնն. 1. և աստ. իւշ զի յայսմ հաստա-  
տութեն բազմօք երեկի զօրութին ոյ ՚ի ձեռն փայլա-  
տականց, կայծականց, որոտմանց, հողմոց, մըրկաց  
և այլն, վասն որոյ ասէ ՚ի հաստատութեն զօրութեն  
նորա. ՚ի ոյն բան է՝ եթէ իմացեալ լինիցի այսու-  
երկինքն համաստեղութեն, զի և ՚ի նմա սքանչելի  
երեկի զօրութին ոյ. յայս միտ կամի ասել. օրհնեցէք  
զած՝ որոյ զօրութին սքանչելի երեկի ՚ի հաստատու-

546 Ա Ե Կ Ա Ռ Ե Թ Ե Լ Ե Ր  
թե երկնից . կամ դարձեալ օրհնեցլէք զանձ 'ի տեսա  
նել ձեր զջորութիւնորա մեծ 'ի հաստատութիւն երկ-  
նից . կամ օրհնեցլէք զանձ հայելով 'ի հաստատութիւն  
երկնից 'ուր երկեի զօրութիւնորա :

Եցրորդ՝ առեալ լինի 'ի փոխաթերական միտս , փոխա-  
նակ աթոռոյ իշխանութեն ոյ . և բատ այսմ բառդ  
զօրութիւն՝ գնի փոխանակ իշխանութե . յոր միտ կամի  
ասել . օրհնեցլէք զանձ յանփոխուելի աթոռ իշխա-  
նութեն նորա . որ է ասել . օրհնեցլէք զանձ գնստեալն  
յանհաս աթոռ իշխանութե յաւիտեան , կամ օրհնե-  
ցլէք զանձ վասն հաստատութիւն իշխանութեն նորա .  
կամ դարձեալ օրհնեցլէք զանձ կալով առաջի աթոռոյ  
իշխանութեն նորա :

Չորրորդ՝ առեալ լինի վերածաքար փոխանակ արքա-  
յուն՝ ուր է հաստատութիւն պյախնքն փառաւոր երեւմն  
զօրութիւն և իշխանութեն նորա . յոր միտ կամի ասել .  
օրհնեցլէք զանձ 'որ է յերկինս 'ի փառս արքայութե .  
զորմէ տես 'ի նախընթաց հատուածդ յերկրորդ մեկ-  
նութեն :

Հինգերորդ՝ առեալ լինի բարոյապէս փոխանակ  
նուիրեալ հոգւոյ հաստատելոյ զօրութեն ոյ . յոր միտ  
կամի ասել . օրհնեցլէք զանձ այնպիսի հոգւով յորում  
երեի հաստատութիւն զօրութեն չորհացն ոյ :

Վարդան զօրութիւնայ վերկնային զօրսն , որք հաս-  
տատուն կան ասէ յաւիտեան . և հաստատութիւն ըղ-  
գուշանան զմեօք , և պահպանեն :

Վ. յլաբանօրէն , այս բանք հային յեկեղեցի ոք , որ և  
է սրբութիւն ոյ և հաստատութիւն զօրութեն նորա , զի  
սրբեալ է յոյ , ըստ որում է 'ի սրբութեն ոյ , և սրբ-  
ութիւն ոյ 'ի նմա . ևս և հաստատեալ է յոյ , ըստ  
որում բնակեալ է 'ի հաստատութիւն զօրութեն ոյ ,  
և հաստատութիւն զօրութեն ոյ 'ի նմա բնակէ , վասն  
որոյ 'ի նմա միայն արժանապէս մատուցանի առ տած  
օրհնութիւն : Խսկ արտաքոյ նորա չէ ընդունելի ոք և  
իցէ օրհնութիւն . վասն զի որպէս արտաքոյ եկեղեցւոյ  
չիք փրկութիւն , սայնպէս և արտաքոյ եկեղեցւոյ չիք  
ինչ ընդունելի պաշտօն առ տած : Խւ եթե լինիցի  
ընդունելի , այն վասն այսորիկ է՝ զի զօրութիւն իմ  
'ի գիմաց եկեղեցւոյ մատուցանի , կամ զի մատու-

ցօղն զօրութք և յեկեղեցւոջ, և կամ զի և յայնպիսի  
վիճակի՝ յորում փաղանշանի վերածումն նորա տռ.  
եկեղեցի սր. Արդ՝ յետյորդորելոյ մարգարելին օրհ.  
նել զանձ ՚ի սրբութեւ և ՚ի հաստատութենորա, յոր.  
դորեւ սյժմ օրհնել զնա՝ հայելով ՚ի սքանչելի գործս  
նորա + ուստի ամէ:

Ք. ( ) ըհնեցէս զնա ՚ի զօրութենորա. օրհնեցէս զնա ՚ի  
բազում մեծութենորա:

Մարգարելին որովհետեւ զյօրինուած սաղմոսիս նար-  
տարութք կարգէ, այնպիսի օրինակաւ առաջի զնէ,  
զյորդոր օրհնութեն ոյ, օրպիսեաւ պատշաճ տեսաւ-  
նեւ սաստկագոյնս զարթուցանել զոդիս օրհնաբանո-  
ղացն. վասն որոյ գերազանց իմն եզանակաւ խրախու-  
սէ, ՚ի նոյն՝ յասելն:

( ) ըհնեցէս զնա ՚ի զօրութենորա: Ըստոս զօրութենի դնի  
ոստ փոխանունուե ձեռով ՚ի նշանակել զզ ործս զօրու-  
թեն ոյ, կամ ՚ի նշանակել զայնոփիսի գործս, յորս  
երեխ զօրութին ոյ, օրպիսյասելն. \* մնացորդք բա-  
,, նից ասայի, և ամենայն զօրութի նորա ... զըեալ  
,, են ՚ի զիրս և այլն ||. ( դ. Թագ. ժԵ. 23.) յայս  
բան բառդ զօրութենի դնի փոխանակ գործոց զօրութեն  
ասայի, կամ փոխանակ այնց գործոց յորս երեխը զօ-  
րութի նորա. ըստ այսմ դնի և աստ բառս զօրութենի,  
յոր միտ կամի ասել. օրհնեցլք զանձ հայելով ՚ի բաղ-  
մապատճիկ գործս զօրութեն նորա կամ հայելով յայն  
ամենայն գործս՝ յորս տեսանի թէ քանի զօրաւոր է  
անձ. զի այն գործք ոյ ցուցանեն զմեծութի նորա,  
վասն որոյ յասելու ասել:

( ) ըհնեցէս զնա ՚ի բազում մեծութենորա: Ըստիւս մեծու-  
թի նշանակի աստ մեծութի գործոցն ոյ՝ կամ այն-  
պիսի մեծ գործք, որք յայտնի երեխն արարեալ ՚ի  
մեծութի ամենակարոզութեն նորա, կամ այնպիսի  
գործք՝ յորս երեխ մեծութի ոյ. և զի բաղում են  
այս շործք, վասն որոյ յաւելու և զբառդ բազում.  
յոր միտ կամի ասել. օրհնեցլք զանձ հայելով ՚ի բա-  
ղում սքանչելի գործս մեծութեն նորա, կամ օրհնե-  
ցլք զանձ աեսանելով զայնափի մեծ ամեծ սքանչելիս՝  
յորս երեխ ու միայն զօրութի նորա, այլւ մեծութի

այնը զօրութեն և վայելութե փառաց նորա :

Մարթ է աստ իբր յարմարական մեկնութքի ի ձեռն  
զօրութեն և մեծութե իմանալ զներքին կատարելու-  
թիս ոյց . յոր միտ կամի ասել . օրհնեցէք զած ըստ  
անքաւ զօրութե նորա , և ըստ անշափ մեծութեան  
նորին . և ըստ այսմ բառդ բառում՝ դնի փոխանակ  
բառիս յոյժ . որպես թէ եղեալ էր . մեծ է ած և  
յոյժ մեծ քան զոր հնար է զմտաւ ածել . և զի այս-  
պիսի է , արժան է ասէ օրհնել զնա մեծամեծ օրհ-  
նութք և բազմադիմի օրինակաւ . յորս յաւելու և  
զպէսպէս գործարանս օրհնելոյ , և ասէ :

Դ . ( ) բհնեցէտ չնա 'է յայն օրհնութէ . օրհնեցէտ չնա  
սաշմոսիս և օրհնութէ :

Ե . ( ) բհնեցէտ չնա շնծութէ , գովեցէտ չնա սորտիսթէ :

Ֆ . ( ) բհնեցէտ չնա 'է բան տաղը . գովեցէտ չնա 'է բան  
բան լուլս :

Արժան է գիտել . զի աստի սկսեալ յերեսին յոյսո-  
սիկ համարս իւրաքանչիւր բառք առաջի դնին ըստ  
մերում թարգմանուե փոխանունուե ձեռվ , այսինքն  
փոխանակ այլեայլ գործեաց նուագելոյ . և նախ  
գործին այն՝ որ կարգի օրհնել զած բարձրաձայն՝  
կոչի 'ի սմա օրհնութէ . որովնշանակի փող . ըստ որոյ  
յերը " զնի սօֆտ և 'ի լատ " նուագ : Երկրորդ՝ այն  
որ կարգի օրհնել գորովաձայն՝ կոչի նոյնպէս օրհնու-  
թէ . որովնշանակի քնար . ըստ որոյ յերը " զնի  
սինու , և 'ի լատ " նուագ : Երրորդ՝ այն որ կար-  
գի օրհնել քաջարուեստ սաղմոսիւք , կոչի սողնու .  
որովնշանակի սաղմոսարան , այն է տաւիզ , ըստ  
որոյ յերը " զնի նէլլէ . և 'ի լատ " քուլիւնում : Հոր-  
բորդ այն՝ որ կարգի օրհնել յնծութք՝ կոչի յնծու-  
թէ . որովնշանակի թմբուկ . և ես թմբկանման ինչ  
գործի . զի յերը " և յայլո՞ երկու նուագարանք դնին  
'ի սմին . մին թօք , և միւսն նախօլ . և 'ի լատ " նիմ-  
ֆանում և տուամ : Հինգերորդ՝ այն որ կարգի օրհ-  
նել ուրախութք , կոչի սողակութէ . որովնշանակի

Ա Ա Ն Ա Մ Շ Ճ Ֆ ։ միւսն բազմազեայ և միւսն բազմեզեգեգ-  
նեայ . ըստ որոյ յեթր՝ փոխան միոյն դնի դնելմ , և  
փոխան միւսոյն ռուկան . և 'ի լատ' փոխան առաջնոյն  
քուրէ , և փոխան երկրորդին ռուկանմ . ոյյնպէս է  
և յայլ թարգ' : Ա եցերօրդ՝ այն որ կարգի օրչնել  
քաղցը ձայնիւ , կոչի բան տաղը . այն է , քաղցը բանցիւն  
ծնծղայ . ըստ որոյ յեթր՝ դնի յելյէլ ռամա . այս է ,  
ծնծղայ լսելի , կամ ծնծղայ երկնային . իսկ 'ի լատ'  
դնի ժիշտալում ունել ռամա . այս է ծնծղայ բարե հնցիւն  
լութներօրդ այն՝ որ կարգի օրչնել մեծաբարեառ ,  
կոչի բարբառ լսել . այն է ծնծղայ յորելեան . ըստ  
որոյ յեթր՝ դնի յելյէլ նեռառա . այս է՝ ծնծղայ յորե-  
լեան , կամ ծնծղայ արագացնցիւն . և 'ի լատ' դնի  
ժիշտալում իւղիլոյիծնիս . այս է ծնծղայ յորելինի . զայս-  
ցանէ տես 'ի ներածութե . ( դլ . ժիկ' )

Համենայնի յայսոսիկ որպէս և տեսանես՝ յեթր՝ և  
յայլս ինն գործիք օրչնելց դնին որոշ անուամբք .  
իսկ 'ի մերումն եօթն , և այն ևս հասարակական  
անուամբ ըստ ճարտասանական ոճոյ . որոյ պատճառն  
ու այլ ինչ երեկի լինիլ , բայց եթէ այս , զի ու դոյլ  
յազգի մերում նուագարանօք սազմուել : Ա յլ քան-  
զի երանելին դաւիթ զայս ամենայն նուագարանս  
սքանչելի իմն օրինակաւ դասակարգեաց 'ի նուագիւս'  
սոքիմքք աւասիկ 'ի յորդոր մատչի աստ օրչնել զանձ .  
և նախ 'ի մէջ բերելով զերիս 'ի նուագարանացն  
ասէ :

( Դ հնելյէտ նաև 'ի յայն օրհնութե . օրհնելյէտ նաև սազմուիտ  
և օրհնութե . Բառդ օրհնութե յառաջնուում հատուա-  
ծի դնի փոխանակ փողոյ . իսկ յերկրորդումն փոխա-  
նակ քնարի . որպէս յայտ է 'ի վերոյ զթելոցդ' : Ա յլ  
բառդ սազմու՝ դնի փոխանակ սազմոսարանի այսինքն  
փոխանակ տաւզի , որ է տասնազեայ գործի եռան-  
կիւնաձեւ նման սանթուուի : Ա ոքիմքք ասէ օրչնեցլք  
զանէր . որ է ասել . յօրչնել ձեր զործ՝ փող հարջիք  
և քնար , ընդ նոսին և զազմոսարան որովք նշանա-  
կին ըստ հոգեսորին , միտք , կամք և յիշողութե . կամ  
հաւատք , յոյս և սէր . որովք օրչնել զանձ յորդորէ .  
Դ մէջ բերէ ապա և զայլ երկուս գործիս ասելով .

( Ե հնեցէս զնա յնծութ . օրհնեցէս զնա ուրախութ : Ծառդ յնծութ՝ դնի աստ փոխանակ թմրկի , ևս և փոխանակ այլ իմն թմրկանման գործարանի , զի որպես ասացաք ՚ի վերոյ , յերբ ՚ և յայլս՝ երկու գործիք գնին աստ : Իսկ բառդ ուրախութ՝ դնի փոխանակ բազմաթելնուագարանի , ևս և փոխանակ այլ իմն բազմել :

զեգնեայ գործւոյ ըստ վերագոյնդ գրելոյ :

Առքիմք ևս յորդորէ մարդարեն օրշնել զած . որ ըստ հոգեորին նշանակէ օրշնել յնծութք հոգւոյ և ուրախութք որտի : Հետ ՚ի մէջ ըերելոյ մարդարէ ին զայսոսիկ նուռագարանս , առաջի առնէ և զայլ երկուս առելով :

( Ե հնեցէս զնա ՚ի բան առշը . օրհնեցէս զնա ՚ի բարիս լսելիս : Ծառդ առշը՝ որ է ածական գոյական անուանդ ՚ի բան , իբր յոգնական դնի , որպէս թէ եղեալ եր ՚ի բանս քաղցօւնս : Այնպէս և բառդ բարիս լսելու որ է իբր անյօդնական , զօրութք իբր յոգնական դնի . որոյ վասն և բառդ լսելիս՝ որ է ածական նը , եղեալ է յոգնակի :

Արդ բառքդ ՚ի բան առշը՝ դնին աստ փոխանակ ծնծ զայից քաղցը հնչելոց . իսկ բառքդ ՚ի բարիս լսելիս՝ դնին փոխանակ յօրելեան ծնծ զայից՝ առ ՚ի լսելի առնել զբանս օրշնուեն ոյ : Վյագիմք գործեօք ասէ օրշնեցէք զած . որ ըստ հոգեորին նշանակէ օրշնել զած այնպիսի օրշնութք՝ որ իցէ հանցյ առաջի նորա՝ իբրեւ զբան քաղցը , և իբրեւ զբարբառ արժանի լսելի լինելոյ : Օ այսոսիկ եղեալ մարդարէին կնքէ զբան իւր և ասէ :

Դ. ( Ե հնեցէս զնա ՚ի յայն գոհութէ , ամենայն հոգին օրհնեցէս զուբք :

Վյա բան ըստ աւանդելոյ ոմանց է իբրեւ կնիք բոլոր սաղմոսաց , եղեալ յայնմանէ որ հաւաքեաց զամենայն սաղմոսս ՚ի մի , ուր ամենայն հոգիք միանգամայն յօրդորին յօրշնուի և ՚ի գոհութք ոյ : զինախ ասէ :

( Ե հնեցէս զնա ՚ի յայն գոհութէ : Ծառդ գոհութիւն՝ Ե-

թէ զիցի աստ փոխանակ նուագարանի , նոյնանայ  
ը նախընթացին . իսկ եթէ զիցի ըստ յատուկ հա-  
նակութե , ցուցանել զառաւելութի ինչ հանգամա-  
նաց օրհնելոյ զանձ , որպէս թէ եղեալ եր . յօրհնել  
մեր զանձ մատուցիք նմա միանգամայն և գոհութ  
չնորհակալութե վասն արժանի առնելոյ զանձ օրհ-  
նելոյ զինքն : Եւ զի զոյս բան առ ամենեսին կար-  
գէ , վասն որոյ յաւելու և առ :

Ա հնայն հոգին օրհնեցէն զտէր : Դ սաշ . խնդ . 22 . փո-  
խանակ հոգւոյ եղ մարմին ըստ ժամագլքին , և աստ  
զնէ հոգի . զի ցուցցի թէ վայել է օրհնութի արար-  
չին եթէ հոգւոց և եթէ մարմնոց : Եւ որպէս անդ  
մարմնով նշանակիւր ամենայն մարդ՝ սոյնպէս և աստ  
հոգւովլք նշանակին ոչ միայն պարզ հոգիք , որպիսի  
են հրեշտակիք , և հոգիք երանելոց , այլ և ամենայն  
մարդիկ՝ զի բառս հոգի՝ որ նշանակէ զբանական մասն  
մարդոյ , բազում ուրեք 'ի ոք զիրս զնի փոխանակ  
բոլոր մարդոյ , որպէս յայտ է (ծնն . խնդ . 25 . 26 .)  
Ուստի առեւ սարդիս չնորհալի ('ի մեկն . առ . յովհ . դ .  
3 . հառ . դ .) \* հոգի զմարդն անուանէ . քանզի սո-  
վորութի է գրոյ՝ հոգի զմարդն անուանել : Եւ  
դարձեալ առեւ ('ի մեկն . առ . պէտ . դ . 20 . հառ .  
ը .) \* սովորութի է ածային զբոց . . . բազում ան-  
ն , գամ զհոգին յիշելով զմարմինսն նշանակել (հան-  
ն , գերձ հոգւով ) , և զմարմինսն յիշելով զհոգինս  
(հանգերձ մարմնով ) . 'ի նշանակել զբոլոր մարդն .  
և ըստ այսմ առեալ յարդ որէ աստ մարդարեն զամե-  
նայն բանաւորս յօրհնութի այ , և առաւելապէս զայ-  
նոսիկ՝ որը հոգւով վարին , զի սոքա և եթ կարեն  
իբրև հոգիացեալք արժանապէս օրհնել զանձ յաւե-  
տեան :



## ՄԵԿՄՈՍ ՅԵՒԵԼՈՒԾՈՅՑ

Երգ շնորհակալութե դաւթի առ անծ վասն յաղթու.  
թե՞ն՝ զոր արար ընդդեմ գողիաթու :

Այս ապշտ ինքնագիր Պատմեն արդատոյ թուաց . Ես ժամանա-  
կի չե եւ նո նահասով ընդրեմ գողիաթու , առաջ առա-  
ջա , և ամենայն զօրացն իսբայելի :

**Պ**ատր եւ ես ցեղաբոս իմ , և իրաւուր ՚է առն հօր իմոյ .  
արծել շիւալին հօր իմոյ : 2 Չեմ արարին  
ապշտաւան . և մասաւան իմ իւղեցին գործե օքնաւթեան :  
3 Խոչ արտ ՝ պատմեսց զայս թն իւամ . ինքնին ուեր ամ-  
ենային լուցե շամենայ : 4 Ես ապատեաց ուեր զիւելցոսի իւր .  
և համբարչ չես ՚է հօրէ իւալին հօր իմոյ . և օծ չես յա-  
ծան իւրայ իւրոյ : 5 Ելշբոր իմ մեծանեծ և գեղցուիր .  
և համեցաց ընդ նոսս ուեր : 6 Ելլեւ ։ ընդ առաջ այլաց .  
այն , և ապալցու պատման նորու : 7 Հանի զառաւթեն ՚է նմ-  
անէ , և հարդ շնչար նորին . և բարի զառեաւթին յարդացն  
իսբայելի :

## Ա. Ե. Բ. Շ. Ա. Գ. Ի. Բ.

Այս ապշտ ինքնագիր Պատմեն արդատոյ թուաց . Ես ժամա-  
նակի չե եւ նո նահասով ընդրեմ գողիաթու , առաջ առա-  
ջա , և ամենայն զօրացն իսբայելի :



**Ա. Ե. Բ. Շ. Ա. Գ. Ի. Բ. ՄԵԿՄՈՍԻ ՅԵՒԵԼՈՒԾՈՅՑ**  
նապէս ցուցանէ , թէ սոյն այս սաղմնոս ոչ  
է եղեալ ՚ի սաղմնոսարանի՝ այլ ինքնագիր  
այսինքն առանձինն գրեալ և ուրոյն եղեալ արդատոյ  
թուաց չ'ծ . սաղմնոսաց . ուստի և ոչ գտանի յամենայն

ՍԱՂ. Յ. ՅԱՒԵՎ. ՏԱԿ. ՄԱՆՈՒԵԼ  
սաղմոսարանս ոչ յեթք" և ոչ 'ի քաղդ", և ոչ 'ի հա-  
սարակական օրինակս լատինացւոց, և ոչ յընաիր  
օրինակս եօթ". այլ միայն 'ի թարգ" ասոր և արար  
և յօրինակս ինչ յունաց, և առ ոմանս 'ի նախնեաց.  
և այն՝ ոչ իբրև կանոնական գիր, որպիսի են այլ  
սաղմոսք, այլ իբր արտաքոյ. սմին իրի և ոչ եդա-  
'ի հանդիսական պաշտամունս եկեղեցւոյ՝ ոչ 'ի մե-  
րումն 'ի սկզբանէ, և ոչ այլոց ազդաց. և յայս իսկ

ու ոք ամենեկին փոյթ կալաւ մեկնել զսա:

Վասցի 'ի սկզբանէ. զի որ 'ի մերում տօնացուցի  
գնի երգել զսա 'ի ձաշու պենտէ կոստէին, թուի  
թէ յետոյ է մուծեալ. և այն՝ վասն գտանելոյ սո-  
րա 'ի վերջ սաղմոսարանին, որ աւարտի 'ի նմին  
աւուր:

Վ. յլ վարդան յարմարական իմն մեկնութի դնէ ա-  
ռաջի ասելով. \* սա ասի յեկեղեցւոյ 'ի յիսներորդի  
" պենտէ կոստէին յաւուր իջման ամենառը հոգւոյն  
" յառաքեալսն զկնի հարիւր և յիսուն համարոյն.  
" որպէս թէ խոնարհեալ հոգի ամենայն՝ նմանապէս  
" դաւթայ առցէ զհոգին ոք. զի պատարագ ոյ հո-  
" գի խոնարհ, զօր ոչ արհամարհէ հոգին ոք. որոյ  
" յուսով երգեն մանկունք եկեղեցւոյ յորում աւուր  
" յսոնարհեցոյց զերկինս և էջ տէր ||:

Խսկ վասն բնանագէք բառիդ՝ դրէ՝ զայլ իմն ցուցանել.  
\* զայլսն ասէ երգիչքն գրէին ասափ և իդիթում և  
" որդիքն կորիսայ և այլքն. իսկ զսա գրեաց ինքն  
" գաւիթ. այլ այս չերևի հաւանական: Որպէս և  
իցէ որովհետեւ կը սա զանուն սաղմոսի, և դնի 'ի  
սաղմոսարանի մերում, պատշաճ թուեցաւ մեզ 'ի

մեկնութի մատուցանել և զսա:

## Բ. Ա. Ե.

ա. **Պ**ատը էի ես յեղբարս իմ, և իրասեր 'ի տան հօր իմոյ. արածել զիտաշինս հօր իմոյ:

## ՄԵԿԻԱԼԻ ԹՎԵՏԵՐ

**Օ**մեծութի բարերարութեն ոյ և զբարձրութի փառաց նը կամելով ցուցանել մարդարէին՝ զփոքքիութի իւր և զնուաստութի անմինն առաջի առանէ. և նախ ըստ փոքքիութեն խօսելով ասէ:

**Փ**ատը էի ես յեղբարս իմ, և իրասեր 'ի տան հօր իմոյ: Ութեղաղք էին որդիքն յեսեայ, որոց կրտսեր էր սա ինքն դաւիթ. վասն որոյ վկայելով զանձնէ ասէ. փոքք էի ես քան զեղբարս իմ, և խոնարհ քան զայլս որք էին 'ի տան հօր իմոյ. բայց ոչ հայեցաւ անձ 'ի փոքքիութի իմ, այլ 'ի մեծութի իւր, որով և կամեցաւ մեծացուցանել զիս քան զեղբարս իմ: Խյօսելով ապա և զնուաստութի իւրմէ՝ ասէ:

**Վ**արծել զիտաշինս հօր իմոյ: Խամի ասել. փոքք գոլով իմ քան զայլս՝ որք էին 'ի տան հօր իմոյ՝ նուաստ համարեալ էի. վոյ և 'ի նուաստ գործս կայի՝ այս ինքն յարածել 'ի վայրի զիտաշինս հօր իմոյ. այլ անձ ոչ 'ի նուաստութի իմ, այլ 'ի բարձրութի իւր հայել լով կամեցաւ բարձրացուցանել զիս:

**Խ**որհրդաբար, այս քան ասի 'ի դիմաց քոի, որ փոքքիացոյց զանձն, և փոքք համարեցաւ 'ի մէջ եղբարց իւրոց այսինքն 'ի մէջ հրէից, և կրտսեր երեւցաւ յազգին խօսայէլի՝ որ էր տուն հօր իւրոյ. որ և նախ քան կմարդանալն արածեր զիտաշինս հօր իւրոյ զհրէշտակս. և տեսեալ թէ երկրաւոր ովնացք իւր մոլորեցան՝ եկն առ նոսա, և սկսաւ արածել իւրով աւետարանական վարդապէտութէ: Ու որպէս ասէ ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. ժամ.) \*յաւե,, տարանելն անդ փոքքիկ անուանեաց զինքն յասելն անդ փոքքիկ յարբոյութէ երկնից մեծ է քան զնալ.

ուր \* փոքրիկ զինքն ամել ըստ դաւթի՝ փոքր էի ես  
,,յեղաբս իմ” : Խոկ զորս գործովք կատարեաց քո,  
զայնմանեւ գրել մարդարեն ՚ի յաջորդսղ՝ ՚ի մէջ բե-  
րելով զայն զոր արար ձեռօք խըսովք . վասն ո՞յ

— 2 —

Հանձար մտայն դաւթի վերառեալ յանձային հանձարոց՝ այնչափ պայծառացաւ, մինչ զբեթե յերկնային իմն վիճակ այլափոխելով կարօղ լինի նմայութեալ զօրհնութիւն համաձայնս երգոց երկնային զուարթնոց. որպէս տեսանի ՚ի սաղմոսս նորա. Վոյն այս հանձար նորա յայսչափ բարձրութիւն վերտառեալ յառաւելութէ անտի զեղոյր զօրութիւն, և ՚ի ձեռս նորա յօրինել զերդարանս, և ՚ի նոսին հաշեցուցա ներ գերգս օրհնուեն. Յայսոսիկ հայելով ասեւ:

Q  
Ենտ ի բարեկ սաղմառաբան։ և Տառածութ ի հաղթեցն գումար ծի օրհնառնեն։ Չազք մեղուաց ՚ի սկզբան ուտեն զմեղը ծնողացն։ այլ յորթամթեաւորին և զօրանան, ինք եանք ևս շինեն և ուտեն։ Այսպէս և դատիթ ՚ի սկզբան անդ ուտեր իբր զմեղը յօրհնութեցն մովուսի, ևս և յօրհնութեց երկնային զուարթնոց։ այլ իբրեւ թեաւորեցաւ ՚ի հոդի իւր, և զօրացաւ, և սլացաւ, ինքնին սկսաւ կազմել զմեղը օրհնութեց և սաղմնաց, և ուտել ևս անտի, և բերկրիլ յայն, և զփեթակ մեղու ևս յօրինել, այսինքն զաղմնասրանս։ և զայս յայտաննեւ առաջիկայ բանիւդ։ որով կամի ասել։ ՚ի նուաստութեն իմում և յանարդ ծառայութես յարածելն անդ զինուինս հօր իմայ ՚ի բացօվեայս, ոչ այլ ինչ էր իմ միմիթարութի և ցնծութի, եթէ ոչ յօրինել զերգս սաղմնաց և օրհնութեց և նուագել զայնս առած։ և զի ցանկայի քաղցրահնչեն գործեօք ևս նուագել, արարի ձեռօք իմովք զաղմնասրանն՝ այսինքն զօրհնարանս սաղմնաելոյ, և կաղմեցի մատամբ իմավ զգործիս նուագելոյ զօրհնութիս ոց։

Առղմբսարանաւ իմօցեալ լինի աստ այն եթիայնածիդ. եռանկիւնածի. զործի բաշմսուղեայ կամ տասնաղեայ

որ փոքր մինման է սանթուռի, զորյ և զձեն մարթ  
է տեսանել՝ ի պատկերսն դաւթի, նկարեալ՝ ի ձեռս  
նորա: Խսկ գործեաւօր հնութեն՝ թուի թէ նշանակի  
աստ այն նուագարան՝ որ յայլազգեաց կողի քէման.  
կամ այլ գործի եօթնազեայ նման նմին՝ յարմար ի  
նուագել զսաղմոս: Օ այսպիսի երգարանս յօրինե-  
լով դաւթի՝ ի սոսին առանձինն սաղմոսէր ի փոքր-  
կութե անդ իւրում, և ի նոյնս սփոփելով ցնծայր  
ի հոգի իւր: ի տասնազեայսն զտասն մատունսն ի  
կիր արկեալ պահպանութե տասն պատուիրանաց: և  
յեօթնազեայսն յեօթն առաքինութիւնս զօրացեալ՝  
արժանաւորելով եօթն պարգեաց հոգւոյն արյ:  
Խորհրդաբար ձեռքն յափի այսինքն իմաստուի և զո-  
րութի նորա, կամ խոնարհութի և հնազանդութի  
նորա՝ արարին սաղմոսարան, այսինքն թէ սահմա-  
նեցին զաւետարանն ար: և մատունք նորա այսինքն  
տնօրէնուիք նր՝ կազմեցին զեօթնազեայ խորհուրդս  
որ եկեղեցւոյ:

Դարձեալ՝ ձեռք նորա ձեռնադրեցին զաւաքեալսն  
իւրե զսաղմոսարանս, և մատունք նորա զաշակերտոն  
իրը զգործիս օրհնութեն: զոր և հաստատեաց այ-  
նու, զի ի համբառնալն յերկինս՝ վերացուցեալ ըզ-  
ձեռս իւր՝ օրհնեաց զնոսս:

Դարձեալ՝ ձեռք նորա տարածեալ՝ ի վերայ խաչին  
արարին զնոյն զայն սաղմոսարան և գործի օրհնուե.  
զի ի նմա ընթերցեալ լինին հանդէսք չարչարանաց  
նորա իրը ի սաղմոսարանի: և նովաւ հալածին դեք  
իրը սաղմոսարանաւ, որպէս եղեւ առ սաւուղաւ: և ս  
և ի նա և նովաւ օրհնին ամենայն իրք և գործք մեր:  
Օ այսոսիկ եղեալ մարգարէին՝ մատչի ի չնորհակա-  
լութի այ և ասէ:

Է. Ասէ որդ՝ ո դասմայն զայս թի իմասմ. ինոնին ուեք ո-  
մնայնի ըստիշ շնմեայն:

Ո՞եծ եղե յոյժ խնամք բարերարութեն այ առ դա-  
ւիթ՝ ի ձոխացուցանել զփոքրկութի նորա հոգւով  
սաղմոսասացութեն, և ի բարձրացուցանել զնուաս-  
տութի նորա յօծումն թագաւորութեն: և զայս կա-  
մելով չնորհակալութե յայտնել զարմացական դնէ

զբանն , և ասէ :

Իսէ արդ՝ ո՞ պարհեցէ զայս քն իմաստ : Այս եղանակ  
իմօսից ոչ միայն ցուցանէ զառաւելութի բարերարու-  
թեն եղելոց առ դաւիթ , այլև զմեծութի ինդու-  
թեն՝ զոր ուներ նա ՚ի սրտի . որպիսի եղեւ և ՚ի սար-  
բա , որ յառաւելութենէ ինդութեն գոչեր (ծնն-  
իան . 7.) \* ով պատմեսցէ արբահամու եթէ մնուցա-  
,, նէ զմանուկ սառայ . իբր թէ չէ բաւական ոք ՚ի  
պատմել . ըստ այսմ կարգէ և աստ դաւիթ զբան  
իւր . մեծ եղեւ ասէ յոյժ բարերարութին այ՝ զոր ե-  
ցոյց յիս , և ո՛ կարիցէ ըստ արժանւոյն պատմել զայս  
նմա . այսինքն ո՛ կարիցէ յայտնի ցուցանելով զմեծու-  
թի այսր բարերարութեն զարժանաւոր բանս չնոր-  
հակալութեն մատուցանել նմա :

Առվին դիտէ ցուցանել՝ թէ այնչափ մեծ եղեւ բա-  
րութին այ առ ինքն , մինչեւ խոստովան լինիլ թէ ոչ  
ինքն և ոչ այլ ոք բաւական է պատմել զայն , և այ-  
նու բաւականապէս չնորհակալ լինիլ զոյ : Ի՞այց քան-  
դի լսել ևս ոչ կարեր , յաւելու պատմել , և այնու  
չնորհակալ լինիլ . շատ լիցի ինձ ասէ այս՝ եթէ լուի-  
ցէ անծ . և առ այս յարէ զկնի , և ասէ :

Խանին քը ամենայն լուիցէ շամենայն : Այսինքն , ՚ի պատ-  
մել իմում զբարերարութին այ , և ՚ի գոհանալո իմ  
այնու զնմանէ , նա ինքն՝ որ է տէր ամենայնի՝ և ձա-  
նաչէ զամենայն , լուիցէ քաղցրութ զամենայն զբանս  
իմ , և իբրեւ համայական ինչընկալցի զայն :

՚ թարգ՝ ասորւոց դնի \* ո՛ պատմեսցէ այ իմում ,  
,, նա է տէր և ան իմ : Հարաբ դնի \* ո՛ ուսուուցէ  
,, զիս . (պատասխանի) տէր իմ և ան իմ : ՚ գիսս  
ինչ լատինացւոց՝ ուր յիշի այս սաղմաս , ՚ի կատա-  
րեալն դնի բայդ պարմէլ յասելն : \* ՚ ո՛ պատմեսցէ  
,, տն իմում . նա (է) տէր , նա լսող ամենայնի :

Այսոքիկ թարգմանութիք կարեն նոյնանալ ընդ մե-  
րումս այսպէս . ո՛ կարաց և ո՛ կարիցէ արժանապէս  
գոչութի մատուցանել այ վասն մեծի բարերարուն  
նորա , և ո՛ արգեօք ուսուուցէ և մարզեսցէ զիս ՚ի  
սոյն . որովհետեւ ոչ ես և ոչ այլ ոք բաւական է առ  
այս . և սակայն նա ինքն անձ՝ որ արար ընդ իս զայս-  
պիսի բարերարութի՝ լուիցէ զգոհութի իմ , կամ

ընկալցի գոնէ զփափաքիմ՝ որով ցանկամ մատուցանել նմա զգոհուին, և այս շատ է ինձ։ Օ այս եղեալ մարդարեն՝ առաջի մատուցանէ զայն՝ զոր կամբը պատմելու վասն որոյ ասէ։

Դ. **Լ**յա առաջեաց աեր զհրեշտակ էւր, և համբարչ զես 'ի հօրէ խաշանց հօր իմոյ, և օծ զես յօծումն էւցու էւրոյ։

Ե. **Ա**ղբարդ իմ մէծամեծ և գեղեցին, և ոչ համեցաւ ընդ նոսա աեր։

Պատմութիւն այսր՝ յայտնի աւանդի յառաջին գիրս թագաւորաց. (ԺՂ. 4-13.) զոր և յառաջ բերեալ է մեր 'ի սաղ. ՀԵ. 70. տես անդ. 'ի նոյն հային և այսոքիկ բանք՝ յասելն։

Լյա առաջեաց աեր զհրեշտակ էւր, և համբարչ զես 'ի հօրէ խաշանց հօր իմոյ և օծ զես յօծումն էւցու էւրոյ։ Բառդ հրեշտակ՝ ոչ դնի աստ փոխանակ անմարմին էակի, այլ փոխանակ պատգամաւորի, այն ինքն է սամուել մարդարէ. զսա ասէ առաքեաց ած իբրև զհրեշտակ իւր վասն օծանելոյ զիս թագաւոր. և միջնորդութ նորա և բանիւ նորա կոչեաց զիս 'ի դաշտէ՝ ուր արածէի զհօտս խաշանց հօր իմոյ. և բարձրացոյց զիս 'ի նուաստութէ իմմէ 'ի փառս թագաւորութ, զի էօծ զիս թագաւոր՝ ոչ օտար իւզով, այլ իւրով, այսինքն այնալիսի իւզով որ էր օրհնեալ ըստ օրինաց։ Աամելով ապա մեծ իմն ցուցանել զայս բարերարութի ոյ եղեալ առ ինքն քան առ եղեարս իւր՝ յարէ զինի և ասէ։

Լյա ղբարդ իմ մէծամեծ և գեղեցին, և ոչ համեցաւ ընդ նոսա ասէ։ Աամի ասել թեպէտ և առաւել արժանաւորք երեւեին եղբարք իմ յօծումն թագաւորութէ, զի էին մեծք հասակաւ և գեղեցիկը տեսլեամբ, բայց ած ոչ համեցաւ օծանել զնոսա, այլ զիս, որով և խաղաց հողի նորա 'ի վերայ իմ. և յաւելաւ յիս զօրութէ մեծ։

Կարհրդաբար, այս բան համեմատութ տռաջին համարոյն առեալ ասի 'ի դիմաց քսի, տես անդ. իսկ յինքեան մատծեալ ասի 'ի բերանոյ մարդկային

բնուե այսպէս. առաքեաց տէր զգաբրիել հրեշտակ  
իւր յաւետաւորութիւն փրկութե. և համբարձ զիս  
զանասնացեալս 'ի փառս ածութե. զի էառ զընուի  
իմ, և էօծ յօծումն իւղոյ ածութե : Եղբարք իմ  
հրեշտակք, մեծամեծք և գեղեցիկք քան զիս, այլ  
թողեալ զնոսա՝ ընդ իս հաճեցաւ : Իսկ թէ զինչ  
արար՝ որ օծաւն՝ յայտ առնէ մարգարէն՝ ի յաջորդող,  
'ի մէջ բերելով զյաղթուին զայն՝ զոր ինքն արար  
ըդէմ զողիաթայ. վասն որոյ ասէ :

Դ. **Ելլէ ես ընդառաջ այլազգույն . և նզրէցի զնուան  
նորա :**

Ե. **անի զսուաէրն՝ ի նմանէ, և հասի զգլուին նորին .  
և բարձի զնուխառինս յորդուոյն իսրայէլի :**

**Եյս այն պատմութիւն է՝ որ զրի յառաջին գիրս  
թագ. (ժԷ. 40-52.) ուր պատմի թէ զիարդ ել  
դաւիթ ընդգեմ զողիաթու, և եհար զնա և սպան .  
անս՝ ի նշանակեալ տեղիդ : Եւ քանզի զայս արար  
յանուն նոն, որպէս և զրի անդ, 'ի զօրութիւն նորա  
պարծելով համարձակ ասէ :**

**Ելլէ ես ընդ առաջ այլազգույն . և նզրէցի զնուաննորա :**  
**Եյսինքն տեսեալ իմ զայլազգին զողիադ, որ նախա-  
տէր զորդիսն իսրայէլի . և հայեցեալ թէ ոչ ոք էր՝  
որ վանէր զնա, ապաւինեցայ յած իմ, և ելի առան-  
ձինն ընդգեմնը հինգ քարամբք, և մեծացուցանե-  
լով զանունն այ իմոյ նզովեցի զկուռս նորա . և քա-  
րամբ միով հարի զՃակատ նորուն, և կործանեցի 'ի  
վայր :**

**Եյս կործանումն զողիաթու եղե տիրապէս յոյ .  
եղե և 'ի դաւթայ զօրացելոյ զօրութիւն այ . բայց  
եղե 'ի հարատութիւն զողիաթու իբր յառթէ : Եւ  
յայս սակս յակոբ մծքնայ հայրապետ գրէ 'ի ճառն .  
Ե. \* Հպարտացաւ ասէ զողիաթ 'ի վերայ դաւթի,  
,, և անկաւ և կործանեցաւ առաջի նորա || :**

**Իսկ նզովքն՝ զոր դնէ՝ եթէ հայիցի 'ի ժամն յայն՝ յո-  
րում սպան զգողիաթ՝ ցուցանէ զանարգել դաւթի  
զկուռսն զողիաթու . զի 'ի հայհօյել նորա զած՝ դա-  
ւիթ ևս նզովեաց և անէծ զչած նորա և տկար ե-**

360

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

շոյց զնա գործով իւրով. իսկ եթէ հայիցի յայլ ժամանակ՝ ցուցանէ զկործանել նր յետոյ զկուռս ամաղեկացւոց և զայլոց բազմաց. որով կասեցոյց զբազումն ՚ի պաշտելոյ զայնպիսիս. և զամբարտաւանութի նոցա իբրև զգլուխ նոցին եհատ. զորմէ դրէ ՚ի յաջորդ համարն ՚ի մէջ բերելով զհատումն դլխոյն գողիադայ յասելն:

Պահի զսուսերն ՚ի նմանէ, և հապի զգլուխ նորին, և բարձի զնախառին յորդուցն իսրայէլի. Այսինքն յետ կործանելոյ իմ զհսկայն զայն քարամբ՝ չունելով առ իս սուսեր՝ մատեայ ՚ի դի նորուն, և հանի ՚ի միջոյ նորազուսեր նորին, և նովին սուսերաւ հատի զգլուխ նորին. և այսու բառնալով ՚ի միջոյ զնախատիչ որդուցն իսրայէլի՝ բարձի զնախատելի երևիլ նոցին: Այս հանդես դաւթի ընդդէմ գողիադու ստուերակը իրէր յինքեան զհանդէս յաղթութեն՝ զոր արար յաք ըստ լեդէմ անմարմին գողիադու, հարեալ զնահնդեքումբք վիրօք. նզովեաց ևս զկուռս նր խայտառակելով զկուապաշտուին և եհան զսուսեր նր ՚ի նմանէ, այսինքն զհնարս նորա, և զայն ամենայն, որով յաղթէր նա. և զնոյն զայն հնարսն ՚ի գագաթ նորադարձուցանելով եհատ զգլուխ նորուն, այսինքն զհպարտութի նորին. որով և եբարձ զնախատինս յորդուց մարդկան. և զօրացոյց զնոսա ելանել հզօր զօրութ ընդդէմ բանակի զօրաց նորա, և հնդատառանուամբ իւրով իբր հնդեքումբք քարամբք հարկանել և կործանել զնոսա, և յաղթական գտանելով հրաշալի հռչակել զյաղթանակն փառաց իւրոց յարքայութեան իւրում և երկրպագիլ յամենեցունց յաւիտեան:

## Ա. Բ. Խ Շ Վ Ե Կ Ե

Բ. հապուրէ, և ուներրիդ Աստունի Ասղճոսին:



